ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Աթանեսյան Գարիկ Հրաչաի

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՎ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆ ԱՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ

Թ.00.06 - «Մշակութաբանություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝
պ.գ.թ., դոցենտ Ն. Մ. Մարգարյան

ԵՐԵՎԱՆ-2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 2

ԳԼՈՒԽ 1-ԻՆ: ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԴԻՍԿՈՒՐՍԸ ՈՐՊԵՍ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ 21

1.1 Խորհրդային իշխանությունների հուշարձանային քաղաքականությունը և խորհրդային քաղաքացին 22

1.2 Հանրությունը որպես հուշարձան տեղադրող նոր սուբյեկտ 32

1.3 Համայնքային իշխանությունները և հուշարձանային քաղաքականությունը արդի Հայաստանում 40

ԳԼՈՒԽ 2-ՐԴ: ՀՈՒՇԱՐՁԱՆԱՅԻՆ ՈՒՂԵՐՁՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ: ԳԱՂԱՓԱՐԱՀՈՍԱԿԱՆԻ, ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆԻ, ՊԱՏՄԱԿԱՆԻ ԵՎ ԱՐԺԱՆԱՎՈՐԻ ԲԱՎԻՂՆԵՐՈՒՄ 48

2.1 Հուշարձանային ուղերձները խորհրդային Հայաստանում 49

2.2 Հուշարձանային ուղերձների փոխակերպումները հետխորհրդային Հայաստանում 58

2.3 Խորհրդային հուշարձանների ճակատագիրը հետխորհրդային Հայաստանում 75

2.4 Հուշարձանային նոր քաղաքականությունը արդի հանրային քննարկումներում 79

2.5 Հորինվածքային նոր լուծումներով հուշարձանները և նրանց շուրջ քննարկումները հետխորհրդային Հայաստանում 87

ԳԼՈՒԽ 3-ՐԴ: ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ 100

3.1 Հուշարձանի տարածքի ընտրությունը խորհրդային Հայաստանում .. 101

3.2 Հուշարձանի տարածքի ընտրությունը հետխորհրդային Հայաստանում 107

3.3 Խորհրդային հուշարձանային տարածքները անկախ Հայաստանում 125

3.4 Հուշարձանների տեղադրության տարածքներն արդի հանրային քննարկումներում 132

ԳԼՈՒԽ 4-ՐԴ: ՀՈՒՇԱՐՁԱՆԸ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ 137

4.1 Հուշարձանը և հաղորդակցության պատկերացումները խորհրդային տարիներին 138

4.2 Հուշարձանը և հաղորդակցության նոր պրակտիկաները հետխորհրդային Հայաստանում 141

4.3 Հուշարձանային հաղորդակցության նոր պրակտիկաները հանրային քննարկումներում 151

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 157

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 162

ՆԿԱՐՆԵՐ 169

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԽՍՀՄ-ից՝ Հայաստանի անկախացման գործընթացի մեկնարկման ուշագրավ դրսևորումներից մեկը ՀՍՍՀ քաղաքներում կանգնեցված մի շարք հուշարձանների նկատմամբ քաղաքացիների ցուցաբերած վերաբերմունքն էր, ի մասնավորի՝ դրանց ոչնչացումը, տեղահանումը կամ փոխատեղումը: Բանն այն է, որ խորհրդային տարիներին նման բան կարող էր տեղի ունենալ միայն իշխանական, այն էլ կուսակցական բարձրագույն մարմինների որոշումների հիման վրա, այնինչ 1990 թթ. սկզբին հայտնվել էր հուշարձանի ճակատագիրը որոշող նոր սուբյեկտ կամ գործող անձ՝ հանրությունը: Անկախ պետականության գոյության հետագա՝ շուրջ 30 տարիների ընթացքում այդ նոր սուբյեկտը, տարբեր ակտիվությամբ և տարբեր միջոցներով, որոշիչ դերակատարություն է ունենալու ՀՀ քաղաքների լանդշաֆտների ճակատագրի խորհրդանշանային կազմակերպման գործում, ինչի հետևանքում քաղաքային արձանային լանդշաֆտը ենթարկվում է նոր և որակական փոխակերպումների: Սույն ատենախոսական աշխատանքի նպատակը նշված փոխակերպումների և դրանցում հանրային գործոնի դերակատարության ներկայացումն է՝ հիմնական գծերով և առանձնահատկություններով:

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ հայագիտության ասպարեզում սույն ատենախոսությունը՝ հուշարձանը հանրային դիսկուրսի տեսանկյունից ուսումնասիրելու առաջին փորձն է: Ինչպես նաև առաջին անգամ է փորձ կատարվում հանրությանը և հանրային դիսկուրսը ներկայացնել, առհասարակ, որպես Հայաստանի քաղաքային և նշանային լանդշաֆտի փոխակերպումների վրաազդող կարևոր գործոն:

Հետխորհրդային շրջանում հուշարձաններին առնչվող փոխակերպումներին իրենց աշխատանքներում մասնակի անդրադարձներ են կատարել հայ ազգագրագետներ՝ Լ. Աբրահամյանը, Ն. Մարգարյանը, Գ. Ծագոյանը: Հ. Խառատյանի, Գ. Ծագոյանի, Հ. Մարությանի և Լ. Աբրահամյանի՝ «Ստալինյան բռնաճնշումները

Հայաստանում. պատմություն, հիշողություն, առօրյա»[1] համահեղինակային աշխատության՝ «Պատմագրության և հիշողության միջև. Խորհրդային Հայաստանի բռնաճնշումների հուշարձանացումը» բաժինում ազգագրագետներ Լ. Աբրահամյանը և Գ. Շագոյանը անդրադառնում են Խորհրդային Հայաստանում ստալինիզմի շրջանի քաղաքական բռնաճնշումների զոհերի հուշարձանացման խնդրին, խորհրդային իշխանությունների հուշարձանային քաղաքականության որոշ մանրամասների: Ազգագրագետները ներկայացնում են խորհրդային տարիներին տեղ գտած արձանամարտի, անկախության տարիներին խորհրդային հուշարձանների վերաիմաստավորման պրակտիկաներ:

Գ. Շագոյանի «Ставить ли памятник Анастасу Микояну? Опыт “социальной люстрации”»[2] հոդվածը քննության է առնում Երևանում խորհրդային քաղաքական գործիչ Անաստաս Միկոյանի հուշարձանի տեղադրման շուրջ սկիզբ առած դիսկուրսները, խորհրդային անցյալի վերաիմաստավորմանն ուղղված քննարկումները:

Լ. Աբրահամյանը «The Fight with Monuments and Memory in the Post-Soviet Space (the case of Armenia)»[3] հոդվածում անդրադառնում է հետխորհրդային Հայաստանում ԽՍՀՄ փլուզումից հետո սկիզբ առած արձանամարտին, խորհրդային նշանների վերաիմաստավորման և վերամեկնաբանման գործընթացներին:

Ն. Մարգարյանն իր «Հանրային տարածքներում կանգնեցվող հուշաղբյուրների հարցի շուրջ»[4] հոդվածում քննության է առնում հանրային տարածքներում կյանքից վաղաժամ հեռացած թաղային հեղինակությունների հիշատակներին կանգնեցվող հուշաղ-բյուրները, ներկայացնում այդ կոթողների հայտնվելու նախապատմությունը, հորինվածքային լուծումները և քննարկում

[1]Խառատյան Հ., Շագոյան Գ., Մարության Հ., Աբրահամյան Լ., Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում. պատմություն, հիշողություն, առօրյա, ՀՀ ԳԱԱ ‹‹Գիտություն›› հրատարակչություն, Երևան, 2015, 440 էջ:

[2]Шагоян Г., Ставить ли памятник Анастасу Микояну? Опыт “социальной люстрации” в Армении //Материалы конференции “Правовые и социальные аспекты реабилитации жертв политических репрессий на постсоветском пространстве”, “Мемориал”, М., 2014, с. 127-151

[3]Abrahamian L., The Fight with Monuments and Memory in the Post-Soviet Space (the case of Armenia) // Acta Slavica Iaponica XX. 2003, p. 25–49.

[4]Մարգարյան Ն., Հանրային տարածքներում կանգնեցվող հուշաղբյուրների հարցի շուրջ: Ծիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված միջազգային VIII գիտաժողով, Գյումրի, 2010, էջ 48-53:

հանրային տարածքներում նմանատիպ հուշակոթողների տեղադրումը հուշարձանների հանրային գործառույթների համատեքստում:

Նույն թեմային նվիրված հետազոտություններ անցկացվել են նաև մեր կողմից, որոնց արդյունքները տեղ են գտել մեր կողմից գրված մի շարք գիտական հոդվածներում: «The newly unveiled monument as a subject of conflicting discourses (the political, public and aesthetic interpretations of G. Nzhdeh's monument)» վերնագրված հոդվածում մենք ներկայացնում ենք 2016 թ. Երևանում տեղադրված ռազմական և քաղաքական գործիչ Գարեգին Նժդեհի արձանի առթիվ մեկնաբանությունները՝ պաշտոնական, արվեստային և հանրային դիսկուրս հարթություններում[5]: «The new interpretations of functions of public monuments in contemporary public discourse» հոդվածում քննության ենք առել խորհրդային և հետխորհրդային շրջանում Երևան քաղաքի հանրային տարածքներում տեղակայված հուշարձաններին առնչվող արդի պրակտիկաները և հուշարձանային գործառույթների արդի հանրային մեկնաբանությունները[6]:

«Общество и монументальная политика в последние годы СССР и первые годы независимости Армении» վերնագրված հոդվածում[7] անդրադառնում ենք Հայաստանի բնակիչների որպես հուշարձան տեղադրող սուբյեկտի հայտնվելու նախադրյալներին և պատճառներին, անդրադառնում ենք այդ գործընթացներում քաղաքային իշխանությունների մասնակցության խնդրին: «Судьба памятников Великой Отечественной войны в постсоветской Армении» հոդվածում[8] քննության ենք առել խորհրդային տարիներին Հայաստանի տարածքում տեղադրված Հայրենական պատերազմի որոշ հուշարձանների ճակատագիրը և նրանց վերաիմաստավորման խնդիրները՝ նույն տարածքներում նոր հուշարձանների տեղադրման համատեքստում:

«Христианская символика в городских памятниках постсоветской Армении»

---

[5]Atanesyan G., The Newly Unveiled Monument as a Subject of Conflicting Discourses (Political, Public and Aesthetic Interpretations of G. Nzhdeh's Monument) // Civilization researches № 13, Ivane Javakhishvili Tbilisi State University Press, Tbilisi, 2016, pp. 25-28.

[6]Atanesyan G., The new interpretations of functions of public monuments in contemporary public discourse, Պատմություն և մշակույթ, Հայագիտական հանդես, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2017, էջ 427-433.

[7]Атанесян Г., Общество и монументальная политика в последние годы СССР и первые годы независимости Армении, Caucaso-Caspica, Выпуск II, Изд-во РАУ, 2017, с. 31-36.

[8]Атанесян Г., Судьба памятников Великой Отечественной войны в постсоветской Армении. // Человек и культура, № 3, 2018, с. 1-6, http://nbpublish.com/library_read_article.php?id=26168, 03.05.2018.

վերնագրված հոդվածում[9] քննության են առնվում քրիստոնեական խորհրդանիշներ պարունակող հուշարձանների ՀՀ գլխավոր քաղաքների կենտրոններում տեղադրման պրակտիկաները պետություն-կրոն դիսկուրսի շրջանակներում: «Переосмысление новых практик возведения городских памятников в постсоветской Армении» հոդվածում[10] քննության են առնվում ՀՀ քաղաքային իշխանությունների, բարերաների ջանքերով տեղադրվածայդ նոր հուշարձանների հանրային մեկնաբանությունները:

«Լենինյան պատվանդանների ոդիսականը հետխորհրդային Հայաստանում» համահեղինակությամբ գրված հոդվածում անդրադառնում ենք ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի քաղաքներից Հոկտեմբերյան հեղափոխության առաջնորդ Վլադիմիր Լենինի հեռացված արձանների դատարկ մնացած տարածքները և պատվանդանները՝ վերանշայնացնելու կամ նոր նշաններով փոխարինելու խնդրին[11]:

«Հուշարձան» հասկացության ձևակերպման, ինչպես նաև պատմական և հիշատակման առումների հետ կապված տեսական հարցերը լայն ու բազմակողմանի քննու-թյան են ենթարկվել Դ. Ռեյնոլդսի[12], Ֆ. Չոայի[13], Մ. Տուդմանի[14], Ն. Ջոնսոնի[15], Ի. Հայի, Հ. Էնդրյուի և Մ. Տուտտոնի[16], Ջ. Յանգի[17] աշխատանքներում: Դունկանի[18], Յու. Ուիլանի[19], Պ. Քոբլիի[20], Ու. Էկոյի[21], Մ. Տամմի[22], Լ.

---

[9] Атанесян Г., Христианская символика в городских памятниках постсоветской Армении // Культура и искусство, № 5, 2018, с. 1-5, http://nbpublish.com/library_read_article.php?id=26254, 13.05.2018.

[10]Атанесян Г., Переосмысление новых практик возведения городских памятников в постсоветской Армении // Урбанистика, № 3, 2018, с. 1-6, http://e-notabene.ru/urb/article_26375.html, 24.05.2018.

[11]Մարգարյան Ն., Աթանեսյան Գ., Լենինյան պատվանդանների ոդիսականը հետխորհրդային Հայաստանում, ԵՊՀՄ Հայագիտական հանդես, Երևան, 2018, էջ 163-177:

[12]Reynolds D. M., Introduction // Remove not the Ancient Landmark. Public Monuments and Moral Values, Routledge, 2013, 237 p.

[13]Choay F., The Invention of Historic Monument, Cambridge University Press, Cambridge, 2001, 256 p.

[14]Tudman M., Monument as a Form of Collective Memory and Public Knowledge, 2009, pp. 125-133.

[15]Johnson N., Cast in stone: monuments, geography and nationalism. Environment and Planning D: Society and Space 13: 51-65, 1995, pp. 51-65.

[16]Hay I., Andrew H., Tutton M., Monuments, Memory and Marginalisation in Adelaide's Prince Henry Gardens. Geografiska Annaler 86 (B/3), pp. 201-216.

[17]Young J., The Texture of Memory. New Haven; L., Yale University Press, 1993, 415 p.

[18]Duncan J., The City as Text: The Politics of Landscape Interpretation in the Kandyan Kingdom, Cambridge University Press, Cambridge, 1990, 244 p.

[19]Whelan Y., The construction and destruction of a colonial landscape: monuments to British monarchs in Dublin before and after independence. Journal of Historical Geography 28 (4), 2002, pp. 508-533,

[20]Cobley P., Narrative, Routledge, London and New York, 2001, 288 p.

[21]Eco U., A theory of semiotics, Indiana University Press, Bloomington, 1976, 365 p.

Հերշկովիցի[23] աշխատություններում հուշարձանը քննվում է քաղաքականության և հաղորդակցության համատեքստում:

«Դիսկուրս» հասկացության հետ կապված տեսական հարցերին են վերաբերում Ն. Ֆիլլիպսի, Ս. Հարդիի[24], Տ. վան Դեյկի[25], Յու. Հաբերմասի[26], Տ. Չերեպանովայի[27], Դ. Բալուևի[28], Դ. Ռոգոզինի[29] աշխատանքները: Դիսկուրս վերլուծության տեսությունը մշակվել է Մ. Ֆուկոյի կողմից, հետագայում զարգացվելով և քննվելով բազմաթիվ այլ հեղինակների աշխատություններում, որոնց մի մասը տեղ են գտել Մ. Յորգենսենի և Լ. Ֆիլլիպսի «Дискурс анализ. Теория и метод»[30] հավաքական աշխատությունում: Մ. Յորգենսենի և Լ. Ֆիլլիպսի աշխատանքում ներկայացվում են դիսկուրսների ձևավորման և հասարակության վրա նրանց ունեցած ազդեցության հարցերը:

Ատենախոսության համար անհրաժեշտ նյութերի աղբյուր են հանդիսացել նաև մի շարք հեռուստաընկերությունների հաղորդումներ: Այդ ընկերություններն են՝ Հանրային առաջին, Ծանթ, Արմենիա, Կենտրոն: Ուշադրության ենք առել հատկապես նշված հեռուստաընկերությունների կողմից եթեր տրվող լրատվական և հուշարձաններին վերաբերվող հաղորդումները: Հուշարձանների վերաբերյալ նյութերի աղբյուր են հանդիսացել նաև սոցցանցերի օգտատերերի կողմից ամենից շատ հավանություն ունեցող լրատվական կայքերը:

Սույն ատենախոսության առարկային վերաբերող նյութերի հավաքման և վերլուծության համար կիրառել ենք տարբեր

---

[22]Tamm M., In search of lost time: Memory politics in Estonia 1991-2011. Nationalities Papers, The Journal of Nationalism and Ethnicity 41 (4): 651-674, 2013, pp. 651-674.

[23]Hershkovits L., Tiananmen Square and the Politics of Place. Political Geography 12, 1997, pp. 395-420.

[24]Филлипс Н., Харди С., Что такое дискурс-анализ, Современный дискурс-анализ, в. 1, т. 1, 2009, с. 1-18.

[25]Дейк ван Т. А., Язык, познание, коммуникация. Благовещенск, 2000, 308 с.

[26]Хабермас Ю., Отношения к миру и рациональные аспекты действия в четырех социологических понятиях действия // Социологическое обозрение, Т. 7. № 1, 2008, с. 3-24.

[27]Черепанова Т., «Неспособность к разговору», или Статус публичной сферы в информационном обществе: Х. Арендт и Ю. Хабермас // Известия Уральского федерального университета, Серия 3: Общественные науки, Т. 91, № 2, 2011, с. 41-49.

[28]Балуев Д., Политическая роль социальных медиа как поле научного исследования // Образовательные технологии и общество, Т. 16. № 2, 2013, с. 604-616.

[29]Рогозин Д. М., Рецензия: Л. Филлипс, М. В. Йоргенсен. Дискурс анализ: теория и метод // Мониторинг общественного мнения: экономические и социальные перемены, № 4, 2006, с. 151-160.

[30]Йоргенсен М., Филлипс Л., Дискурс анализ. Теория и метод, «Гуманитарный Центр», Харьков, 2008, 336 с.

մեթոդներ: Հետխորհրդային շրջանի նյութերը գրանցվել են հիմնականում ուղղակի, անուղղակի դիտումների և ազգագրական հարցումների օգնությամբ: Հայաստանի անկախության փուլին վերաբերող նյութերի մի զգալի մասը ԶԼՄ-ների, սոցիալական ցանցերի ու կայքերից գրանցված քննարկումներն ու հրապարակումներն են, որոնք ենթարկվել են բովանդակային ու դիսկուրս վերլուծության: Ինչ վերաբերվում է խորհրդային ժամանակահատվածին վերաբերող նյութերին՝ դրանք ձեռք են բերվել ինչպես տարբեր հեղինակների ուսումնասիրություններից և ժամանակի վավերագրություններից, այնպես էլ ազգագրական հարցումների միջոցով և վիզուալ արձանագրման ու հարցաթերթային մեթոդների կիրառմամբ:

Խորհրդային և հետխորհրդային տարիներին տեղադրված հուշարձանների հանդեպ հանրային վերաբերմունքը և հուշարձանային նոր պրակտիկաները, նրանց փոփոխությունները գրանցելու նպատակով դիտումներ ենք անցկացրել և ազգագրական նյութեր գրանցել ՀՀ մայրաքաղաք Երևանի բոլոր վարչական շրջաններում, ՀՀ Շիրակի մարզի Գյումրի, Արթիկ քաղաքներում, Լոռվա մարզի Վանաձոր և Սպիտակ քաղաքներում, Տավուշի մարզի Իջևան, Դիլիջան, Սյունիքի մարզի Կապան, Գորիս և Սիսիան քաղաքները, Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ, Արարատի մարզի Արարատ, Վեդի, Արտաշատ, Մասիս, Գեղարքունիքի մարզի Սևան, Գավառ քաղաքները, Արմավիրի մարզի Արմավիր, Վաղարշապատ, Կոտայքի մարզի Աբովյան, Ծաղկաձոր քաղաքներում, Արագածոտնի մարզի Աշտարակ, Ապարան քաղաքներում:

Ատենախոսության մեջ առանձնակի անդրադարձի կարիք ունեն «հուշարձան», «դիսկուրս», «հանրություն» հասկացությունները: Աշխատանքում «հետխորհրդային հուշարձան» հասկացության տակ դիտարկել ենք Խորհրդային Միության փլուզումից և Հայաստանի անկախացումից հետո նոր հանրապետության քաղաքների հանրային վայրերում տեղադրված հուշարձանները (հուշարձան, հուշաքար, արձան, հուշահամալիր, կոթող, հուշակոթող, հուշաքանդակ, քանդակ, կիսանդրի): Ուշադրության կենտրոնում են եղել նաև խորհրդային տարիներին քաղաքներում տեղադրված հուշարձանները, քանի որ

հետխորհրդային վերջին տարիների հուշարձանների հանդեպ վերաբերմունքի և հուշարձանային պրակտիկաների փոփոխությունները անմիջական ազդեցություն են ունենում նաև խորհրդային տարիներին տեղադրված հուշարձանների վերաիմաստավորման վրա:

Մեր հետազոտության ամենավաղ փուլում փորձեցինք նախ հասկանալ, թե վերջին տարիներին ինչ բովանդակության և արտաքին ունեցող արձաններ են տեղադրվել ՀՀ քաղաքների հանրային վայրերում: Փորձել ենք դրանք համեմատել խորհրդային տարիներին տեղադրված արձանների հետ և տեսնել հիմնական նմանություններն ու տարբերությունները: Կարևոր էր պարզել տարբեր կոթողների վերաբերյալ հանրային ընկալումները, ինչի արդյունքում արձանագրեցինք, որ հանրության գերակշիռ մասի կողմից նմանատիպ բոլոր կառույցները «հուշարձան» են անվանվում: Այս պատճառով է նաև, որ նպատակահարմար գտանք աշխատանքի վերնագրում կիրառել հենց «հուշարձան» տերմինը, ինչը որոշակիորեն հարաբերակցվում է վերջին տարիներին տարբեր կոթողների տեղադրման իրավական, պաշտոնական, լրատվական մեկնաբանություններին[31]:

Հուշարձանը դասվում է այն հասկացությունների շարքին, որի վերաբերյալ մոտեցումները միանշանակ և հստակ չեն: Հուշարձանների ուսումնասիրությունները մինչ այսօր մնում են բավականին մարգինալ սոցիալական գիտություններում: Այս ամենի հիմնական պատճառներից մեկն այն է, որ գիտակարգերի մի մեծ փունջ ուսումնասիրել է հուշարձանները տարբեր տեսանկյուններից: Արդյունքում, հուշարձան հասկացությունը սահմանված է մշուշոտ՝ տատանվելով մաքուր գեղագիտական կառույցներից մինչև իշխանություն և վերահսկողություն վերարտադրող գործիքներ ներկայացվելը:

Հուշարձան հասկացության առավել տարածված մեկնություններից մեկն այն կապում է հիշողության հետ: Այդ իսկ

[31]Հանրային, պաշտոնական գրավոր և բանավոր տեքստերում հուշարձանին հավասար օգտագործվում է նաև արձան բառը, սակայն զոհերի հիշատակներ հավերժացնող կոթողները, որոնք վերջին տարիներին տեղադրվող հուշարձանների քանակի բավական մեծ մասն են կազմում ներկայացվում են հենց հուշարձան տերմինով՝ նպաստելով մեր կողմից հետխորհրդային Հայաստանի քաղաքների հանրային վայրերում տեղադրվող տարատեսակ քանդակների, կոթողների, կիսանդրիների, արձանների ներկայացումը հենց հուշարձան բառի ներքո:

պատճառով ռուսերեն памятник բառը (հուշարձան) կառուցված է память (հիշողություն) բառի հիման վրա, մոնումենտ-ը կապվում է լատիներեն monere (հիշեցնել) բառի հետ, անգլերեն memorial (հուշարձան) բառը մեզ ուղղում է դեպի memory (հիշողություն) բառը, և, վերջապես, հայերեն հուշարձան բառը բաղկացած է հուշ (հիշողություն) և արձան բառերից: Է. Բ. Աղայանի 1976 թվականին հրատարակված «Արդի հայերենի բացատրական բառարանում» «հուշարձան» բառը ունի հետևյալ նշանակությունները. ըստ առաջին բացատրության՝ հուշարձան է համարվում ճարտարապետական կամ քանդակագործական կոթողը, որը դրվել է ի հի-շատակ որևէ դեպքի կամ անձի: Բառի երկրորդ բացատրությամբ՝ գերեզմանի վրա հանգուցյալի հիշատակին կանգնեցրած արձանը՝ քանդակագործական կոթողն է համարվում հուշարձան: Հուշարձան է համարվում նաև անցյալի նյութական մշակույթի առարկան՝ կառույցը[32]: Նույն բառարանում «արձան» բառը ունի հետևյալ բացատրությունը. մարդու կամ կենդանու եռաչափ քանդակ: Երկրորդ բացատրությամբ արձան է համարվում գերեզմանի վրա կանգնեցվող կոթողը, մահարձանը[33]:

Ժամանակակից անգլերենի բառարանները սահմանում են հուշարձանները՝ ընդ-գծելով նրանց հիշատակման գործառույթները. անկախ իրենց արտաքինից և չափերից, հուշարձանները կառույցներ են ակնհայտորեն կանգնեցված՝ մարդկանց կարևոր իրադարձությունների և անհատների մասին հիշեցնելու համար[34]: Հուշարձանի հիշատակման բաղադրիչն է կարևորվում նաև ռուսերենի բացատրական բառարաններում՝ հուշարձան սահմանելով քանդակը կամ ճարտարապետական կառույցը՝ նվիրված այս կամ այն ականավոր անհատի կամ պատմական իրադարձության հիշատակին[35]:

1998 թ. նոյեմբերի 11-ին Ազգային ժողովի կողմից ընդունված «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական

[32]Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Երևան, 1976, էջ 912:
[33]Անդ, էջ 136:
[34]Տե՛ս, օրինակ, Longman, Dictionary of Contemporary English, 2009, p. 1130.
[35]Տե՛ս, օրինակ, Ожегов С. И., Шведова Н. Ю. Толковый словарь русского языка: 80 000 слов и фразеологических выражений / Российская академия наук. Институт русского языка им. В. В. Виноградова, 4-е изд., дополненное, М.: Азбуковник, 1999, էջ 944:

միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքի 1-ին հոդվածում հուշարձաններ են համարվում «պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից»: Նույն օրենքում՝ հուշարձանները դասակարգվում են նաև ըստ բնույթի, որոնցից ուշագրավ են **բ** և **դ** կետերը, ըստ որոնց՝ հուշարձանները լինում են պատմական (բնույթի)՝ պատմության և մշակութային նշանավոր իրադարձությունների և նշանավոր գործիչների հետ առնչվող կառույցներ, կոթողներ, հուշահամալիրներ, գերեզմաններ և մոնումենտալ արվեստի (բնույթի)՝ մոնումենտալ քանդակագործության, գեղանկարչության և դեկորատիվ արվեստի նմուշներ[36]:

Իրավական հարթությունում առանձնացվում են հուշարձանների (նրանց բոլոր տարատեսակների) պատմական և մոնումենտալ արվեստային առումները: Հուշարձանի պատմական կամ հիշատակային բնույթը կարևորվում է բոլոր դիսկուրս հարթություններում: Ավանդական դպրոցի շրջանակներում հուշարձանը դիտարկվում է որպես հիշատակման օբյեկտ, որոշակի մարդկանց, գործունեությունների, իրադարձությունների հավերժացում, որը սիմվոլիկ լեզվով է ներկայացնում հանրության համար կարևոր արժեքների համակարգերը[37]:

Սոցիոլոգիական և մարդաբանական հետազոտությունները հիմնականում կենտրոնանում են հուշարձանների հիշատակային գործառույթների վրա՝ իրենց ուշադրությունը սևեռելով քաղաքացիների հիշատակային պրակտիկաների վրա: Ա. Ռիգլը հստակեցնում է, որ ծագումից ի վեր հիշատակումը եղել է

[36]ՀՀ օրենքը պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին, http://www.arlis.am/documentview.aspx?docid=38019, 17.03.2015:
[37]Reynolds D. M., Introduction // Remove not the Ancient Landmark. Public Monuments and Moral Values, Routledge, 2013, p. 11.

հուշարձանների ավանդական գործառույթը. «Հուշարձանն իր վաղագույն և բնական բնույթով մարդկային ստեղծագործություն է՝ կառուցված առանձնակի մարդկային գործերը և իրադարձությունները ապագա սերունդների մտքերում կենդանի պահելու առանձնահատուկ նպատակով[38]»:

Աշխարհագրագետները կիրառել են այլ մոտեցում, որի համաձայն հուշարձանների հիշատակային գործառույթները համարվում են էականորեն քաղաքական: Աշխարհագրական հետազոտությունների նպատակն էր վեր հանել հուշարձաններում ներառված դոմինանտ դիսկուրսները՝ հասկանալու համար, թե ինքնություն կերտող ինչ թեմաներ են շրջանառվել, իսկ որոնք՝ անտեսվել կամ անհետացել: Արդյո՞ք, այս մոռացությունը դիտավորյալ է և որոշակի քաղաքականության արդյունք է, թե՞ պարզապես չի մտնում դոմինանտ «հիշողության լանդշաֆտի» մեջ[39]: Հուշարձանները նպաստում են տարածության մեջ անցյալի վերաբերյալ դոմինանտ դիսկուրսները ամրագրելուն: Անցյալի մասին դիսկուրսները «գաղափարախոսական» են, նրանք ունեն «աշխարհի մասնակի տեսլական», որն ընտրում է «իրականության» յուրահատուկ մեկնաբանություններ՝ քողարկելով մյուսները[40]:

Չնայած, այն փաստին, որ քաղաքական վերնախավերը տեղադրում են հուշարձաններ՝ ցանկալի աշխարհայացքը տարածության և ժամանակի մեջ հավերժացնելու համար, հուշարձանների իմաստները մշտապես «փոփոխական են և հոսուն»[41]: Առաջնային իմաստը իրականում գրված չէ քարի վրա ընդհանրապես: Այն կարող է հետագայում ընդհանրապես այլ կերպ հիշվել կամ վերածվել անսպասելիորեն ամբողջովին հակառակ իմաստկրող վայրի[42]:

Որոշ դեպքերում, քաղաքական վերնախավերի իշխանությունը լեգիտիմացնող հուշարձանները կարող են վերածվել ընդվզող և ընդդիմադիր քաղաքական պրակտիկաների վայրերի: Այս է պատճառը,

[38]Bellentani F., Panico M., The Meanings of Monuments and Memorials: Toward a Semiotic Approach, Punctum, 2(1): 28-46, 2016, p. 30.
[39]Johnson N., Cast in stone: monuments, geography and nationalism. Environment and Planning D: Society and Space 13: 51-65, 1995, p. 56.
[40]Eco U., A theory of semiotics, Indiana University Press, Bloomington, 1976, pp. 289-290.
[41]Hay I., Andrew H., Tutton M., Monuments, Memory and Marginalisation in Adelaide's Prince Henry Gardens. Geografiska Annaler 86 (B/3): 201-216, p. 204.
[42]Նույն տեղում:

որ հուշարձանների վերաբերյալ հետազոտական ավելի ուշ պարադիգմայում ուշադրությունը կենտրոնացվում է դիտողի վրա: Գիտնականների ուշադրությունը հուշարձանների արտահայտած սիմվոլիկ ձևերից և նշաններից տեղափոխվում է տվյալ հուշարձանի հետ կապված իրադարձությունների վրա: Քրիստոֆ Հայնրիխը, օրինակ, հուշարձանի «կարևորության» սահմանման համար հիմնական է համարում ոչ թե իրադարձությունը, որն այն վկայակոչում է, այլ այն ազդեցությունը, որը նա թողնում է կողքից դիտողի (հետևողի) վրա: Հուշարձանի գլխավոր գործառույթը, ըստ նրա, «քննադատական քննարկում առաջացնելն է», հուշարձանը դիտարկվում է որպես «հանրային դիսկուրսում տարաձայնությունների միջոց»[43]:

Հուշարձանի մասին գիտելիքները, պատկերացումներն ու նրանց շուրջ մեկնաբանություններն ունեն դիսկուրսիվ բնույթ. այսինքն կախված են հուշարձանների վերաբերյալ տեքստերից, տեղեկություն փոխանցող ինստիտուտների կողմից կարևորվող արժեքներից ու նպատակներից, և նրանից, թե այդ ինստիտուտները ինչպիսի լեզվով են տեղեկացնում, և որ ժամանակամիջոցում է այդ տեղեկությունը փոխանցվում:

Դիսկուրսը ասույթների խումբ է, որը լեզու է տրամադրում որոշակի պատմական պահի, որոշակի նյութի մասին խոսելու համար: Այն վերաբերում է գիտելիքի արտադրությանը և կազմակերպմանը սոցիալական համատեքստում: Լեզվի համակարգը ընդհանուր առմամբ թույլ է տալիս յուրաքանչյուր տիրույթում ձևակերպել սկզբունքորեն անվերջ թվով ասույթներ, ստեղծել սկզբունքորեն անվերջ թվով իմաստներ, բայց կան պատմականորեն ձևավորված կանոններ, որոնք որոշում են այն սահմանափակ թվով ասույթները և իմաստները, որ հաստատում են և մտցնում շրջանառության մեջ որոշակի պատմական ժամանակահատվածում[44]:

Հուշարձանի վերաբերյալ պատկերացումներն ու ընկալումները կախված են այն տեքստերից, թե ինչպիսի արժեքներ ու նպատակներ են կարևորում տեղեկություն փոխանցող ինստիտուտները, տվյալ

[43]Young J., The Texture of Memory. New Haven; L., Yale University Press, 1993, p. 7.
[44]Йоргенсен М., Филлипс Л., նշվ. աշխ., էջ 11:

դեպքում՝ համայնքների ղեկավարները, համայն-քային իշխանությունները, ռեսուրս ունեցող անհատները և կազմակերպությունները, ազգ-արյունակցական համայնքը և ԶԼՄ-ները: Տեքստերն իրենք իրենցով չունեն իմաստ, դրանք իմաստ են ստանում միայն ուրիշ տեքստերի, դիսկուրսների հետ հարաբերության գործընթացում, որոնց հետ իրենք կապված են[45]:

Տ. Վան Դեյկը «դիսկուրս» հասկացության տակ հասկանում է լեզվական հաղորդակցությունների վրա հիմնված սոցիալական փոխներգործությունները: Դիսկուրսում առաջնային դերում հանդես չի գալիս ոչ՝ «կենդանի» հաղորդակցության փաստը, ո՛չ էլ արդյունքում արտադրված տեքստում ամփոփված կոնկրետ լեզվաբանական պարամետրերը, այլ. «տեքստի ընկալման և կառուցման գործընթացների կարևորագույն բաղադրիչ է համարվում դրանց ետևում կանգնած սոցիալական իրավիճակների իմաստավորումը և դրանց կոգնիտիվ վերարտադրությունը»[46]:

Հայտնի է, որ դիսկուրսի որպես վերբալ միջնորդավորված սոցիալական փոխներգործություն վերջնական ըմբռնումը ձևավորվել է շնորհիվ Յու. Հաբերմասի, որն իր հաղորդակցական գործողության տեսության (теория коммуникатовного действия) մեջ առաջարկեց հաղորդակցությունը, դիսկուրսը դիտարկել ոչ միայն որպես «միջանձնային հարաբերությունների մեջ մտնող նվազագույնը երկու՝ խոսելու և գործելու ընդունակ սուբյեկտների միջև փոխազդեցություն[47], այլ հասարակական և քաղաքական կարևոր հարցերի շուրջ պայմանավորված համագործակցություն: Կողմերը հաղորդակցական գործողությունները ձեռնարկում են, որպեսզի երկուսի համար որևէ նշանակալի հարցի վերաբերյալ համաձայնության գան (որպես հակակշիռ ինստրումենտալ գործողության, որն ուղղված է միայն կողմերից մեկի հաջողության հասնելուն): Հաբերմասը շեշտում էր, որ հաղորդակցությունը ընթանում է հենց սուբյեկտների միջև, ոչ թե սուբյեկտի և օբյեկտի, այսինքն կողմերն ունեն միևնույն

[45]Филлипс Н., Харди С., Что такое дискурс-анализ.- Современный дискурс-анализ 2009, Выпуск 1, том 1, с. 49-64. Электронный журнал, www.discourseanalysis.org.
[46]Дейк ван Т. А., Язык, познание, коммуникация. Благовещенск, 2000, с. 122.
[47]Хабермас Ю., Отношения к миру и рациональные аспекты действия в четырех социологических понятиях действия // Социологическое обозрение, 2008. Т. 7. № 1, с. 11.

կարգավիճակը և հնարավորությունները, այդ պատճառով վարում են փաստարկների վրա հիմնված, հարգալից երկխոսություն, և դիսկուրսը սահմանող գլխավոր չափանիշներ են դառնում «հաղորդակցության, սոկրատեսյան երկխոսությունում պահպանվող, հրապարակային, իրավահավասար, չպարտադրված պայմանները»[48]:

Մեզ համար Հաբերմասի տեսությունում կարևորն այն է, որ դիսկուրսը ընկալվում է որպես այս կամ այն խնդիրների քննարկման միջոց ժողովրդավարական հասարակու-թյուններում, երբ քննարկման մեջ ներգրավվում են բացարձակ տարբեր հասարակական ուժեր՝ սկսած անհատներից մինչև սոցիալական խմբեր, հասարակական կազմա-կերպություններ, քաղաքական ուժեր: Դիսկուրսը միշտ միջնորդավորված է վերբալ լեզվով կամ տեքստով, բայց պարտադիր նվիրված է հասարակական, քաղաքական ակտուալ խնդիրներին: Բացի դրանից, տեքստերը կամ խոսքը, որոնք ներկայացվում են դիսկուրսի մասնակիցների կողմից, արտադրվում են հաշվի առնելով մասնակիցների սոցիալական փորձը և ծանրաբեռնված են համատեքստերով՝ վերածելով քննարկումը դիս-կուրսի: Սակայն ցանկացած հաղորդակցություն, որը բավարարում է վերը նշված պայմաններին և դրա շնորհիվ դարձել է դիսկուրս, դեռևս ձեռք չի բերում հանրայինի կարգավիճակ: Հանրային դառնալու համար դիսկուրսը պետք է գործի հանրային տարածքում, հանրային ոլորտում:

Հանրային ոլորտի կոնկրետ ձևակերպումը շատ հազվադեպ է հանդիպում, սակայն հենց ինքը Հաբերմասը իր ուշ աշխատություններից մեկում ճշգրտել է, որ «լավագույն կերպով այն կարելի է բնութագրել որպես ցանց, որտեղ փոխանցվում է տեղեկատվությունը և տեսանկյունները (դրական և բացասական կարծրատիպեր արտահայտող կարծիքներ), կոմունիկացիոն հոսքերը ընթացքում գտվնում և համադրվում են այնպես, որ միավորվում են հասարակական կարծիքների որոշակի թեմատիկայով սահմանափակ հանգույցներում: Հանրային ոլորտը վերարտադրվում է հաղորդակցական գործողությունների միջոցով[49]: Կարևորն այն է,

[48]Хабермас Ю., Вовлечение Другого. Очерки политической теории, СПб, 2001, с. 76.
[49]Habermas J., Between facts and norms: Contributions to a Discourse Theory of Law and Democracy, Cambridge, 1996, p. 360.

որ տվյալ ձևակերպման մեջ խոսքը գնում է հանրային ոլորտի ցանցային բնույթի մասին. այն չի ձևավորվում որևէ մի տարածքում, այլ տարբեր ժամանակներում, տեղերում և տարբեր ձևաչափերում ասված (թերթի հրատարակություններ, սոցիալական ցանցերում հրապարակումներ, հրապարակային ելույթներ) բոլոր երկխոսությունները, քննարկումները, կարծիքները միաձուլվում են մեկ ամբողջական ֆոնի, հոսքի մեջ, որում արդեն տեղի է ունենում կարծիքների «տեսակավորում»՝ ըստ թեմայի և ուղղվածության:

Այսպիսով, հանրային դիսկուրս կարելի է համարել հանրային ոլորտում առաջացող դիսկուրսը, որի գլխավոր բաղադրիչներից վերջին տարիներին դարձել են համացանցը և լրատվամիջոցները: Համացանցի զարգացման հետ, լսարանի ներկայացուցիչը վերածվեց հաղորդակցման լիարժեք դերակատարի, որը ոչ միայն սպառում է լրատվական արտադրանքը, այլև արտադրում է այն: Կարելի է ասել, որ ընդհանրապես համացանցը և մասնավորապես սոցցանցերը դառնում են հենց այն հաբերմասյան սրճարանը, որտեղ սոցիումի ներկայացուցիչները հավաքվում են հասարակական խնդիրների քննարկման համար. «լրատվական տարածությունը ինքն իրենով համարվում է սոցիալական տարածություն»[50]: Եթե խոսենք ոչ թե ընդհանուր համացանցի, այլ կոնկրետ սոցիալական ցանցերի մասին, ապա դիսկուրսը այնտեղ իրացվում է, որպես տարբեր թեմաների նվիրված բաց քննարկումների ամբողջություն («բաց ենթա-դիսկուրսներ»): Այդ թեմաներից որոշները ավելի մեծ հետաքրքրություն են առաջացնում քան մյուսները և համապատասխանաբար ավելի ինտենսիվ են քննարկվում, սակայն բոլոր դիսկուրսները իրացվում են բաց եղանակով, քանի որ դրանց մեջ կարող է ներառվել ցանկացածը. սոցցանցերն իսկզբանե ստեղծվել են որպես ազատ հաղորդակցության կառուցվածքներ, որոնք դիսկուրսիվ են իրենց էությամբ:

Աշխատանքը վերնագրված է «Խորհրդային և հետխորհրդային հուշարձանը արդի հայաստանյան հանրային դիսկուրսում», որտեղ

[50]Черепанова Т., «Неспособность к разговору», или Статус публичной сферы в информационном обществе: Х. Арендт и Ю. Хабермас // Известия Уральского федерального университета, Серия 3: Общественные науки, 2011, Т. 91, № 2, с.42.

կիրառված «արդի» բառը հոմանիշն է այժմյան, ներկայիս[51], ժամանակակից[52] բառերին: «Արդի» ասելով աշխատանքում նկատի ունենք հետխորհրդային ժամանակաշրջանը, որը մեզ համար սկսվում է 1991 թ.-ից, մասնակի նաև 1988թ.-ից, երբ հայտնվում է հանրությունը որպես հուշարձան տեղադրող դերակատար:

Աշխատանքում հիմնականում քննության են առնվում ՀՀ քաղաքներում տեղադրված («քաղաքային հուշարձաններ») հուշարձանները, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ գյուղական համայնքների հուշարձանային դաշտը փոքրածավալ է և կրկնվող (ՀՀ գյուղերում տեղադրվում են գերազանցապես Արցախյան ազատամարտի, Հայրենական պատերազմի, Սպիտակի երկրաշարժի և Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձաններ), իսկ այդ տարածքներում հայտնվող հուշարձանները հանրային հնչեղություն չեն ստանում և մաս չեն կազմում արդի հանրային դիսկուրսին: Այնուհանդերձ, մեր աշխատանքում անդրադարձ ենք կատարում նաև որոշ գյուղերում տեղադրված հուշարձանների, որոնց տեղադրման և այլ մանրամասները ակտիվորեն ներկայացվել են ՀՀ տարբեր լրատվամիջոցներում:

Աշխատանքի խնդիրներն են՝

1.Հետխորհրդային Հայաստանում հանրային տարածքներում հուշարձան տեղադրող սուբյեկտների փոխակերպումների ներկայացումը,

2.Հայաստանի քաղաքների հուշարձանային լանդշաֆտի բովանդակային փոխակերպումների ներկայացումը,

3.Հետխորհրդային Հայաստանի քաղաքներում հուշարձանների տեղադրության վայրերի և հուշարձանային հաղորդակցության պրակտիկաների փոխակերպումների ցուցադրումը,

4.Հայաստանի քաղաքների հուշարձանային լանդշաֆտի փոխակերպումներին նպաստած գործոնների բացահայտումը և ներկայացումը:

Ատենախոսությունն ունի հետևյալ կառուցվածքը: Առաջին

[51]Աղայան Է., նշվ. աշխ., էջ 128:
[52]Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, «ՍՍՀ Գիտությունների Ակադեմիա», 1967, էջ 94:

գլխում՝ «Հանրությունը և հանրային դիսկուրսը որպես իշխանական սուբյեկտներ», ներկայացվում են խորհրդային և հետխորհրդային տարիներին հուշարձան տեղադրող հիմնական սուբյեկտները, հանրության՝ հուշարձանային քաղաքականության վրա ունեցած ազդեցությունը: Խորհրդային տարիների Հայաստանի քաղաքների հանրային վայրերում հայտնված մոնումենտալ քանդակները կուսակցության և նրա ղեկավարի հստակ քաղաքակա-նության արդյունք էին և վերահսկվում ու իրականացվում էին մեկ կենտրոնից: Խորհրդային քաղաքացուն դե յուրե հատկացված էր դեր՝ խորհրդային քաղաքների լանդշաֆթների ձևավորման հարցում, սակայն այդ դերը ուղղորդվում և վերագրվում էր կենտրոնից և սահմանափակվում էր հիմնականում նոր տեղադրվող հուշարձանների նախաձեռնություններին համաձայնություն տալով և պաշտպանելով:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում անդրադառնում ենք հանրության և հանրային դիսկուրսի հուշարձանային քաղաքականության ակտիվ սուբյեկտ դառնալու նախադրյալներին: 1988 թ.-ի աղետի, արցախյան շարժման և Հայաստանի անկախացման արդյունքում հուշարձանների տեղադրման նախաձեռնող և իրագործող դերակատարություն ստացավ հանրությունը: Անհատների, տարբեր խմբերի կողմից տեղադրվող հուշարձանների այս նոր պրակտիկան ոչ միայն չարգելվեց նոր իշխանությունների կողմից, այլև որոշ դեպքերում նույնիսկ խրախուսվեց: Առաջին գլխի երրորդ ենթագլխում ներկայացնում ենք արդի Հայաստանում հուշարձանային քաղաքականության հիմնական պատասխանատուներին, նրանց ակտիվության մոտիվները: Վերջին տարիներին Հայաստանի հուշարձանային քաղաքականության վերահսկողությունը ամբողջությամբ անցավ քաղաքային իշխանությունների ձեռքը, ովքեր ոչ միայն սկսեցին վերահսկել այդ դաշտը, այլ դարձան հետխորհրդային քաղաքների լանդշաֆտների ձևավորման ամենաակտիվ սուբյեկտը:

Աշխատանքի՝ «Հուշարձանային լանդշաֆտի բովանդակային փոխակերպումները: Գաղափարախոսականի, գեղագիտականի, պատմականի և արժանավորի բավիղներում» գլխում (Գլուխ 2-րդ) փորձ

ենք կատարել նարկայացնել ԽՍՀՄ փլուզումից հետո տեղադրվող հուշարձանների բովանդակային փոխակերպումները, դրանց վրա ազդած գործոնները: Առաջին ենթագլխում անդրադառնում ենք խորհրդային տարիների հուշարձանային քաղաքականությանը: Քաղաքների հանրային վայրերում առաջնահերթ հայտնվում էին Հոկտեմբերյան մեծ հեղափոխության առաջնորդների, ներկայացու-ցիչների արձանները, Կոմունիստական կուսակցության առաջավոր գործիչների արձանները, տեղադրվում էին նաև արվեստի նշանավոր ներկայացուցիչների արձանները, առասպելական և գեղարվեստական կերպարների արձաններ, ինչպես նաև խորհրդային կոլեկտիվ հերոսների քանդակներ, որոնք բոլորը գաղափարականացված էին և պետք է ներկայացնեին հեղափոխության և Կոմունիստական կուսակցության հայացքները: Աշխատանքի երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում քննության ենք առնում Հայաստանի անկախացումից հետո նրա քաղաքների լանդշաֆտներում հայտնված նոր բովանդակության հուշարձանները: Հետխորհրդային Հայաստանի քաղաքների լանդշաֆտներում անկախության սկզբի տարիներին հայտնվեցին հայ ազատագրական պայքարի ներկայացուցիչների հուշարձանները, հետագայում հայ քաղաքական, հասարակական գործիչների արձանները, Հայաստանի բնակավայրերը պատեցին աղետի և պատերազմի զոհերին նվիրված հուշարձանները՝ փոխակերպելով խորհրդային տարիներին ձևավորված նշանային լանդշաֆտը: Արվեստի նշանավոր գործիչներին նվիրված նոր հուշարձանների կողքին անկախության տարիներին տեղադրվեցին նաև բարերարներին նվիրված արձանների, բարերարների նախաձեռնած արձաններ, կրոնական թեմատիկայով և սիմվոլիկայով հուշարձաններ, որոնք նորություն էին ՀՀ հանրային վայրերում: Երրորդ ենթագլխում անդրադառնում ենք խորհրդային որոշ հուշարձանների ճակատագրին անկախ Հայաստանում: ԽՍՀՄ փլուզումից հետո խորհրդային շատ հուշարձաններ հեռացվեցին Հայաստանի քաղաքներից՝ փոխարենը հյուրընկալելով նորերին կամ մնալով դատարկ, սակայն խորհրդային շատ հուշարձաններ վերաիմաստավորվեցին և մնացին իրենց տեղադրության նախկին վայրերում: Երկրորդ գլխի չորրորդ և հինգերորդ

ենթագլուխներում անդրադառնում ենք հուշարձանացման արժանի բովանդակության շուրջ հանրային դիսկուրսին, վերջին տարիներին ՀՀ քաղաքներում հայտնված մի շարք խնդրահարույց արձանների շուրջ քննարկումներին: Այստեղ անդրադարձել ենք նաև ՀՀ հանրային վայրերում հայտնվող նոր արձանների արվեստային, պատմական մեկնաբանություններին:

Ատենախոսական աշխատանքի երրորդ գլխում՝ վերնագրված «Հուշարձանի տարածքի ընտրությունը», ներկայացվում է հետխորհրդային Հայաստանում նոր հուշար-ձան տեղադրելու համար տարածքի ընտրության մոտեցումները: Առաջին ենթագլխում անդրադարձ է կատարվում խորհրդային ժամանակներում հուշարձանների տեղադրման տարածքի ընտրության քաղաքականությանը: Խորհրդային հուշարձանը ամբողջացնում էր քաղաքների առանձին հատվածների նշանային անընդհատությունը. վարչական շինություններով զբաղեցված տարածքի վրահսկում էին հեղափոխական և քաղաքական գործիչների արձանները, մշակութային շինությունների տարածքներն ամբողջացնում էին մշակութային գործիչների հուշարձանները: Աշխատանքի երրորդ գլխի երկրորդ ենթագլխում փորձ ենք կատարում ներկայացնել անկախ Հայաստանի նոր հուշարձանների տեղադրման տարածքների ընտրության քաղաքականությունը: Հայաստանի անկախացումը, սկզբնական շրջանում անհատների կողմից ինքնակամ տարբեր հուշարձանների տեղադրումը, քաղաքաշինության փոխակերպումները, նոր տարածքների առաջացումը, հների վերաիմաստավորումը, քաղաքային տարածքների և նրանցում տեղադրվող հուշարձանների վերարժևորումը մեծ ազդեցություն ունեցան նոր հուշարձանների տեղադրման տարածքների ընտրության փոխակերպումների վրա:
Երրորդ ենթագլխում անդրադառնում ենք հուշարձանների տեղադրման տարածքների վերաբերյալ արդի հանրային քննարկումներին: Քաղաքների կենտրոնները արդի հայաստանյան հանրային դիսկուրսում ձևակերպվում են որպես հուշարձան տեղադրելու ամենապրեստիժային և հարգի տարածքներ:

Աշխատանքի չորրորդ գլխում՝ վերնագրված «Հուշարձանը և հաղորդակցության նոր պրակտիկաները», ներկայացվում է

Հայաստանի անկախացումից հետո խորհրդ-դային և հետխորհրդային հուշարձանների հետ քաղաքացիների հաղորդակցության նոր պրակտիկաները: Առաջին ենթագլխում ներկայացնում ենք խորհրդային տարի-ներին հուշարձանների հորինվածքների, տեղադրման և ճարտարապետական լուծում-ների ընտրության մոտեցումները: Կոմունիստական կուսակցության վարած քաղաքա-կանությունը նպատակ ուներ հանրային տարածքներում տեղադրվող հուշարձանների հանդեպ ձևավորել գլխավորապես պաշտամունքային վերաբերմունք և սահմանել ու վերահսկել նրանց հետ քաղաքացիների հաղորդակցության պրակտիկաները: Երկրորդ ենթագլխում անդրադառնում ենք Հայաստանում հուշարձանների հետ բնակչության հաղորդակցության նոր պրակտիկաներին, դրանց դրսևորմանը նպաստող գործոնե-րին: Չորրորդ գլխի երրորդ ենթագլխում ներկայացնում ենք հետխորհրդային Հայաստանի քաղաքներում հայտնվող նոր տիպի հուշարձանների, նրանց հետ հաղորդակ-ցության նոր պրակտիկաների վերաբերյալ հանրային վերաբերմունքը, տոտալիտար համակարգին հատուկ մոնումենտալ հուշարձանների տեղադրման շուրջ դիսկուրսը:

ԳԼՈՒԽ1-ԻՆ: ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԴԻՍԿՈՒՐՍԸ ՈՐՊԵՍ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ

Նշվեց, որ արդեն անկախության համար շարժման ընթացքում, առանց իշխանության ցուցումների կամ նույնիսկ նրանց տեղեկացնելու, շարժման մասնակիցները ՀԽՍՀ տարբեր քաղաքներում որոշում էին մի շարք հուշարձանների ճակատագիրը: Սա, ըստ էության գուժում էր նոր իշխանական սուբյեկտի հանդես գալը: Պետք է նկատել, որ դեռևս 1988 թ. Շարժման արցախյան փուլի ժամանակ հանրությունը ուներ հուշարձան տեղադրելու փորձ, երբ Գյումրիում իր որոշմամբ Թատերական հրապարակի հարևանությամբ տեղադրեց Սումգայիթի զոհերին նվիրված հուշաքար: Նմանապես, Սումգայիթի զոհերի հիշատակին հուշարձան տեղադրվեց նաև Վանաձորի Սուրբ Աստվածածին եկեղեցու բակում: Նույն հանրությունը անկախացման բուն գործընթացից դեռ 1.5-2 տարի

առաջ Գյումրիում, իր համար նպատակահարմար ձևով և առանց իշխանությունների հետ համաձայնեցնելու հուշարձաններ կանգնեցնելու մեկ այլ փորձ էլ ունեցավ կապված ողբերգական առիթի՝ երկրաշարժի հետ: Անկախ վերոհիշյալ պատճառներից, այդ փորձերը որոշակի ինքնավստահություն ապահովեցին հանրության՝ որպես հուշարձանային քաղաքականության սուբյեկտի հետագա գործողությունների համար:

1.1 Խորհրդային իշխանությունների հուշարձանային քաղաքականությունը և խորհրդային քաղաքացին

Հայաստանի տարածքում, հանրային վայրերում առաջին հուշարձանները հայտնվեցին Հայաստանի խորհրդայնացումից հետո միայն: Մինչ Հայաստանի խորհրդայնացումը բնակավայրերի հանրային վայրերում քանդակագործական աշխատանքներ տեղադրված չեն եղել: Ցարական իշխանությունները արգելում էին մշակույթի ականավոր գործիչների պատվին հուշարձանների կառուցումը ոչ միայն հայերին, այլև կայսրության կազմի մեջ մտնող մյուս «փոքր ազգերին»[53]: Այդ տարիներին Հայաստանում թույլատրվում էր արձաններ կանգնեցնել միայն եկեղեցիների բակերում կամ գերեզմանոցներում, այն էլ բացառության կարգով[54]. Էջմիածնի Գևորգյան ճեմարանի բակում տեղադրվել էր Ռափայել Պատկանյանի կիսանդրին, իսկ Երևանի մեծահարուստներից Թայիրյանի բրոնզե կիսանդրին՝ նրա գերեզմանի վրա: Ինչ վերաբերում է Հայաստանի առաջին Հանրապետության շրջանին, ապա կառավարությունը որոշում էր կայացրել ազգային-ազատագրական պայքարի գործիչների հուշարձանները կառուցելու մասին[55], որը սակայն այդպես էլ չիրականացավ՝ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման պատճառով: Հայաստանի քաղաքային լանդշաֆտներում առաջին հուշարձանները հայտնվեցին խորհրդային տարիներին:

[53]Սարգսյան Մ. Ս., Հուշարձանային քանդակագործությունը Սովետական Հայաստանում, Պատմա-բանասիրական հանդես, № 2-3 . pp. 95-108, 1967, էջ 96:
[54]Անդ:
[55]Միրզախանյան Ռ., Կերպարվեստը և երաժշտությունը խորհրդային Հայաստանում /1921-1925 թթ./, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան Գիտական տեղեկագիր № 1-2 (26-27), Երևան, 2016թ, էջ 21:

1918 թ. ապրիլի 12-ին, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից կարճ ժամանակ անց, Խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհը Վ. Լենինի նախա-գահությամբ որոշում է կայացնում ռուսական սոցիալիստական հեղափոխության պատվին հուշարձանների նախագծեր մշակելու մասին: Լենինի անմիջական ցան-կությամբ պետք է հուշարձաններ ստեղծվեին հեղափոխական գործիչների, գիտու-թյան, գրականության և արվեստի առավել նշանավոր անձանց հիշատակին[56]: «Մոնու-մենտալ պրոպագանդայի» (կամ «Լենինյան մոնումենտալ պրոպագանդա») այս նախագիծը ապահովեց քանդակագործներին՝ քաղաքային հուշարձանների պատվեր-ներով, հանդիսանալով խորհրդային քանդակագործական դպրոցի զարգացման անմիջական խթան:

Խորհրդային իշխանությունները հուշարձանային քաղաքականության իրակա-նացման առաջնային միջոց էին ընտրել հուշարձանների տեղադրման համամիութե-նական, քաղաքային նախագծերի մրցույթների անցկացումը: Խորհրդային Հայաստանում հուշարձանային-մոնումենտալ քանդակագործությունը զարգացնելու և սոցիալիստական գաղափարախոսությունը տարածելու նպատակով Կոմունիստական կուսակցությունը և կառավարությունը 1922 թ. հունիսին հայտարարում են հուշարձանների լավագույն նախագծերի մրցույթ: Նմանատիպ մրցույթները կրում են շարունակական բնույթ և այդ մրցույթներում հաղթող ճանաչված նախագծերի հիման վրա, կառավա-րության պատվերով և ներդրած հսկայական պետական միջոցներով, Խորհրդային Միության ողջ տարածքում, այդ թվում Խորհրդային Հայաստանում, կառուցվում են բազմաթիվ նոր հուշարձաններ:

Մոնումենտալ պրոպագանդան չէր կենտրոնանում միայն քանդակագործության վրա, այլ պետք է ներառեր նաև արվեստի մյուս ուղղությունները (գրականություն, թատրոն, երաժշտություն, կերպարվեստ), որոնց աշխատանքներում կենտրոնական դեր պետք է հատկացվեր հեղափոխության և սոցիալիստական ապագայի թեմատի-

[56]Տե՛ս Սարգսյան Ս., Սովետական Հայաստանի քանդակագործությունը 1920-1930-ական թվականներին, Պատմա-բանասիրական հանդես, N 4, 1959, էջ 25-26:

կային, իսկ արվեստն ընհանրապես, ըստ Վ. Լենինի, պետք է «առաջ մղվեր որպես ագիտացիոն միջոց»[57]:

Հայաստանի խորհրդայնացումից հետո արվեստի տարբեր ուղղությունները բռնեցին նոր ոճի և մեթոդների որոնման ուղին: Բազմաբովանդակ և բազմաժանր աշխատանքների հետ մեկտեղ ստեղծվում էին նաև հեղափոխության և սոցիալիզմի թեմատիկայով բազմաթիվ աշխատանքներ, սակայն, 1932 թ. մայիսի 9-ից հետո միայն, երբ ուժի մեջ մտավ ՀամԿ(բ)Կ կենտրոնական կոմիտեի «Գրական-գեղարվեստական կազմակերպությունների մասին» որոշումը[58], ավարտվեց խորհրդահայ արվեստի որոնումների փուլը, և մշակույթի բոլոր ոլորտների համար պարտադրվեց սոցռեալիզմը[59]:

Այնուհանդերձ, նույնիսկ մինչ 1932 թ. որոշումը, պրոպագանդան սկսել էր ակտի-վորեն ազդել արվեստի բոլոր ուղղությունների աշխատանքների վրա: Օրինակ, 1926 թ. դրությամբ Հայաստանում կերպարվեստի աշխատանքներում հեղափոխության և սոց-շինարարության թեմատիկան կազմում էր ընդհանուր աշխատանքների միայն 6 տո-կոսը: Սակայն, տեսնում ենք, որ 1926-1931 թթ. ընթացքում ստեղծագործական տարբեր ընկերությունների կազմակերպած ցուցահանդեսների ժամանակ ներկայացված ցուցանմուշներում հեղափոխության և սոցշինարարության թեմատիկայով գործերը ընդհանուր աշխատանքների համեմատ աննախադեպաճ գրանցեցին՝ հասնելով ընդհուպ մինչև 71.5 տոկոսի[60] (1931 թ.): Մինչև 1932 թ. հայ կերպարվեստի զարգացման ուղիների տեսական որոնումներն ավարտվեցին սոցռեալիզմի մեթոդաբանության ձևավորմամբ[61]: Կերպարվեստի հետ մեկտեղ, խորհրդային սոցիալիզմի գաղափարախոսության պարտադրանքի պայմաններում հաջողությամբ խուսանավում և որոշակիորեն ինքնակամ էր զարգանում նաև խորհրդահայ երաժշտական արվեստը, որը մյուս ճյուղերի համեմատ ավելի ընդգրկուն զարգացման ընթացք էր որդեգրել, որովհետև նրա վրա համեմատաբար քիչ ճնշում

[57]Луначарский А. В., Статьи об искусстве, М., 1941, с. 449.
[58]Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 12 մայիսի, 1932, № 117:
[59]Արվեստի կապը կյանքի հետ, նրա մասնակցությունը սոցիալիզմի կառուցմանը:
[60]Միրզախանյան Ռ., Կերպարվեստը և ճարտարապետությունը Հայաստանում 1925-1932 թթ., Բանբեր Երևանի պետական համալսարանի, Երևան, 2017, էջ 72-73:
[61]Անդ, էջ 74:

էր գործադրվում օրվա իշխանությունների կողմից[62]: Այնուհանդերձ, խորհրդային արվեստի բոլոր ուղղությունները անպայմանորեն անդրադառնում էին պրոպագանդայի թեմատիկային՝ տարեցտարի մեծացնելով իրենց ստեղծագործություններում հեղափոխության և սոցիալիզմի թեմատիկայի պատկերման չափաբաժինը, մինչ այն պահը, երբ սոցռեալիզմը դոմինանտդարձավ մշակույթի բոլոր դրսևորումներում:

1921-1923 թթ. Հայաստանի տարածքում տեղադրվում են Մարքսի, Էնգելսի, Լենինի քանդակները, Ստ. Շահումյանի, մայիսյան ապստամբության ղեկավարներից Ստ. Ալավերդյանի արձանները, 14 կոմունիստների հուշարձանը և այլ քանդակներ, սակայն մոնումենտալ պրոպագանդայի այս փուլի աշխատանքները որակական հարթությունում բարձր գնահատական չեն ստանում, իսկ նրանց մի մասը նույնիսկ հեռացվում են բնակավայրերի հանրային վայրերից: Նմանատիպ քանդակները ցածր գնահատական են ստանում պաշտոնական դիրքերից և մեկնաբանվում են որպես անհամապատասխան՝ «սոցիալիստական կարգերը թևակոխած ժողովրդի աճող ու կազմակերպվող ճաշակին և պահանջներին»[63]: Արդյունքում, 1923 թ. վերջերին, այդ հուշարձանների քննադատությամբ հանդես եկող Լուսժողկոմատը (Լուսավորության ժողովրդական կոմիսարիատ) դիմում է Հայաստանի կառավարությանը, որպեսզի իրավունք ստանաստեղծել ու հատուկ հանձնաժողով, որը «պատմական ճշմարտացիության և գեղարվեստական արտահայտչականության տեսակետից պետք է վերանայի անցյալում կանգնեցված հուշարձանները և հսկի նոր նախագծերի հաստատումն ու արձանների կանգնեցումը»[64]: 1923 թ. նոյեմբերին ՀՍԽՀ Կենտգործ-կոմի նախագահությունը նշանակում է հատուկ հանձնաժողով՝ Լուսավորության ժողովրդական Կոմիսար Ա. Մռավյանի նախագահությամբ, որն անցնում է աշխատանքի և մինչև 1925-1926 թթ. հանում է 1921-1923 թթ. կանգնեցված հուշարձանների մեծ մասը[65]:

---

[62]Միրզախանյան Ռ., Կերպարվեստը և երաժշտությունը խորհրդային Հայաստանում /1921-1925 թթ./, նշվ. աշխ., էջ 26:
[63]Հարությունյան Վ., Լենինյան մոնումենտալ պրոպագանդան Հայաստանում, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Տեղեկագիր, 1957, №4, էջ 52:
[64]Անդ:
[65]Անդ:

Այնուհանդերձ, չպետք է մոռանալ, որ խորհրդային կարգերի հաստատման առաջին տարիներին պետությունը ֆինանսական ծանր դրության մեջ էր, և նորաստեղծ քանդակների մի մասն իրենցից ներկայացնում էին փոքրածավալ աշխատանքներ, իսկ նրանցից շատերը պարզապես գիպսից էին պատրաստված, որոնք, համաձայն Լենինի, պետք է ժամանակավոր բնույթ կրեին և ժամանակի ընթացքում փոխարինվեին նոր հուշարձաններով[66]: Ուստի կարծում ենք, որ հեռացված հուշարձանների մի հատվածը հնարավոր է հեռացվել էին ոչ թե գեղարվեստական թերարժեքության պատճառով, այլ պարզապես հետագայում՝ առավել թանկարժեք հուշարձաններով փոխարինվելու նպատակով:

Խորհրդային Միության ողջ գոյության ընթացքում նոր հուշարձանների տեղադրման պատճառ և առիթ են դառնում պատմական որոշ իրադարձություններ, որոնք հուշարձանացման նոր թիրախ են դառնում կուսակցության համար: 1924թ. հունվարի 21-ին մահանում է Վ. Լենինը՝ ինքը դառնալով «Մոնումենտալ պրոպա-գանդայի» հիմնական գործող նշանը: Երևանի գործկոմը 1924 թ. հունվարի 26-ին որոշում է կայացնում նախկին պարետային վարչության շենքի առաջ գտնվող հրապարակը անվանել Լենինի անունով[67], իսկ Հայաստանի Կոմունիստական կուսակ-ցության Կենտրոնական Կոմիտեի, Կենտգործկոմի, ժողկոմխորհի և Արհմիությունների խորհրդի նախագահության միացյալ նիստում որոշում է կայացվում Լենինի հիշատակը հավերժացնելու համար Երևանի Լենինի անվան հրապարակում կառուցել նրա հուշարձանը[68] (նկ. 1): Վ. Լենինի բազմաթիվ հուշարձաններ են կառուցվում խորհրդային Հայաստանի ողջ տարածքով, նրա մոնումենտալ հուշարձանները, արձանները, կիսանդրիները պատում են խորհրդային քաղաքների կենտրոնները և հանրային այլ վայրերը: Նմանատիպ իրավիճակ է ստեղծվում նաև Միության առաջնորդներից մյուսի՝ Ի. Ստալինի կառավարման

[66]Ֆինանսական խնդիրների առկայության պարագայում, նմանատիպ սակավ ծախսատար և արագ կառուցվող հուշարձանների կանգնեցումը կնպաստեր նաև մոնումենտալ պրոպագանդայի տարածմանն ու ամրապնդմանը. տե՛ս Шалаева Н. В., План советской монументальной пропаганды: проблемы реализации. 1918–1921 годы, Вестник Челябинского государственного университета, 2014, № 8 (337), с. 30-32.

[67]Տե՛ս Սարգսյան Ս., Սովետական Հայաստանի քանդակագործությունը 1920-1930-ական թվականներին, Պատմա-բանասիրական հանդես, N 4, 1959, էջ 25-26:

[68]Անդ:

տարիներին, երբ խորհրդային բոլոր քաղաքներում հայտնվում են նաև նրա արձանները:

1945 թ. ԽՍՀՄ կառավարությունը նոր որոշում է ընդունում, որի համաձայն նոր հուշարձաններ պետք է կառուցվեին՝ նվիրված խորհրդային Միության հերոսների, ինչպես նաև անցյալի հեղափոխական և մշակութային նշանավոր գործիչների հիշատակին: Դրանից հետո պարբերաբար հայտարարվում էին հանրապետական և համամիութենական մրցույթներ՝ հուշարձանների լավագույն նախագծերի համար:

Խորհրդային տարիներին իշխանությունները հանդիսանում էին հուշարձանային քաղաքականության նախագծման և իրականացման հիմնական սուբյեկտը: Պատվերներ տալուց զատ, նրանք նաև վերահսկում էին տեղադրվող հուշարձանների և՛ ձևը, և՛ բովանդակությունը: Այդուհանդերձ, հուշարձանների կերտումը և տեղադրումը չէր սահմանափակվում կուսակցություն-քանդակագործ հարաբերություններով, և իշխանությունների կողմից խորհրդային քաղաքացուն որոշակի դերակատարում էր վերագրվում: Խորհրդային քաղաքացին պետք է հուշարձանային քաղաքականության մասնակից դառնար: Քաղաքացին պետք է ոչ միայն «համաձայնություն տար» և «պաշտպաներ» տեղադրվող հուշարձանի նախաձեռնությունները, այլև երբեմն նույնիսկ պետք է հանդես գար որպես նոր հուշարձանի գաղափարի ջատագով կամ նույնիսկ «նախաձեռնող»: Առաջնորդների, հեղափոխական և խորհրդային քաղաքական գործիչների հուշարձանների տեղադրումը ներկայացվում էր որպես խորհրդային աշխատավորների «պահանջ», «ցանկություն» և որպես հանրային պարտք՝ տվյալ հերոսների հանդեպ: Խորհրդային Հայաստանի քաղաքների լանդշաֆտներում հայ մշակութային հայտնի գործիչների հուշարձանների ի հայտ գալը կապվում է հասարակության «ցանկության» հետ. 1922 թ. հունվարի 26-ին Երևանի առաջին պետական թատրոնի բացման ժամանակ դերասանները առաջ են քաշում Գ. Սունդուկյանի կիսանդրին կանգնեցնելու հարցը[69]: Նմանապես, 1923 թ. Հովհ. Թումանյանի մահվան կապակցությամբ, նրա հիշատակը հավերժացնելու համար, հայ գրողներն ու

[69]Սարգսյան Մ. Ս., նշվ. աշխ., էջ 26:

արվեստագետներն իրենց միացյալ ժողովում ցանկություն են հայտնում, որ «քաղաքի հրապարակներից մեկում Հուվի. Թումանյանի արձանը կանգնեցվի[70]»: Խորհրդային քաղաքացու ակտիվությունը հուշարձանային քաղաքականության իրականացման հարցում հատկապես մատնանշվում է հեղափոխության առաջնորդին նվիրված հուշարձանների կառուցման հարցում. «Սովետական Հայաստանի աշխատավորներն իրենց միտինգներում ու ժողով-ներում ցանկություն հայտնելով շուտափույթ կառուցելու Լենինի հուշարձանը միահամուռ որոշում են իրենց միջոցներով հանգանակությամբ մասնակցել այդ հուշարձանի կառուցմանը: Լենինի հուշարձանի կառուցումը Հայաստանում դառնում է համաժողովրդական գործ[71]»: Կուսակցության առաջնորդների արձանների տեղադրումը հուշարձանային պրոպագանդայի ամենակարևոր բաղադրիչն էր հանդիսանում խորհրդային ողջ պատմության ընթացքում: Լենինի և Ստալինի արձանների առկայությունը կարևոր ցուցիչ էր ցանկացած համայնքի համար, և համայնքների ղեկավարները ամեն ինչ անում էին իրենց բնակավայրում հյուրընկալելու նրանց արձաններից գոնե մեկը: Նմանատիպ արձանի տեղադրումը դառնում էր նաև ողջ համայնքի համար պատվի և պրեստիժի հարց, իսկ միևնույն շրջանի քաղաքներ և գյուղեր նույնիսկ մրցում էին միմյանց հետ՝ առաջնորդների արձանները իրենց գյուղում հյուրընկալելու համար: Օրինակ, խորհրդային տարիներին Սպիտակի շրջանի հարևան գյուղեր միմյանց հետ մրցել են՝ Ստալինի արձանը իրենց գյուղում հյուրընկալելու համար (մյուս գյուղին բաժին պետք է հասներ արդեն Լենինի արձանը)[72]:

Այնուամենայնիվ, խորհրդային տարիներին դեպքեր են գրանցվել, երբ քաղաքացին նախաձեռնել և տեղադրել է հուշարձան սեփական կամքով՝ հաշվի չառնելով իշխանությունների քաղաքականությունը: 1960-ական թվականներին զորավար Անդրանիկի արձաններ են տեղադրվել Ցեղասպանությունից փրկված սասունցիներով բնակեցված Ուջան և Աշնակ գյուղերում՝

[70]Անդ:
[71]Անդ:
[72]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Սպիտակ, 2017, օգոստոս:

տեղացիների ջանքերով և միջոցներով: Սակայն, խորհրդային իշխանությունները չէին պատրաստվում հաշտվել նման պրակտիկայի հետ՝ ամեն ջանքով փորձելով հանել այդ արձանները հանրային վայրերից[73]:

Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի կառուցումը կարելի է դիտարկել որպես վերոնշյալ լոկալ քաղաքացիական շարժումների արդեն համազգային դրսևորում, երբ հուշահամալիրի կառուցման գործընթացին և աշխատանքներին մասնակցում էին գրեթե բոլորը: 1965 թ. ապրիլի 24-ին տեղի ունեցած ցույցը Երևանի Լենինի հրապարակ դուրս բերեց շուրջ 25.000 մարդու: Այդ քաղաքացիները դուրս էին եկել փողոց Ցեղասպանության 50-րդ տարելիցի օրը՝ պահանջելով ոչ միայն Հայոց Ցեղասպանության ճանաչումը, որը տաբու էր խորհրդային տարիներին, այլև զավթված հողերի վերադարձը: Արդյունքում ազգային հուշարձանների կառուցման բում սկսվեց Հայաստանում, որն այդքան էլ հեշտ գործընթաց չէր: Նույն Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի կառուցման աշխատանքները փորձում էին արագ ավարտին հասցնել, քանի դեռ Մոսկվայում չէին «փոշմանել» հուշարձանի կառուցման թույլտվություն տալու համար[74]: Ծիծեռնակաբերդի, Սարդարապատի ճակատամարտի հուշահամալիրների (բացումը 1968թ.) և այլ ազգային հուշարձանների կառուցումը անպայման ընթանում էր սոցիալիստական գաղափարախոսությունն արտահայտող այլ հուշարձանների «հիբրիդային» քաղաքականության իրականացմամբ, երբ զուգահեռ Հայաստանի հանրային վայրերում տեղադրվում էին նաև ազգությամբ հայ հեղափոխական գործիչների արձաններն ու կիսանդրիները՝ վերահաստատելով Հայաստանի «հավատարմությունը սոցիալիստական ավանդույթին»[75]: Այս համատեքստում հետաքրքրական է նաև 1968թ. Մայր Հայաստանի հուշարձանի տեղադրումը Երևանում, որը կապված էր Հայրենական պատերազմում տարած հաղթանակի մոտակա տարեդարձի հետ. նոր

[73]Խառատյան Հ., Շագոյան Գ., Մարության Հ., Աբրահամյան Լ., նշվ. աշխ, էջ 270:
[74]Անդ, էջ 273:
[75]Lehmann M., Apricot Socialism: The National Past, the Soviet Project, and the Imagining of Community in Late Soviet Armenia, Slavic Review 74, no. 1 (Spring 2015), p. 29.

արձանը ոչ միայն հաղթանակի արժևորմանն էր ուղղված, այլև նրա ազգայնացմանը[76]:

Չնայած, ազգային հուշարձանների կանգնեցմանն ուղղված 1960-80-ական թվականների նախաձեռնությունների տարածմանը, ուշագրավ է, որ այդ տարիներին «հուշարձանների տեղադրման նախաձեռնությունները հիմնականում «թուրքահայերինն» էին, ովքեր, կարծես խորհրդային Հայաստանում ազգային արժեքների իրավունքի վերահաստատման ավելի շատ ջանքեր էին գործադրում»[77]:

Խորհրդային տարիներին Կոմունիստական Կուսակցությունն էր գերազանցապես հանդիսանում հուշարձանային քաղաքականության և՛ նախաձեռնողը, և՛ այն իրականացնողը, իսկ խորհրդային քաղաքացուն հատկացվել էր նոր հուշարձանների տեղադրման ջատագովի, պաշտպանողի և համաձայնողի դերը, իսկ իբրև նախաձեռնող հանդես գալու վարքը հաճախհրահանգված և ուղղորդված էր վերևից:

Խորհրդային քաղաքացիները կարող էին չհավանել կուսակցության որոշմամբ տեղադրված որոշ արձանները, քննադատել այդ քանդակների արվեստային հորինվածքային ասպեկտները, սակայն այդ կարծիքները անպատասխան էին մնում և բողոքներն ու դժգոհությունները որևէ ազդեցություն չէին ունենում հուշարձանների ճակատագրի վրա: Հանրային քննադատության առարկա էր դարձել, օրինակ, Երևանի Օղակաձև զբոսայգում 1975 թ.-ին տեղադրված սպարապետ Վարդան Մամիկոնյանի արձանը (նկ. 2): Մոնումենտալ այդ հուշարձանը քննադատվում էր արվեստային հարթությունում՝ արձանը համարելով անհաջող աշխատանք, այն համեմատելով շաքարաքլորի հետ (պատվանդանի վրա խոյացող հեծյալ արձանը նմանեցվում էր փայտի վրա տեղադրված այդ քաղցրավենիքին), և նույնիսկ առաջարկներ եղան արձանը փոխարինել նորով՝ առավել հաջողվածով: Հանրային վրդովմունք էր առաջացել նաև Կապանի կենտրոնում 1978 թ. զորավար Դավիթ Բեկին պատկերող հուշարձանի (նկ. 3) կանգնեցումը: Հեծյալ զորավարը Երևանում տեղադրված նույն Մամիկոնյանի պես ձեռքում թուր էր կրում՝ կարծես այն պարզած առաջ սլանալով թշնամիների դեմ: Սակայն, հուշարձանի բացման արարողության ժամանակ ներկա

[76]Անդ:
[77]Խառատյան Հ., Ծագոյան Գ., Մարության Հ., Աբրահամյան Լ., նշվ. աշխ., էջ 274:

գտնվող խորհրդային այլ պետությունների պատվիրակները անհանգստություն էին հայտնել, որ արձանը կարող է ընկալվել որպես սպառնալիք՝ հարևան խորհրդային Ադրբեջանին (զորավարի արձանը դեմքով ուղղված էր դեպի հարևան երկիրը): Արդյունքում, զորավարի ձեռքից հանվեց թուրը՝ առաջացնելով տեղի բնակչության դժգոհությունը, ովքեր խորհրդային մնացած տարիների ընթացքում բազմիցս փորձեր էին կատարում վերադարձնել թուրը իր նախկին տեղը[78]: Երկու դեպքերում էլ, հանրային այս բողոքը, քննադատությունը մնացին անպատասխան և չհանգեցին ոչ մի փոփոխության, քանզի հուշարձանների ճակատագիրը Կոմունիստական Կուսակցության ձեռքերում էին միայն:

Այնուամենայնիվ, խորհրդային միության տարիներին Հայաստանի բնակիչը ականատես եղավ արձանի տեղահանման պրակտիկայի, որը Կոմունիստական Կուսակցության որոշման արդյունք էր: ԽՍՀՄ առաջնորդ Իոսիֆ Ստալինի մահից հետո և, «անձի պաշտամունքի դատապարտման» տարիներին տեղահանվեցին և ոչնչացվեցին Ստալինի բոլոր հուշարձանները ԽՍՀՄ բոլոր համայնքների հանրային վայրերից: Բացառություն չկազմեց նաև խորհրդային Հայաստանը. Ստալինի նվիրված գլխավոր արձանը տեղադրված էր Երևանում՝ ներկայիս Մայր Հայաստան հուշարձանի պատ-վանդանին և տեղահանվեց 1962 թ.-ին: Ստալինին նվիրված հուշարձանը հանվեց նաև Եղեգնաձորի կենտրոնից՝ Լենինի արձանի հարակից տարածքից[79]: Ստալինի արձաններ են տեղադրված եղել Լոռվա մարզի Սպիտակ և Արմավիրի մարզի Արմավիր քաղաքների երկաթգծի կայարանների դիմաց և երկու դեպքում էլ այդ արձանները տեղահանվել են 1950-ական թվականների վերջերին՝ փոխարենը հյուրընկալելով Լենինի արձաններին: Լենինի արձանը փոխարինել է Ստալինի արձանին նաև Աշտարակ քաղաքի գլխավոր հրապարակում: Իշխանությունները տեղահանեցին նաև ԽՍՀՄ պետական քաղաքական գործիչ Լավրենտի Բերիային նվիրված բոլոր հուշարձանները, որը, Ստալինի արձանների տեղահանության հետ միասին, գաղափարախոսական փոփոխության աղերս նույնիսկ

[78]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Կապան, 2017, օգոստոս:
[79]Ներկայումս երկու արձանների պատվանդանները գտնվում են միմյանց կողքի՝ Եղեգնաձորի կենտրո-նում գտնվող սրճարաններից մեկի տարածքում:

չուներ, այլ կուռքերի վերադասավորության դրսևորում էր ընդամենը[80]:

1.2 Հանրությունը որպես հուշարձան տեղադրող նոր սուբյեկտ

Հայաստանի հանրությունը արդեն մինչ ԽՍՀՄ փաստացի փլուզումը հանդես եկավ որպես հուշարձան տեղադրող սուբյեկտ, որի համար նախադրյալներ հանդիսացան պատմական մի քանի կարևոր իրադարձություններ: Հետխորհրդային Հայաստանի նշանային լանդշաֆտի ձևավորման վրա իր ազդեցությունը չէր կարող չունենալ 1988 թ.-ին սկիզբ առած և մինչև 1994 թ.-ևն ընթացած Արցախյան շարժումը և Արցախի ազատագրական պատերազմը: Պատերազմի զոհերի հիշատակումը դարձավ ՀՀ բոլոր քաղաքների, միջին և փոքր համայնքների լանդշաֆտների նշանային ձևավորման հիմնական թեմաներից մեկը: Քաղաքների հանրային տարածքներում հայտնվեցին հուշարձաններ նվիրված ինչպես անհատ ազատամարտիկների, այնպես էլ նրանց խմբերի հիշատակին, թաղային, բակային և հանրային վայրերում հուշարձաններ տեղադրվեցին նաև անհատների, մարդկանց առանձին խմբերի կողմից՝ նվիրված իրենց բարեկամ, ընկեր զոհերին և վաղաժամ կյանքից հեռացածներին:

1988 թ. գարնանը Գյումրիում հանրությունը (արցախյան շարժման բազմությունը) իր նախաձեռնությամբ և միջոցներով հուշարձան տեղադրեց Գյումրու Թատերական հրապարակի (այն ժամանակ հանրության մեջ արդեն հայտնի էր Ազատության հրապարակ անունով) հարևանությամբ, որը նվիրված էր Սումգայիթի զոհերին[81], որն այսօր էլ նույն վայրում կանգուն է:

Հայաստանի քաղաքների նշանային լանդշաֆտում հանրության կողմից փոփոխություններ կատարելու համար նախադրյալ հանդիսացավ նաև 1988 թ.-ի աղետալի երկրաշարժը: Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի զոհերի բազմաթիվ հուշարձաններից (և՛ պաշտոնական, և՛ մասնավոր ջանքերով տեղադրված) բացի,

[80]Խառատյան Հ., Ծագոյան Գ., Մարության Հ., Աբրահամյան Լ., նշվ. աշխ, էջ. 281:
[81]Այդ ընթացքում Հայաստանը նաև սկսել էր Ադրբեջանից փախստականներ ընդունել և Գյումրիում նույնպես բարեգործական շարժում էր սկսվել նրանց հյուրընկալելու և բնակարանով ապահովելու ուղղությամբ:

երկրաշարժի թեման ներկայացված է նաև հանրապետության մյուս բնակավայրերում ևս, որտեղ նմանատիպ հուշարձանների նախաձեռնող էին հանդիսանում աղետի գոտուց Հայաստանի այլ բնակավայրեր մեկնածները. օրինակ, Գորիս քաղաքի Քոլատակ կոչվող թաղամասում Լենինականից (Գյումրի) մեկնածները տեղադրում են երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան, որի կողքին տեղադրում են նաև Լենինականի ավերակներից տարված մի քար (նկ. 4): Նման կերպով երկրաշարժի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան է հայտնվում նաև Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում[82] (նկ. 5):

Հետխորհրդային Հայաստանի հանրային վայրերում անկախության առաջին տարիներին առավել հաճախ հայտնվող հուշարձանների մի խումբն էլ 1915 թ.-ի Հայոց Ցեղասպանության անմեղ նահատակների հիշատակին նվիրված կոթողներն են: ԽՍՀՄ փլուզումից հետո ցեղասպանության թեման դարձավ դիսկուրսիվ դաշտի գերիշխող թեմաներից մեկը՝ մեծ ազդեցություն ունենալով նորանկախ պետության թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքական ուղու վրա:

Քաղաքական գործիչներին և ոչ վաղ անցյալի պատմության հերոսներին նվիրված հուշարձաններ կանգնեցնելու պրակտիկան իշխող էր Հայաստանի անկախացման առաջին տարիներին, երբ ՀՀ տարբեր քաղաքներում հայդուկ-հերոսներին և Հայաստանի 1-ին հանրապետության ղեկավարներին նվիրված բազմաթիվ արձաններ էին կանգնեցվում, պուրակներ բացվում և փողոցներ ու հրապարակներ անվանակոչվում, սակայն հայ ազատագրական պայքարի հերոսների հուշարձանացումը Հայաստանի հանրային վայրերում սկսվել էր դեռ 1989 թ.-ից և շարունակվեց մինչ 1990-ականների սկիզբը: Հայդուկներին նվիրված ճեմուղիներ, արձանների պուրակներ և առանձին հուշարձաններ հայտնվեցին Գյումրիում, Ջերմուկում, Գորիսում, Վայքում, Արտաշատում և այլ քաղաքներում, ինչպես նաև միջին և փոքր այլ բնակավայրերում[83]:

[82]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Սյունիք, 2017, օգոստոս:
[83]Հայդուկների հուշարձանների բացումը որոշակի իմաստով նույնպես կարող է շատ տեղերում արձա-նագրվել իբրև հանրային ակտիվություն, որովհետև դրանցում ներգրավված էին թաղային ակտիվը:

Ազատագրական պայքարի ընթացքում հաշվի առնելով պայքարի համատեքստը հանրային վայրերում տեղադրվեցին նաև ազգային ազատագրական պայքարի այլ հերոսների հուշարձաններ: Բնակավայրերի այգիներում, պուրակներում և հրապարակներում հատնվեցին ազգային ազատագրական պայքարի հերոսներ՝ Գևորգ Չաուշի (Արտաշատ, Ջերմուկ, Վայք, Գորիս), Աղբյուր Սերոբի (Ջերմուկ, Գորիս), Անդրանիկի (Երևան, Գյումրի, Կապան, Գորիս և այլ քաղաքներում), Նժդեհի (բազմաթիվ քաղաքներում և բնակավայրերում) և այլ ռազմական գործիչների արձաններ: Տեղադրվել են նաև Մախլուտոյի, Արաբոյի, Հրայր Դժոխքի, Նիկոլ Դումանի և ազատագրական պայքարի այլ հերոսների արձաններ: Գյումրու «թուրքի մայլա» կոչվող թաղամասի բնակիչների նախաձեռնությամբ 1989 թ.-ին քաղաքի «Լիճ» կոչվող հատվածում (ներկայում Արցախ փողոցի սկզբնամաս) տեղադրվեցին զորավար Անդրանիկի հուշարձանը (նկ. 6) և հայ ազգային ազատագրական պայքարի գործիչների 15 բրոնզաձույլ դիմաքանդակներ (նկ. 7), որոնք հետագայում քաղաքային իշխանությունների կողմից տեղափոխվել են Հաղթանակի զբոսայգու հարավային մուտքի հատված, իսկ տարածքը վերանվանվել է Զորավար Անդրանիկի հրապարակ: 1990 թ.-ին Գորիսի կենտրոնական հատվածներից մեկում տեղադրվեցին հայդուկների արձաններ, որոնք հետագայում տեղափոխվել են տեղի զինվորական մասի տարածք:

Նշված բոլոր հուշարձանների կառուցումը և տեղադրումը իրականացվել էր թա-ղերի բնակիչների, թաղային հեղինակությունների կողմից, ովքեր իրենց միջոցներով և նախաձեռնությամբ դիմում էին քանդակագործներին և հետագայում նրանց պատրաս-տած հուշարձանները տեղադրում իրենց բնակավայրերում: Այնուհանդերձ, քաղաք-ների հանրային տարածքներում նմանատիպ փոփոխությունները չէին անցնում առանց քաղաքային իշխանությունների մասնակցության. իշխանության տարբեր ներկայացու-ցիչները մասնակցում էին այդ կոթողների բացման արարողություններին՝ այդ կառույց-ներին տալով պաշտոնական կարգավիճակ, սակայն բոլորը լավատեղյակ էին

այդ հու-շարձանների իրական պատվիրատուների մասին[84]: Առօրյայում այդ հուշարձանները հաճախ հիշատակվում էին հենց որպես թաղերի բնակիչների ու թաղային հեղինա-կությունների արժանիքներ, նրանց կողմից կատարված բարի գործ և աշխատանք:

Հետխորհրդային Հայաստանի բնակավայրերում անկախության հենց առաջին տարիներին հայտվեցին նաև արցախյան ազատամարտի զոհերին նվիրված հուշարձաններ, որոնց նախաձեռնող էին հանդես գալիս անհատները, թաղային հանրույթը, տարբեր խմբեր, հեղինակություններ: Նմանատիպ հուշարձաններ հայտնվում էին ոչ միայն գերեզմանային տարածքներում, եկեղեցիների բակերում և հարող տարածքներում, այլև քաղաքների և այլ բնակավայրերի հանրային վայրերում: Ազատամարտի զոհերին նվիրված հուշարձաններ հայտնվեցին Իջևանի կենտրոնական պուրակներից մեկում (1993 թ.), Դիլիջանի Հայրենական պատերազմի հուշարձանի հարակից տարածքում, Գորիսում՝ Քոլատակ կոչվող թաղամասում (1993 թ.), Կապանի թաղամասերից մեկի բակում, Վանաձորում, Գյումրիում, Երևանում և ՀՀ բազմաթիվ բնակավայրերում: Ազատամարտի հերոսների հիշատակին նվիրված այս բոլոր հուշարձանները անհատների, խմբերի, թաղային հանրույթի և առանձին թաղային հեղինակությունների ջանքերով և միջոցներով տեղադրված կոթողներ են, որոնց բացման արարողություններին գրեթե միշտ մասնակցություն էին ունենում նաև համայնքային իշխանությունների ներկայացուցիչները: Նմանատիպ հուշարձանների տեղադրումը կապվում են այդ կոթողների գերեզմանային ընկալումների հետ, իսկ «հայոց մեջ գերեզմանոցը ևս, ավանդույթի ուժով, բարեկարգվում էր համայնքի անդամների հանգանակությունների կամ պարզապես համայնքի (այլ ոչ պետական) բյուջեի հաշվին»[85]: նմանատիպ ընկալման դրսևորում էր նաև Ծիծեռնակաբերդի Ցեղասպանության զոհերի հուշահամալիրի կառուցման ժամանակ մի քանի մտավորականներ առաջարկը՝

[84]Атанесян Г., Общество и монументальная политика в последние годы СССР и первые годы независимости Армении, Caucaso-Caspica, Выпуск II, Изд-во РАУ, 2017, с. 35.
[85]Մարության Հ., Հուշարձանը որպես գերեզմանոց (Ցեղասպանության հուշահամալիրի օրինակով), Հայ ժողովրդական մշակույթ, XIII, «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2006, էջ 174:

հուշարձանի կառուցումն իրականացնել բնակչության միջոցների հաշվին[86]:

Այնուհանդերձ, Հայաստանի անկախության հետագա տարիներին հանրության ակտիվությունը որպես հուշարձան տեղադրող սուբյեկտի՝ գնալով մարեց և 1990-ական թվականների վերջերից սկսած հուշարձանային քաղաքականությունը իրենց ձեռքը վերցրին քաղաքային իշխանությունները, որոնք կամաց-կամաց սկսեցին վերահսկել քաղաքային լանդշաֆտներում իրականացվող փոփոխությունները: Հանրության մաս-նակցությունը հուշարձանային քաղաքանությանը սկսեց աստիճանաբար սահմանա-փակվել քաղաքային իշխանությունների նախաձեռնությամբ տեղադրվող հուշարձանների բացման արարողություններին և ԶԼՄ-ներով հուշարձանային իրադարձությունների ներկայացումը սպառելով: 2000-ական թվականների կեսերից սկսած հանրությունը կարծես փողոցային ակտիվությունից գերազանցապես տեղափոխվեց վիրտուալ ակտիվություն:

Վերջին տարիներին ՀՀ քաղաքներում տեղադրվող շատ հուշարձաններ, ի մասնավորի՝ Երևանում ու Գյումրիում տեղադրվող գրեթե յուրաքանչյուր հուշարձան հանրային բուռն քննարկման նյութ է դառնում հիմնականում սոցցանցերում: Վերջին տարիներին, համայնքային իշխանությունների նախաձեռնությամբ և ցանկությամբ իրականացվող հուշարձանային քաղաքականության պայմաններում, երբ գրեթե բոլոր նոր հուշարձանների նախագծերը ընդունվում են առանց հանրային լսումների և քննարկումների, տեսնում ենք, որ հանրային դիսկուրսը սկսել է հանդես գալ որպես այդ քաղաքականության սուբյեկտ՝ ժամանակ առ ժամանակ հանդիսանալով զսպաշապիկ՝ իշխանական «կամայականությունների» դեմ, ինչը հստակ երևում է վերջին տարիներին Հայաստանում տեղադրվող մի քանի արձանների օրինակներում:

2014թ. ապրիլի 30-ին, երբ Երևանի քաղաքապետարանը որոշեց տեղադրել խորհրդային գործիչ Անաստաս Միկոյանի հուշարձանը Երևանի կենտրոնում, այդ որո-շումը հանրային մեծ

[86]Անդ:

դժգոհություններ առաջացրեց՝ կապված Միկոյանի կենսագրու-թյան նորահայտ մանրամասների հետ. հանրային դիսկուրսում այս արձանի տեղադրու-մը Երևան քաղաքում ձևակերպվեց որպես իշխանությունների կողմից խորհրդային ժամանակների վերաբերյալ դրական դիսկուրսի ձևավորմանը միտված քայլ, որը կնպաստի Եվրասիական Տնտեսական Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության հանդեպ հանրության դրական մոտեցման ձևավորմանը[87]: Մեր հարցվողներից մեկի պնդմամբ. «Էս կայացվող բոլոր որոշումները սովետական շրջանի հերոսացումն է, ուզում են սովետի տարիները Հայաստանի պատմության ամենապայծառ տարիներ ներկայացնեն»[88]: Մեկ այլ բանասացի կարծիքով. «սովետի հանցագործներից մեկին հերոսացնում են, ուզում են սուրբ սարքեն, սովետն են հետ բերում, Ռուսաստանի գաղութ ենք դառնում, չի՛ կարելի»[89]: Միկոյանի արձանը դիտարկելով որպես ռուսամետության և հակաազգային խորհրդանիշ՝ հանրային քննարկումներում հնչեցվեցին կոչեր՝ արձանը ցուցադրաբար վնասելու, ապամոնտաժելու, որը դիտարկվում էր որպես ուղերձ քաղաքապետարանին և գործող իշխանություններին: Իր հարցազրույցներից մեկում, գրականագետ Արքմենիկ Նիկողոսյանն առաջարկեց. «արձանը դնենք, որպեսզի նաև մարդիկ հնարավորություն ունենան թքել արձանի վրա»[90]: Միկոյանի հուշարձանի վերաբերյալ հանրային դիսկուրսը, սոցցանցերում սկիզբ առած ստորագրահավաքը նպաստեցին, որ քաղաքային իշխանությունները անորոշ ժամկետով հետաձգեն այդ արձանի կանգնեցումը:

Հանրային քննադատության առարկա դարձան նաև Երևանում վերջերս տեղադրված հայ քաղաքական, ռազմական և հասարակական գործիչ Գարեգին Նժդեհի և խորհրդային մարշալ Համազասպ Բաբաջանյանի արձանները: Երկու արձաններն էլ հանրային դիսկուրսում մեկնաբանվեցին որպես արվեստային առումով

[87]Տե՛ս Shagoyan G., Between memory and Memorial: Anastas Mikoyan and "Social Lustration" in Armenia, Caucasus analytical digest, No. 80, 2016, էջ 2-5:
[88]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Երևան, ՀՀ, 2016, ապրիլ:
[89]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Երևան, ՀՀ, 2016, ապրիլ:
[90]Անաստաս Միկոյանը՝ դահի՞ճ, թե՞ պատմական բարդ կերպար. կարծիքներ Երևանում նրա արձանը տեղադրելու առաջարկի շուրջ, http://www.tert.am/am/news/2014/05/05/anastas-mikoyan/1078029, 15.03.2015:

անհաջող աշխատանքներ: Արդյունքում, քաղաքային իշխանությունները անարձագանք չթողեցին հանրային, մասնագիտական քննադատությունը, և, եթե Նժդեհի արձանի դեպքում շատ պաշտոնյաներ հանրային ամբիոններից պաշտպանեցին արձանը՝ այն մեկնաբանելով որպես հիանալի աշխատանք և հուշարձանին ուղղված քննադատությունը մեկնաբանեցին որպես «ճաշակի հարց», ապա Բաբաջանյանի արձանի դեպքում նրանցից ոմանք համաձայնեցին, որ արձանը այդքան էլ հաջող չի ստացվել և, որ պետք է հետագայում ավելի հետևողական գտնվեն նոր արձանների տեղադրման հարցում:

2017 թ. հոկտեմբերին Գյումրի համայնքի ավագանու հերթական նիստում ընդունվեց Քաղաքի Աբովյան ճեմափողոցում հուշարձաններ տեղադրելու մասին որոշում, որի համաձայն Գյումրիում տեղադրվելու են 12 անվանի անձանց հուշարձաններ՝ հիմք հանդիսանալով հանրային լուրջ քննարկումների և քննադատությունների: Նոր հուշարձանների շուրջ հանրային դիսկուրսը նպաստեց նրան, որ Գյումրու քաղաքապետարանը անցկացնի հուշարձանների տեղադրման վերաբերյալ հանրային լսումներ. հանրային լսումները, ճիշտ է, վերաբերում էին միայն տեղադրվելիք արձանների ընտրությանը, այն դեպքում, երբ հանրային բողոքը վերաբերում էր արձանների տեղադրմանը ընդհանրապես: Ինչպես խոստովանեց Գյումրու ներկայիս քաղաքապետ Սամվել Բալասանյանը՝ նա ինքն է անձամբ խնդրել ՀՀ նախագահին՝ ֆինանսավորել նախագիծը և ստացել է դրական պատասխան: «Ես եմ անձամբ խնդրել, իմ առաջարկությունն է, որպեսզի լինեն մեր մեծերի արձանները, 12 հենասյուն ունենք, 12 հատ արձաններ պետք է տեղադրենք: Հանրապետության նախագահն ընդառաջ գնաց, ասաց՝ ես կֆինանսավորեմ, ինքը ֆինանսավորելու է ես ծրագիրը, եթե որեւէ գումար էլ պակասեց, բարերաներով, մյուսով մենք անպայման կլրացնենք, չեմ կարծում, որ պակասի, որովհետեւ ամեն մի արձանի համար առանձին հաշվետվություն կլինի, մրցույթի արդյունքում կլինի նաեւ գինը, հանրային քննարկման արդյունքում կիմանանք, թե ում արձաններն ենք տեղադրել»,-հարցազրույցներից մեկի ժամանակ հայտարերել է Ս.

Բալասանյանը[91]: Սպասվածի համաձայն, այդ հանգամանքը գյումրեցիների մի մասը չողջունեց: «Ինչի՞, երբ քաղաքը (Գյումրին) լիքը խնդիրներ ունի, քաղաքը դատարկվում է, փողոց չկա, Բալասանյանը փող է ուզում, խնդրում նախագահից հենց արձան դնելու համար... մեզ արձան պետք չէ, առանց էդ էլ լիքն են»,-նշեց մեր բանասացը[92]: □Հուշարձանները, իհարկե, արվեստ են, պատմություն ու մշակույթ: Հուշարձանները ներկայացնում են տվյալ ազգի կոլորիտը, դիմագիծը, հուշարձանները գեղեցկություն են, վերջապես: Բայց բոլոր նորմալ երկրներում, նախ իրենց բնակիչների համար են ստեղծում բարենպաստ պայմաններ, հետո միայն տեսքի գցում քաղաքը, երկիրը□,-իր գրառման մեջ նշել է պատմաբան Ա. Նախշքարյանը: □Ցեխառատ փողոց ունեցողի համար ի՞նչը կարող է ավելի կարեւոր լինել՝ Աբովյան փողոցի արձանախո՞ւմբը, թե՞ այս փողոցի վերանորոգումը, կամ Վ.Սարգսյան փողոցում մայթ չկա: Զբոսաշրջության կենտրոն դարձնելուց առաջ պետք է մտածեն քաղաքում ապրողների մասին, ոչ թե՝հյուրերի□[93],-նշել է Գյումրու բնակիչներից մեկը:

Այնուհանդերձ, չնայած, վերոնշյալ 12 արձանների տեղադրեման որոշման նկատմամբ հանրային բացասական վերաբերմունքին, հանրային լսումներ անցկացվեցին՝ հանրային և մասնագիտական քննարկման առարկա դարձնելով արձանների □հերոսների□ ընտրության հարցը: Արձանների ընտրանքը հանրային լսումների առարկա դարձնելը կարևորեցին նաև ընդդիմադիր գործիչները: «Այս հարցի շուրջ մարդկանց կարծիքն իմանալու համար ավագանու որոշումը պարտադիր չէ, քաղաքապետն իրավազոր է հրավիրել հանրային լսում: Առաջարկում եմ՝ հարցը օրակարգից հանել, հանրային լսում հրավիրել, հայտարարություն տալ, մարդիկ իմանան, որ փող է գալու քաղաք, արձաններ են լինելու»,-ավագանու նիստին առաջարկեց ավագանու անդամ Լ. Բարսեղյանը[94]:

---

[91]«Ես եմ անձամբ խնդրել». «Խնդրեիք անօթեւանության խնդիրը միանգամից լուծվեր». թեժ քննարկումներ ավագանու նիստում, http://www.asparez.am/abovyan-ardzanner-hy/#.WfH4wo-CzIV, 25.11.2017.
[92]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Գյումրի, ՀՀ, 2017, նոյեմբեր:
[93] Աթանեսյան Գ., ԴԱՆ, Գյումրի, ՀՀ, 2017, նոյեմբեր:
[94]Ես եմ անձամբ խնդրել». «Խնդրեիք անօթեւանության խնդիրը միանգամից լուծվեր». թեժ քննարկումներ ավագանու նիստում, http://www.asparez.am/abovyan-ardzanner-hy/#.WfH4wo-CzIV, 25.11.2017.

Չնայած նրան, որ տվյալ դեպքում հանրային քննադատությունը չկարողացավ ազդել տվյալ հուշարձանների տեղադրման որոշման չեղարկման վրա, այնուհանդերձ, հուշարձանային քաղաքականության իրականացման հարցում տեսնում ենք հանրային կարծիքի կարևորմանն ուղղված քայլեր[95]:

Հանրային ուժգին արձագանքը նպաստեց նաև քաղաքային իշխանությունների կողմից սեփական նախաձեռնության վերանայմանը, երբ ՁԼՄ-ներում հայտնվեց Սիսիան քաղաքում որոշ հուշարձանների տարածքում ժամանցային տաղավարների տեղադրման լուրը: Սիսիանի գլխավոր հրապարակներից մեկում, Գարեգին Նժդեհի արձանի հարևանությամբ և քաղաքի մյուս հրապարակում (ներկայիս քաղաքապետա-րանի դիմաց) Քառասուն աղբյուր հուշարձանի կողքին քաղաքի նորընտիր քաղաքա-պետի նախընտրական խոստման համաձայն հայտնվեցին տաղավարներ՝ քաղաքացի-ների ժամանցը կազմակերպելու նպատակով[96]: ՁԼՄ-ներով այս լուրի տարածումից հետո սոցցանցերում հանրային բուռն քննարկումներ ծավալվեցին և բողոքների արդյունքում Սիսիանի քաղաքային իշխանությունները հուշարձանների տարածքները ազատեցին այդ կառույցներից:

Այսպիսով, տեսնում ենք, որ չնայած վերջին տարիներին հուշարձանային քաղա-քականության իրականացման հարցում հանրության իրական (փողոցային) պասիվությանը, նրանց ակտիվությունը սոցցանցերում, հուշարձանային քաղաքականության վե-րաբերյալ ակտիվ քննարկումները հանրային դիսկուրսը դարձրել են հետխորհրդային Հայաստանի հուշարձանային քաղաքականության կարևոր դերակատարներից մեկը:

1.3 Համայնքային իշխանությունները և հուշարձանային քաղաքականությունը արդի Հայաստանում

[95] Դեռ ավելին, վերոնշյալ 12 հուշարձանների տեղադրումը հետաձգվել է անորոշ ժամանակով:
[96] Սիսիանի քաղաքաշինական նոր «գլուխգործոցը», http://www.slaq.am/arm/news/1103839/, 10.10.2017.

1980-ականների վերջերին և անկախության առաջին տասնամյակում Հայաստանյան քաղաքային հանրային տարածքներում հանրությունն հանդիսանում էր հուշարձան տեղադրող հիմնական սուբյեկտներից մեկը, իսկ քաղաքային իշխանությունները ավելի հաճախ հանդես էին գալիս որպես այդ հուշարձանների postfactum լեգիտիմացնողներ՝ մասնակցելով այդ հուշարձանների բացման արարողություններին կամ ընդունելով բացողի իրավունքը: Այդուհանդերձ, անկախության հետագա տարիներին քաղաքային իշխանությունները սկսեցին աստիճանաբար վերահսկողության տակ առնել հուշարձանային ողջ քաղաքականությունը և մեծ ակտիվություն ցուցաբերեցին՝ քաղաքների լանդշաֆթները հագեցնելով բազմաթիվ նոր հուշարձաններով: Հանրությունը որպես հուշարձան տեղադրող սուբյեկտ զգալիորեն պասիվացավ՝ հիմնականում վերածվելով նոր հուշարձանների հասցեատեր և դրանց postfactum քննադատող: Ճիշտ է, անհատների և խմբերի կողմից հուշարձանների տեղադրման նախագծեր առաջ են գալիս ժամանակ առ ժամանակ, սակայն բոլոր նոր արձանների նախագծերը պարտադիր, օրենքին համապատասխան, համաձայնեցվում են քաղաքային իշխանությունների հետ, ստանում համապատասխան հանձնաժողովների թույտվությունը: Այնուհանդերձ, հետխորհրդային տարիներին Հայաստան քաղաք-ներում հուշարձանների տեղադրումը մեծամասամբ սկսել է վերահսկվել և իրականացվել համայնքապետարանների և նրանց ղեկավարների կողմից, և դա բնական է, քանզի համայնքների տարածքներում իրականացվող ցանկացած փոփոխություն, այդ թվում հուշարձանի տեղադրումը, պետք է համաձայնեցվի համապատասխան համայնքապետարանների հետ: Սակայն, պիտի նկատենք, որ ներկայում քաղաքների հանրային տարածքներում հուշարձաններ տեղադրելը հանդիսանում է համայնքային իշխանությունների ոչ թե շարքային գործառույթներից մեկը, այլ նրանց գործունեության առաջնային նպատակներից մեկը: Վարը մենք անդրադառնում ենք այդ իրողության պատճառներին և առանձնահատկություններին:

Կարծես, ակնհայտ է, որ հուշարձանի տեղադրումը կապված է շատ լուրջ ֆինան-սական ծախսերի հետ: Ծախսատար է ոչ միայն արձանի

ստեղծումը և տեղադրումը, այլև դրա հետագա խնամքը և պահպանությունը: Խորհրդային իշխանություններն այդ ամենի համար հսկայական միջոցներ էին տրամադրում, սակայն հուշարձանների տեղադրումը և պահպանումը հետխորհրդային Հայաստանի համայնքների սուղ բյուջե-ների պարագայում շատ բարդ պարտականություն պետք է լիներ: Սակայն, տեսնում ենք, որ հատկապես վերջին տասնամյակում ՀՀ քաղաքների հանրային տարածքներում հանգրվանում են մեծ թվով նոր հուշարձաններ, որոնց մի մասի տեղադրումը ֆինանսավորվում է պետբյուջեից: Նույնիսկ, եթե նոր կանգնեցվող հուշարձանների պատրաստման և տեղադրման ֆինանսավորումը իրականացվում է անհատների կամ խմբերի կողմից, միևնույն է այդ կոթողների մեծ մասի պահպանման պարտականությունը մնում է համայնքապետարանների ուսերին: Ըստ առավել հաճախ հանդիպող մեկնաբանությունների՝ իշխանությունների կողմից բազմաթիվ հուշարձանների տեղադրումը կապվում է պետական միջոցների վատնման, քաղաքային իշխանություններ-ների կողմից այդ գումարների յուրացման հետ: Ավագ սերնդի բանասացների կարծիքով՝ հուշարձանների պահպանումը, դրանց համար հատկացված գումարների յուրացման հաջող միջոց էին համարվում նաև խորհրդային տարիներին, երբ Վ. Լենինի արձանների պահպանման և խնամքի համար տրամադրվող գումարները յուրացվում էին պատասխանատուների կողմից[97]:

Անկախության տարիներին հուշարձանների տեղադրումը համայնքային իշխանությունների կողմից գլխավորապես օգտագործվում է որպես արված աշխատանքի ցուցադրություն: Ակնհայտ է, որ փողոց վերանորոգելը կամ կառուցելը, հանրային նշանակության որևէ շինություն կամ ժամանցավայր կառուցելը շատ ավելի ծախսատար ու տևական գործ է քան հուշարձանի կառուցումը: Իսկ քաղաքային բյուջեների սղության պայմաններում քաղաքային իշխանությունները ավելի նպատակահարմար են գտնում համեմատաբար ավելի էժան, բայց միևնույն ժամանակ քաղաքային հանրային տարածքում նշանային առումով ավելի խոսուն հուշարձանների կառուցումը: Բացի այդ,

[97]Աթանեսյան Գ., Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետ՝ ԴԱՆ), Լոռվա մարզ, 2017, հոկտեմբեր:

փողոցի բարեկարգումը կամ հանրային շինության կառուցումը չէր կարող նույնչափ հնչողություն ունենալ քան հուշարձանի տեղադրությունը, որովհետև, եթե առաջինը դիտարկվում է իբրև համայնքային իշխանության պարտականություն, ապա վերջինը դիտարկվում է իբրև հավելյալ արված գործ, նվիրատվություն, բարեգործություն:

Տեղական իշխանությունների կողմից նոր հուշարձանների տեղադրումը կիրառվում է նաև որպես քաղաքական տեխնոլոգիա: ՏԻՄ ընտրություններից առաջ, իշխանության վերարտադրման համար հաշվետու այդ ժամանակահատվածում, նոր հուշարձանների տեղադրումը և բացումը համայնքի համար նոր գործեր իրականացնելու խոստման խորհրդանիշ են հանդիսանում:

Համայնքային իշխանությունները ակտիվ քայլեր են ձեռնարկում նաև նոր հուշարձանների տեղադրման համար բարերարներ ներգրավելու գործում, քանզի քաղաքում իրականացվող ցանկացած դրական տեղաշարժ մեծացնում է համայնքային իշխանությունների վարկը քաղաքացիների աչքերում: Արդյունքում, համայնքային իշխանությունները ողջունում են հուշարձան տեղադրելու ցանկացած առիթ ու պատրվակ: Նրանք խրախուսում են քաղաքային տարածքներում տարբեր հուշարձանների տեղադրումը նաև այն պատճառով, որ հուշարձան տեղադրելու առաջարկով հանդես եկած բարերարները խոստանում են բարեկարգել նաև հուշարձաններին հարող տարածքները: Նման դեպքեր գրանցել են Գյումրիում, որտեղ տեղադրված հուշարձանների հետ մեկտեղ կառուցվել կամ բարեկարգվել են նաև այգիներ, պուրակներ, պուրակում տեղադրվել են նստարաններ և կառուցվել մանկական խաղահրապարակներ: Նույն փորձին կարելի է հանդիպել նաև Սպիտակ, Սիսիան, Կապան քաղաքներում:

Անկախության տարիներին համայնքային իշխանությունների վարած հուշարձանային քաղաքականությունը նպաստում է քաղաքային լանդշաֆտներում բազմաթիվ ու բազմաբնույթ հուշարձանների հանդես գալուն, անհատների, խմբերի և բարերարների կողմից արված նախագծերի իրականացում, սակայն,

միով բանիվ, ժամանակին տեղադրված շատ հուշարձաններ մնում են անխնամ, բարձիթողի վիճակում և մատնվում են մոռացության:

Հետխորհրդային Հայաստանում համայնքային իշխանությունների կողմից հուշարձանային քաղաքականության վերահսկման և ակտիվ իրականացման գործընթացը կապված է նաև ՀՀ նոր գործող օրենքների կիրառմամբ[98], որոնց համաձայն հուշարձանի տեղադրման մասին վերջնական որոշումը կայացնում է համայնքի ավագանին, իսկ Երևանի դեպքում քաղաքում հուշարձան տեղադրելու վերջնական որոշում կայացնող է հանդես գալիս քաղաքապետը: ՀՀ համայնքներում հուշարձան տեղադրելու կարգը հետևյալն է. հուշարձանի տեղադրման առաջարկը համայնքի ղեկավարին կից քաղաքաշինական խորհրդի գեղարվեստի մասնագիտական հանձնաժողովի հավանությանն արժանանալուց հետո ներկայացվում է համայնքի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի քննարկմանը, իսկ վերջինիս հավանությանն արժանանալուց հետո՝ համայնքի ավագանու քննարկմանը: Հուշարձանի տեղադրման վայրի վերաբերյալ իր առաջարկն է անում նախաձեռնող կողմը, որը համայնքի ղեկավարին կից քաղաքաշինական խորհրդի գեղարվեստի մասնագիտական հանձնաժողովի հավանությանն արժանանալու դեպքում ևս ներկայացվում է համայնքի ավագանուն: Այդ ամենից հետո, նպատակահարմարության դեպքում, այդ արձանների տեղադրման վերջնական որոշում են կայացնում համապատասխան մարզպետները (Երևանի դեպքում՝ Երևանի քաղաքապետը):

Չնայած, քաղաքային իշխանությունների կողմից հուշարձանային քաղաքակա-նության վերահսկմանը, վերջին տարիներին ևս քաղաքացիների և նրանց տարբեր խմբերի կողմից շարունակվում են հուշաղբյուրներ կառուցվել՝ նվիրված ոչ միայն աղետի կամ պատերազմի զոհերին: Վերջերս «Ապրիլյան պատերազմը» (նաև «քառօրյա պատերազմ») «խրախուսեց» հանրային նոր ակտիվություն՝ թաղերում հուշարձաններ կանգնեցնելու

[98]ՀՀ կառավարության որոշումը ՀՀ-ում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին, http://www.arlis.am/DocumentView.-aspx?docid=7499, 28.11.2017.

առումով[99]: «Քառօրյա» պատերազմի զոհերի հիշատակն հավերժացնող հուշարձաններ սկսեցին հայտնվել նրանց ծննդավայրերում: Այս կոթողները կանգնեցվում էին նրանց հարազատների կողմից և, ի տարբերություն թաղային հեղինակություններին նվիրված հուշաղբյուրների՝ նպատակ ունեին դառնալու հանրային հիշողության մասնիկ[100]: Այդ պատճառով էլ այս զոհերին նվիրված հուշարձանները որոշ դեպքերում գերեզմանային տարածքներից, տարբեր պանթեոններից տեղափոխվեցին նրանց ծննդավայր-բնակավայրերի հանրային տարածքներ կամ նրանց տների, բազմաբնակարան շենքերի բակեր: Քաղաքային իշխանությունների կողմից նման հուշարձաններ տեղադրելու նախաձեռնություններ շատ քիչ են եղել, և հիմնական հուշարձան տեղադրողներ են հանդիսացել առաջին հերթին զոհված զինվորների ընտանիքները, նրանց բարեկամները, հարևանների խմբերը, կազմակերպություններ և բարերարներ: Քաղաքային իշխանությունները այնուհանդերձ որոշակի մասնակցություն ունեցել են այս գործընթացներին. այդ կոթողների բացման արարողությունների ժամանակ ներկա են եղել մարզպետարանների և քաղաքապետարանների պաշտոնյաներ, իսկ հանրային վայրերում հուշարձանների տեղադրման դեպքում՝ համայնքապետարանը համաձայնել է տրամադրել տարածքներ այդ կոթողները կանգնեցնելու համար[101]:

Երևանում, օրինակ, Աբովյան փողոցի սկզբնամասում, Հանրապետության Հրապարակի մոտ գտնվող շենքերից մեկի վրա հուշատախտակ է փակցվել, որտեղ նշվում է, որ այդ տանն է ապրել արցախյան քառօրյա պատերազմի հերոս Ադամ Սահակյանը: Այնուհանդերձ, հուշատախտակի հենց դիմաց, նրա հարազատների կողմից փողոցի բանուկ հատվածում տեղադրվել է նաև մի հուշաղբյուր, որի վրա գրված է Հերոս Ադամին (նկ. 8): Երևանի

[99]2016 թվականի ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը արցախա-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով տեղի ունեցան լայնամասշտաբ ռազմական գործողություններ Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակի և Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի միջև, որի արդյունքում հայկական կողմը ունեցավ մոտ 110 զոհ:

[100]Атанесян Г., Общество и монументальная политика в последние годы СССР и первые годы независимости Армении, Caucaso-Caspica, Выпуск II, Изд-во РАУ, 2017, с. 35-36.

[101]Атанесян Г., նշվ. աշխ., էջ 35:

դպրոցներից մեկի դիմաց տեղադրվել է Արցախի հերոս Ռոբերտ Աբաջյանի հիշատակին նվիրված հուշաղբյուրը, որը տեղադրվել է հայտնի ըմբշամարտիկ Արթուր Ալեքսանյանի նախաձեռնությամբ: Լոռվա մարզի Սպիտակ քաղաքի գլխավոր փողոցներից մեկում քաղաքային իշխանությունների և տեղի բնակիչների համատեղ ջանքերով տեղադրվել է Ապրիլյան պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան (նկ. 9): Այնուհանդերձ, նույն տարածքում, երկրաշարժի զոհերին նվիրված հուշարձանի կողքին պատերազմի զոհերից մեկի բարեկամների ջանքերով տեղադրվել է նաև նրա հիշատակը հավերժացնող հուշաքար (նկ. 10): Զոհվածների ընտանիքի անդամների կամ նրանց հարազատների, հարևանների, բարերարների միջոցներով և նախաձեռնությամբ հուշաղբյուրներ և հուշաքարեր են կանգնեցվել նաև Երևանում, Կապանում, Վանաձորում:

Ապրիլյան պատերազմի զոհերի հիշատակին նվիրված մի քանի հուշարձաններ հայտնվեցին նաև Գյումրի քաղաքի որոշ շենքերի և տների բակերում: Քառօրյա պատերազմի հերոս ՀՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանակիր ավագ լեյ-տենանտ Մերուժան Ստեփանյանի պատվին հուշատախտակ է փակցվել Գյումրիի նորակառույց Մուշ թաղամասում գտնվող շենքերից մեկի պատին, որտեղ և ապրել է զոհված սպան: Շենքի շքամուտքի մոտ փակցվել են նաև Մ. Ստեփանյանի և նրա զոհված 6 ծառայակիցների նկարները: Հուշատախտակից զատ, սպայի բարեկամների նախաձեռնությամբ և միջոցներով, բնակարանի դիմաց՝ բակում տեղադրվել է նաև հուշաղբյուր՝ Մերուժան գրությամբ, իսկ հուշաղբյուրից քիչ հեռու կանգնեցվել է նաև մեկ այլ հուշարձան, որը պատկերում է վերոնշյալ 6 զոհերի անունները՝ ծառ պատկերող քանդակի հատված ճյուղերին (նկ. 11): Այս հուշարձանից քիչ վերև, նույն փողոցի վրա՝ պուրակում տեղադրվել է ապրիլյան պատերազմի հերոսներին նվիրված ևս մեկ հուշարձան, իսկ պուրակի մոտ կանգնեցված ցուցանակը (նկ. 12) հուշում է, որ այդ փողոցն արդեն կրում է «Ապրիլյան մարտերի հերոսների» անունը (ցուցանակը ինքնին հուշաքար է՝ հավերժության սիմվոլիկայով)[102]: Մուշ թաղամասի մեկ այլ հատվածում 2016 թ. բացվել է ապրիլյան պատերազմի մեկ այլ

[102]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Գյումրի, 2017, նոյեմբեր:

զոհ՝ Հրաչ Սարգսյանի անվան պուրակը, որտեղ կանգնեցվել է խաչ պատկերող հուշարձան (նկ. 13), իսկ պուրակի անկյունում նաև հուշաղբյուր՝ Հրաչ մակագրությամբ: Մեկ այլ հուշատախտակ է փակցվել նաև զոհված զինծառայողներից ևս մեկի տան պատին: Գյումրու Մուշ թաղամասում իր տան պատին Տիգրան Աբգարյանի հիշատակն հավերժացնող հուշատախտակից զատ, նրա բարեկամները տան դիմաց տեղադրել են նաև զինվորի հիշատակին նվիրված հուշարձան, ինչպես նաև միայն նրա անունը կրող մի հուշաղբյուր[103] (նկ. 14):

Այսպիսով, խորհրդային տարիներին Հայաստանի քաղաքների հանրային վայրերում հայտնված մոնումենտալ քանդակները կուսակցության և նրա ղեկավարի հստակ քաղաքականության արդյունք էին և վերահսկվում ու իրականացվում էին մեկ կենտրոնից: Խորհրդային քաղաքացուն դեր էր հատկացված խորհրդային քաղաքների լանդշաֆտների ձևավորման հարցում, սակայն այդ դերը ուղղորդվում և վերագրվում էր կենտրոնից և սահմանափակվում էր հիմնականում նոր տեղադրվող հուշարձանների նախաձեռնություններին համաձայնություն տալով և պաշտպանելով: Խորհրդային տարիներին հուշարձանային քաղաքականությունը և նրա շուրջ դիսկուրսները խստորեն վերահսկվում էին Կոմունիստական կուսակցության կողմից: 1988 թ.-ի աղետի, արցախյան շարժման և Հայաստանի անկախացման արդյունքում հուշարձանների տեղադրման նախաձեռնողի և իրագործողի հայտ ներկայացրեց հանրությունը: Անհատների, տարբեր խմբերի կողմից տեղադրվող հուշարձանների այս նոր արակտիկան ոչ միայն չարգելվեց նոր իշխանությունների կողմից, այլև որոշ դեպքերում նույնիսկ խրախուսվեց: Հայաստանի անկախության հետագա տարիներին հուշարձանային քաղաքականության ամենաակտիվ սուբյեկտի վերածվեցին ՀՀ համայնքային իշխանությունները, իսկ ահա հետխորհրդային Հայաստանի քաղաքացու ակտիվությունը գերազանցապես տեղափոխվեց վիրտուալ տիրույթ՝ հիմնականում սահմանափակվելով սոցցանցերում նոր տեղադրվող հուշարձանների վերաբերյալ մեկնաբանություններ

[103] Աթանեսյան Գ., ԴԱՆ, Գյումրի, 2017, նոյեմբեր:

թողնելով: Հայաստանի քաղաքային իշխանություններին հիմնականում հոջողվել է իրենց վերահսկողությունը հաստատել անկախ Հայաստանի հուշարձանային քաղաքականության ոլորտում: Այնուհանդերձ, արդի Հայաստանում հանրային դիսկուրսը սկսում է վերածվել հուշարձանային քաղաքականության վրա ազդող և համայնքային իշխանությունների «կամայականությունները» զսպող մի մեխանիզմի, որի արդյունքում քաղաքային իշխանությունները ոչ միայն սկսում են հաշվի նստել հանրային տեսակետների հետ, այլև երբեմն ետեն կանգնում իրենց կայացրած որոշումներից: Իսկ, 2016 թ.-ին տեղի ունեցած ապրիլյան պատերազմը ցույց տվեց, որ Հայաստանի քաղաքացին ամեն պահի կարող է նորից վերածվել հուշարձան տեղադրող ամենաակտիվ դերակատարի, ինչը ոչ պատահաբար համընկնում է պետության և պետական իշխանությունների ճգնաժամային վիճակներին:

ԳԼՈՒԽ2-ՐԴ: ՀՈՒՇԱՐՁԱՆԱՅԻՆ ՈՒՂԵՐՁՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ: ԳԱՂԱՓԱՐԱՀՍԱԿԱՆԻ, ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆԻ, ՊԱՏՄԱԿԱՆԻ ԵՎ ԱՐԺԱՆԱՎՈՐԻ ԲԱՎԻՂՆԵՐՈՒՄ

Խորհրդային քաղաքների լանդշաֆտները գտնվում էին իշխանությունների խիստ հսկողության տակ՝ բացառելով սեփական

գաղափարախոսությանը, պատմության (որոշակի իրադարձությունների) մեկնաբանությանը, գեղագիտական ընկալմանը և հեղինակության պատկերացումներին չհամապատասխանող և վերջիններիս հակասող տարրերի մուտքը քաղաքների հանրային տարածքներ: Այդ առումով ցանկացած հուշարձան կոդավորվում էր որպես խորհրդային ամբողջատիրական քաղաքականությանը համապատասխանող որոշակի գաղափարախոսական, գեղագիտական և պրեստիժային պատկերացումների համալիր ուղերձ կամ ուղերձների համալիր: Հետխորհրդային փուլում քաղաքական համատեքստի փոփոխությունը, հուշարձան տեղադրող նոր սուբյեկտների ի հայտգալը և քաղաքային նոր իշխանությունների հուշարձանային քաղաքականությունը չէին կարող չնպաստել հետխորհրդային Հայաս-տանի քաղաքների հուշարձանային ուղերձների բովանդակային փոխակերպումներին: Աշխատանքի այս գլխում ի մասնավորի անդրադառնալու ենք հետխորհրդային Հայաստանի քաղաքային հուշարձանների ուղերձների՝ գաղափարական, գեղագիտա-կան, պատմական և հեղինակային առումների փոփոխություններին, ինչպես նաև՝ խորհրդային ժամանակահատվածում կանգնեցված հուշարձանների ուղերձների բովանդակային վերաիմաստավորմանը՝ արդի փուլում:

2.1 Հուշարձանային ուղերձները Խորհրդային Հայաստանում

Հայաստանի խորհրդային շրջանի հուշարձանային քաղաքականությունը գաղափարականացված էր. ԽՍՀՄ առաջնորդի կողմից 1918 թ.-ին առաջ քաշված «մոնումենտալ պրոպագանդայի» նախագծի հիմնական նպատակն էր մոնումենտալ արվեստի զարգացումը և նրա մոբիլիզացիան որպես հեղափոխության ու կոմունիստական գաղափարախոսության ագիտացիոն կարևոր միջոցներից մեկը[104]: ԽՍՀՄ բոլոր բնակավայրերում պարտադիր տեղադրվում էին հեղափոխության առաջնորդների և ականավոր ներկայացուցիչների արձանները և կիսանդրիները, հանրային

[104]Шалаева Н. В., Становление плана монументальной пропаганды в Советской России. 1917–1918 годы, Вестник Челябинского государственного университета, 2014, № 8 (337), История, Вып. 59, с. 22.

վայրերում էին հայտնվում խորհրդային քաղաքական հայտնի գործիչների հուշարձանները, իսկ Կոմունիստական կուսակցության առաջնորդներ Վ. Լենինի և հետագայում նաև Ի. Ստալինի արձաններն ամենուրեք էին:

ԽՍՀՄ կազմավորման առաջին տարիներից հուշարձաններն ու խորհրդանիշները բացառիկ նշանակություն են ունեցել քաղաքային լանդշաֆտը ձևավորելու համար: Կուսակցության առաջնորդներին և հայտնի հեղափոխականներին նվիրված խորհրդանիշներից բացի, ԽՍՀՄ պետությունների քաղաքային լանդշաֆտները համադրվում էին նաև լոկալ նշաններով. «լոկալ նշանների և խորհրդանիշների կիրառումը կապված էր այն բանի հետ, որ կոմունիստական գաղափարախոսության արժեքային համակարգի հիմքում մասամբ էլ Լուսավորչության արժեքներն էին, որոնք խթանում և խրախուսում էին ընտրովի «ժողովրդական հերոսների» պատկերագրության ձևավորումը, եթե վերոհիշյալ «հերոսների» հիշատակությունը նպաստում էր կոմունիստական կենսաձևի տարածմանը»[105]: Տվյալ հասարակությանը ծանոթ նշանները վերաձևակերպվում էին սոցիալիստական ապագայի համատեքստում և ներկայացվում հանրային տարածքնե-րում՝ տվյալ խորհրդային պետության «անցյալը» կապելով խորհրդային ներկային և սոցիալիստական հաղթանակի ապագային:

Խորհրդային տարիներին իշխանությունները վերահսկում էին տեղադրվող հուշար-ձանների և՛ ձևը, և՛ բովանդակությունը՝ արձանագործների աշխատանքները ենթարկե-լով խիստ գրաքննության՝ բացառելով անցանկալի խորհրդանիշների ի հայտ գալը քա-ղաքների նշանային դաշտերում: Հայաստանի խորհրդային քաղաքային հուշարձանա-յին ժառանգությունը պաշտոնական. «ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական» հայտնի հռետորության արտահայտությունն էր: Լենինյան «Մոնումենտալ պրոպագանդան» նպատակ ուներ Միության քաղաքների հանրային վայրերում հավերժացնելու նշանավոր հեղափոխական և արվեստի գործիչներին, իսկ հանրային տարածքում տեղադրվող արձանները խորհրդանշում էին ոչ այնքան որոշակի հերոսի կամ

[105] Հարությունյան Ա., Նշվ. աշխ., էջ 39:

իրադարձության, որքան «հանդիսանում էին գաղափարախոսության հաստատման միջոց»[106]:

Վ. Լենինի արձանները տեղադրված էին խորհրդային Հայաստանի գրեթե բոլոր բնակավայրերում, Հայաստանի միջին և խոշոր քաղաքներից շատերում տեղադրված էին Միության առաջնորդի մեկից ավել արձաններ[107]: Նմանատիպ պատկեր էր նաև Միության մյուս առաջնորդ Ի. Ստալինի արձանների դեպքում. Ստալինի արձանները զարդարում էին Հայաստանի և ԽՍՀՄ մյուս պետությունների քաղաքների գլխավոր փողոցներն ու հրապարակները, այգիներն ու պուրակները, կայարաններն ու պետական տարբեր հիմնարկների բակերն ու տարածքները:

Ժամանակակից Երևանում քաղաքային լանդշաֆտի մաս են կազմում խորհրդային տարիներին տեղադրված 60-ից ավել հուշարձաններ: 1931-1990 թվականների ընթաց-քում Երևանում տեղադրվել է մոտ 70 հուշարձան, սակայն ժամանակի ընթացքում տեղահանվել են Վլադիմիր Լենինի (1991թ.), Իոսիֆ Ստալինի (1962թ.), Ղուկաս Ղուկասյանի (1990թ.), Մեշադի Ազիզբեկովի (1988թ.) և «Բանվորի» (1990-ական թթ.) արձանները: Պահպանված հուշարձանների մեծ մասը՝ 24 արձաններ ներկայացնում են մշակութային տարբեր գործիչների, հուշարձաններից 4-ը ներկայացնում են առասպելական հերոսների կերպարներ, 3-ական արձաններ՝ զինվորական-ռազմական և քաղաքական գործիչների, իսկ մնացած արձանները պատկերում են աբստրակտ թեմաներ, ֆիլմերի հերոսների: Երևանում կանգուն են նաև Հայրենական պատերազմի հերոսներին, զոհերին նվիրված հուշարձաններ և խորհրդային կարգերի հաստատմանը նվիրված հուշակոթողներ:

Շիրակի մարզկենտրոն Գյումրի քաղաքում խորհրդային հուշարձանները միտում են ունեցել հավերժացնելու մեծամասամբ մշակութային և քաղաքական գործիչների անունները: Քաղաքում մինչ օրս խոյանում են Ա. Տիգրանյանի, Ավ. Իսահակյանի (3 արձան), Ա. Պետրոսյանի, Հովհ. Թումանյանի արձանները, խորհրդային

[106]Խառատյան Հ., Շագոյան Գ., Մարության Հ., Աբրահամյան Լ., նշվ. աշխ., էջ 275:

[107]Սպիտակ քաղաքում եղել են 3-ը, Գյումրիում՝ 2-ը (մեկը Տեքստիլի բակում), Արմավիրում՝ 2-ը (չհաշված դպրոցների, ակումբների և այլ երկրորդային վայրերի բակերում կամ ներսում տեղադրված կիսանդրիները, որոնք բազմաթիվ էին):

տարիների քաղաքական գործիչներ Ս. Շահումյանի, Ս. Լուկաշինի արձանները (քաղաքի գլխավոր հրապարակներից մեկից տեղահանվել է Վ. Լենինի արձանը), Մայիսյան ապստամբության մասնակիցներին նվիրված 2 հուշարձաններ, Մայր Հայաստան հուշահամալիրը:

ՀՀ հոգևոր կենտրոն Վաղարշապատ քաղաքում խորհրդային տարիներին տեղադրված 14 հուշարձանների գրեթե կեսը ներկայացնում են մշակութային գործիչների (Ռ. Պատկանյան, Խ. Աբովյան, Հովհ. Հովհաննիսյան, Կոմիտաս, Թորոս Թորամանյան, Մաշտոց և Կորյուն): Քաղաքում մինչ օրս կանգուն են խորհրդահայ քաղաքական գործիչներ Անաստաս Միկոյանի և Ստեփան Շահումյանի արձանները (տեղահանվել են Վ. Լենինի և նրա կնոջ կիսանդրիները՝ տեղադրված համապատասխանաբար Կուլտուրայի պալատի և քաղաքի գլխավոր ծննդատան բակերում), աբստրակտ քանդակներ: Քաղաքում շարունակում են խոյանալ նաև Հայրենական պատերազմի, խորհրդային կարգերի հաստատման համար զոհվածների հուշարձանները:

ՀՀ մեծությամբ երրորդ քաղաք Վանաձորում տեղադրված են մշակութային գործիչներ Հովհ. Աբելյանի և Հովհ. Թումանյանի արձանները, քաղաքական գործիչներ Ս. Շահումյանի և Ալ. Մյասնիկյանի արձանները, ինչպես նաև Հայրենական պատերազմի զոհերին նվիրված հուշարձան և հուշահամալիր և Վահագնի ծնունդը քանդակը, իսկ քաղաքի կենտրոնական հատվածներից հեռացվել են Վ. Լենինի և խորհրդային հեղափոխական գործիչ Ս. Կիրովի արձանները[108]: Հեղափոխական և խորհրդային պետական ու քաղաքական գործիչներին, արվեստի ականավոր ներկայացուցիչներին նվիրված հուշարձանները, առասպելական և գեղարվեստական կերպարների արձանները և Հայրենական պատերազմի ու խորհրդային պատմության այլ կարևոր իրադարձություններին նվիրված հուշարձանները դարձել էին նաև խորհրդային Հայաստանի Ղափան, Գորիս, Սիսիան, Եղեգնաձոր, Սպիտակ, Դիլիջան, Իջևան և այլ քաղաքների լանդշաֆտերի հիմնական նշանները:

Խորհրդային Միության առաջին տարիներին, հուշարձանացման համատեքստում, կարևորվում էր նախևառաջ հեղափոխական ականավոր

[108]Երկու արձաններն էլ հեռացվեցին 1991 թ.:

գործիչների անունների հավերժացումը՝ պաշտոնական դիսկուրսում ձևակերպելով հիշատակման արժանի հերոսների անունները: Լենինյան «մոնումենտալ պրոպագանդան» կենտրոնանում էր հուշարձանների հիշատակման, գեղագիտական և կրթադաստիարակչական գործառույթների վրա՝ նպատակ ունենալով ԽՍՀՄ քաղաքների հանրային վայրերում հավերժացնելու նշանավոր հեղափոխական և արվեստի գործիչներին: 1922 թ. Հայաստանում անցկացված հուշարձանների մրցույթի պաշտոնական տեքստում կարելի է հստակ տեսնել Կոմունիստական կուսակցության հուշարձանային քաղաքականության հիմնական դրույթները. «հուշարձանները պետք է ունենան այն տեսակ կառուցվածք, որ միաժամանակ ա) ծառայեն իրենց հիմնական գաղափարին՝ **անունների հավերժացմանը,** բ) **լինեն զարդ քաղաքի համար** և գ) **լինեն հանրօգտակար**...[109]»: Հետագայում, իսկապես տեսնում ենք, որ խորհրդային տարիներին հուշարձանները միայն պարզապես վիզուալ պրոպագանդայի ատրիբուտներ չէին, այլ իրենցից պետք է ներկայացնեին նաև գեղագիտական բարձր արժեք ներկայացնող աշխատանքներ: Սա, հատկապես պարզ երևաց, երբ վերոնշյալ մրցույթից հետո կանգնեցված աշխատանքների մի մասը ապամոնտաժվեցին՝ գեղագիտական նկատառումներից ելնելով[110]: Խորհրդային պատմության հետագա տարիներին մոնումենտալ պրոպագանդայի իրականացման հիմնական միջոց են դառնում մոնումենտալ հուշարձանները, որոնք պետք է իշխեին շրջակա տարածքների վրա՝ ավելի ազդեցիկ դարձնելով հանրությանն ուղղված իրենց ուղերձը: Մոնումենտալությունը, ազդեցիկությունը, կերպարների ռեալիստականությունը, նրանց պլաստիկան, արտահայտչականությունը խորհրդային հուշարձանային գեղագիտության հիմնական չափանիշներն էին, որի հիմնական նպատակը խորհրդային քաղաքացուն սոցիալիստական ներկայի և ապագայի, խորհրդային պետության գաղափարախոսության և հիմնական արժեքների ճշգրիտև խորաթափանց փոխանցումն էր:

[109]Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1922, № 139:
[110]Տե՛ս Հարությունյան Վ., Լենինյան մոնումենտալ պրոպագանդան Հայաստանում, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Տեղեկագիր, 1957, №4, էջ 47-54:

Նոր տեղադրվող հուշարձանների առաջնային գործառույթը, այնուհանդերձ, պետք է հանդիսանար ցանկալի գաղափարների փոխանցումը և ամրապնդումը հանրության շրջանում: Հուշարձանները պետք է ծառայեին հեղափոխության շահերին և դառնային «ժողովրդի դաստիարակության հզոր միջոց»[111]: Պատահական չէ, որ Վ. Լենինն անձամբ կարևորում էր հուշարձանների մոտ պարբերաբար անցկացվող միջոցառումները, որոնք պետք է ժողովրդին պարբերաբար հիշեցնեին իրենց հերոսների մասին, և ցանկանում էր, որ հուշարձանների բացման արարողությունները լինեն «պրոպագանդայի ակտ, փոքրիկ տոն»[112]:

Խորհրդային «մոնումենտալ պրոպագանդան» բացի կուսակցության առաջնորդ-ներից, իր քաղաքականության իրագործման գործում կարևորում էր նաև արվեստի ներկայացուցիչների, ազգային տարբեր սյուժեների արձանացման գործընթացները: Խորհրդային Միության Կոմունիստական կուսակցության Կենտկոմի 1932 թ. ապրիլի 23-ի գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին որոշման համաձայն Միության կերպարվեստը կենտրոնանում է սոցիալիստական ռեալիզմի մեթոդի վրա, որն իրենից ենթադրում է արվեստի կապը կյանքի հետ, նրա մասնակցությունը սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարին, «ստեղծագործությունների հագեցումը Կոմունիստական պարտիայի և սոցիալիստական շինարարության լուսավոր գաղափարներով և արվեստի ծառայեցնելը մասսաների կոմունիստական դաստիարակության գործին»[113]: Արդյունքում իշխանությունները պատվիրում են քանդակագործներին ստեղծել իրական, ճիշտ քաղաքացու կերպար մարմնավորող հուշարձաններ: Արդյունքում խորհրդային քաղաքների տարածքներում են հայտնվում սովետական բանվորի, զինվորականի, գիտության և արվեստի ականավոր գործիչների, սովետական աշխատավորի (ուհու) տիպական կերպարները:

---

[111]Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 48:
[112]Անդ:
[113]Սարգսյան Մ. Ս., Սովետական Հայաստանի քանդակագործությունը 1920-1930-ական թվականներին, նշվ. աշխ., էջ 29:

Հետպատերազմական շրջանում (1945 թ.-ից սկսած) լայն ծավալ ստացավ խորհրդային Հայաստանի համար մղված մարտերում և քաղաքացիական կռիվների ժամանակ զոհված հայ նշանավոր մարտիկների հիշատակին հուշարձաններ կառուցելու գործը:

Խորհրդային տարիներին Երևանում տեղադրվել են մշակութային գործիչներ Խ. Աբովյանի, Նար-Դոսի, Հովհ. Թումանյանի, Ալ. Սպենդիարյանի, Ալ. Շիրվանզադեի, Սայաթ-Նովայի, Վ. Տերյանի. Ավ. Իսահակյանի, Մ. Նալբանդյանի, Ալ. Թամանյանի, Ալ. Գրիբոյեդովի, Եղ. Չարենցի, Մ. Սարյանի, Ար. Տիգրանյանի, Հակոբ Մեղապարտի և Կոմիտասի արձանները: Գյումրիի հանրային տարածքներում են հայտնվել արվեստի ականավոր ներկայացուցիչներ Ար. Տիգրանյանի, Ավ, Իսահակյանի, Ա. Պետրոսյանի, Հովհ. Թումանյանի արձանները, Էջմիածնում՝ Խ. Աբովյանի, Հովհ. Հովհաննիսյանի, Կոմիտասի, Թ. Թորամանյանի հուշարձանները, Վանաձորում կանգնեցվել են Հովհ. Աբելյանի, Հովհ. Թումանյանի, Իջևանում՝ Հր. Ներսիսյանի արձանները, Դիլիջանում կանգնեցվել են Խ. Աբովյանի, Ղ. Աղայանի, Գորիսում՝ Ակ. Բակունցի արձանները: Արվեստի հայ նշանավոր գործիչների հուշարձանացումը խորհրդային տարիներին ամբողջովին տեղավորվում էր մոնումենտալ պրոպագանդայի ուղերձների մեջ: Հուշարձանների տեղադրման նախնական փուլում Վ. Լենինն առաջարկում է ցուցակ կազմել և ըստ այդ ցուցակի հուշարձաններ կանգնեցնել սոցիալիզմի թեորետիկներին և մարտիկներին, նրանց իդեական նախորդներին, ինչպես նաև փիլիսոփայական մտքի, գիտության, արվեստի այն ներկայացուցիչներին, որոնք «թեպետ չեն ունեցել ուղղակի կապ սոցիալիզմի հետ, բայց և հանդիսացել են կուլտուրայի իսկական հերոսներ»[114]: Լենինյան մոնումենտալ պրոպագանդան նպատակ ուներ արվեստը ծառայեցնել հեղափոխության շահերին, այն դարձնել ժողովրդի դաստիարակության հզոր միջոց, ցույց տալ այն սերտ կապը, որ գոյություն ունի «մարդկային անցյալ կուլտուրայի առաջավոր ներկայացուցիչների և սոցիալիզմի միջև»[115]: Հատկանշական է, որ հայ ականավոր գրող Խ. Աբովյանի արձանը տեղադրվեց Երևանում հենց խորհրդային կարգերի

[114]Հարությունյան Վ., նշվ. աշխ, էջ 48:
[115]Անդ:

հաստատումից հետո (1933 թ.), չնայած նրան, որ քանդակը պատրաստէր դեռ ցարական կառավարման տարիներին (1908 թ.):

Այնուհանդերձ, արվեստի ներկայացուցիչների արձանների տեղադրումը՝ այդ հերոսներին հարգելու և նրանց անունը հավերժացնելու միտում չուներ միայն, այլ պետք է հանդիսանար պրոպագանդայի կարևոր գործիքներից մեկը: Ճիշտ է, խորհրդային տարիներին տեղադրված մշակույթի որոշ գործիչներ անմիջական կապ չունեին հեղափոխության և սոցիալիզմի գաղափարախոսության հետ, սակայն հեշտությամբ մեկնաբանվում էին այդ համատեքստում: Օրինակ, Խ. Աբովյանի և Մ. Նալբանդյանի արձանների տեղադրումը պետք է հիշեցնեին հայ առաջադեմ մտածողների մասին, որոնց «գաղափարաբանական հիմնակետը 18-19-րդ դարերի ազատականության և առաջադիմության ռուսական արժեքներն էին: Այս մտավորական գործիչներն իրենց գաղափարները գրեթե ամբողջովին հակադրում էին հայ միջնադարյան մտածողությանը՝ պախարակելով և անվանելով այն կղերական, մութ ու միստիկ»[116]: Նմանատիպ հերոսների հիշատակությունը պետք է նպաստեին կոմունիստական կենսաձևի տարածմանը:

Առավել հեշտ էր մոնումենտալ պրոպագանդայի համատեքստում պատկերել խորհրդային տարիներին ստեղծագործած արվեստի գործիչների հուշարձանների տեղադրումը: Արվեստի ներկայացուցիչները տեղավորվում էին խորհրդային գաղափարախոսության, պատմության ընկալումների համատեքստում, քանզի իրենց գեղար-վեստական գործունեությամբ մշակույթի այս գործիչները նպաստել են սոցիալիս-տական ռեալիզմի ձևավորմանը, դաստիարակել սերունդներին սոցիալիստական ներկայի և ապագայի ոգով: Գրել են երգեր աշխատավորների մասին, բանաստեղծություններ՝ հեղափոխության մասին: Անդրադարձել են սոցիալիստական գաղփարախոսության հիմնական հասկացություններին (աշխատանք, կոլեկտիվիզմ, հեղափոխություն, բանվորագյուղացիություն, հավասարություն[117] և այլն) և ստեղծագործել այդ թեմաներով: Նման գործիչների հուշարձանների

[116]Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 38:
[117]Սոցիալիստական ապագայի ստեղծման հիմնական, ամենակարևոր դրույթներն ու արժեքներ:

տեղադրմամբ իշխանությունները խորհրդային քաղաքացուն ներկայացնում էին կոմունիստական արժեհամակարգում գնահատվող արվեստագետի տիպական կերպարը, որին պետք է նմանվեին երիտա-սարդները:

Արվեստի բոլոր ուղղությունների համար սոցռեալիզմի մոտեցման որդեգրումից հետո, կերպարվեստի և քանդակագործության առաջնահերթ խնդիրները և կարևորա-գույն բովանդակությունը դառնում է նոր մարդու կերպարի ստեղծումը. քանդակագործները ձգտում են ստեղծել նոր, սովետական բանվորի, կոլտնտեսականի, զինվորականի, ֆիզկուլտուրնիկի, գիտության և արվեստի ականավոր գործիչների, սովետական աշխատավորուհու տիպական կերպարը[118]: Նմանատիպ աշխատանքները նույնպես խորհրդային քաղաքների հուշարձանային դաշտի մաս էին կազմում: Օրինակ, Ղափանի (Կապան) շրջանի աշխատավորների աշխատանքային արիությունը մարմնավորելու նպատակով Քաջարանում կանգնեցվել է բանվորի ֆիգուր ներկա-յացնող հուշարձան: Բանվորի արձան է կանգնեցվել նաև Երևանի թաղամասերից մեկում: Նմանատիպ քանդակները դիտողի մեջ պետք է սերմանեին այն միտքը, որ «աշխատանքը խորհրդային պետությունում պատվի, արիության և փառքի գործ է...աշխատավոր մարդը սովետական երկրում արժանանում է ամենայն հարգանքի ու սիրո»[119]:

Օտարերկրյա զավթիչների դեմ պայքարը նույնպես հանդիսացել է խորհրդային արձանագործության ամենատարածված թեմաներից մեկը: «Ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական» մոտեցման համատեքստում խորհրդային Հայաստանի քաղաքներում հայտնվեցին ինչպես պատմական, այնպես էլ առասպելական հերոս-ների հուշարձանները: Սասունցի Դավթի, Վարդան Մամիկոնյանի, Դավիթ Բեկի, Տորք Անգեղի, Վահագնի և այլ հերոսների արձանների տեղադրումը Հայաստանի բնակա-վայրերում ներկայացնում էին որպես «հայ ժողովրդի՝ հանուն պայծառ ապագայի պայքարի նշանակիչներ, որը մթին դարերից վերջնական սոցիալիստական

[118]Սարգսյան Մ. Ս., Սովետական Հայաստանի քանդակագործությունը 1920-1930-ական թվականներին, նշվ. աշխ., էջ 29:
[119]Սարգսյան Մ. Ս., Հուշարձանային քանդակագործությունը Սովետական Հայաստանում, նշվ. աշխ., էջ 103:

երջանկության հասնելու թեոլոգիական առաջադիմության ու աճի հռետորության կարևոր մասն էր»[120]: Հայրենիքի համար պայքարի թեման հուշարձանացման ամենակենտրոնական թեման դարձավ Հայրենական պատերազմից հետո, երբ Խորհրդային Միության ողջ տարածքում հայտնվեցին պատերազմի զոհերի, մասնակիցների և հերոսների հիշատակը հավերժացնող հուշարձանները՝ հայրենիքի, ազատության համար պայքարը դարձնելով սոցիալիստական գաղափարախոսության ամենակենտրոնական թեմաներից մեկը:

Այսպիսով, խորհրդային տարիներին հուշարձանային քաղաքականությունը գաղափարականացված էր. Խորհրդային իշխանությունների կողմից խիստ գրախոսության ենթարկվող հուշարձանները նպատակ ունեին խորհրդային քաղաքացուն դաստիարակել հեղափոխության և Կոմունիստական կուսակցության գաղափարներով, նրանց փոխանցել խորհրդային պետության պատկերացումները հերոսության, քաջության, աշխատանքի, հավասարության, գեղեցիկի մասին: Խորհրդային Հայաստանի քաղաքների լանդշաֆտներում պարբերաբար հայտնվում էին խորհրդային և հեղափոխական ականավոր գործիչների, արվեստի նշանավոր ներկայացուցիչների, առասպելական և պատմական հերոսների, խորհրդային տիպական կերպարների արձաններ, որոնք հանրությանը պարբերաբար պետք է հիշեցնեին խորհրդային պետության արժեհամակարգի մասին:

2.2 Հուշարձանային ուղերձների փոխակերպումները հետխորհրդային Հայաստանում

Հայաստանի Հանրապետության անկախացմանը հաջորդած տարիներին, ԽՍՀՄ փլուզման արդյունքում քաղաքական և գաղափարախոսական համատեքստերի փոփոխությունները չէին կարող ազդեցություն չունենալ Հանրապետության քաղաքների լանդշաֆտների փոփոխությունների վրա: Արցախյան շարժման ընթացքում Հայաստանի քաղաքների նշանային դաշտը արդեն որոշակի փոփոխությունների էր ենթարկվել: Ղարաբաղյան

[120] Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 39:

կոնֆլիկտի ու հայ-ադրբեջանական հակամարտության, 1988 թ. դեկտեմբերի 7-ի աղետալի երկրաշարժի, ինչպես նաև Հայոց Ցեղասպանության վերակարևորման արդյունքում քաղաքների հանրային վայրերում հայտնվեցին նոր հուշարձաններ՝ նվիրված այդ իրադարձություններին զոհ գնացածների հիշատակին: Բացի այդ, քաղաքական համատեքստի փոփոխության պայմաններում, երբ քաղաքների կենտրոններից սկսել էին իրար հետևից անհետանալ խորհրդային գործիչների արձանները, Հայաստանի քաղաքներում սկսվեցին հայտնվել ազգային ազատագրական պայքարի ներկայացուցիչների արձանները, որը արգելված թեմա էր խորհրդային տարիներին: Անկախության հետագա տարիներին Հայաստանի բնակավայրերում մեծ շուքով տեղադրվեցին նաև խորհրդային տարիներին արգելված ռազմական երկու գործիչների՝ զորավար Անդրանիկի և Գարեգին Նժդեհի արձանները, որոնք տեղադրվեցին ՀՀ գրեթե բոլոր փոքր և մեծ բնակավայրերում: Խորհրդային գրաքննության բացակայությունը, անկախության տարիներին հստակ գաղափարախոսության բացակայությունը նպաստեցին քաղաքների հանրային վայրերում զանազան ուղերձներ ունեցող հուշարձանների հայտնվելուն, նույնիսկ գրանցվեցին դեպքեր, երբ իրարամերժ բովանդակությամբ նշանները հայտնվեն միևնույն վայրում: Երևանի Շենգավիթ համայնքի կենտրոնական հրապարակը կրում էր հեղափոխական գործիչ Սուրեն Սպանդարյանի անունը, որը 1991 թ.-ից վերանվանվել է ռազմական գործիչ Գարեգին Նժդեհի անունով՝ շարունակելով իր տարածքում կրել հեղափոխականի արձանը (նկ. 15): Հակասությունը կայանում է նրանում, որ Ս. Սպանդարյանը բոլշևիկ էր, իսկ Գ. Նժդեհը հակաբոլշևիկ, ով ի վերջո դարձավ խորհրդային ռեժիմի զոհ և շատերը մինչ օրս անբանական են համարում երկու այս գործիչների նշանային ներկայությունը միևնույն տարածքում:

Անկախ Հայաստանի քաղաքների հանրային տարածքներում հայտնվեցին կրոնական թեմաներով հուշարձաններ, արձաններ նվիրված բարեգործների հիշատակին, թագավորների արձաններ, խորհրդային տարիներին արգելվող հայ քաղաքական, ռազմական, հասարակական գործիչներին նվիրված արձաններ: ՀՀ քաղաքների

հանրային վայրերում հայտնվեցին հայ պետականությունը խորհրդանշող արքաների արձանները. տեղադրվեցին Տիգրան Մեծ արքայի (Երևան, Վաղարշապատ), Արգիշտի Ա, Տրդատ Ա (Երևան), Աշոտ Գ Ողորմած (Գյումրի), Աշոտ Երկաթ (Իջևան), Արտաշես Ա (Արտաշատ) թագավորների արձանները: Հայոց արքաների, որպես պետականության խորհրդանիշների կարևորում շատ արդի է դարձել հատկապես վերջին տարիներին, երբ նրանց պատկերները սկսեցին ակտիվ շրջանառվել սոցցանցերում: Նույնիսկ, երիտասարդ նկարիչների մի խումբ հայոց արքաներին պատկերող շապիկների վաճառք նախաձեռնեց: Ներկայում էլ «Արմենիա» հեռուստաընկերությունը նկարահանել և ցուցադրում է «Հին արքաներ» հեռուստասերիալը:

Ինչպես խորհրդային, այնպես էլ անկախության տարիներին Հայաստանի քաղաքներում առավել հաճախ հայտնվող հուշարձանների հասցեատեր են հանդես գալիս արվեստի ականավոր գործիչները: Նմանատիպ հուշարձանների տեղադրումը նախընտրելի է ինչպես Հայաստանի քաղաքացիների, այնպես էլ քաղաքային իշխանությունների համար՝ պայմանավորված այդ կոթողների ապաքաղաքական ընկալումներով և հիշատակվող հերոսների անունների հավերժացման անհրաժեշտության վերաբերյալ հանրային պատկերացումներով:

Երևանում առավել հաճախ տեղադրվում են հուշարձաններ, կիսանդրիներ և արձաններ: Երևանյան արձանների «գլխավոր հերոսները», արվեստի և գիտության ներկայացուցիչներից հետո ռազմական ոլորտի գործիչներն են և բարեգործները: Երևանում վերջին տաս տարիների տեղադրված հուշարձանների մեծ մասը նվիրված են արվեստագետների (Հակոբ Կոջոյան, Ավագ Պետրոսյան, Տարաս Շևչենկո, Վահրամ Փափազյան, Արա Սարգսյան, անվանի դուդուկահարներ՝ Լևոն Մադոյանին, Վաչե Հովսեփյանին և Ջիվան Գասպարյանին նվիրված «Ուշացած լուսանկար» հուշարձանը), գրողների (Վիլյամ Սարոյան, Գևորգ Էմին, Հրանտ Մաթևոսյան, Սիամանթո), գիտնականների (Ֆրիտյոֆ Նանսեն, Վիկտոր Համբարձումյան, Մխիթար Գոշ), ռազմական գործիչների (Գարեգին Նժդեհ, Համազասպ Բաբաջանյան, Գևորգ Չաուշ) և բարերարների (Գալուստ Գյուլբենկյան, Ալեքսանդր Մանթաշյանց) հիշատակները

հավերժացնելուն: Տեղադրված մյուս հուշարձանները նվիրված էին զանազան իրադարձությունների հիշատակմանը, այդ թվում՝ Շուշի քաղաքի ազատագրումը խորհրդանշող հուշակոթող, հայ և ռուս ժողովուրդների բարեկամության հուշարձան, Եզդի ժողովրդի անմեղ զոհերի հուշարձան-կոթող, Լենինգրադի շրջափակումից տարհանված երեխաներին նվիրված հուշարձան և այլն:

Գյումրիում անկախության տարիներին տեղադրված հուշարձանների շարքում ամենից հաճախ հանդիպում են 1988 թ. Երկրաշարժի զոհերի, այդուհետ արցախյան հերոսամարտի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանները (հիմնականում խաչքա-ներ և հուշաղբյուրներ): Հաճախականությամբ հաջորդը քաղաքի տարբեր հանրային տարածքներում և հատկապես բակերում անհատ անձանց հիշատակին տեղադրված հուշաղբյուրներն են: Հաջորդիվ, հիմնականում քաղաքային իշխանությունների ջանքերով և մասնակցությամբ կանգնեցված հուշարձաններն են, որոնք ներառում են արվեստի գործիչների (Միհեր Մկրտչյան, Հովհաննես Ծիրազ, Ավետիք Իսահակյան, Ծերամ և Ջիվան, Սայաթ-Նովա. տեղական կոլորիտային և բանահյուսական կերպարներ՝ Պոլոզ Մուկուչ, Ջղեր Խաչիկ), պետական և ռազմական գործիչների (Աշոտ Գ Ողորմած, Վարդանանք, զորավարներ՝ Անդրանիկ և Գ. Նժդեհ, անվանի հայդուկ-ներ):

Արցախյան ազատամարտի, երկրաշարժի և Ցեղասպանության զոհերին նվիրված հուշարձանները, անհատներին նվիրված աղբյուր-հուշարձանները կազմում եմ ՀՀ մյուս քաղաքների լանդշաֆտներում հայտնված քանդակների մեծամասնությունը: Այդ քաղաքների նշանային դաշտում հաջորդիվ կարևոր տեղ են զբաղեցնում արվեստի ականավոր ներկայացուցիչներին նվիրված արձանները, ապա ազգային ազատագրական պայքարի հերոսներին, պետական և քաղաքական գործիչներին նվիրված հուշարձանները և աբստրակտ քանդակները: Հետխորհրդային Հայաստանում նշանային ուղերձի կարևոր մաս են սկսել կազմել բարեգործության և կրոնական թեմատիկայով քանդակները:

Անկախության շարժման տարիներին, ինչպես նաև ազատագրական պատերազմի շրջանում և հետագա տարիներին ՀՀ բոլոր

քաղաքներում հայտնվեցին արցախյան պատերազմի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձաններ: Հայաստանի բազմաթիվ քաղաքներում և բնակավայրերում հայտնվեցին նաև հայ ազատագրական պայքարի ներկայացուցիչների հուշարձանները, որոնք մինչ օրս շարունակում են հայտնվել քաղաքների լանդշաֆտներում: Անկախության տարիներին ազատագրական պայքարի թեմային կարևորումը կոլեկտիվ հիշողությունում դրսևորվեց ոչ միայն հուշարձանացման եղանակով: Հետխորհրդային Հայաստանում Արցախյան պատերազմի թեմայով նկարահանվել են մոտ 70 ֆիլմեր: Անկախության առաջին տարիներից սկսած մեծ տարածում գտան ազատագրական պայքարի և նրանց առաջնորդների թեմատիկայով երգերը, որոնք պարբերաբար հնչում են բոլոր պաշտոնական տոնա-կատարությունների, միջոցառումների ժամանակ, կազմում են էստրադային շատ երգիչների երգացանկի պարտադիր մասը և անդադար մատուցվում են հեռուստաթերներում: Ազատագրական պայքարի թեմատիկայով երգերը դարձել են նաև համալսարանական կազմակերպությունների անդամ դառնալ ցանկացող ուսանողների ինիցիացիոն ծեսի անբաժան մասնիկը[121], ինչպես նաև քաղաքացիական շարժումների ժամանակ ակտիվիստների խմբային ծեսերի անբաժան ուղեկիցը[122]:

Հաշվի առնելով քաղաքական գործիչների հիշատակման խորհրդային պրակտի-կայի թարմ հիշողությունները, քաղաքական իշխանությունների հանդեպ հանրության ոչ միանշանակ և հիմնականում բացասական վերաբերմունքը, ներկայի քաղաքային իշխանությունները հիմնականում խուսափում են քաղաքական գործիչների արձանների տեղադրումից, սակայն վերջին տարիներին Հայաստանի քաղաքներում սկսել են հայտնվել քաղաքական գործիչներին նվիրված հուշարձաններ, որոնք երբեմն տեղադրվում են ոչ թե ի նկատի ունենալով այդ գործիչների գործունեության համա-պետական կարևորությունը, այլ, պարզապես հանդիսանում են

[121]«Գինի լից», «Գետաշեն» երգերը երկար տարիներ հանդես են գալիս ԵՊՀ ուսանողական խորհրդի այցեքարտը և նրա անդամների հավաքների, միջոցառումների անբաժան ուղեկիցը:
[122]2015թ. հունիսին Երևանի Բաղրամյան պողոտայում տեղի ունեցած «Էլեկտրիկ Երևան» քաղա-քացիական շարժման մասնակիցներից շատերը խմբերով ազգային ազատագրական երգեր էին կա-տարում:

որպես կոնկրետ կու-սակցական գաղափարախոսության նշանային արտահայտում:

Հայ ռազմական և քաղաքական գործիչ, ՀՀ պաշտպանության նախարար և վարչապետ Վազգեն Սարգսյանի մահից հետո[123] նրա պատվին արձաններ տեղադրվեցին ՀՀ մի շարք քաղաքներում, որոնք սակայն ավելի հաճախ հիշատակում են ոչ թե Վ. Սարգսյան քաղաքական, այլ ռազմական գործչին: Վանաձորում 2013 թ. Սարգսյանի կանգնեցված արձանը ՀՀ պաշտպանության նախարարության նախաձեռնության արդյունքն է, իսկ Արարատի մարզի համանուն քաղաքի գլխավոր հրապարակում և նույն մարզի Վեդի քաղաքի պուրակներից մեկում Սարգսյանի հուշարձանների տեղադրումը կապվում է նրածնունդով արարատցի լինելու հետ[124]:

Այնուհանդերձ, հետխորհրդային շրջանում կանգնեցված մի շարք հուշարձանների պարագայում մենք ականատես ենք իշխող քաղաքական ուժի գաղափարախոսական որոշակի դրսևորումների: 2016 թ.-ին Երևանի Հանրապետության հրապարակի հարեվանությամբ Գ. Նժդեհի հուշարձանի (նկ. 16) կանգնեցումը լրատվամիջոցներում մեծամասամբ մեկնաբանվեց հենց քաղաքական տեսանկյունից[125], քանի որ Գ. Նժդեհը պաշտոնապես հայտարարված է ՀՀ Հանրապետական կուսակցության գաղափարախոսը, որի մասին են վկայում նաև հուշարձանի բացման արարողության ժամանակ այդ կուսակցության ներակայացուցիչների ակտիվ ելույթները: Գաղափարախոսական նույն միտումով է պայմանավորված նաև Սիսիան քաղաքի կենտրոնական փողոցներից մեկում Հանրապետական կուսակցության հիմնադիր՝ Ա. Նավասարդյանի կիսանդրու (նկ. 17) կանգնեցումը, քանի որ նրա կիսանդրին տեղադրվեց իր ծննդավայր Սիսիանում՝ ՀՀԿ-ի իշխանության գալուց հետո միայն: 2009թ. Կապանի կենտրոնում տեղադրվեց Հայաստանի առաջին Հանրապետության հիմնադիր, դաշնակցական գործիչ Արամ Մանուկյանի կիսանդրին (նկ. 18), որը

[123]Վ. Սարգսյանը սպանվել է 1999 թ.-ին ՀՀ ԱԺ-ի վրա կատարված զինված հարձակման արդյունքում:

[124]Վ. Սարգսյանի արձանի համար Արարատ քաղաքի կենտրոնական հրապարակի ընտրությունը կապվեց այդ հրապարակից Սարգսյանի կողմից արցախյան ազատամարտի համար կամավորների հավաքագրման հետ՝ նոր արձանին տալով ռազմական համատեքստ:

[125]Գարեգին Նժդեհի արձանը ՀՀԿ-ի՞, թե՞ ժողովրդի համար է, http://www.aravot.am/2014/11/03/512312/, 28.11.2017.

ՀՀԿ-ի ներկայացուցչին փոխարինման եկած դաշնակցական քաղաքապետի և նրա ներկայացրած կուսակցության հաղթանակի նշանային ցուցիչներ հանդիսանում:

1988 թ.-ի դեկտեմբերի 7-ին Հայաստանի հյուսիսային հատվածում տեղի ունեցավ ավերիչ երկրաշարժ, որի արդյունքում Սպիտակ, Լենինական (Գյումրի) և Կիրովական (Վանաձոր) քաղաքները մեծ մարդկային կորուստներ կրեցին, ավերվեցին բազմաթիվ շենքեր և այլ կառույցներ: Աղետի գոտու բոլոր բնակավայրերում երկրաշարժից հետո հայտնվեցին զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձաններ: Համայնքային իշխանությունների, տարբեր կազմակերպությունների և պետությունների ջանքերով տեղադրված հուշարձաններից զատ, այդ բնակավայրերի հանրային վայրերում, թաղերում, բակերում հայտնվեցին նաև անհատների, խմբերի ջանքերով և միջոցներով կառուցված հուշարձաններ: Աղետի գոտուց հեռացած բնակիչների ջանքերով նմանատիպ հուշարձաններ տեղադրվեցին նաև Հայաստանի այլ քաղաքներում և գյուղերում: Տարբեր բնակավայրերում հուշարձաններ հայտնվեցին նաև տեղի համայնքային իշխանությունների, բարերարների ջանքերով:

Գյումրիում առաջին հուշարձանները սկսեցին ինքնաբերաբար հայտնվել խոշոր ավերածությունների տարածքներում: Նմանատիպ շատ կոթողներ կանգնեցվել են բակերում կամ փողոցների հարևանությամբ հարևանների, բարեկամների ջանքերով: Գյումրիի որոշ նորակառույց թաղամասերում թաղային առաջին միջոցառումները նույնպես սկսվում էին երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի տեղադրմամբ[126]: Եվ, չնայած նրան, որ այդ թաղամասերում սկզբնական շրջանում բնակություն էին հաստատել համեմատաբար չունևոր բնակիչներ՝ հուշարձանի տեղադրման համար հանգանակություններին մասնակցում էին բոլորը[127]: Երկրաշարժի զոհերին նվիրված հուշարձանների գերիշխող մասը աղբյուր-հուշարձաններ էին, որոնք Գյումրիից զատ տեղադրվել են նաև Սպիտակում, Վանաձորում և աղետի գոտու մյուս համայնքներում: Երկրաշարժին հաջորդած արցախյան

[126]Шагоян Г., Мемориализация землетрясения в Гюмри // Антропологический форум, № 11, 2009, с. 354-355.
[127]Անդ:

ազատամարտի տարիներին, հանրության կողմից պատերազմի զոհերի հիշատակին կանգնեցվող հուշարձաններից շատերում աղբյուրը այդ կոթողների պարտադիր մասն էր կազմում[128]: Նշված հուշաղբյուրները որոշ դեպքերում ունեին գերեզմանային հուշարձաններին բնորոշ գծեր (դաջված պատկերներ, գերեզմանային ատրիբուտներ, մարմարե սալիկներ)[129]: Հետագա տարիներին ականատես ենք մեծ թվով առանձին անձանց (անհատների) նվիրված աղբյուր-հուշարձանների հայտնվելուն, որոնք հիմնականում պատկերում էին վաղաժամ մահացածներին, որոնք մահացել են դժբախտ պատահարի հետևանքում՝ մանկահասակ, պատանի կամ երիտասարդ տարիքում[130]: Այս մարդկանց նվիրված հուշաղբյուրների վրա, սովորաբար փորագրված կամ դաջված են միայն հանգուցյալի անունը կամ մականունը, ինչը վկայում է, որ նա հայտնի է միայն փոքրաթիվ մարդկանց շրջանակի[131]: Նմանատիպ հուշաղբյուրները գերազանցապես տեղադրվում էին առանձին թաղամասերում, բակերում, մահացածների թաղերում, երբեմն էլ փողոցների վրա (նկ. 19): Այս կոթողները լայն տարածում գտան (նմանատիպ հուշաղբյուրները շարունակում են ակտիվորեն տեղադրվել (նկ. 20) հետխորհրդային Հայաստանի բնակավայրերում), քանզի նրանց տեղադրումը չէր վերահսկվում համայնքային իշխանությունների կողմից և ցայսօր էլ շարունակում են առանց կարգավորման մնալ [132]:

Հետխորհրդային քաղաքային լանդշաֆտներում սկսվեցին հայտնվել հուշարձան-ներ՝ նվիրված բարեգործների, գործարարների, որը, իհարկե, նոր երևույթ է՝ հատուկ «կապիտալիստական» ուղի բռնած պետությանը և չէր կարող

[128]Առաջին հուշաղբյուրները մեր իրականությունում զանգվածաբար հայտնվում են խորհրդային իշխա-նության տարիներին, երբ հետպատերազմյան շրջանում աղբյուր-հուշարձաններ էին կանգնեցվում Հայաստանում խորհրդային իշխանության համար մղված մարտերում և Հայրենական պատերազմում զոհված հերոսների հիշատակին:

[129]Տե՛ս Մարգարյան Ն., նշվ. աշխ., էջ 51:

[130]Անդ:

[131]Ազատամարտիկների դեպքում հուշաղբյուրների վրա հաճախ նշվում էր զոհվածի մարտական մականունը՝ զուգահեռ պարտադիր հիշատակելով նաև նրա անունն ու ազգանունը:

[132]ՀՀ համայնքային իշխանությունները նմանատիպ հուշաղբյուրների տեղադրման վերաբերյալ ոչ մի որոշում երբևէ չեն ընդունել, մինչդեռ այդ կոթողների թիվը գնալով միայն աճում է:

կիրառում ունենալ խոր-հերդային տարիներին: 1988 թ. ավերիչ երկրաշարժը, Արցախյան ազատամարտը, արտագաղթը, երկրի ծանր սոցիալ-տնտեսական վիճակը նպաստեցին բարերարների, բարեգործների երևան գալուն, ովքեր սկսեցին ներդրումներ կատարել պետության բոլոր ոլորտներում, իսկ նրանց գործը գնահատելու և հետագա օգնություններն ու նոր բարերարների ներգրավումը խթանելու համար հուշարձանը սկսեց հանդիսանալ որպես նշանային երախտագիտության և մեծարման կարևոր գործիք:

2011 թ.-ին Երևանի օղակաձև զբոսայգու 4-րդ հատվածում՝ Մ. Նալբանդյանի արձանին հարակից պուրակում ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ ստեղծվեց հայ բարերարների ճեմուղին: Ճեմուղում տեղադրվել են 7 արձան, որից մեկը հայ բարերարի ընդհանրական կերպարն արտացոլող կառույց է, մյուսները՝ Հովհաննես և Հովակիմ Լազարյան եղբայրների, Ալեքսանդր Մանթաշյանի, Պողոս Նուբարի, Գալուստ Գյուլբենկյանի, Ալեք Մանուկյանի, Միքայել Արամյանցի արձաններն են: ՀՀ սփյուռքի նախարարության հայտարարության համաձայն այս գործընթացը շարունա-կական բնույթ կկրի և հետագայում այլ բարերաների արձաններ նույնպես կտեղադրվեն այդ պուրակում: «Կտեղադրվեն այն բարերարների արձանները, որոնք իրենց գործունեության ընթացքում մեծ հետք են թողել հայոց պատմության մեջ, լուրջ ներդրում կատարել Հայաստան-Սփյուռք գործակցության մեջ, մասնակցել Հայաստանի համար կարևոր ազգային ծրագրի իրականացմանը»: Նախարարությունը հստա-կեցրել է նաև, որ բարերարի մահից առնվազն 10 տարի պետք է անցած լինի, որպեսզի նրա արձանը տեղադրման ենթակա համարվի: Այս նախաձեռնությունը քննադատության առարկա դարձավ հանրային քննարկումներում՝ նախարարության այս քայլը կապելով մուրացկանության հետ. բարերաների հուշարձանների տեղադրմամբ կարծես ստեղծվում է նախադեպ՝ նոր բարերարների շահագրգռելով ներդրումներ կատարել Հայաստանում՝ խոստանալով հետագայում տեղադրել նրանց արձանը:

Այս ամենից հետո բարերարներին նվիրված հուշարձանների տեղադրումը նոր թափ առավ՝ տարածվելով մյուս համայնքներում

ևս: Երևանում 2012 թ.-ին տեղադրվեց հայ մեծանուն բարերար և գործարար Ալեքսանդր Մանթաշյանցի արձանը (նկ. 21) քաղաքի կենտրոնական փողոցներից մեկի վրա՝ անմիջապես կապվելով Երևանի նորանշանակ քաղաքապետ Կարեն Կարապետյանի անվան հետ: Սա առաջին դեպքն էր, երբ Երևանում տեղադրվեց գործարարի արձան (որպես առանձին արձան), իսկ քաղաքապետը հանրության մոտ հայտնի էր որպես հաջողակ գործարար: Նոր հուշարձանի տեղադրումը կապվեց քաղաքապետի կողմից քաղաքում նոր դոմինանտ գործարար արժեքների ներմուծման ազդարարման հետ: Այս մեկնաբանությունների համար կարևոր գործոն հանդիսացավ նաև այն հանգամանքը, որ արձանը տեղադրվեց Երևանի Աբովյան փողոցի վրա, որտեղ կենտրոնացած են քաղաքի կոմերցիոն տարածքները (խանութներ, սրճարաններ և այլն): 2014 թ.-ին Երևանի Արաբկիր համայնքում, Գյուլբենկյան փողոցի հարևանությամբ տեղադրվեց բարերար Գ.Գյուլբենկյանի կիսանդրին՝ համանուն պուրակում:

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանում գտնվող Նանսենի այգում 2014 թ. բարերար Կառլեն Եսայանի կողմից կառուցվել է Ֆրիտյոֆ Նանսենի թանգարանի շենքը, որտեղ տեղադրվել է Նանսենի արձանը, Սուրբ Աստվածածին եկեղեցին՝ շրջապատված խաչքարերով և արձանախմբերով: Բարերարի մահվանից հետո, այս տարածքում՝ եկեղեցու կողքը տեղադրվում է նրա հիշատակին նվիրված խաչքարը, իսկ քիչ հեռու տեղադրում է նաև բարերարի հուշարձանը (նկ. 22): 2015 թ.-ին Գավառում տեղադրվեց բարերար Հայրապետ Խաչատրյանի՝ Կոլոտ Հայրապետի արձանը, ում ջանքերով Գավառում ժամանակին կառուցվել է եկեղեցի, դպրոցի շենքեր: Նրա արձանը տեղադրվել է արվեստի դպրոցի դիմաց որպես «երախտագիտության նշան բարերարներին»[133]: Գյումրիում շատ ավելի վաղ տեղադրված (2002 թ.) ֆրանսահայ շանսոնյե Ծառլ Ազնավուրի արձանը (նկ. 23) նույնպես առաջին հերթին բարերարության նկատմամբ երախտագիտության դրսևորում է և կապված է Ազնավուրի՝ Հայաստանում իրականացրած բարեգործությունների հետ:

[133]Գավառում երախտապարտ են բարերարներին. բացվեց Հայրապետ Խաչատրյանի արձանը, https://armenpress.am/arm/news/822558/gavarum-erakhtapart-en-barerarnerin-bacvec-hayrapet-khachatryani.html, 02.08.2018.

Որոշ դեպքերում բարեգործներն իրենք կամ իրենց հարազատներն են հանդիսանում իրենց իսկ նկատմամբ երախտիքի արտահայտման նախաձեռնողները: Օրինակ Սյունիքի մարզի Արծվանիստ գյուղում (Կապանից քիչ հեռու) նախկին բնակիչներից մեկը, ով ներկայումս բնակվում է Մոսկվայում, բարեգործություն է կատարել՝ կառուցելով փոքրիկ մի եկեղեցի: Իսկ եկեղեցու հենց կողքին տեղադրել է տվել նաև իր ամբողջական արձանը (նկ. 24):

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայ Առաքելական Եկեղեցին (այսուհետ՝ ՀԱԵ) վերա-կանգնեց իր դիրքերը պետության քաղաքական, տնտեսական և սոցիալ-մշակութային հարթություններում: Ծատ կարճ ժամանակում ՀԱԵ-ն հավակնություններ ներկայացրեց նաև քաղաքների հանրային տարածքների վերաբերյալ՝ փորձելով ուժեղացնելով իր նշանային ներկայությունը քաղաքային նշանային լանդշաֆտներում[134]: Քաղաքների կենտրոններում սկսեցին հայտնվել եկեղեցիներ, տեղադրվել խաչքարեր, Երևանում և Գյումրիում[135], կենտրոնական հրապարակներին կից հայտնվեցին խաչքարերի պուրակներ: Խաչը սկսեց հայտնվել քաղաքների կենտրոններում տեղադրվող հուշարձանների հորինվածքներում: Խաչ կրող հուշաղբյուրներ են տեղադրվում քաղաքների բնակելի թաղամասերում, բակերում, վերջին տարիներին նույնիսկ կենտրոնական փողոցներում և հրապարակներում: Խաչ պատկերող հուշարձաններ են տեղադրվում նաև կրթական հաստատությունների բակերում, որը նույնպես նոր պրակտիկա է: Գերեզմանային հուշարձանները, կրոնական պատկերագրությունը խորհրդային տարիներին գլխավորապես հանդիպում էին գերեզմանոցներում և եկեղեցիների բակերում, իսկ, ահա ներկա պրակտիկաները վկայում են դրանց տարածական ընդարձակման մասին:

---

[134]Օրինակ, 2010 թ.-ին խոսվեց «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճը քանդելու և նրա տեղում սբ. Պողոս-Պետրոս եկեղեցին վերականգնելու (ապամոնտաժել ամառային դահլիճը և հիմքից կառուցել եկեղեցին՝ այն պատճառաբանությամբ, որ նույն վայրում ժամանակին եղել է եկեղեցի) ՀԱԵ-ի ծրագրերի մասին, որի արդյունքում նույն թվականի մարտին դահլիճի քանդման դեմ քաղաքացիական պայքար սկսվեց՝ արդյունքում պսակվելով հաջողությամբ: Տե՛ս Ուրվագծվում է «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճի ճակատագիրը, https://www.azatutyun.am/a/1980875.html:

[135]Գյումրիի պարագայում նախաձեռնողը նախկին քաղաքապետՎ. Ղուկասյանն է, որի ու ՀԱԵ-ի ջրերը ոչ միշտեն նույն առվով հոսում:

1991 թ. Երևանի Հանրապետության հրապարակից Վ. Լենինի արձանի ապամոն-տաժումից հետո, 1996 թ. վերջնականապես հեռացվեց նաև արձանի վերջին մասնիկը (Լ. Վարդանյանի նախագծած պատվանդանը)՝ այդ տարածքը ցայսօր թողնելով դատարկ: 2002 թ. այդ վայրում ժամանակավոր տեղադրվեց քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյակը խորհրդանշող խաչը՝ հիմնականում հանգեցնելով բացասական մեկնաբանությունների՝ խաչի տեղադրումը հրապարակում կապելով պետության մահվան նշանային ներկայացման հետ (նկատի ունենալով 21-րդ դարի սկզբին Հայաստանի տնտեսական և սոցիալական ծանր կացությունը)[136]:

Այնուհանդերձ, այսքանով կրոնի նշանային ներկայացումը համայնքների հանրային տարածքներում չավարտվեց: Հանրապետության՝ մեծությամբ երկրորդ քաղաք Գյումրիում 2002 թ.-ին նախկին քաղաքապետ Վարդան Ղուկասյանի պատվերով խորհրդային տարիներին Վլադիմիր Լենինի անունը կրող հրապարակում (1991 թ.-ից «Անկախության հրապարակ») տեղադրվեց նոր արձան, որը պատկերում է ողջ հասա-կով կանգնած կնոջ, ում թիկունքում խաչ է վեր խոյանում (նկ. 25): Արձանը նախնական հաշվարկով պետք է պատկերեր «Աստվածամորը», սակայն որոշ ժամանակ անց այն վերանվանեց «Հայուհի»՝ զրկվելով արձանի գլխին տեղադրված լուսապսակից: Այդ ժամանակ խոսակցություններ սկսվեցին, որ իբրև թե Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պաշտոնական կարգադրությամբ է այդ լուսապսակն անջատվել արձանից, քանզի այն կաթոլիկական բովանդակություն ունի, իսկ եթե պարզապես «Հայուհի» է, ուրեմն լուսապսակ տեղադրելն անընդունելի է և սրբապիղծ: Քաղաքի գլխավոր հրապարակներից մեկում «Աստվածամոր» արձան տեղադրելու մտադրությունը հանրային քննարկումներում սուր քննադատության ենթարկվեց՝ կրոնական բովանդակությունը «եկեղեցու տարածքից հանրային տարածք դուրս հանելու» համար: Սակայն, այդ միտումը հանրային քննարկումներում հեշտորեն կապվեց քաղաքապետ Ղուկասյանի «աստվածավախ» լինելու հետ, ով

[136]Абрамян Л., նշվ. աշխ., էջ 45:

հանրային վայրերում կրոնական նշանային ներկայացման ուղղությամբ շարունակեց քայլեր ձեռնարկել նաև հետագայում:

Վ. Ղուկասյանի նախաձեռնությամբ 2008 թ, Գյումրիի «Մայիսյան Ապստամբու-թյան» հրապարակը վերանվանվեց «Վարդանանց»՝ ի պատիվ Վարդան Մամիկոնյանի և Վարդանանց հրապարակի հենց կենտրոնում տեղադրվեց Վարդանանց արձանախումբը, որտեղ պատկերված են Վարդան Մամիկոնյանը, պատմիչ Եղիշեն և Ավարայրի ճակատամարտին մասնակցած պատմական այլ դեմքեր (նկ. 26): Հուշարձանի տեղադրումը, հրապարակի՝ Վարդանանց անվանակոչումը շատերը կապեցին քաղաքապետի անվան հավերժացման միտման հետ, սակայն միևնույն ժամանակ այն կապվեց նաև Ղուկասյանի աստվածավախ էության և կրոնական թեմատիկայով շինություններ կառուցելու հակումների հետ (արձանախմբի կենտրոնում պատկերված Մամիկոնյանի ձեռքին խաչ է խոյանում): Հուշարձանի նախաձեռնության հեղինակ Վ. Ղուկասյանն հուշարձանի տեղադրումից հետո անձամբ նշել է Վարդան Մամիկոնյանի՝ հավատի և եկեղեցու համար մղած պայքարում ունեցած մեծ ավանդի մասին՝ հստակեցնելով, որ արձանախումբը հիմնականում պետք է մեկնաբանել հենց կրոնական համատեքստում[137]:

Հետխորհրդային տարիներին ՀՀ համայնքներում հուշարձանային քաղաքակա-նության վերլուծությունը ցույց է տալիս, որ վերոնշյալ պրակտիկաները բացառիկ չեն և կախված չեն միայն համայնքի ղեկավարի քմահաճույքից և նախաձիրությունից, այլ դարձել են հուշարձանային քաղաքականության որոշակի բաղադրիչ: Այս պրակտիկան հանդիսանում է պետություն-կրոն, ազգ-եկեղեցի միասնության արտահայտումը նշանային դաշտում և հետխորհրդային հուշարձանային քաղաքականության բովանդա-կային կարևոր ուղերձներից է:

Չնայած նրան, որ ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանը որդեգրել է աշխարհիկ պետության ուղին, տեսնում ենք, որ Առաքելական եկեղեցուն մեծ դեր է տրվում կրթական, սոցիո-մշակութային, տնտեսական և նույնիսկ քաղաքական հարթություն-ներում: Պետություն-կրոն դիսկուրսի ամրապնդմանն ուղղված քայլ կարելի

[137]Գյումրին Վարդանակե՞րտ, թե՞ Վարդանավան, http://www.7or.am/am/news/view/6807/, 10.10.2017.

է դիտել նաև 2016 թ.-ին Երևանի Հանրապետության հրապարակի հարևանությամբ Գ. Նժդեհի հուշարձանի կանգնեցումը, որի նախաձեռնությունը պատկանել է Հայաստանի իշխող կուսակցությանը: ՀՀԿ խոսնակը պարզաբանել է, որ հուշարձանի ընտրության մրցույթի հաղթողին իրենք են ընտրել և անձամբ հետևել հուշարձանի կերտման փուլին՝ մասնակցելով նաև հուշարձանի հորինվածքային փոփոխություններին: Արդյունքում, Նժդեհի նոր արձանի պատվանդանին հայտնվել է «Աստված Ազգ Հայրենիք» գրությունը: Քանդակագործ Գագիկ Ստեփանյանը հստակեցրել է հարցազրույցներից մեկում, որ իր աշխատանքում Նժդեհը «ձեռքի շարժումով ցույց է տալիս պատվանդանի ճարտարապետական մասի վրա գրված իր «իմ հոգին զույգ հենարան ունի՝ Աստված և հայրենիք» միտքը և ես իրեն կանգնացրել եմ այդ հենարանների վրա»[138]: Իսկ, ահա, պատվանդանի «Գարեգին Նժդեհ» գրության վրա՝ Ն և Ժ տառերի արանքում պատկերված է նաև խաչ: Հուշարձանի կառավարության շենքերի հարևանությամբ, Հանրապետության փողոցում տեղադրումը՝ խաչքարերի պուրակում, կարծես նշանային հարթությունում ամբողջացնում է պետություն-կրոն գաղափարախոսության նշանային ներկայացումը:

Պետություն-կրոն գաղափարախոսական համատեքստում կարելի է դիտարկել նաև Տավուշի մարզի Իջևան քաղաքի հրապարակում տեղադրված Աշոտ Երկաթ արքայի արձանը: Արձանը տեղադրվել է 2017 թվականի աշնանը և պատկերում է հեծյալ արքային՝ խաչը ձեռքին[139] (նկ. 27): Նույն համատեքստում կարելի է մեկնաբանել նաև Հայաստանի հոգևոր կենտրոն հանդիսացող Էջմիածին (Վաղարշապատ) քաղաքի պուրակներից մեկում Տիգրան Մեծ արքայի արձանի կանգնեցումը (նկ. 28): Արձանի բացման արարողության ժամանակ հուշարձանի նշանային այս առումը կարևորվեց նաև տեղադրողների կողմից[140]:

Հանրային դիսկուրսում կրոնական նշանների (հիմնականում խաչի) ներկա-յացումը հանրային տարածքներում քննադատվում է՝

[138]Նժդեհի արձանի հեղինակը՝ քննադատությունների մասին, http://www.a1plus.am/1459664.html, 02.08.2017.
[139]Атанесян Г., Христианская символика в городских памятниках постсоветской Армении // Культура и искусство, № 5, 2018, с. 4-5.
[140]Անդ:

դրանց հետևում եկեղեցիներ, վանքեր տեսնելու մտայնությամբ: 2018 թվականի հունվարին համացանցում հայտնվեց Երևանի նախկին երիտասարդական պալատի շենքի փոխարեն նախատեսվող կառույցի նկարը, որը խստորեն քննադատվեց և՛ հանրության, և՛ մասնագետների կողմից: Նկարում պատկերված շինությունը հսկայական խաչ է պատկերում, որը պետք է տեսանելի լինի Երևանի փոքր կենտրոնից: Հաշվի առնելով շինության վայրը՝ հանրային քննարկումներում այդ կառույցը մեկնաբանվեց որպես քաղաքի վրա դրվող գերեզմանաքար: Ծատերը բողոքում էին, որ ամեն կառույցի վրա չպետք է խաչ հայտնվի, հատկապես քաղաքների հանրային վայրերում, և, որ «կրոնականը պետք է մնա կրոնական տարածքներում[141]»:

Հայաստանի (և՛ խորհրդային, և՛ հետխորհրդային) նշանային դաշտում ոչ միանշանակ էր «կին հերոսի» ներկայացումը: Խորհրդային տարիներին կնոջ պատ-կերագրությունը կենտրոնանում էր հիմնականում աշխատավոր կնոջ հավաքական կերպարի, Հայրենական պատերազմի հուշարձանների հորինվածքներում պայքարող և սգացող կնոջ ներկայացման շուրջ: Երևանում և Գյումրիում Երկրորդ աշխարհամարտից հետո հայտնվեցին նաև Մայր Հայաստան հուշարձանները, որոնք նորություն էին հայ պատկերագրության մեջ և այդպես էլ ամբողջապես չընդունվեցին որպես ազգային խորհրդանիշներ[142]: Այնուհանդերձ, խորհրդային տարիներին հանրային վայրերում կնոջ կերպար ներկայացնող հուշարձանները բոլորն անդեմ էին՝ չէին ներկայացնում պատմական որևէ անձի և հիմնականում միտված էին հանրությանը մատուցելու սովետական կնոջ հավաքական կերպարը: Բացառություն է կազմում միայն Էջմիածնի քաղաքային ծննդատան դիմաց Վ. Լենինի կնոջ Ն. Կրուպսկայայի կիսանդրու տեղադրումը, որը սակայն անկախության շարժման տարիներին հեռացվեց այդ տարածքից:

ՀՀ հետխորհրդային նշանային լանդշաֆտում շատ քիչ են կին հերոսներին նվիրված հուշարձանները, իսկ այդ քիչ

[141]Խաչի տեսքով երկնաքեր՝ «կռծած կուկուռուզի» փոխարեն, http://socialmedia.am/9339.html, 10.02.2018:
[142]Абрамян Л., նշվ. աշխ., էջ 40:

հուշարձանների մեծ մասն էլ աբստրակտ աշխատանքներ են, որոնք չեն պատկերում կոնկրետ հերոսների, այլ որոշակի արժեքների և գաղափարների խտացված, հավաքական կերպար են[143]: 2009 թ.-ին տեղադրված «Արմենուհի» քանդակից բացի, Երևանում վերջին 10 տարիներին տեղադրված մյուս բոլոր արձանները մարմնավորել են արական սեռի գործիչներին: «Արցախուհի», «հայուհի», «նաիրուհի» անվանումով քանդակներ տեղադրվում են ՀՀ տարբեր շրջաններում, որոնք հիմնականում քանդակագործների կողմից անդեմ հայ կնոջ ներկայացում են հանրային տարածքներում: Կնոջ կերպարներով քանդակների բացակայությունը քանդակագործ Լ. Թոքմաջյանը իր տված հարցազրույցներից մեկում պայմանավորում է պատվերների բացակայությամբ: «Հավանաբար կնոջ կերպարով արձաններն այսօր ո՛չ «վերևներին», ո՛չ «ներքևներին» չեն հետաքրքրում»,-մեկնաբանել է քանդակագործը[144]: Այդուհանդերձ, հետխորհրդային Հայաստանի քաղաքներում հայտնեցին հայ ազատագրական պայքարի ներկայացուցիչ Սոսե Մայրիկի, ԽՍՀՄ և ՀՀ պետական գործիչ Ջեմմա Անանյանի հուշարձանները, ինչպես նաև հայուհու արձանը Գյումրիում, որը հետխորհրդային Հայաստանի հուշարձանային դեռևս խուսանավող քաղաքականության վառ օրինակներից է:

Գյումրիում 2002 թ. տեղադրված վերոնշյալ Հայուհու արձանը պետք է պատկերեր «Աստվածամորը», սակայն, զրկվելով լուսապսակից՝ նոր հուշարձանը վերածվեց հայ կնոջը պատկերող արձանի՝ նոր պաշտոնական մեկնաբանություններում ներկայացվելով որպես երկրաշարժի զոհերին սգող կնոջ արձան: Հայաստանում տեղադրված պատմական իրական կին հերոսի պատկերող արձանը նվիրված է Սոսե Մայրիկին: Անկախության առաջին տարիներին, հայտնի ֆիդայիների հետ միասին հուշարձանի արժանացավ նաև հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, Աղբյուր Սերոբի կինն ու զինակից Սոսե Մայրիկը: Եռաբլուրում Սոսե Մայրիկի գերեզմանի մոտ տեղադրված հուշարձանից բացի, նրան նվիրված դիմաքանդակ է տեղադրվել նաև

[143]Գյումրիում կնոջ կերպարն առկա է աղետի զոհերին նվիրված հուշարձաններում, որպես բալիկների մասին հոգ տանող էակներ:
[144] Վերջին 10 տարիներին Երևանում տեղադրված արձանները, http://hetq.am/arm/news/70800/verjin-10-tarinerin-erevanum-texadrvats-ardzannery.html/, 10.10.2017.

Ջերմուկ քաղաքի այգիներից մեկում՝ մյուս ֆիդայի հերոսների դիմաքանդակների կողքին (նկ. 29): Սակայն, Հայաստանի քաղաքային լանդշաֆտում նշանակալի կին հերոսի արձան հայտնվեց միայն 2011 թ.: ՀԽՍՀ և ՀՀ պետական և քաղաքական գործիչ Ջեմմա Անանյանի կիսանդրին 2011 թ. տեղադրվեց ՀՀ Տավուշի մարզկենտրոն Իջևան քաղաքում գտնվող Տավուշի մարզպետարանի հարևան պուրակում (նկ. 30): Ջեմմա Անանյանը խորհրդային տարիներին զբաղեցրել է ՀԿԿ Իջևանի շրջկոմի քարտուղարի, ապաշրջխորհրդի գործկոմի նախագահի, կուսակցության շրջկոմի 1-ին քարտուղարի բարձր պաշտոնները: Հետխորհրդային տարիներին եղել է նաև ՀՀ ԱԺ պատգամավոր, ինչպես նաև զբաղեցրել է Տավուշի մարզպետի տեղակալի պաշտոնը: Ջ. Անանյանը մեծ հեղինակություն է վայելում Իջևանում և նրա 80-ամյակին, կենդանության օրոք նրա պատվին հուշարձանի տեղադրումը դրավառ ապացույց նե:

Այսպիսով, ԽՍՀՄ փլուզումից հետո, քաղաքական համատեքստի փոփոխման պայմաններում, պայքար սկսվեց խորհրդային անցյալի առաջնային խորհրդանիշների դեմ՝ նպաստելով Հայաստանի քաղաքային լանդշաֆտից հեղափոխական գործիչների արձանների հեռացմանը: Հետխորհրդային Հայաստանի բնակավայրերի հանրային տարածքներում անկախության սկզբի տարիներին հայտնվեցին հայ ազատագրական պայքարի ներկայացուցիչների հուշարձաններ, հետագայում հայ պետական, քաղաքական, հասարակական գործիչների արձանները, Հայաստանի քաղաքները լցվեցին երկրաշարժի, Ցեղասպանության և արցախյան պատերազմի զոհերին նվիրված հուշարձաններով, անհատներին նվիրված աղբյուր-հուշարձաններով: Արվեստի նշանավոր գործիչներին նվիրված նոր հուշարձանների կողքին հետխորհրդային տարիներին հայտնվեցին նաև կրոնական թեմատիկայով և սիմվոլիկայով հուշարձաններ, բարերարներին նվիրված արձաններ, որոնք չէին հանդիպում խորհրդային տարիներին՝ նպաստեցին խորհրդային տարիներին ձևավորված նշանային լանդշաֆտի փոխակերպմանը:

2.3 Խորհրդային հուշարձանների ճակատագիրը հետխորհրդային Հայաստանում

ԽՍՀՄ փլուզումից հետո խորհրդային անցյալի ներկայության դեմ պայքար սկսվեց նորանկախ գրեթե բոլոր պետություններում, այդ թվում Հայաստանի Հանրապետությունում: 1988-1990 թթ.-ին և հատկապես անկախության առաջին տարիներին Հայաստանի բոլոր բնակավայրերի տարածքներից հեռացվեցին Հոկտեմբերյան հեղափոխության առաջնորդ Վ. Լենինի հուշարձանները: Հայաստանի քաղաքներում հեռացվել, քանդվել կամ պայթեցվել են Լենինին նվիրված մոտ 50 արձաններ, չհաշված դպրոցների, ակումբների և այլ (երկրորդային) վայրերի բակերում կամ շենքերի ներսում տեղադրված կիսանդրիները, որոնք շատ մեծ թիվ էին կազմում: Հեռացվեցին նաև հեղափոխական այլ գործիչների արձաններ, ի մասնավորի՝ Ս. Կիրովի[145], Ս. Օրջոնիկիձեի[146], Վ. Լենինի կնոջ՝ Ն. Կրուպսկայայի[147] արձանը և ուրիշներ:

Երևանում տեղահանվեցին խորհրդային տարիներին տեղադրված հուշարձան-ներից 5-ը, որոնցից առաջինը ադրբեջանցի մարքսիստ, տեղական հեղափոխական շարժման առաջնորդ, Բաքվի 26 կոմիսար՝ Մեշադի Ազիզբեկովի արձանն էր (կանգուն տարիներ՝ 1934-1988 թթ): Ադրբեջանցի հեղափոխականի արձանը կորցրեց իր արդիականությունը Ղարաբաղյան շարժման մեծ թափ հավաքելուն պես: Արձանը հեռացվեց 1988-ին հենց համանուն Ազիզբեկովի (այժմ՝ Սախարովի) հրապարակից: Հաջորդը բոլշևիկ հեղափոխական-կուսակցական գործիչ, 1920 թ.-ի Մայիսյան ապստամբության ակտիվ մասնակից Ղուկաս Ղուկասյանին նվիրված արձանն էր: Ղուկասյանի (այժմ՝ Ուսանողական) պուրակում՝ Երևանի պետական համալսարանի դիմաց տեղադրված արձանը պայթեցվեց անկախության շարժման օրերին (1990 թ.), անհայտ անձանց կողմից, գիշերով: Հեղափոխական մյուս գործչի հեռացված արձանը տեղադրված էր Երևանի հենց սրտում. 1991 թ.-ի ապրիլի 13-ին Երևանի Լենինի անվան (այժմ՝

---

[145]Կիրովականի (ներկայում Վանաձոր) Կիրովի անունը կրող հրապարակից (ներկայում Հայքի հրա-պարակ):

[146]Արարատ քաղաքում:

[147]Վաղարշապատ քաղաքի գլխավոր ծննդատան շենքի առջևից:

Հանրապետության) հրապարակից ապամոնտաժվեց ԽՍՀՄ ղեկավար Վ. Լենինի արձանը (կանգուն տարիներ՝ 1940-1991թթ.): Իսկ 1996 թ. ապամոնտաժվեց նաև արձանի պատվանդանը, որի մնացորդներն այժմ պահվում են քաղաքապետարանի պահեստում (Չարբախում): Անկախության հետագա տարիներին, 1997 թ. «Գործարանային» մետրոյի կայարանի մոտակայքից հեռացվեց բանվոր դասակարգի հավաքական կերպար ներկայացնող «Բանվորի» արձանը (կանգուն տարիներ՝ 1982-1997 թթ.): Արձանի հեռացումը պետական որոշում էր, պաշտոնական պատճառը՝ «Բանվորի» ոչ ամուր լինելն էր և վտանգը, որ կարող է շրջվել և վնաս պատճառել անցորդներին: Սակայն, ինչպես վստահեցնում են այսօր մասնագետները, իրականում այն ամրացված էր երկար ռելսով, որը գետնի տակ ամուր հիմք էր հանդիսանում: Տեսակետներ կան, որ անկախացումից հետո արձանը այլևս գաղափարապես չէր համապատասխանում երկրում տիրող իրավիճակին[148], որի պատճառով էլ ապամոնտաժվեց:

Արձանամարտի թիրախդարձան նաև խորհրդային այլ գործիչների արձանները. Երևանում ժամանակ առ ժամանակ վանդալիզմի զոհ էր դառնում Ստեփան Շահումյանի արձանը, թիրախավորվել էր նաև խորհրդային գործիչ Ալ. Մյասնիկյանի արձանը, իսկ Երևանի համայնքներից մեկում (Շենգավիթ) հեղափոխական գործիչ Ս. Սպանդարյանի արձանի տեղահանության հարցը մինչ օրս էլ հանրային քննարկումների առարկա է հանդիսանում: Երևանում իր անունը կրող կենտրոնական հրապարակից Լենինի արձանի տեղահանությունից մի փոքր վաղ հայտնի ռուս գործիչներին նվիրված երկրորդական տարածքներում գտնվող մի քանի հուշարձաններ հեռացվեցին իրենց անունները կրող դպրոցների առջևից (1988 թ.), օրինակ Ա. Պուշկինի և Պ. Չեխովի կիսանդրիները: Հետագայում (9 օր անց) Պուշկինի կիսանդրին վերադարձվեց իր պատվանդանին, իսկ Չեխովի նոր կիսանդրին փոխարինեց կորած հինին (1998 թ.): Այնուհանդերձ, ռուս մշակութային գործիչների դեմ արձանամարտը Երևանում ունեցել է դրվագային բնույթ, իսկ այդ

[148]Արձանի մնացորդները մինչ օրս գտնվում են թաղի գործարաններից մեկի տարածքում, մի մասը վաճառվել է որպես մետաղի ջարդոն:

հուշարձանները սովորաբար անհետանում էին գաղտնի՝ առանց հանդիսատեսի[149]:

Պետք է նկատել, որ ազգությամբ հայ խորհրդային գործիչների հուշարձանների մեծ մասը շարունակում է տեղադրված մնալ ՀՀ քաղաքների հանրային վայրերում: Ս. Շահումյանի և Ալ. Մյասնիկյանի արձաններ կան ՀՀ շատ քաղաքներում, խորհրդային գործիչ Անաստաս Միկոյանի արձանները շարունակում են տեղադրված մնալ Էջ-միածնի և Եղեգնաձորի կենտրոնական հատվածներում, Արտաշատի կայարանի դիմաց: Այս և խորհրդային տարիների այլ հայազգի գործիչների արձանների պահպանման պատճառների շարքում գլխավորն այն է, որ անկախության տարիներին դրանք հեշտությամբ վերամեկնաբանվեցին ազգայինի համատեքստում՝ ներկայացվելով որպես ազգային (խորհրդահայ) ճարտարապետության և քանդակագործության արժեքավոր գործեր և ազգային պատմության խորհրդանիշներ:

Անկախության առաջին տարիներին ընթացած արձանամարտը քաղաքական բնույթ էր կրում և ուղղված էր խորհրդային անցյալի նշանների դեմ: Արդյունքում, Հայաստանի քաղաքների հանրային վայրերից հեռացվեցին բարձրարժեք քանդակներ, որոնց արվեստային առումների մասին արված մեկնաբանությունները, արձանամարտի ընթացքում, կամ հաշվի չառնվեցին կամ արդեն ուշացած էին:

Երբ տեղահանվում էր Վ. Լենինի արձանը Երևանի կենտրոնից՝ Երևանի քաղաքապետ Համբարձում Գալստյանը արձանի տեղահանման պաշտոնական արարողությունից առաջ ասել է, որ տատանվել է մինչև վերջնական որոշում կայացնելը, քանզի վստահ չէր, թե արդյոք արձանը իրական գեղարվեստական արժեք ներկայացնում է, թե՝ ոչ: «Այժմ ես համոզվեցի, որ չի ներկայացնում»[150],-ասաց քաղաքապետը: Սա իրականում մի շատ կարևոր խնդրի առկայության մասին վկայող տեքստ էր, քանզի Երևանում շարունակում են տեղադրված մնալ նույն քանդակագործի (Սերգեյ Մերկուրով) կողմից ստեղծված այլ հուշարձաններ, որոնք և՛ պաշտոնական, և՛ արվեստային, և՛

[149]Абрамян Л., նշվ. աշխ., էջ 28.
[150]Абраамян Л., նշվ. աշխ., էջ 29:

հանրային դիսկուրսներում մեկնաբանվում են որպես արվեստի բարձրարժեք աշխատանքներ (Ս. Ծահումյանի հուշարձանը Երևանում): Միևնույն ժամանակ տեսնում ենք, որ այդ նույն հեղինակի՝ Լենինին նվիրված ոչ պակաս բարձրարժեք աշխատանքը մեկնաբանվեց՝ ոչ այդքան կարևոր, որն ըստ էության ոչ այլ ինչ էր, քան պատմական կարևոր այդ որոշման կայացման արդարացում գալիք սերունդների առջև: Երևանում, Լենինի արձանի ապամոնտաժումից հետո, դեռ շատ տարիներ (մինչև 1996 թ.) անց պատվանդանն իր տեղում էր և պահպանման պատճառներից մեկը հենց այդ կառույցի մոնումենտալությունն ու գեղարվեստական կատարելությունն էր: Պատվանդանի ապամոնտաժումը, այդ տարիներին, մեկնաբանվեց որպես քաղաքական քայլ և, ապամոնտաժմանը դեմ քաղաքացիները շարունակաբար ընդգծում էին պատվանդանի գեղագիտական ասպեկտը, այն համարում՝ իր ժանրի մեջ լավագույն աշխատանքներից մեկը[151]:

Երևանում Լենինի արձանի ապամոնտաժումից հետո, 1991 թ. Կիրովականի (Վա-նաձորի) կենտրոնական հրապարակից (ներկայում՝ Հայքի) հանվեց նաև ռուս հեղափո-խական գործիչ Սերգեյ Կիրովի արձանը: Կիրովի հուշարձանը համարվում էր խորհըր-դահայ քանդակագործության նշանավոր և հաջողված գործերից, իսկ արձանի տեղա-հանմանը տեղացիներն ընդհանրապես հակված չէին: Այնուհանդերձ, գեղարվեստական բարձրարժեքությունը չփրկեց ապամոնտաժումից Լենինին նվիրված արձանները նաև Գորիսում, Գյումրիում: Քաղաքական և պատմական փոփոխությունների պարագա-յում անհետացան նաև մյուս հեղափոխականների բարձրարժեք աշխատանքները:

Սակայն, կան բացառություններ: Օրինակ Սիսիանում խորհրդային կարգերի հաստատման համար ընկած մարտիկներին նվիրված հուշարձանը շարունակում է կանգուն մնալ: Իրենց նախկին վայրերում են շարունակում մնալ նաև հեղափոխության, խորհըրդային կարգերի հաստատման տարեդարձների պատվին կանգնեցված հուշարձանները: Հիմնական պատճառն այն է, որ այդ կառույցները շատ մոնումենտալ են, մասնակի կորցրել են իրենց

[151]Անդ, էջ 42:

պատմական և քաղաքական ընկալումները, կամ գտնվում են լքված վայրերում և այլևս չեն գործում իրենց հին համատեքստում:

Տեսնում ենք, որ խորհրդային հուշարձանների տեղահանումը, իսկ մյուսների պահպանումը քաղաքական, պատմական քայլ էր: Քաղաքական համատեքստի փոփոխության պայմաններում հիմնական պայքարը գնաց գերազանցապես խորհրդային միության առաջնային նշանների դեմ՝ հաշվի չառնելով անգամ այդ քանդակների գեղագիտական, արվեստային արժեքը և կարևորությունը: Մյուսները, որոնք հեշտությամբ տեղավորվում էին ազգայինի համատեքստում՝ հեշտությամբ վերաիմաստավորվեցին և շարունակեցին կանգուն մնալ իրենց նախկին տեղերում:

2.4 Հուշարձանային նոր քաղաքականությունը արդի հանրային քննարկումներում

Արցախյան պատերազմի զոհերի (նաև զինադադարի պայմաններում զոհված զինվորների), Ցեղասպանության անմեղ նահատակների հիշատակին նվիրված ցան-կացած հուշարձանի տեղադրում դրական է ընդունվում արդի հայաստանյան հանրային դիսկուրսում և նույնիսկ մեկնաբանվում որպես հանրային պարտք և պարտավորություն: ԽՍՀՄ հեղափոխական գործիչների հուշարձանների տեղահանությունից և խորհրդային այլ արձանների վերաիմաստավորման գործընթացներից հետո, անկախ Հայաստանի քաղաքային լանդշաֆտում հայտնվող գրեթե յուրաքանչյուր հուշարձան դրականորեն է ընդունվում և հանրային քննարկումներում մեկնաբանվում որպես արժանի տեղադրման: Սակայն վերջին տարիների հուշարձանային քաղաքականությունը, ՀՀ քաղաքների հանրային վայրերում բազմաբովանդակ և բազմաթիվ նոր հուշարձանների տեղադրումը, խնդրահարույց բովանդակությամբ որոշ արձանների կանգնեցումը հիմք հանդիսացան հանրային դիսկուրսում հուշարձանացման արժանի թեմաների վերանայմանը:

Հանրային դիսկուրսը գնալով փոխում է վերաբերմունքը նոր տեղադրվող հու-շարձանների հանդեպ: Հանրային քննարկումներում վերջին տարիներին կարելի է հանդիպել «արձանախեղդ քաղաք»,

«քաղաքը գերեզմանոց», «ամեն քայլին արձան», «մեռան արձան դնելով» արտահայտությունները (խոսքը վերաբերում է հատկապես Երևանի և Գյումրիի մասին), որոնք բնութագրում են քաղաքացիների վերաբերմունքը վերջին տարիներին բազմաթիվ հուշարձանների տեղադրմանը: Նույնիսկ անեկդոտներ են շրջանառվում, որ արտագաղթի մեծ տեմպերի հետ կապված, երբ երկրի բնակչու-թյան գլխաքանակը սկսել է պակասել, յուրաքանչյուր արտագաղթողի փոխարեն տե-ղադրում են մեկական հուշարձան, որպեսզի խուսափենք ժողովրդագրական ճգնա-ժամից: Արդյունքում հանրային քննարկումներում սկսում է դիտարկվել վերջին տարի-ներին քաղաքներում կանգնեցվող յուրաքանչյուր հուշարձանի տեղադրման անհրաժեշտությունը:

Երբ 2015 թ. Երևանի կենտրոնական փողոցներից մեկի վրա տեղադրվեց □Ուշացած լուսանկար□ հուշարձանը, որը պատկերում էր հայտնի դուդուկահարների (Լ. Մադոյան, Վ. Հովսեփյան, Ջ. Գասպարյան), հանրային քննարկումներում եղան մեկնա-բանություններ, որ «չպետք է ամեն մեկի պատվին հուշարձան տեղադրել», այն էլ քաղաքի կենտրոնում, որին ի պատասխան հուշարձանում պատկերված դուդուկահար Ջիվան Գասպարյանը՝ նշեց, որ. «Երևանում արձանները շատ են, որովհետև մեր ժողովուրդը տաղանդավոր ժողովուրդ է ու եթե ունենք տաղանդավոր մարդիկ, ինչո՞ւ նրանց արձանները չկանգնեցնենք»: Նույն կարծիքին էին նաև Խորհրդային Միության չեմպիոն և գավաթակիր «Արարատ-73» ֆոտբոլային թիմի խաղացողները, ովքեր գտնելով, որ իրենց գործը պետք է հավերժացվի և փոխանցվի եկող սերունդներին՝ դիմեցին ՀՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանին՝ խնդրելով հովանավորել իրենց հաղթանակները հավերժացնող արձանախմբի տեղադրումը, որն էլ 2016 թ. հոկտեմբերին տեղադրվեց Երևանի «Հրազդան» մարզադաշտի հարևանությամբ: Այս հուշարձանի տեղադրումը նույնպես արժանացավ քննադատության: Մեր հարցվողներից մեկի պնդմամբ. «Մի քանի տարի առաջ եղած հաղթանակները, են էլ սպորտում, արժանի չեն, որ արձան դրվի իրանց համար, մեր երկրի համար կարևոր դեպքերի, մեր մեծերի, հերոսների

կողքին»[152]: Սակայն, սոցցանցերի օգտատերերի մեծ մասը համամիտ է այս տեսակետի հետ: Նրանցից մեկի կարծիքով. «Մեր մեծերին պետք է գնահատել դեռ կենդանության օրոք»[153]:

2014թ. ապրիլի 30-ին Երևանի քաղաքապետարանը որոշեց տեղադրել խորհրդա-յին գործիչ Անաստաս Միկոյանի հուշարձանը Երևանի կենտրոնում: Միկոյանի պատ-վին արդեն հուշարձաններ կային տեղադրված նրա հայրենի Եղեգնաձոր քաղաքի այգիներից մեկում, Էջմիածին և Արտաշատ քաղաքներում, ինչպես նաև նրա անունը կրող փողոցներ կան ՀՀ շատ քաղաքներում, այդ թվում և Երևանում: Սակայն, նրա թոռները որոշել էին իրենց պապի անունը ՀՀ նշանային լանդշաֆտում վերջնական ամրագրելու համար՝ նրա պատվին նոր հուշարձան տեղադրել պետության հիմնական և պրեստիժային նշանային դաշտում ևս: Սակայն, Միկոյանին Երևանի կենտրոնում հուշարձան տեղադրելու որոշումը հանրային մեծ դժգոհություններ առաջացրեց՝ կապված Միկոյանի կենսագրության նորահայտ մանրամասների հետ[154]՝ նրա կերպարի վերաիմաստավորման խնդիր առաջացնելով պատմական հարթությունում[155]: Միկո-յանի, հետագայում խորհրդային մարշալ Համազասպ Բաբաջանյանի[156] արձանների տեղադրումը Երևանում նպաստեց մեկ այլ կարևոր հարցի բարձրացմանը հանրային քննարկումներում, որոնք ազդեցին նաև խորհրդային տեղադրված շատ արձանների և հետո յուրաքանչյուր նոր տեղադրվող արձանների շուրջ հանրային քննարկումների վրա: Հանրային, քաղաքական քննարկումներում շրջանառվեց անհատներին նվիրված հուշարձանների տեղադրման հետևյալ հարցը. արդյո՞ք կան անհատներ ովքեր, ունենալով մեծ ազդեցություն տվյալ երկրի պատմության և մշակույթի վրա, չեն ունեցել նաև բացասական կողմեր կամ չեն կատարել «ոչ բարոյական» արարքներ և «հերոսացնելով» ու «սրբացնելով» նրանց (նրանց

---

[152]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Երևան, 2017, նոյեմբեր:

[153]Դուդուկահարներին նվիրված արձանում պատկերվածներից Ջ. Գասպարյանը և ֆոտբոլային ակումբի շատ մասնակիցներ ականատես եղան իրենց պատվին կանգնեցվող արձանների տեղադրմանը:

[154]Միկոյանը կապվեց խորհրդային տարիներին բազմաթիվ հայերի գնդակահարության դեպքերի հետ:

[155]Տե՛ս Shagoyan G., նշվ. աշխ., էջ 2-5:

[156]Լայն շրջանառում ստացան Բաբաջանյանի Հունգարիայում ղեկավարած բռնաճնշումների պատմութ-յունները՝ մարշալի կերպարը դնելով Միկոյանի հետ նույն հարթության վրա:

պատվին արձան տեղադրելով)՝ արդյո՞ք, միտումնավոր կամ ակամայից, կեղծվում է պատմությունը կամ հանգեցնում հանրության կողմից պատմական և մշակութային իրադարձությունների սխալ մեկնաբանման: Նմանատիպ դիսկուրսը հետևանք էր նաև ավագանու անդամների այն մեկնաբանությունների, որ նշանավոր անհատների կենսագրությունը իրենք կարդացել են իրենց տրված կենսագրություններից, որոնք ինչպես պարզվեցին վերցվել են սովետական հանրագիտարաններից, որոնք իրենց հերթին բաց են թողնում շատ «հերոսների» կենսագրությունների խնդրահարույց թեմաները: Միկոյանի, Բաբաջանյանի խնդրահարույց արձանների տեղադրումից հետո հանրային դիսկուրսի կարևոր թեմա դարձավ քաղաքներում տեղադրվող հուշարձանները, որն ուղղորդեց նաև լրագրողներին մեկնաբանելու վերջին տարիներին տեղադրվող արձանների թեմատիկ ընտրանքը և դիմել քաղաքային իշխանություններին՝ հուշարձանային քաղաքականության ուղղվածությունը և դրա տրամաբանությունը բացահայտելու համար: Քաղաքապետարանի ներկայացուցիչների խոսքերով. «առաջնահերթությունը սովորաբար տրվում է պետական, ազգային հիշարժան տարեթվերին, իրադարձություններին և անհատներին վերաբերող թեմաներին, որոնք հաճախ առաջարկում է Երևանի քաղաքապետարանը՝ պարբերաբար հայտարարված մրցույթների միջոցով: Բայց դրա հետ մեկտեղ Երևանի քաղաքապետարանը ստանում է նաև տարբեր առաջարկություններ ինչպես Հայաստանի, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներից, որոնք հիմնականում ներկայացվում են գեղարվեստի հանձնաժողովի քննարկմանը[157]:

Այնուհանդերձ, Եղեգնաձորում և Վաղարշապատում մեր հավաքած ազգագրա-կան նյութը ցույց է տալիս, որ Միկոյանի անվան հետ կապված դիսկուրսը պայմանա-վորված էր հակառուսական տրամադրությունների հետ, իսկ Երևանի կենտրոնում խորհրդային այդ գործչի արձանի տեղադրումը դարձավ անհամաձայնության և իշխանությունների դեմ բողոքի խորհրդանիշ. և՛ Վաղարշապատի և՛ Եղեգնաձորի բնա-կիչները ոչ մի խնդիր չէին տեսնում իրենց քաղաքներում Միկոյանի արձանի առկա-յության հետ կապված:

[157] Հուշերի արձանագրում, http://imyerevan.com/hy/society/view/8649, 17.03.2015:

Եղեգնաձորի բնակիչներից մեկի պնդմամբ. «Միկոյանի արձանը մեր քաղաքի մասնիկն ա, պատմության մի մասն ա, միշտ եղել ա, մեր կողքին ա եղել, հո չենք հանի»[158]: Բնակիչներից մեկը նշեց, որ. «խնդիր կտեսնեինք, որ դրսից մեկի արձանը լիներ, այլ ազգի մեկի արձանը լիներ... մենք ինչ կապ ունենք Երևանի հետ, իրանք ինչ ուզում են թող անեն, մենք չենք հանելու արձանը»[159]: Ուշագրավ է, որ Միկոյանին նվիրված ևս մեկ արձան տեղադրված է ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի կայարանի դիմաց (նկ. 31), սակայն տեղի բնակիչների մեծ մասը նույնիսկ չգիտեին, որ իրենց քաղաքում նման արձան կա, մի մասն էլ (հարևանությամբ ապրողները) գիտեին, թե դա Ս. Կիրովի, կամ նույնիսկ Վ. Լենինի արձանն է (արձանի և պատվանդանի վրա ոչ մի նշում չկա): «Միկոյանն ա, Լենինն ա, մեկի արձանն ա, դրած ա էլի, ում ախանգարում»,-նշեց տեղի բնակիչներից մեկը[160]:

Հանրային դիսկուրսում քննարկման առարկադարձան քաղաքների հանրային տարածքներում հայտնվող խորհրդանիշները, նրանց ընտրանքի հարցը: Հարց բարձրացվեց, թե վերջին տարիներին քաղաքային իշխանությունները ինչու են հանրային վայրերում տեղադրում միայն խորհրդային տարիների գործիչների արձանները և ինչու չեն տեղադրվում ավելի վաղ կամ նոր ժամանակների հերոսների արձաններ՝ հուշարձանային նոր քաղաքականությունը կապելով Հայաստանի «վերախորհրդայնացման» միտումների հետ[161]: Սոցցանցերի քննարկումների և մեր հարցումների համաձայն ՀՀ քաղաքացիները համարում են, որ քաղաքներում պետք է տեղադրվեն «մեր հերոսների» արձանները՝ հիմնականում որպես առաջնային նշելով հայոց արքաներին (Տիգրան Մեծ, Արտաշես, Պապ Թագավոր և այլն), Գարեգին Նժդեհ, Անդրանիկ, Արամ Մանուկյան, արցախյան պատերազմի հերոսներին (Թաթուլ Կրպեյան, Մոնթե Մելքոնյան, Լեոնիդ Ազգալդյան), հետո նոր արվեստի ներկայացուցիչների անուններ: Այդուհանդերձ, նախընտրություն է տրվում մինչ խորհրդայնացումը ապրած գործիչներին, հետո նոր խորհրդային

[158]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Եղեգնաձոր, 2017, նոյեմբեր:
[159]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Եղեգնաձոր, 2017, նոյեմբեր:
[160]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Արտաշատ, 2017, նոյեմբեր:
[161]Տե՛ս Шагоян Г., Ставить ли памятник Анастасу Микояну? Опыт “социальной люстрации” в Армении, նշվ. աշխ., էջ 127-151:

տարիներին ապրած արվեստի գործիչներին: Իսկ նոր ժամանակներից նշվում էին միայն արցախյան պատերազմի հերոսները:

Անկախության տարիներին խորհրդային խորհրդանշանների դեմ պայքարի արդյունքում Վ. Լենինի արձանները, որոնք տեղադրված էին Հայաստանի համայնքների կենտրոններում, այգիներում և պուրակներում տեղահանվեցին, պայթեցվեցին կամ կոտրվեցին: Սակայն, պարզվեց, որ այդ արձանները ավելի հեշտ էր տեղահանել, քան դրանք նորերով փոխարինել: Այդ տարածքները նոր նշաններով համալրելը պարզվեց բավականին բարդ խնդիր է Հայաստանի իշխանությունների և հանրության համար: Հուշարձանների ապամոնտաժումից 10 և ավելի տարիներ անց միայն ՀՀ որոշ քաղաքներում (Գյումրի, Կապան, Աշտարակ, Արարատ, Գորիս, Դիլիջան) ազատված պատվանդանները և տարածքները ունեցան նոր տերեր[162]:

1991 թ. Երևանի կենտրոնից Վլադիմիր Լենինի արձանը հեռացնելուց հետո, դեռ շուրջ 5 տարի արձանային պատվանդանը շարունակում էր մնալ Հանրապետության հրապարակում: Այդ ընթացքում եղան զանազան ենթադրություններ ու կանխատեսումներ, թե ում արձանը կտեղադրվի պատվանդանի վրա՝ Նոյի, Երևան քաղաքին նախորդած ուրարտական Էրեբունի բերդաքաղաքի հիմնադիր Արգիշտի արքայի, զորավար Անդրանիկի, թե՞ ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի[163]: Հրապարակից պատվանդանի հեռացումից հետո սպասվում էր, որ Լենինի արձանի վայրում մեկ ուրիշ հուշարձան տեղադրելու ցանկությունները կդադարեն, սակայն ժամանակ առ ժամանակ առաջ են քաշվում նոր թեկնածություններ: Հանրային քննարկումներում ամենից հաճախ շոշափվում են Հայաստանի առաջին Հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանի[164] և պետական ու քաղաքական գործիչ Գարեգին Նժդեհի[165] անունները: Վերջինիս հուշարձանը 2016թ. տեղադրվեց

---

[162]Տե՛ս Մարգարյան Ն., Աթանեսյան Գ., Լենինյան պատվանդանների ոդիսականը հետխորհրդային Հայաստանում, ԵՊՄՀ Հայագիտական հանդես, Երևան, 2018, էջ 163-177:

[163]Абрамян Л., նշվ. աշխ., էջ 42:

[164]Երևանի ավագանին 2018 թ.-ի փետրվարի 13-ին հաստատեց Մանուկյանի արձանի տեղադրման որոշումը. Արձանը տեղադրվելու Հանրապետության հրապարակին հարակից վայրում:

[165]ՀՀ-ում վերջին տարիներին իշխանության գլուխ կանգնած Հայաստանի Հանրապետական Կուսակ-ցությունը իրեն պաշտոնապես համարում է Նժդեհի գաղափարախոսության կրող, իսկ Նժդեհի հայտնը-վելը հանրային վայրում

Հանրապետության հրապարակի հարևանությամբ: Շրջանառվում են նաև կարծիքներ, որ Հանրապետության հրապարակը իշխանությունները ազատ են թողնում մի քանի տարի անց ՀՀ ներկայիս նախագահ Սերժ Սարգսյանի արձանը տեղադրելու համար:

Քաղաքական որևէ գործչի արձանի էին սպասում նաև Գորիսի բնակիչները, նմանատիպ քննարկումներ են ընթանում նաև Վանաձորի գլխավոր հրապարակում՝ խորհրդային գործիչ Ս. Կիրովի նախկին արձանի տարածքի վերաբնակեցման հարցում: Այնուհանդերձ, տեսնում ենք, որ հետխորհրդային Հայաստանում Լենինի նախկին արձանները կրող հրապարակները և պուրակները հիմնականում համալրվում են ոչ քաղաքական նշաններով. Դիլիջանում և Իջևանում Լենինի արձանների նախկին վայրերում հայտնվեցին համապատասխանաբար գունդ (այգեգործական մոտիվներ պատկերող) և կենաց ծառ (Իջևանում կայացած քանդակների սիմպոզիումների աշխատանքներից), Գորիսում կանգնեցվեց Գրիգոր Տաթևացու, Աշտարակում կաթողիկոս Ներսես Աշտարակեցու արձանները, Արմավիրում Հայրենական պատերազմին նվիրված սգացող կնոջ պատկերող հուշարձան, Գյումրիում Հայուհու արձանը: Շատ քաղաքներ դեռ մնում են անարձան՝ այդ տարածքները կամ պահելով դատարկ (Սիսիան, Երևան, Վանաձոր) կամ դեռ պահպանելով Լենինի նախկին արձանի պատվանդանը (Վայք, Վեդի, Եղեգնաձոր, Արթիկ): Այնուհանդերձ, որոշ տարածքներում հայտնվեցին քաղաքական գործիչների արձաններ. Կապանում տեղադրվեց Արամ Մանուկյանի արձանը, իսկ Արարատի մարզի համանուն քաղաքում, Լենինի նախկին արձանի վայրում հայտնվեց ՀՀ վարչապետ Վազգեն Սարգսյանի արձանը[166]:

Հետաքրքիր է, որ հետխորհրդային Հայաստանի իշխանությունները հիմնակա-նում չեն շտապում կամ չեն համարձակվում Լենինի նախկին արձանների տարածքում տեղադրել քաղաքական գործիչների արձաններ՝ վախենալով հանրության բուռն արձագանքից: Այդուհանդերձ, տեսնում ենք, որ տեղի բնակիչներն ընդհակառակը, իրենց կատարած

հանրության որոշ մասի մոտ մեկնաբանվում է որպես իշխող կուսակցության սիմվոլ:

[166]Տե՛ս Մարգարյան Ն., Աթանեսյան Գ., նշվ. աշխ.:

գուշակություններում տեղ են հատկացնում հիմնականում հենց քաղաքական գործիչների արձաններին:

Հերոսների փոխարինելիության պատկերացումները, արձանամարտի թարմ հիշողություններն իրենց դրսևորումներն են ստանում նաև հետխորհրդային տարիներին տեղադրված որոշ արձանների շուրջ քննարկումներում: Կապանում Արամ Մանուկյանի արձանի տեղադրումը քննարկումների առարկա դարձավ, սակայն հիմնականում կիսանդրու տեղադրումը դրական ընդունվեց: Սակայն միայն այն հանգամանքը, որ արձանը պատկերում է քաղաքական գործչի, շատերի մոտվախառաջացրեց, որ այն կարող է հետագայում՝ քաղաքական համատեքստի փոփոխման պայմաններում տեղահանվել: «Սյունյաց երկիր» պարբերականի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանն անդրադառնալով Արամ Մանուկյանի արձանին՝ հույս է հայտնում, որ գալիք իշխանություններն ու սերունդները ձեռք չեն բարձրացնի այս հուշարձանի վրա, նշելով նաև, որ. «պետք է հնարավորինս զգույշ և չափավոր գտնվենք քաղաքների կենտրոններում պետական-քաղաքական գործիչների արձանները տեղադրելիս: Մենք պետք է նրանց հիշատակի հավերժացման այլ ձևերի դիմենք»[167]: Նմանատիպ քննարկումներ եղան նաև Երևանում Գարեգին Նժդեհի արձանի տեղադրման ժամանակ. Նժդեհի գաղափարախոսության պաշտոնական հետևորդ է իրեն հայտարարել իշխող կուսակցությունը, ում իշխանության խորհրդանշանային ներկայության հետ էլ կապվեց արձանի Երևանի կենտրոնում տեղադրումը: Շատերը հայտնեցին այն մտավախությունը, որ հանրային ընկալումներում դրական մեկնաբանվող Նժդեհը իշխանությունների կողմից շահարկման պատճառով հնարավոր է հետագայում մեկնաբանվի որպես Հանրապետական կուսակցության խորհրդանիշ և արդյունքում իշխանափոխությունից հետո տեղահանվի: «Իրանց գործերով արժեզրկում են Նժդեհի անունը, վախենում եմ, որ մի տաս տարուց, որ էլ չլինեն իրանք, մյուսները

[167]Կապանում բացվեց Ա. Մանուկյանի կիսանդրին. տեսակետները բախվում են, http://hetq.am/arm/-news/42033/kapanum-bacvec-a-manukyani-kisandrin-tesaketnery-bakhvum-en.html, 20.08.2017.

հանեն Երևանի արձանը»,-նշեց Կապանի մեր բանասացը՝ Կապանում գտնվող Նժդեհի արձանը մեկնաբանելիս[168]:

Այսպիսով, չնայած Հայաստանում վերջին տարիներին մի շարք խնդրահարույց հուշարձանների տեղադրման շուրջ առաջացած հանրային սուր քննադատու-թյուններին, անկախության տարիներին ՀՀ քաղաքային լանդշաֆտներում հայտնվող նշանային նոր ուղերձները հանրային դիսկուրսում մեկնաբանվում են որպես հուշարձանացման համար ցանկալի և ընդունելի թեմաներ: Այնուհանդերձ, վերջին տարիների հակառուսական դիսկուրսների ակտիվացման պայմաններում, հանրային դիսկուրսում հուշարձանացման ցանկալի թեմատիկայի հիերարխիայում խորհրդային ականավոր գործիչների հիշատակումը սկսել է ստորադասվել հիշատակման արժանի մյուս բոլոր բովանդակությունների շարքում՝ առաջնային պլան մղելով ազատագրական պայքարի, պետական գործիչների և նահատակների հիշատակման մոտիվները:

2.5 Հորինվածքային նոր լուծումներով հուշարձանները և նրանց շուրջ քննարկումները հետխորհրդային Հայաստանում

Հետխորհրդային Հայաստանում հանրությունից, քաղաքային իշխանություններից բացի վերջին տարիներին քաղաքային համայնքների նշանային լանդշաֆտներում իբրև փոփոխություն կատարող են հանդես գալիս նաև տարբեր բարերարներ և գործարարներ, ում միջոցներով և նախաձեռնությամբ տեղադրվում են զանազան հուշարձաններ: Այդ գործարարները ներդրումներ են կատարում տարբեր համայնք-ներում, տնտեսական և հասարակական նշանակության հիմնարկներ են բացում, և ոչ քիչ դեպքերում այդ ամենին նախորդում է որոշակի հուշարձանի տեղադրում, որը կարծես ազդարարում է նրա գործունեության մեկնարկը: Իսկ տեղադրված հուշարձան-ները բնակիչների շրջանում հիմնականում

[168]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Կապան, 2017, օգոստոս:

հայտնի են դառնում այդ գործարարների անուններով: Հանդիպում են դեպքեր, երբ որպես հուշարձան է հանդես գալիս նորակառույց եկեղեցին, սակայն տարածքում սեփական ներկայության հիմնական գործիք է կիրառվում հուշարձանի այլ, ավելի փոքր տեսակները, որոնք առավել մատչելի են պատվիրատուների համար: Գործարարը, բարերարը հիմնականում ունենում են հստակ ծրագրեր, դիմում են քանդակագործների, պատվիրում արձանները, հետո դիմելով իշխանություններին՝ փոփոխություն իրականացնում տվյալ հա-մայնքների նշանային տարածքում:

Հանրային և արվեստային դիսկուրսներում նոր հուշարձաններից շատերը սկսում են քննադատվել որպես արվեստային առումով վատ կատարված աշխատանքներ, որոնք հայտնվում են քաղաքների հանրային տարածքներում՝ նակին բարձրակարգ հուշարձանների կողքին: Գյումրիում «Վերածնունդ» հուշարձանի տեղադրումը (նկ. 32) քաղաքային իշխանությունները պատճառաբանեցին այգու բարեկարգման հան-գամանքով, սակայն տարբեր քննարկումներում հուշարձանը որակվեց որպես ոչ հաջող հուշարձան, որը կարելի էր և չտեղադրել: Նման կերպ, բարերարների կողմից տե-ղադրված շատ հուշարձաններ իրենցից արվեստային վատ աշխատանքներ են ներկա-յացնում, սակայն շարունակում են լցնել քաղաքների հանրային տարածքները՝ փոխելով քաղաքների հուշարձանային դաշտը՝ իրենց հերթին նպաստելով հուշարձանային նոր պատկերացումների ձևավորմանը:

Գյումրիում Միհեր Մկրտչյանին նվիրված հուշաքարը բարերարի անձնական ցան-կության արդյունք էր (նկ. 33): Երևանում «Արարատ-73»-ի հաղթանակներն հավեր-ժացնող հուշարձանը Հայաստանի օլիմպիական կոմիտեի նախագահ Գագիկ Ծառուկ-յանի հովանավորությամբ է տեղադրվել. Ծառուկյանը հուշարձանի մրցույթ է հայ-տարարել, որի ժամանակ ներկայացվել են տարբերակներ, իսկ արդեն Երևանում տեղադրվող հուշարձանն ընտրել են նախկին ֆուտբոլիստները (նկ. 34): Նախկին մար-զիկների ընտրություն հանդիսացող հուշարձանը 2017 թ. տեղադրվեց Երևանում՝ արժանանալով քննադատության: Կոթողի

գեղարվեստական լուծումների պատճառով արձանախումբը նմանեցվեց գերեզմանային հուշարձանի:

Տավուշի մարզի Գոշ գյուղում, Գոշավանք վանքային համալիրի տարածքում 2013 թ.-ի սեպտեմբերին գործարար ու բարերար Անտոն Մեհրաբյանի ֆինանսավորմամբ ու նախաձեռնությամբ կերտվել և տեղադրվել է հասարակական գործիչ, օրենսդիր, առակագիր Մխիթար Գոշի հուշարձանը: Գործարարն ինքն է պատվեր տվել իր ընտրած քանդակագործին[169] և հետագայում Տավուշի մարզի իշխանությունների հետ միասին Գոշում տեղադրել հուշարձանը (նկ. 35):

Այսպիսով, տարբեր անհատներ և խմբեր կարող են հանրային տարածքում փոփոխել նշանային լանդշաֆտը՝ տեղադրելով իրենց «ճաշակին» համապատասխանող հուշարձաններ: Երևանի Եզնիկ Կողբացի փողոցում, Երևանի Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի դիմաց 2016 թ. տեղադրվեցին տեղի աշակերտների քանդակները՝ առաջացնելով հանրային սուր քննադատություն: Ծատերը քննադատում էին աշակերտների աշխատանքները քաղաքի բանուկ փողոցներից մեկի վրա և ոչ թե դպրոցի ներսում տեղադրելը: Հայտնի ճարտարապետ Ա. Կարապետյանը սոցցանցերում իր կատարած գրառման մեջ անդրադառնալով այս աշխատանքներին՝ նշում է, որ. «գեղարվեստական այդքան էլ հաջող չստացված աշխատանքները իրավունք չունեն հայտնվելու հանրային տարածքներում, հավակնելով կանգնել քաղաքի մյուս հուշարձանների կողքին»: Մեր հարցվողներից մի քանիսն անդրադառնալով այս քանդակների տեղադրմանը, մատնանշում էին խորհրդային տարիներին նմանատիպ պրակտիկաների բացակայությունը: Նրանցից մեկի պնդմամբ. «ճիշտ ա սովետի տարիներին ցենզ կար, ամեն մեկի արձանը չէին դնում, բայց սենց բան էլ չկար, մեր քանդակագործների գործերն էին, փայլուն քանդակներ, վատ գործերը քաղաքում չէին դնում»[170]: Նմանատիպ մի իրավիճակ էլ ստեղծվել էր Կապանում, որտեղ 2017 թ. քաղաքապետարանի կողմից անցկացված սիմպոզիումի ժամանակ

[169]Այս հուշարձանը նույնպես քննադատվել է իր գեղարվեստական ներկայացման պատճառով:
[170]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Երևան, ՀՀ, 2016, հուլիս:

տարբեր մասնագիտությունների տեր երիտասարդների (բժիշկ, ոստիկան, երաժիշտ) ստեղծած քանդակները տեղադրվեցին քաղաքի կենտրոնական այգիներում (նկ. 36): Կապանի հայտնի արվեստագետների կողմից այդ աշխատանքները մեկնաբանվեցին, որպես «քարտաշի» աշխատանքներ, ակնարկելով, որ նման աշխատանքները իրավունք չունեն տեղադրվելու քաղաքի հանրային վայրերում: Տեղի հայտնի քանդակագործներից մեկի կարծիքով. «ամեն մարդ պիտի իր գործով զբաղվի, ես հո չեմ գնա մարդկանց բուժեմ կամ հանցագործ բռնեմ... իրենք էլ թող իրանց գործով զբաղվեն, իսկ քաղաքում տեղադրել մենակ մասնագետների հաջող աշխատանքները»[171]: Մեր հարցվողներիցը մյուսը (Կապանի Երաժշտական դպրոցի աշխատակից), ով ներկա է եղել ավագանու նիստին, որտեղ քննարկվել է այդ հուշարձանների տեղադրության հարցը, պատմում է, որ քանդակների հեղինակներից մեկը բողոքեց՝ իր քանդակը քաղաքի ծայրամասում տեղադրելու որոշման համար: Ըստ մեր հարցվողի՝ ավագանու անդամները նրան պատասխանեցին՝ նշելով, որ. «սովետի տարիներին ամեն մեկի գործը չէին դնում քաղաքում, լուրջ ընտրություն էին անում: Գոհ պիտի լինեք, որ ձեր աշխատանքները ընդհանրապես տեղադրվելու են քաղաքում»[172]: Մեր հարցվողներից մեկն էլ նշեց, որ. «էդ քանդակները ես նույնիսկ տանս հայաթը չէին կանգնացնի, ուր մնաց՝ քաղաքի կենտրոնում, խայտառակություն ա»[173]: Տեսնում ենք, որ հանրային տարածքը դիտարկվում է այնպիսի մի վայր, որտեղ պետք է հայտնվեն ոչ միայն ամենարժանի գործիչների և հիշատակման համար կարևոր իրադարձությունների արձաններ, այլև գեղագիտական տեսանկյունից կատարյալ իրականացված աշխատանքներ:

Ոչ պատահականորեն, հանրային դիսկուրսում հուշարձանները քննարկման և մեկնաբանման են ենթարկվում կապված դրանք տեղադրողների անձի, նրանց ունեցած իշխանական ռեսուրսների հետ: Ըստ հաճախակիության՝ քաղաքների հանրային տարածքներում հուշարձանների հիմնական տեղադրողներ են հանդես գալիս քաղաքային իշխանությունները (մասնավորապես համայնքների ղեկավար-

[171]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Կապան, ՀՀ, 2017, օգոստոս:
[172]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Կապան, ՀՀ, 2017, օգոստոս:
[173]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Կապան, ՀՀ, 2017, օգոստոս:

ները), այնուհետ գործարարներն ու բարերարները, ովքեր հիմնականում իրենցից ներկայացնում են հետխորհրդային «վերնախավը»: Եթե Խորհրդային տարիներին հուշարձանները առաջնահերթ կապվում էին դրանք կերտող քանդակագործների հետ, ապա ներկայում հուշարձանները առավելապես հայտնի են իրենց տեղադրողներով: Արդյունքում, հուշարձանների հորինվածքային, գեղագիտական վատլուծումները հաճախկապվում են տեղադրողների ու պատվիրողների և ոչ թե քանդակագործ հեղինակների «վատ ճաշակի», «ռաբիզության[174]» հետ: Նույն իրավիճակն ենք տեսնում նաև եկեղեցաշինության հարցում, քանզի իշխանավորներն ու գործարար-բարերարներն են նոր եկեղեցիներ կառուցողները, իսկ բոլոր նորակառույց այս շինությունները նույնպես մեկնաբանվում են որպես անճաշակ աշխատանքներ՝ կապվելով պատվիրատուների ռաբիզության և անճաշակության հետ: Այս ամենը դիտվում է նաև քաղաքների, հատկապես Երևանի քաղաքաշինական գործընթացների հետ՝ բոլոր նոր շինությունները մեկնաբանելով քաղաքային իշխանությունների ռաբիզության, անճաշակության համատեքստում: Էլիտայի այս ներկայացուցիչների վարքը, նրանց ելույթները, ռաբիզ որակվող խնջույքներում նրանց մասնակցությունը հանրային դիսկուրսում նպաստել է նրանց ձևակերպելու որպես անկիրթ, անճաշակ և ռաբիզ մշակույթի կրողների, ովքեր իրենց քաղաքականությամբ փչացնում են քաղաքային լանդշաֆտները:

«Իրանց տների նման էլ քաղաքն են ուզում սարքեն, թող մեր քաղաքը հանգիստ թողնեն»,-նշեց մեր հարցվողը՝ հավելելով, որ. «իրանց անճաշակ արձաններն էլ թող տանեն իրանց անճաշակ տների հայաթներում դնեն, մեզ պետք չեն»[175]: Մեր հարցվողներից մեկն էլ, վատ հուշարձանների տեղադրումը ամբողջությամբ կապեց Երևանի քաղաքային իշանությունների հետ, հստակեցնելով, որ. «իրանք

[174]«Ռաբիս» բառի ժամանակակից ձևը, որն այդպես է ձևակերպվում և՛ խոսակցականում, և՛ վիրտուալ տիրույթում՝ հիմնականում սահմանելով հետխորհրդային խնջույքային երաժշտությունը, որը ներկայում կազմում է նաև էստրադային երգացանկի մեծ մասը, այն մեկնաբանում է որպես «անճաշակ», «ցածրակարգ» երաժշտություն՝ միևնույն ժամանակ «ռաբիզը» դարձելով նաև վարքի, սննդի, գեղարվեստի և այլ ոլորտների արժեքային ցուցիչ: Ռաբիզ բառով են ներկայացվում ցանկացած ոլորտում ցածրակարգ և անճաշակ մեկնաբանվող իրերն ու երևույթները, մարդկանց որոշակի վարքը, հաղարդակցման ձևերը:
[175]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Երևան, ՀՀ, 2017, հոկտեմբեր:

իրանց ճաշակով պատվեր են տալիս, բերում դնում են, թող նորմալ բանուզեն, էն մարդիկ էլ սարքեն»[176]:

Հետխորհրդային Հայաստանի քաղաքային լանդշաֆտներում տարիներ շարունակ հայտնվում են նշանավոր անհատներին նվիրված ռեալիստական արձաններ, որոնք պարզապես պատկերում են նոր հերոսներին կանգնած, նստած վիճակում՝ հանրային քննարկումներում մեկնաբանվելով որպես մահարձաններ: Նմանատիպ բազմաթիվ արձանների տեղադրումը նպաստել է հանրային դիսկուրսում քաղաքային արձանները իբրև գերեզմանային մեկնաբանելուն: Արվեստաբան Լիլիթ Սարգսյանը հարցազրույց-ներից մեկի ժամանակ նշեց, որ. «այսօր այնպիսի տպավորություն է, թե Երևանը գերեզմանի են վերածել, այնքան հուշարձաններ են տեղադրել: Իսկ քանդակագործու-թյունը շատ ավելի լայն հնարավորություններ է ընձեռում հեղինակին, անգամ եթե նրա խնդիրը կոնկրետ մարդ պատկերելն է»[177]: Նմանատիպ կարծիք հնչեցրեց նաև արվես-տագետ Սահակ Պողոսյանը՝ նշելով, որ. «քաղաքը լի է մահարձաններով, կարծես գերեզմանոցի վերածված լինի, արվեստի իրական արժեք ունեցող արձանները քիչ են...[178]:

Հանրային դիսկուրսում քաղաքային հուշարձանների գերեզմանային մեկնաբա-նությունների վրա ազդում են նաև հանրային տարածքներում կանգնեցվող արձանների հորինվածքներում գերեզմանային պրակտիկայում կիրառվող լուծումների ներթափան-ցումը: Գյումրի քաղաքի հրապարակներից մեկում, խորհրդային վերջին տարիներին տեղադրված հաղթական կամարի անմիջապես դիմաց (2002 թ.) տեղադրվեց ֆրանսահայ շանսոնյե Ծառլ Ազնավուրի հուշարձանը և հրապարակը վերանվանվեց նրա անունով: Ազնավուրի հուշարձանի պատվանդանի երկու անկյուններում պատկերված է հավերժության նշանը, որը գերեզմանային կոթողների տարածված բաղկացուցիչ է համարվում: Գերեզմանային կոթող հիշեցնող մի հուշարձան էլ տեղադրվել է Գյումրու տեսքտիլ գործարանի մշակույթի տան մոտ, որը նվիրվել է

[176]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Երևան, ՀՀ, 2017, հոկտեմբեր:
[177]Հուշերի արձանագրում, http://imyerevan.com/hy/society/view/8649, 14.03.2015:
[178]Երևանին պետք չեն մահարձաններ, http://www.lragir.am/index/arm/0/country/rss/99996, 15.11.2017.

հայտնի դերասան Միեր Մկրտչյանի հիշատակին: Դերասանի հուշարձանն իրենից ներկայացնում է մարմարե սալի վրա դերասանի դաջված պատկերը, որը հանդես է գալիս որպես գերեզմանային ամենատարածված պատկերագրման միջոցներից մեկը: Հանրային տարածքներում կանգնեցվող հուշարձաններում գերեզմանային այս ատրիբուտիկայի կիրառումը կապվում է նաև քաղաքային հանրային տարածքներում հուշաղբյուրների լայն տարածման հետ[179]:

Նմանատիպ մեկնաբանություններ արվեցին նաև Երևանում. 2016 թ. Ավան վար-չական շրջանում տեղադրված Խորհրդային Միության հերոս, ԽՍՀՄ զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Բաբաջանյանի արձանը (նկ. 37) լրատվականներում և սոցցանցերում համեմատում են «օրենքով գողերի»՝ գերեզմաններում տարածում ունեցող արձանների հետ՝[180] քննարկման առարկա դարձնելով Երևանում վերջին տարիներին տեղադրվող հուշարձանների գեղարվեստական լուծումները:

Գերեզմանային կոթողների հորինվածքային լուծումներով, լոկալ նշանակություն ունեցող հերոսներին հետմահու հուշարձաններ նվիրելու պրակտիկաները գնալով տարածում են ստանում: Վայոց Ձորի մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքի գլխավոր հրապարակներից մեկում տեղադրվել է Վայոց Ձորի մարզպետ Վարդգես Մաթևոսյանի հիշատակին նվիրված հուշարձանը, որն իրենից ներկայացնում է խաչ պատկերող կոթող՝ գերեզմանային մոտիվներով հուշարձան (նկ. 38), ինչը որոշակի իմաստով այգում ստեղծում է գերեզմանային մթնոլորտ: Նույն համատեքստում կարելի է մեկնաբանել նաև Լոռվա մարզի Սպիտակ քաղաքում քաղաքի նախկին ղեկավարին նվիրված հուշարձանը: Ավտովթարի զոհ դարձած քաղաքապետը հիմք էր դրել երկրաշարժից տուժած քաղաքի գլխավոր հրապարակի վերականգնմանը, որտեղ էլ նրա մահից մի քանի տարի անց կանգնեցվում է նրա հիշատակը հավերժացնող հուշարձան (նկ. 39):

[179] Տե՛ս Մարգարյան Ն., նշվ. աշխ., էջ 50:
[180] Համազասպ Բաբաջանյանի քանդակը նմանեցնում են «օրենքով գողի» մահարձանի. հեղինակի մեկնաբանությունը, http://armlur.am/533284/, 15.11.2017.

2013 թ. հետմահու հուշարձան տեղադրվեց Երևանի վարչական շրջաններից մեկի ղեկավարի հիշատակը հավերժացնելու նպատակով: Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանում վերջերս տեղադրվել է կյանքից վաղաժամ հեռացած թաղապետ Դավիթ Պետրոսյանի հուշարձանը (նկ. 40): Դ. Պետրոսյանի հոր՝ Աժ նախկին պատգամավոր Ռաֆիկ Պետրոսյանի խոսքերով՝ այդ գործը նախաձեռնել են նրա ընկերները. թաղապետի մահվան ժամանակից ի վեր աշխատանքներ են տարվում արձանի պատրաստման ուղղությամբ, որը կազմակերպել է Նոր Նորքի թաղապետարանը և դիմել քաղաքապետարան: Հուշարձանը տեղադրվել է Երևանի Նոր Նորք վարչական շրջանի թաղապետարանի շենքի մոտ, որտեղ ժամանակին հենց Դավիթ Պետրոսյանի նախաձեռնությամբ տեղադրվել է այդ վարչական շրջանի հիմնադիր, Պ. Սաֆյանի հուշարձանը: Վարչական շրջանի համար Պետրոսյանի կողմից կատարված գործերը, վարչական շրջանում կատարված դրական փոփոխությունները, բարեկարգման աշխատանքները, բնակիչների հոգսերի թեթևացումը դարձան հուշարձանի տեղադրման հիմնավորումը, սակայն Նոր Նորքի բնակիչներից շատերի պնդմամբ իրենց բնակավայրերի խնդիրները այդ տարիներին ոչ թե նվազել են, այլ մի բան էլ ավելացել [181]: Իրականում, տեսնում ենք, որ թաղապետի հիշատակին հուշարձանի տեղադրումը հիմնականում տեղավորվում է թաղային հեղինակությունների հիշատակներին տեղադրվող հուշաղբյուրների համատեքստում, երբ կյանքից վաղաժամ հեռացած հեղինակություն ունեցող անձանց պատվին հուշաքար կամ աղբյուր են տեղադրում՝ նրա հեղինակության տարածման վայրում: Ինչպես մեզ հետագայում հաջողվեց պարզել՝ Նոր Նորքի 8-րդ զանգվածում նույն Դ. Պետրոսյանի հիշատակին՝ նրաջանքերով վերականգնած պուրակում տեղադրվել է նաև մի հուշաղբյուր:

Երևանի Կենտրոն համայնքում՝ «Կասկադ» համալիրի առջև 1974 թ. տեղադրվել է ՀԽՍՀ ժողովրդական ճարտարապետ և Երևանի հատակագծի հեղինակ Ալեքսանդր Թամանյանի արձանը, որի շուրջ խորհրդային տարիներին անեկդոտներ էին հյուսվում և այն բազում հումորային պատմությունների առարկա էր դառնում,

[181] Աթանեսյան Գ., ԴԱՆ, Երևան, 2016, սեպտեմբեր:

սակայն Կասկադի տարածքը, մինչ հենց Թամանյանի արձանն ընկած հատվածը հուշարձանային շարու-նակ սուր քննարկումների առարկա դարձավ վերջին տարիների ընթացքում, երբ Կասկադի տարածքը սկսեց ժամանակ առ ժամանակ հյուրընկալել նոր տեսակի բազմաթիվ քանդակներ:

Գ. Գաֆեսճյանի նախաձեռնությամբ Երևանի կենտրոնում գտնվող Կասկադ համալիրի կառուցումը նոր կյանք առավ 2002 թ.-ից, երբ Կասկադ համալիրից ու Գաֆէսճեան քանդակների պարտեզից՝ ընդհուպ մինչև Ալեքսանդր Թամանյանի արձանն ընկած տարածքն անցավ «Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամին, որտեղ արդեն տարածքն օգտագործելու համար թույլտվություն է հարցնում Երևանի քաղա-քապետարանը: 2002թ. սկսած, այս, արդեն մասնավորեցված հանրային տարածքում,[182] տեղադրվում են քանդակներ. որոնք Երևանի բնակիչների մեծ մասը սովոր չէ հանրային տարածքներում տեսնելու: Այդ արձանների շարքում են օրինակ, կապույտ կիվիի, սև կատվի, հռոմեացի գեր զինվորի և ծխող կիսամերկ կնոջ արձանները[183]: Այս քանդակներից յուրաքանչյուրի տեղադրման ժամանակ հանրային սուր քննարկումներ էին գոյանում՝ դատապարտելով նմանատիպ բովանդակությամբ և գեղարվեստական լուծումներով աշխատանքների տեղադրումը քաղաքի կենտրոնում: Երևանի բնակիչներն այս աշխատանքները միանգամից համեմատության մեջ դրեցին քաղաքի մյուս հուշարձանների հետ՝ քննադատորեն մոտենալով նման քանդակների տեղադրմանը՝ հաշվի չառնելով այն փաստը, որ Կասկադի տարածքը մասնավոր է և, որ այդ տարածքը բացօթյա թանգարան է: Կասկադ համալիրի բացօթյա տարածքը բաց է հանրության համար, սակայն տարածքը վերահսկվում է անվտանգության աշխատակիցների կողմից, և մարդիկ իրավունք չունեն ձեռք տալու տարածքում տեղադրված աշխատանքներին: Մեր հարցումները և համացանցային

[182]Կասկադ համալիրի բացօթյա տարածքը բաց է հանրության համար, սակայն տարածքը վերահսկվում է անվտանգության աշխատակիցների կողմից, և մարդիկ իրավունք չունեն ձեռք տալու տարածքում տեղադրված աշխատանքներին:

[183]Այս քանդակները միջազգային ճանաչում ունեցող քանդակագործների աշխատանքներ են, ում աշխա-տանքները տեղադրվում են նաև Աշխարհի բազմաթիվ քաղաքներում: Կասկադի արձանների մի մասի հեղինակը կոլումբիացի քանդակագործ Ֆ. Բոտերոյի աշխատանքներն են, որոնք պատկանում են ֆիգուրատիվիզմի ոճին՝ պատկերելով կանանց, տղամարդկանց, կենդանիներին չափազանցված, փարթամ և անհամաչափ տեսքով:

մեկնաբանությունները ցույց են տալիս, որ Երևանի բնակիչների մեծ մասը տեղյակ չէ, որ Կասկադը մասնավոր տարածք է և, նոր տեղադրվող «վատ» քանդակների համար մեղադրում են քաղաքային իշխանություններին:

Պատահական չէ, որ հանրային քննարկումներում բարձրացվեց նմանատիպ քանդակներ տեղադրելու նպատակահարմարության հարցը՝ հիմնականում մատնանշելով այդ արձանների հիշատակի, հիշողության, պատմական բաղադրիչի բացակայության փաստը, ակնկալելով և նաև ուղղակի պահանջելով, որ Երևանում պետք է տեղադրվեն «մեր հերոսների» արձանները, այլ ոչ թե «ինչ-որ պատկեր» ներկայացնող քանդակներ: «Ինձ թվում էր արձանները տեղադրվում են ի հիշատակ ինչ-որ բանի, կամ որպես սիմվոլ, որն ունի նշանակություն, կամ բնութագրում է տվյալ ազգը, բայց ես դեպքում չեմ հասկանում ինչ է»,-հստակեցրեց Կասկադում իր ժամանց անկացնող մեր հարցվողը[184]: Հուշարձանը արդի հանրային դիսկուրսում մեկնաբանվում է, նախևառաջ, որպես հիշատակության կոթող, որը հանդիսանում է տվյալ ազգը ներկայացնող որևէ խորհրդանիշ:

Հանրային քննարկումներում վերոհիշյալ քանդակների իմաստի բացակայությունը ձևակերպելուց հետո քննադատության թիրախ դարձավ նրանց գեղարվեստական արժեքը: Կասկադի տարածքում տեղակայված՝ Ֆ. Բոտերոյի ֆիգուրատիվիզմի ոճով արված աշխատանքները (նկ. 41) ոչ միանշանակ ընդունվեցին Երևանի բնակիչների կողմից՝ մեկնաբանելվով որպես «անճաշակ քանդակներ[185]»: Մեր հարցվողներից մեկի կարծիքով. «արձանները գոնե մի քիչ աչքին հաճելի պիտի լինեն, ես էս արձաններին նայելով տհաճություն եմ զգում, ճաշակին ընկեր չկա»[186]: Միայն որոշ ժամանակ անց, Կասկադի այդ նոր արձանները վերաիմաստավորվեցին հանրային դիսկուրսում՝ հիմք ունենալով փորձագետների, ՁԼՄ-ների և հանրային ոլորտը ձևավորող այլ աղբյուրների մեկնաբանումները: Այն բանից հետո, երբ Կասկադի արձանները սկսեցին արդեն ձևակերպվել որպես ժամանակակից

[184]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Երևան, 2015, ապրիլ:
[185]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Երևան, 2016, հոկտեմբեր:
[186]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Երևան, 2016, նոյեմբեր:

արվեստի գործեր՝ հանրային քննարկումներում սկսվեցին շրջանառվել այդ կառույցների ոչ թե հուշարձան լինել-չլինելու հարցը, այլ դրանց գեղագիտական և գործառութային առումները: Հարցվողներից մեկը «Ծխող կնոջ» արձանը համեմատեց Միքելիանջելոի «Դավիթ» արձանի հետ (երկուսն էլ համարելով արվեստի գործ), սակայն նշում է, որ. «չնայած Միքելանջելոյի Դավիթը նույնպես մերկ է, բայց գոնե գեղեցիկ է»[187]: Ներկայում տեսնում ենք, որ հարցվողները և համացանցի օգտատերերը միևնույն է, քննադատում են Կասկադի արձանները՝ առավելություն տալով ավանդական համարվող արձանագործությանը: Սակայն քիչ չեն նաև այնպիսի կարծիքները, որոնք Կասկադի վերոհիշյալ գործերն ավելի բարձր են գնահատել, քան «միանման» ու «հոգնեցնող» ավանդական արձանները[188]:

Այսպիսով, չնայած այն փաստին, որ Կասկադի տարածքի հուշարձանները ստացել են ժամանակակից արվեստի հուշարձանների կարգավիճակ և դիտարկվում են արդեն այդ դիրքից, սակայն հանրային դիսկուրսում երբեմն հուշարձանը առանձնանում է սովորական մշակութային միջավայրից և՛ սիմվոլիկան, և՛ ուղերձը ջանքեր են պահանջում ապակոդավորման համար: Եթե քաղաքացու համար կարևորվում է արձանի կամ քանդակի քաղաքական կամ հայտնի անձի արտացոլելու առումը, բնականաբար նրա կողմից չի գնահատվում կամ քիչ է գնահատվում քանդակի գեղարվեստական արժեքը, ինչի հետևանքում նա դժվարանում է իմաստտեսնել կոթողի մեջ կամ ադեկ-վատորեն ապակոդավորել այն: Իսկ երբ նման հուշարձանը կորցնում է գեղագիտական և իմաստանշանային ցուցիչները և սկսում է ընկալվել զուտ որպես արվեստագործի կողմից կատարված ինչ-որ աշխատանք, որը պետք է ուղղակի դիտել ինչպես թանգարանային նմուշը, նույն այդ քաղաքացու մոտ հարց է առաջանում, թե ինչու է այդ կոթողը գտնվում քաղաքի կենտրոնում՝ բացօթյա վայրում, այլ ոչ թե թանգարանում՝ նմանատիպ կարգավիճակ ստացած արվեստի այլ տեսակների կողքին: Հարցվողներից մեկը այդպես էլ նշել էր՝ հստակեցնելով, որ. «Կասկադի արձանների տեղը ամենևին էլ

[187]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Երևան, 2016, սեպտեմբեր:
[188]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Երևան, 2016, հոկտեմբեր:

մայրաքաղաքի կենտրոնը չէ: Եթե նրանք դրված լինեն որևէ թանգարանում, ոչ ոք չէր առարկի[189]»:

Կասկադի հետ կապված հանրային քննարկումներում և՛ մեր հարցվողները, և՛ սոցցանցերի օգտատերերի մեծ մասը առաջարկում են այդ քանդակների փոխարեն տեղադրել «հայոց արքաների» հուշարձանները, «հայ մեծերի» արձանները՝ դրանք մեկնաբանելով «Երևանի կենտրոնում տեղադրելու արժանի հուշարձաններ»: «Ինչի Երևանի կենտրոնում չկան Պապ թագավորի, Տիգրան Մեծի, Տրդատի արձանները, ինչի են մեր մեծերի տեղը անկապ արձաններ դնում»,- մեզ հետ զրույցում բարկացած արձագանքեց Երևանի բնակիչներից մեկը[190]:

Ամփոփելով, հուշարձանների քաղաքական, պատմական, գեղագիտական բովանդակությանը և ուղերձներին նվիրված աշխատանքի սույն գլուխը, պետք է առանձնացնենք հետևյալ դիտարկումները.

1. խորհրդային տարիներին հուշարձանային քաղաքականությունը գաղափարա-կանացված էր. քաղաքների հանրային վայրերում առաջնահերթ հայտնվում էին Հոկտեմբերյան մեծ հեղափոխության առաջնորդների, ներկայացուցիչների արձան-ները, Կոմունիստական կուսակցության առաջավոր գործիչների արձանները, տեղադրվում էին նաև արվեստի նշանավոր ներկայացուցիչների արձանները, առասպելական և գեղարվեստական կերպարների արձաններ, ինչպես նաև խորհրդային կոլեկտիվ հերոսների քանդակներ, որոնք բոլորը պետք է ներկայացնեին հեղա-փոխության և Կոմունիստական կուսակցության հայացքները, խորհրդային պետության պատկերացումները հասարակության, հերոսականության, հավասարության, գեղեցիկի և օգտակարի մասին:

2. Արցախյան շարժման և անկախության տարիներին, սակայն, քաղաքական համատեքստի փոփոխման պայմաններում, երբ պայքար սկսվեց խորհրդային անցյալի խորհրդանիշների դեմ, Հայաստանի բնակավայրերի տարածքներից հեռացվեցին հեղափոխական գործիչների արձանները, իսկ մի մասը, որոնք պատկերում էին

[189]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Երևան, 2015, ապրիլ:
[190]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Երևան, 2015, ապրիլ:

ազգությամբ հայ կամ արվեստի ոլորտի ներկայացուցիչների վերամեկնաբանվեցին նոր համատեքստում և շարունակեցին մնալ իրենց տեղադրության վայրերում: Հետխորհրդային Հայաստանի քաղաքների լանդշաֆտներում անկախության սկզբի տարիներին հայտնվեցին հայ ազատագրական պայքարի ներկայացուցիչների հուշարձաններ, հետագայում հայ քաղաքական, հասարակական գործիչների արձանները, Հայաստանի բնակավայրերը պատեցին աղետի և պատերազմի զոհերին նվիրված հուշարձանները, անհատներին նվիրված աղբյուր-հուշարձանները՝ փոխակերպելով խորհրդային տարիներին ձևավորված նշանային լանդշաֆտը: Արվեստի նշանավոր գործիչներին նվիրված նոր հուշարձանների կողքին անկախության տարիներին տեղադրվեցին նաև բարերարներին նվիրված արձաններ, կրոնական թեմատիկայով և սիմվոլիկայով հուշարձաններ, որոնք նորություն էին ՀՀ հանրային վայրերում:

Հետխորհրդային Հայաստանի հերոսների նոր պանթեոնը (որը դեռ շարունակում է համալրվել նոր թեմաներով), որի ձևավորմանը մասնակցում են հանրությունը, քաղա-քային իշխանությունները, բարերարներն ու գործարարները, գերազանցապես դրական է ընդունվում հանրային դիսկուրսում՝ հանրային վայրերում հայտնվող նոր թեմաները ձևակերպվելով որպես հիշատակման արժանի:

Այնուհանդերձ, վերջին տարիներին ՀՀ քաղաքներում հայտնված մի շարք խնդրահարույց արձանները նպաստեցին հանրային դիսկուրսում հիշատակման արժա-նի թեմաների վերիմաստավորման որոշ գործընթացների, որի արդյունքում արդի հան-րային դիսկուրսում հուշարձանների հիերարխիայում հանրությունը նախապատվու-թյուն է տալիս նախ արցախյան պատերազմի, Ցեղասպանության զոհերի հիշատակնե-րին նվիրված հուշարձանների տեղադրմանը, այնուհետ՝ հայոց արքաների, արցախյան պատերազմի, հայ ազատագրական պայքարի հերոսների, արվեստի ներկայացուցիչ-ների և պետական գործիչների արձանների տեղադրմանը: Իսկ պետական գործիչների հուշարձանների տեղադրումը, որոնք վերջին տարիներին գաղափարականացվում են և

տեղադրվում քաղաքական ուժերի կողմից, նույնչափ չի ողջունվում՝ կապվելով ապագայում, քաղաքական համատեքստի հերթական փոփոխության պայմաններում դրանց տեղահանման վտանգի հետ:

ԳԼՈՒԽ3-ՐԴ: ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի այս գլխում դիտարկում ենք հետխորհրդային Հայաստանում կանգնեցվող հուշարձանների տեղադրման տարածքների ընտրությունը. փորձել ենք տեսնել թե ինչպիսի

փոխակերպումների են ենթարկվել դրանց ընտրությունը խորհրդա-յին տարիների համեմատ ինչպիսի գործոնների հետևանքում:

3.1 Հուշարձանի տարածքի ընտրությունը խորհրդային Հայաստանում

Խորհրդային Հայաստանում արձանները կանգնեցվում էին հիմնականում քաղաքային բնակավայրերի ամենակենտրոնական հատվածներում, քաղաքային հրապարակներում, գլխավոր փողոցներում, քաղաքային այգիներում և պուրակներում: Կենտ-րոնը, խորհրդային քաղաքաշինության համար, այն տարածքն էր, որի շուրջ կազմակերպվում էր բնակավայրը, իսկ հուշարձանը հանդիսանում էր այդ տարածքի գլխավոր նշանը: Լենինի մոնումենտալ պրոպագանդայի իրականացման արդյունքում կոմունիստական գաղափարախոսությունը տարածող նշանները պետք է հասանելի լինեին մարդկային զանգվածներին, որի համար այդ կոթողները պետք է հայտնվեին քաղաքների մարդաշատ հրապարակներում, ժամանցավայրերում և փողոցներում: Սակայն, ցանկացած բովանդակության արձան չէր կարող հայտնվել ցանկացած կենտրոնական տարածքում: Գոյություն ունեին որոշակի տարածքներ որտեղ կարելի էր տեղադրել որոշակի բովանդակությամբ արձաններ: Հոկտեմբերյան հեղափոխության առաջնորդի արձանները հանդիսանում էին խորհրդային գաղափարախոսության ուղերձի փոխանցման առանցքային նշանները, ուստի տեղադրվում էին քաղաքների գլխավոր հրապարակներում, որտեղ հիմնականում տեղակայված էին նաև համայնք-ների վարչական շինությունները: Հոկտեմբերյան առաջնորդի հուշարձանը կարող էր հայտնվել նաև գլխավոր զբոսայգիներում, որտեղ իր ժամանցն էր անցկացնում բնակչության մեծ մասը, երկաթգծի կայարանների դիմաց՝ դիմավորելով և ճանապար-հելով ուղևորներին, դպրոցների, մշակույթի պալատների դիմաց և ներսում: Մի խոսքով, այն բոլոր գլխավոր հանրային վայրերում, որտեղ հնարավոր էր խորհրդային քաղաքացիների խոշոր կուտակումներ:

Լոռու մարզի Սպիտակ քաղաքում Վ. Լենինի արձաններից մեկը տեղակայված էր քաղաքային կոմիտեի շենքի դիմաց, մյուսը՝ բնակիչների հիմնական հավաքատեղի հրապարակում, իսկ երրորդը՝ երկաթգծի կայարանում դիմավորում էր քաղաք ժամանողներին: Լենինի երկու արձան կար տեղադրված նաև Արմավիրի մարզի համանուն քաղաքում. արձաններից մեկը գտնվում էր կայարանի դիմաց, մյուսը՝ քաղաքի գլխավոր զբոսայգում: Տավուշի մարզի Իջևան քաղաքում Լենինի գլխավոր արձանը կանգնեցված էր քաղաքի գործարաններից մեկի բակում, ևս մեկը՝ մշակույթի պալատի դիմաց, տարբեր կիսանդրիներ՝ քաղաքի դպրոցների բակերում: Ինչպես նկատեց տեղի բնակիչներից մեկը. «Լենինն ամենուր էր, նրա արձանները և՛ քաղաքում էին, և՛ շրջակա համայնքներում, «Լենինը մեզ հետ է» գրությունը քաղաքի գրեթե բոլոր շինությունների վրա էր, նույնիսկ զավեշտալի իրավիճակ էր ստեղծվել, երբ նույն գրառումը հայտնվել էր նաև քաղաքի հոգեբուժարանի պատին[191]»: Հայաստանի քաղաքներում եղել են Լենինին նվիրված մոտ 50 արձաններ, չհաշված դպրոցների, ակումբների և այլ երկրորդային վայրերի բակերում կամ ներսում տեղադրված կիսանդրիները, որոնք շատավելի մեծ թիվ էին կազմում:

Խորհրդային տարիներին բնակավայրային հատակագծման աչքի ընկնող փոփոխությունն այն էր, որ «բնակավայրի «սրբազան» կենտրոնը լրացվեց աշխարհիկ կենտրոնին բնորոշ վարչական և մշակութային տարրերով»[192]: Խորհրդային տարիներին քաղաքի կենտրոնը պաշտոնական ուղերձի փոխանցման վայր էր հանդիսանում[193] և գլխավոր հրապարակը որոշակի իմաստով քաղաքականացված էր և ուներ քաղաքական համատեքստ: Խորհրդային Միության առաջնորդի, հեղափոխական և կուսակցական գործիչների արձանները մեծ մասամբ տեղադրված էին վարչական շինությունների հարևանությամբ: Երևանում Լենինի արձանի հարևանությամբ գտնվում էին ՀԽՍՀ կառավարության,

[191]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Իջևան, 2017, հոկտեմբեր:
[192]Մարության Հ., Հուշարձանը որպես գերեզմանոց (Ցեղասպանության հուշահամալիրի օրինակով), Հայ ժողովրդական մշակույթ, XIII, «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2006, էջ 172:
[193]Հարությունյան Ա., Պետության խորհրդանիշներն ու նարատիվները Երևանի քաղաքային լանդշաֆտում, նշվ. աշխ., էջ 40:

Գյուղնախարարության, Արտաքին գործերի նախարարության շենքերը: Լենինականում, Արթիկում, Գորիսում, Կապանում, Վայքում, Սիսիանում, Դիլիջանում, Վեդիում, Աշտարակում, Արարատում Լենինի արձանի հարևանությամբ գտնվում էին Հայաստանի կոմունիստական կուսակցության քաղաքային և շրջանային կոմիտեները[194]: Կիրովականի (Վանաձոր) Կիրովի հրապարակը (ներկայում Հայքի հրապարակ), որտեղ կանգնեցված էր ռուս հեղափոխական գործիչ Ս. Կիրովի արձանը, քաղաքի վարչակառավարչական կենտրոնն էր, որտեղ տեղակայված էին ՀԿԿ քաղկոմի, նախկին քաղխորհրդի գործկոմի շենքերը: Խորհրդային կարգերի հաստատման համար մղված պայքարի մասնակից Ենոք Մկրտումյանի կիսանդրին տեղակայված էր Իջևանի շրջկոմի դիմաց: Հեղափոխական և կուսակցական գործիչների արձաններ տեղադրվում էին նաև այգիներում, պուրակներում, հրապարակներում, դպրոցների և գործարանների բակերում: Այնուհանդերձ, քաղաքական գործիչների արձանները հիմնականում տեղադրվում էին վարչական շինությունների հարևանությամբ՝ պահպանելով նշանային համատեքստը և անընդհատությունը[195] (կոնտինուումի) հարևանությամբ գտնվող հաստատությունների գործունեության և նշանակության հետ:

Նշանային համատեքստի և անընդհատության պահպանմանն էին ուղղված նաև արվեստի գործիչների արձանների տեղադրումը մշակութային հաստատությունների մոտ, նաև իրենց անունը կրող փողոցներում և համանուն դպրոցների բակերում: Նրանց արձանները հայտնվում էին նաև այգիներում և պուրակներում, ինչպես հեղափոխական և պետական գործիչների արձանները: Նույն համատեքստի պահպանմամբ էր պայմանավորված նաև իրենց անունները կրող դպրոցների բակում հեղափոխականների կիսանդրիների տեղադրումը: Երևանում արվեստի նշանավոր

[194]ԽՍՀՄ օրոք իշխանության գլխավոր փաստացի հաստատությունները կոմունիստական կուսակցության կոմիտեներն էին:

[195]Ռուս անվանագետ Ա. Վ. Սուպերանսկայան առաջարկել է «անվանական անընդհատություն» հասկացությունը՝ նկատի ունենալով անվանումների շարքերի իմաստային և հնչյունաբանական համընկնումները: Տե՛ս Суперанская А.В. Ономастический континуум. // Тюркская ономастика. Алма-Ата, 1984, էջ 5-12: Ընդարձակելով հասկացության շրջանակները սույն աշխատանքում մենք օգտագործում ենք «նշանային անընդհատություն» եզրը՝ իմաստային ընդհանրություն ունեցող ֆիզիկական, վերբալ և ֆունկցիոնալ նշանների շարքերի համար:

գործիչներ Հ. Թումանյանի և Ալ. Սպենդիարյանի արձանները կանգնեցվեցին Հայաստանի Ազգային Օպերայի և բալետի թատրոնի շենքի հարևանությամբ՝ Թատերական հրապարակում (այժմ՝ Ազատության հրապարակ), Սայաթ-Նովայի արձանը՝ իր անունը կրող երաժշտական դպրոցի դիմաց, գիտության նշանավոր գործիչներ Ան. Ծիրակացու, Մ. Խորենացու, Մ. Գոշի, Մ. Մաշտոցի արձանները հայտնվեցին Մատենադարանի շենքի դիմաց, Հ. Մեղապարտի արձանը՝ հրատարակչությունների շենքի դիմաց: Նույն մոտեցման համաձայն մշակույթի գործիչների արձանները տեղադրվում էին նաև Հայաստանի մյուս քաղաքներում: Իջևանի մշակույթի տան դիմաց է կանգնեցվել Հ. Ներսիսյանի արձանը (Իջևան), Խ. Աբովյանի և Ղ. Աղայանի արձանները հայտնվեցին Դիլիջանի գրադարանի մուտքի մոտ, Հովհ. Աբելյանինը՝ Կիրովականի թատրոնի շենքի մոտ, Խ. Աբովյանի արձանը Էջմիածնի իր անունը կրող դպրոցի բակում, Հովհ. Հովհաննիսյանինը՝ թանգարանի առջև (Էջմիածին): Իրենց անունները կրող դպրոցների բակերում հայտնվեցին նաև Մուրացանի (Սևան) և Ա. Բակունցի կիսանդրիները (Գորիս): Նշանային անընդհատության պահպանմանն էին ուղղված նաև Ավետիք Իսահակյանի և Արմեն Տիգրանյանի հուշարձանների տեղադրումը Լենինականի թատերական հրապարակում՝ դրամատիկական թատրոնի շենքի մոտ: Արվեստի ներկայացուցիչների արձանները նաև հայտնվում էին քաղաքների այգիների, պուրակների տարածքներում, ժամանցի այլ վայրերում:

Հայրենական մեծ պատերազմի հաղթանակից հետո Հայաստանում պատերազմի մասնակիցների, հերոսների ու զոհերի հիշատակը հավերժացնող 626 հուշարձան է կառուցվել: Հայրենականի զոհերի հիշատակն հավերժացնող մոնումենտալ հուշար-ձանները հիմնականում հայտնվում էին բնակավայրերի մուտքերի կամ ելքերի մոտ[196], բարձրադիր հատվածներում: Որոշ դեպքերում այդ հուշարձանները կանգնեցվել են քաղաքների կենտրոններում՝ քաղաքային այգիներում, նրանց մոտ, հրապարակներում: Հայրենականի մոնումենտալ հուշարձաններ են տեղադրված

[196]Այն վայրերում, որտեղից ճանապարհում կամ դիմավորում էին զինվորներին:

Սպիտակի քաղաքային զբոսայգում, Գորիսի քաղաքային այգու մուտքի մոտ, Արարատի մշակույթի պալատի հետնամասում գտնվող այգում (կենտրոնական հրապարակի մոտ), Արթիկի գլխավոր հրապարակում: Պատերազմի զոհերի հիշատակն հավերժացնող հուշակոթողներ, աղբյուր-հուշարձաններ են տեղադրվել Հայաստանի քաղաքների տարբեր հատվածներում՝ այգիներում, պուրակներում (Գորիս, Սիսիան, Վայք, Իջևան, Երևան), հրապարակներում և նրանց հարակից տարածքներում (Աշտարակ, Կապան, Սիսիան): Հայրենական պատերազմի անհատ հերոսների պատվին հուշարձանները հայտնվում էին քաղաքային այգիներում, հերոսների անունը կրող հաստատությունների բակերում: Խորհրդային տարիներին աղբյուր-հուշարձաններ են կանգնեցվել Երևանի մանկական երկաթուղու զբոսայգու շքամուտքի մոտ՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմի անվանի հերոսներ Ն. Ստեփանյանի, Հ. Ավետիսյանի, Զ. Կոսմոդեմյանսկայայի, ինչպես նաև Պ. Մորոզովի և մյուսների հիշատակին: Սովետական Միության կրկնակի հերոս, օդաչու Նելսոն Ստեփանյանի հուշարձանը տեղադրվել է Երևանի Մանկական զբոսայգում, Երևանի զբոսայգիներից մեկում կանգնեցված է նաև Սիմոն Զաքիյանի հուշարձանը: ԽՍՀՄ հերոս Հունան Ավետիսյանի հուշարձանն է կանգնեցվել Ղափանի կենտրոնական այգում (նկ. 42): ԽՄ հերոսներ Հ. Ավետիսյանի և մարշալ Հ. Բաբաջանյանի կիսանդրիները տեղադրված են իրենց անունները կրող դպրոցների բակերում (Երևան): Հայրենական պատերազմը հետպատերազմյան շրջանում հիշատակման ամենակենտրոնական թեման էր, և պատերազմի զոհերին և հերոսներին նվիրված հուշարձանները կանգնեցվում էին քաղաքների ինչպես առանձնացված, այնպես էլ ամենատեսանելի, մասսայական վայրերում: Հանրային վայրերում էին հայտնվում նաև խորհրդային կարգերի հաստատման համար զոհված մարտիկներին նվիրված հուշարձանները, որոնք մեծամասամբ կանգնացվում էին քաղաքների այգիներում և պուրակներում, ինչպես Երևանում տեղադրված «հավերժական կրակ» (հայաստանում խորհրդային կարգերի հաստատման համար զոհված մարտիկների հուշարձան) կոթողը, Եղեգնաձորի քաղաքային այգում կանգնեցված հուշարձանը: Իսկ, օրինակ Սիսիանում խորհրդային

կարգերի հաստատման համար զոհված սիսիանցի մարտիկների հուշարձանը մոնումենտալ կառույց է, որը տեղադրվել է քաղաքի գլխավոր հրապարակներից մեկում և իշխում է շրջակա տարածքի վրա նույնիսկ այսօր[197]:

Հեղափոխության առաջնորդն անձամբ կարևորում էր հոբելյանական տարե-դարձների հանդիսավոր տոնակատարությունների անցկացումը (հանրությանը կարեվոր իրադարձությունների մասին պարբերաբար հիշեցնելու համար), ուստի զարմանալի չէ, որ քաղաքային լանդշաֆտներում սկսեցին հայտնվել նաև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմանը նվիրված հուշարձաններ: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 20-ամյակին և 30-ամյակին (կարմիր բանակի մարտիկներին) նվիրված հուշարձաններ կանգնեցվեցին Երևանի այգիներում, խորհըրդային կարգերի հաստատման 50-ամյակին նվիրված մոնումենտալ կոթող է տեղադրվել Դիլիջանում, մայրուղու մոտակայքում՝ իշխելով քաղաքի վրա (նկ. 43): Մեծ հոկտեմբերի 50-ամյակին նվիրված հուշարձան է կանգնեցված Ջերմուկի քաղաքային այգու դիմաց, փողոցի վրա: Իսկ, Լենինականի անվանակոչման 60-ամյակին նվիրված կամարը տեղակայվել է քաղաքի կենտրոնական այգիներից մեկում:

Այսպիսով, նկատում ենք, որ խորհրդային տարիներին կարևոր ուղերձ պարունակող հուշարձանները կանգնեցվում էին բնակավայրերի առավել մարդաշատ հատվածներում, քաղաքների կենտրոններում, հրապարակներում, այգիներում և պուրակներում, առանձնացված և բարձրադիր հատվածներում՝ քաղաքներում ստեղծելով ուժեղ նշաններ, որոնք հանրությանը անդադար պետք է հիշեցնեին իրենց հերոսների, կարևոր արժեքների և գաղափարների մասին: Հեղափոխականների և խորհրդային գործիչների հուշարձանները հիմնականում հայտնվում էին քաղաքների կոնտրոններում՝ վարչական հատվածներում, մշակութային գործիչներինը կանգնեցվում էին բնա-կավայրերի մշակութային գոտիներում, գիտնականներինը՝ գիտակրթական և այլն: Երևանի նախագծի հեղինակ Ալ. Թամանյանը, օրինակ, Երևանը նախատեսել էր

[197]Այսօր այն կոչվում է «աղջկա արձան»՝ հղում կատարելով հուշարձանի կոնտրոնական ֆիգուրին՝ սգացող հայ կնոջը:

բաժանել մի քանի շրջանների, որոնք կապվելու էին Լենինի հրապարակը շրջապատող կենտրոնական վարչական շրջանի հետ[198]: Թամանյանը գլխավոր հատակագծում արդեն հղացել էր քաղաքի հիմնական համակառույցները իրենց ծավալային-տարածական լուծումով: Նա նախագծել էր կառուցապատման առանձին շեշտված հանգույցների տարածական կապը (վարչական կենտրոն, թատերական հրապարակ, բուհական և թանգարանային թաղամասեր, հյուսիսային կասկադ և այլն)[199]: Թամանյանը Երևանը բաժանել էր քաղաքական, մշակութային, գիտակրթական, առողջապահական և ժամանցային գոտիների, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր հուշարձանային կոնտինուումը[200]:

3.2 Հուշարձանի տարածքի ընտրությունը հետխորհրդային Հայաստանում

Հետխորհրդային Երևանում տեղադրված մոտ 60 հուշարձանների մեծ մասը տե-ղադրվել են այգիներում, պուրակներում, 18 արձան տեղադրվել է խաչմերուկներում և փողոցների հարևանությամբ, 7-ը՝ տարբեր նշանակության շինությունների բակերում և ևս 3-ը՝ հրապարակներում: Գյումրիում հետխորհրդային տարիներին տեղադրված մոտ 25 հուշարձաններից 7-ը տեղադրվել են հրապարակներում և հրապարակատիպ տա-րածքներում, 11-ը՝ այգիներում և պուրակներում, 4 արձան տեղադրվել է փողոցներում: ՀՀ մյուս քաղաքներում նոր հուշարձանները տեղադրվում են հիմնականում այգիներում, պուրակներում, շատ սակավ՝ փողոցների հարևանությամբ և հրապարակներում:

Խորհրդային Միության գոյության վերջին և ՀՀ անկախության առաջին տարիներին հանրությունը, հատկապես մարզերում սեփական նախաձեռնությամբ սկսեց տեղադրել երկրաշարժի, հայ ազատագրական պայքարի և արցախյան պատերազմի զոհերի հիշատակն հավերժացնող հուշարձաններ, որոնք հայտնվեցին Հայաստանի

[198]Խմբ. կոլ., Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ Պատմության ին-տ., ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 7, Երևան, 1967, էջ 522:
[199]Նույն տեղում:
[200]Խորհրդային հուշարձանային քաղաքականության առանձնահատկություններից մեկն այն էր, որ չէր կենտրոնանում միայն կենտրոնների վրա և հրապարակներ ու ժամանցի գոտիներ էր կառուցում քաղաքի տարբեր մասերում, որտեղ տեղադրում էր հուշարձաններ:

քաղաքային լանդշաֆտների բոլոր հնարավոր հատվածներում՝ շատ դեպքերում հաշվի չառնելով տեղադրման տարածքների գործող կամ նախկին համատեքստերը, շրջակա նշանների ուղերձները: Այդ հուշարձանները հիմնականում տեղադրվում էին քաղաքային այգիներում, պուրակներում, երկրորդային փողոցների հարևանությամբ, առանձին թաղամասերում, բազմաբնակարան շենքերի բակերում: Հուշարձանների այդ խմբերին շուտով ավելացան նաև թաղերի հեղինակություններին և վաղաժամ մահացած բնակիչների հիշատակին նվիրված կոթողներն ու հուշաղբյուրները, որոնք տեղակայվում էին ինչպես բակերում, այնպես էլ թաղամասը եզերող փողոցների մայթերի, նույնիսկ երկրորդական հրապարակներում: Գյումրիում նման հուշաղբյուրներ հայտնվել են նաև կենտրոնական հրապարակում:

1980-ականների վերջերին, ԽՄ վերջին տարիներին հանրության կողմից Հայաստանում հուշարձաններ կանգնեցվեցին՝ առանց համայնքային իշխանությունների հետ համաձայնեցման (համայնքային իշխանություններն էին կարգավորում հուշարձան-ների տեղադրումը խորհրդային տարիներին) և նրանց տեղյակ պահելու: 1988 թ. գար-նանը Սումգայիթի զոհերի հիշատակին հուշարձան կանգնեցվեց Գյումրու Թատերա-կան հրապարակի հարևանությամբ՝ նոր նշան ներմուծելով արվեստային համատեքստ ունեցող տարածք[201]: 1988-1991 թթ. ազգային ազատագրական պայքարի հերոսների շատ արձաններ տեղադրվեցին Հայաստանի շատ բնակավայրերում՝ մուտք գործելով խորհրդային քաղաքների նշանային կոնտինում: Նույն Գյումրիում 1989 թ. տեղի բնա-կիչների կողմից տեղադրվեցին զորավար Անդրանիկի և այլ հայդուկների արձանները քաղաքի Հաղթանակի այգու հատվածներից մեկում, Սյունիքի մարզի Գորիս քաղաքում հայդուկների արձանները հայտնվեցին քաղաքի կենտրոնական հատվածներից մեկում՝ նշանային կոնտինումի մեջ դրվելով միայն անկախության տարիներին[202]: Հանրության նախաձեռնությամբ Հայաստանի

[201]Այն ժամանակ, չնայած, Թատերական հրապարակը հանրության մեջ հայտնի էր Ազատության հրա-պարակ անունով, որը կարծես նշանային նոր համատեքստ էր ստեղծում տարածքում հայտնվող նոր հուշարձանի համար:

[202]Գյումրու արձանները անկախության տարիներին համայնքային իշխանությունների կողմից տեղա-փոխվել են այգու այլ հատված, իսկ հրապարակը

քաղաքների լանդշաֆտներում հուշարձաններ հայտնըվեցին նաև 1988 թ. երկրաշարժից հետո, երբ զոհերին նվիրված կոթողներ կանգնեցվեցին ավերված շինությունների տարածքներում, փողոցներում, բակերում: Նմանատիպ պրակտիկան շարունակվեց նաև Հայաստանի անկախացումից հետո ևս, երբ արցախյան պատերազմի տարիներին զոհերին և հերոսներին նվիրված հուշար-ձանները պատեցին բոլոր քաղաքների հանրային վայրերը, բնակելի թաղամասերը:

Հանրության կողմից նմանատիպ հուշարձանների տեղադրումն ընթանում էր համայնքային իշխանություններից անկախ և հիմնականում առանց նրանց գիտության: Խորհրդային տարիներին գործում էին հատուկ հանձնաժողովներ, որոնք հսկում էին նոր նախագծերի հաստատումն ու արձանների կանգնեցումը, սակայն, ԽՍՀՄ-ում հու-շարձանների տեղադրման հստակ կարգ չի եղել: Նոր տեղադրվող հուշարձանների ցանկը եկել է կենտրոնից (Մոսկվա) և իրականացվել տեղում՝ մրցանակաբաշխությունների միջոցով: Պատմական յուրաքանչյուր էտապ բերել է իր հիշատակման արժա-նի թեմաները: Խորհրդային տարիներին եղել է հուշարձանների նախագծերի հաս-տատման և տեղադրման ուժեղ գրախոսություն, սակայն այդ արձանների տեղադրման հստակ կարգավորող կարգ չի եղել, այլ իրականացվել են համայնքային իշխանու-թյունների կողմից, որը բացառում էր քաղաքացիների կողմից հուշարձանների տե-ղադրումը, առավել ևս դրանց տարածքի ընտրությունը: Խորհրդային վերջին տարի-ներին՝ կապված արցախյան շարժման, երկրաշարժի հետ, հանրության կողմից տեղա-դրվեցին նոր բովանդակությամբ հուշարձաններ, որոնք պարզապես կանգնեցվում էին՝ շրջանցելով համայնքային իշխանություններին: Արցախյան շարժման փուլում տե-ղի իշխանությունները ոչ միայն չէին արգելում այդ կոթողների տեղադրումը և դրանց տեղադրության տարածքի ընտրությունը, այլ շատդեպքերում նաև տալիս էին իրենց համաձայնությունը՝ այդ հուշարձանների բացման արարողություններին մասնակցելով:

վերանվանվել է զորավար Անդրանիկի անունով: Իսկ, Գորիսի դեպքում, համայնքային իշխանությունները հայդուկների արձանները տեղադրել են տեղի զորա-մասի տարածքում:

Անկախության տարիներին հուշարձանների տեղադրումը իրավական տեսանկյունից համայնքային իշխանությունների լիազորությունների մեջ էր, սակայն այդ տարիներին հայաստանյան հանրությունը դեռ շարունակում էր սեփական նախաձեռնությամբ հուշարձաններ տեղադրել: 1991 թ. Հայաստանում առաջին օրենքն ընդունվեց, որը մասամբ կարգավորում էր որոշակի քանդակների տեղադրման հարցը: Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը 1991 թ. թիվ 270 որոշման համաձայն պետական, հասարակական, մշակույթի ու գիտության գործիչների հիշատակը հավերժացնելու համար նրանց ապրած տների ճակատամասերին հուշատախտակների փակցման իրավունքը վերապահվելու էր պատգամավորների քաղաքային և շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեներին[203]: Սակայն, հուշարձանային քաղաքականության վերահսկմանն ուղղված առաջին լուրջ քայլը կատարվեց միայն 1999 թ.: ՀՀ կառավարության թիվ 551 որոշումով Հայաստանի Հանրապետության կառավարությունը հստակեցնում է Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչների հիշատակը հավերժացնելու նպատակով պետական և համայնքների տարածքներում ու հասարակական վայրերում հուշարձանների (վեհարձան, կոթող, անդրի, կիսանդրի, հուշաքար, հուշատախտակ) իրականացման (նախաձեռնման, որոշման ընդունման, նախագծման և կառուցման) կարգը[204]: Ըստ նոր ընթացակարգի որևէ հուշարձանի տեղադրման մասին որոշումը հաստատվում է համայնքի ավագանիների, այդուհետ՝ մարզպետների կողմից (Երևանում՝ քաղաքապետի)[205]:

Անկախության տարիներին տարածքների նշանային և համատեքստային անընդհատության պահպանումը, խորհրդային տարիների համեմատ, առավել բարդ խնդիր է դարձել ՀՀ համայնքային իշխանությունների համար: Եթե խորհրդային տարիներին Հայաստանի նոր ձևավորվող քաղաքների տարածքները նոր էին

[203]ՀՀ Մինիստրների խորհրդի որոշումը պետական, հասարակական, մշակույթի և գիտության գործիչների հիշատակը հավերժացնելու կարգի մասին, http://www.arlis.am/DocumentView.aspx?doc-id=5020, 10.10.2017:
[204]ՀՀ կառավարության որոշումը ՀՀ-ում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին, http://www.arlis.am/DocumentView.aspx-?docid=7499, 28.11.2017.
[205]Անդ:

նշաններ ձեռք բերում, ապա անկախության տարիներին շատ տարածքներ վերանվանվեցին, շատ տարածքների նախկին նշաններ կորցրին իրենց արդիականությունը, բնակավայրերի շատ հաստատություններ դադարեցին իրենց գործունեությունը՝ ժամանակի ընթացքում փոխարինվելով այլ գործառույթ իրականացնող հաստատություններով:

Նշանի և համատեքստի անընդհատությունն ապահովելու քաղաքականության կիրառման ամենապարզ տարբերակը հիշատակման ենթակա գործչի անունը կրող փողոցի վրա կամ մոտակա տարածքում նրա հուշարձանի տեղադրումն է: Իրենց անունը կրող փողոցների վրա անկախության տարիներին տեղադրվել են Հ. Բաբաջանյանի և Հովի. Բաղրամյանի արձանները, Վ. Փափազյանի, Ա. Խաչատրյանի, Ֆ. Նանսենի, Պ. Սևակի, արձանները (Երևան), Սայաթ-Նովայի (Գյումրի), Մոմիկի (Եղեգնաձոր) հուշարձանները: Նույն տրամաբանությամբ շատ արձաններ տեղադրվում են հենց գործունեության բնագավառը ներկայացնող և/կամ իրենց անունը կրող դպրոցների, մշակութային, կրթական, մարզական հաստատությունների բակերում, հարակից տարածքներում. Կոմիտասի արձանը Երևանում տեղադրվեց իր անունը կրող Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիային հարակից այգում[206] (Երևան), կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի արձանը տեղադրվեց Հայաստանի Ազգային Օպերայի և բալետի թատրոնի շենքի դիմաց, ԽՍՀՄ չեմպիոն «Արարատ-73» ֆոտբոլային թիմի հաղթանակները հավերժացնող արձանախումբը տեղադրվեց Հրազդան մարզադաշտի հարակից տարածքում, Հայոց Ցեղասպանության զոհ դարձած մտավորականների արձանախումբը տեղադրվեց Վաղարշապատի Մշակույթի տան շենքի դիմաց, Գուսան Աշոտի արձանը հայտնվեց Գորիսի նրա անունը կրող մշակույթի տան դիմաց, ջրաչափորդ Վ. Համբարձումյանի արձանը տեղադրվեց նրա անունը կրող մարզադպրոցի բակում (Կապան):

Խորհրդային տարիների քաղաքական համատեքստի նշանների անընդհատու-թյան պահպանմանն ուղղված պրակտիկան որոշ դեպքերում կիառվում է նաև անկախ Հայաստանում: Հետխորհրդային Հայաստանում պետական, քաղաքական գործիչների արձաններ են

[206]Այն դեպքում, երբ Երևանի Արաբկիր վարչական շրջանի գլխավոր պողոտան կրում է Կոմիտասի անունը:

հայտնվում ՀՀ համայնքապետարանների, մարզպետարանների և վարչական այլ հաստատությունների տարածքներում և հարևանությամբ: Հայոց արքաների արձաններ տեղադրվեցին ՀՀ նախագահի նստավայրի բակում (Տիգրան Մեծ), Իջևանի մարզպետարանի դիմացի հրապարակում (Աշոտ Երկաթ), պետական և քաղաքական գործիչ Արամ Մանուկյանի արձանը տեղադրվեց Կապանի համայնքապետարանի հարակից այգում, ՀՀ վարչապետ Վ. Սարգսյանի արձանը հայտնվեց Արարատ քաղաքի համայնքապետարանի հարակից հրապարակում:

Այնուհանդերձ, հետխորհրդային Հայաստանում որոշ դեպքերում ականատես ենք լինում հուշարձանների և նրանց տեղադրության տարածքների համատեքստերի և հարակից շինությունների հետ նշանային անընդհատության փոփոխման: Երբեմն կոթողի «սխալ» տեղադրումը կամ պարզապես անսպասելի վայրում նրա հայտնվելը նպաստում է նշանային նոր կոնտինուումի ձևավորմանը: Նշանային նոր կոնտինուումի ձևավորման հետաքրքիր օրինակ է Գյումրիում՝ Լենինականի 60 ամյակին նվիրված կամարի (նկ. 44) հանրային մեկնաբանությունները: 1984 թ.-ին Գյումրու կենտրոնում քաղաքի վերանվանման (1924 թ.-ին Ալեքսանդրապոլը վերանվանվեց Լենինական՝ ի պատիվ Վ. Լենինի) 60 ամյակի առթիվ կարի գործարանի և դատարանի հարևանությամբ կանգնեցվեց կամար՝ խրախուսելով քաղաքացիներին այդ կոթողը դիտարկել որպես կախաղան: Լենինականցիների մեկնաբանությամբ՝ կախաղանից (կամար) պետք է կախեին դատարանում դատապարտված կարի գործարանի գողերին[207]:

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի քաղաքներից շատերից խորհրդային շատ գործիչների հեռացված արձանների տարածքները հեշտությամբ անվանափոխվեցին և համալրվեցին նոր արձաններով, սակայն այդ գործընթացը այդքան էլ հարթ չընթացավ այն տարածքներում, որտեղ ժամանակին տեղադրված էր Վ. Լենինի արձանները: ՀՀ շատ քաղաքներում ժամանակի ընթացքում դատարկ մնացած տարածքները գտան իրենց նոր տերերին և նոր նշաններ ձեռք բերեցին, սակայն մի շարք քաղաքներում Լենինի նախկին արձանների տարածքները անարձան են մնացել, քաղաքի գլխավոր նշանը տեղափոխվել է այլ վայր, կամ տարածքի ընդհանուր

[207]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Գյումրի, 2017, նոյեմբեր:

համատեքստի փոփոխու-թյան միջոցով են քաղաքային իշխանությունները որոշել լուծել խնդիրը:

Կապանում և Արմավիրում Լենինի տեղահանված արձանների փոխարեն, քաղաքական համատեքստը պահած տարածքում հայտնվել են քաղաքական գործիչներ Ա. Մանուկյանի և Վ. Սարգսյանի արձանները: Սակայն, որոշ քաղաքներում, որտեղ Լենինի արձանի նախկին տարածքում կրկին վարչական կառույցներ են գործում, տեղադրվել են ոչ քաղաքական բովանդակության արձաններ: Դիլիջանում, ինչպես նշեցինք, Լենինի նախկին արձանի վայրում տեղադրվել է գունդ (նկ. 45), Գորիսում քաղաքական (քաղաքական իշխանության մարմիններով շրջապատված) հրապարակում 2010 թ. կանգնեցվել է գիտության ներկայացուցչի՝ 14-15-րդ դարերի փիլիսոփա, աստվածաբան Գրիգոր Տաթևացու հուշարձանը (նկ. 46): Վանաձորում ներկայումս քննարկվող տարբերակներից մեկը կենտրոնական հրապարակում (Կիրովի նախկին արձանի տեղում), որի հարևանությամբ նույնպես եղել են ու կան վարչական շինություններ, ամենայն հայոց բանաստեղծ Հ. Թումանյանի արձանի կանգնեցումն է: Գյումրիում 2002 թ. Լենինի արձանից ազատագրված պատվանդանին կանգնեցվեց Հայուհու արձանը:

Այնուհանդերձ, որոշ վայրերում տեսնում ենք խորհրդային նախկին քաղաքական տարածքների ապաքաղաքականացում՝ շրջակա շինությունների նշանակության փո-փոխման միջոցով: Օրինակ, Գյումրիում Լենինի արձանի հարևանությամբ գտնվող միակ իշխանական շինությունը՝ ՀԿԿ քաղկոմի նախկին շենքը տրամադրվեց Արվեստ-ների ակադեմիային՝ ապաքաղաքականացնելով նախկին Լենինի անվան հրապարակը[208]:

Կենտրոնում անպայման քաղաքական նշան տեղադրելու պատկերացումները ՀՀ մի շարք վայրերում դեռևս շատ ուժեղ են, սակայն ի տարբերություն խորհրդային տարիների, երբ նշանը տեղադրվում էր հենց այդ կենտրոնում, ներկայում քաղաքի հիմնական նշանը սկսում է տեղափոխվել կենտրոնից մի փոքր «ներքև», որը հիմնա-կանում կապվում է կենտրոնի նախկին գլխավոր նշանի մասին հանրային հիշո-ղությունների պահպանման հետ:

[208]Մարգարյան Ն., Աթանեսյան Գ., նշվ. աշխ.:

խորհրդային որոշ նշաններ ՀՀ շատ վայրերում դեռ մեծ իշխանություն ունեն իրենց նախկին տարածքում, իսկ տարածքի նկատմամբ իշխանությունը Պ. Բուրդյեի խոսքերով՝ ամենազորեղ իշխանությունն է[209]:

Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի գլխավոր հրապարակում, քաղաքապետարանի շենքի դիմաց խորհրդային տարիներին տեղադրված է եղել Վ. Լենինի արձանը, որը 1991 թ.-ին գցվել է տեղի բնակիչների կողմից: Այս հրապարակը, և, մասնավորապես Լենինի նախկին արձանի վայրը ցայսօր մնում են անարձան: Տեղի բնակիչները, քաղաքապետարանի աշխատակիցները մեր հետ զրույցներում նշեցին, որ այդ տարածքում նոր արձանի տեղադրման իմաստ չեն տեսնում, իսկ, ահա տեղի բնակիչներից մեկը՝ ներկայանալով որպես Լենինի արձանը վայր գցող, նշեց, որ.-«Էդ տարածքը անիծված է, պետք չի նոր արձան... ինչ տարբերություն էդ տեղը կլինի Լենինի, Աթաթուրքի, թե մեր պրեզիդենտներից մեկի արձանը»[210]: Հետխորհրդային տարիներին միայն հրապարակի երկու անկյուններում տեղադրվեցին զույգ առյուծների և խոյերի քանդակներ: Խոյերի քանդակները տեղադրումից քիչ հետո տեղափոխվեցին գետի մյուս ափն ընկած հրապարակ, որը գտնվում է հրապարակից դուրս եկող փողոցի մյուս ծայրում (Երկու հրապարակները գտնվում են դեմ հանդիպակաց, որոնց միացնում են ճեմուղին և գլխավոր փողոցը: Գլխավոր հրապարակը գտնվում է բարձրադիր տեղանքում): Գետի մյուս ափին գտնվող հրապարակում 1980-ականների վերջերին տեղադրվել է Գ. Նժդեհի արձանը (նկ. 47), որի տարածքը հանդիսանում է քաղաքի տարեց բնակիչների ժամանցավայրը: Խոյերի քանդակների այս տարածք (ներքև) տեղափոխումը հետաքրքիր մեկնաբանություն է ստացել տեղացիների կողմից. մեր բանասացը նշեց, որ.-«խոյերը ժողովուրդն ա, ներքև են բերել դրել, հեռու, առյուծներից հեռու, որ մարդկանց չուտեն, իշխանությունները էլի, չնայած պիտի գայլ սարքեին, շակալ, ոչ թե առյուծ»[211]: Տեսնում ենք, որ հիմնական նշանը

[209]Бурдье П., Социология социального пространства, Москва: Ин-т экспериментальной социологии; СПб.: Алтейя, 2007, с. 110.
[210]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Սիսիան, 2017, օգոստոս:
[211]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Սիսիան, 2017, օգոստոս:

տեղափոխվել է ներքև՝ Նժդեհի արձանի տարածք, սակայն վերևը դեռ շարունակում է ասոցացվել իշխանությունների տարածքի հետ՝ չնայած նրան, որ Լենինի արձանի տարածքը (նկ. 48) անարձան է մնացել և դեռ երկար տարիներ էլ կմնա (հաշվի առնելով տեղի բնակիչների վերաբերմունքը):

Նույն համատեքստում կարելի է դիտարկել նաև Լոռու մարզի կենտրոն Վանաձոր քաղաքի կենտրոնական հրապարակի և նրա շրջակա տարածքի նշանային վերաիմաստավորման հարցը: Խորհրդային տարիներին Կիրովի անունը կրող հրապարակում 1924 թ. կանգնեցվել էր կոմունիստական կուսակցության և խորհրդային պետության գործիչ Սերգեյ Միրոնովիչ Կիրովի արձանը: ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո Կիրովի արձանը տեղահանվեց՝ հրապարակը մինչ այսօր թողնելով անարձան: Ճիշտ է, ժամանակ առ ժամանակ խոսակցություններ են շրջանառվում՝ հրապարակում նոր արձան տեղադրելու վերաբերյալ, նույնիսկ համայնքապետարանում հանրային քննարկումներ են կազմակերպվել, սակայն այդպես էլ դեռ ոչինչ չի որոշվել: Այդուհանդերձ, Վանաձորի կայարանի շենքի դիմաց գտնվող հրապարակում տեղադրվեց ՀՀ նախկին վարչապետ Վազգեն Սարգսյանի արձանը (նկ. 49): Արձանը գտնվում է քաղաքի գլխավոր հրապարակից դուրս եկող պողոտայի մյուս ծայրին՝ բարձադիր տեղանքում թողնելով Կիրովի նախկին արձանի տարածքը: Այստեղ նույնպես, ինչպես Սիսիանում, քաղաքի գլխավոր նշանը վերևից տեղափոխվել է ներքև. պետական տոների ժամանակ (Մայիսի 9, Բանակի օր), քաղաքային և մարզային իշխանությունների ներկայացուցիչները գլխավոր հրապարակում տեղակայված իրենց գրասենյակներից իջնում են ներքև, կայարանի հրապարակ, Վազգեն Սարգսյանի արձանին ծաղիկ դնելու, հարգանքի տուրք մատուցելու համար: Իսկ, ահա Տավուշի մարզկենտրոն Իջևան քաղաքում տեսնում ենք Սիսիանի դեպքին շատ մոտ մի իրավիճակ: Քաղաքապետարանի շենքից դուրս եկող փողոցի մյուս ծայրին գտնվում էր նախկին Մշակույթի պալատը, որը ներկայումս Իջևանի մշակույթի կենտրոնն է: Խորհրդային տարիներին պալատի դիմաց տեղադրված էր Վ. Լենինի արձանը, որի փոխարեն ներկայումս կենաց ծառ պատկերող քանդակ է տեղադրված (նկ. 50): Քաղաքապետարանի շենքը, ինչպես

անարձան կար, այդպես էլ մնացել է, սակայն շենքից մի փոքր ներքև՝ փողոցի երկու անկյուններում տեղադրվել են առյուծների քանդակներ, որոնք կրկին հանրային մեկնաբանություններում ասոցացվում են վերևում գտնվող իշխանությունների, իսկ կենաց ծառը՝ հասարակ ժողովրդի հետ[212]: Ինչպես Գյումրու վերոնշյալ կամար-կախաղանի պարագայում, այնպես էլ այստեղ իրար հետ կապ չունեցող քանդակային թեմաների համատեղման միջոցով հանրությունը բովանդակային նոր կոնտինուում է փորձել ստեղծել՝ կառույցներից մեկը ձևակերպելով իբրև իշխանություն, իսկ մյուսը՝ իշխանությունների ճնշման տակ հայտնված ժողովուրդ:

Հետխորհրդային Հայաստանում հուշարձան տեղադրելու համար ամենակարևոր տարածք է դառնում քաղաքի կենտրոնը, որտեղ կենտրոնանում են բնակավայրի ժամանցային, կոմերցիոն հիմնական հաստատությունները՝ գրավելով ոչ միայն տեղի բնակիչներին, այլև քաղաքի հյուրերին: Հուշարձանը և՛ պաշտոնական, և՛ հանրային դիսկուրսներում սկսում է ընկալվել և մեկնաբանվել որպես զբոսաշրջության զարգացման համար կարևոր քաղաքային ատրիբուտ[213]: Հուշարձանի տեղեկատվական գործառույթի կարևորումը հանրային և պաշտոնական քննարկումներում այդ տեղեկատվության հասցեատեր է դիտարկում ոչ միայն տվյալ համայնքի և պետության բնակչին, այլև օտարազգի զբոսաշրջիկներին: Զբոսաշրջություն-հուշարձան կապի կարևորումը արդի հայաստանյան հանրային դիսկուրսում իր ազդեցությունն է ունենում նոր հուշարձան-ների տեղադրության վայրերի ընտրության վրա: Վայոց ձորի Ջերմուկ զբոսաշրջային քաղաքի Աջափնյակ կոչված հատվածում, ուր գտնվում է գլխավոր առողջարաններին հարող ժամանցի գոտին (այգին), 1990-ականների սկզբերին (1992 թ.-ից սկսած) տեղադրվեցին հայ ֆիդայիների արձանները (նկ. 51): Այդ արձանների տեղադրումը միտում ուներ ոչ միայն սեփական ազգային պատմության մի դրվագը ներկայացնել տվյալ համայնքի և ողջ հանրապետության քաղաքացիներին, այլև Ջերմուկում ամեն տարի հանգստացող բազմահազար

[212]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Իջևան, 2017, հոկտեմբեր:
[213]Տե՛ս, օրինակ, Գյումրին արձանախեղդ են անում, http://www.aravot.am/2017/10/06/912034/, 10.02.2018:

զբոսաշրջիկներին: Վայոց Ձորի մարզի Ջերմուկ քաղաքը դեռ խորհրդային տարիներից հանդիսացել է Հայաստանի հիմնական հանգստավայրերից՝ ամեն տարի հյուրընկալելով հյուրեր՝ միության բոլոր երկրներից, իսկ ներկայում՝ ողջ աշխարհից: Ջերմուկը Հայաստանի երեք առողջարանային քաղաքներից մեկն է և գտնվում է Արփա գետի ակունքի շրջանում: Քաղաքական և տնտեսական պատճառներով առողջարանային քաղաքի ակտիվ կյանքը 1990-ականներից մեծ տեղատվություն ապրեց, որը սկսեց աշխուժանալ 1990-ական թվերի վերջերից: Առողջարանային, քաղաքի կոմերցիոն-զբոսաշրջային վայրերը կենտրոնացած են միայն քաղաքի աջափնյակում: Արփայի կիրճի վրա կառուցված մեծ կամուրջը (1975 թ.) հնարավորություն է տվել բնակելի շինարարությունը կենտրոնացնել ձորի ձախափնյակում (երկու միկրոշրջաններ 6000 և 9000 բնակչի համար): Այնուհանդերձ, քաղաքի բոլոր հուշարձանները, քանդակները կենտրոնացած են միայն զբոսաշրջային աջափնյակում: 2002 թ. քաղաքի մուտքի մոտ տեղադրվել է Իսրայել Օրու արձանը (նկ. 52), իսկ ձախափնյակից աջափնյակ տանող մայրուղու վրա տեղադրվել է Արցախյան ազատամարտի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանը: Քաղաքի կենտրոնում քանդակներ են տեղադրվել խորհրդային տարիներին՝ պետական առողջարանների, հյուրատների բակերում: Ներկայում, երբ այդ կառույցների մեծ մասը արդեն մասնավոր սեփականություն են, իրենց տարածքներում հյուրընկալելով այդ քանդակները՝ նրանց կողքին տեղադրվել են նաև նորերը[214]: Միևնույն ժամանակ, քաղաքի բնակչության մեծ մասի համար բնակատեղի հանդիսացող ձախափնյակը զուրկ է որևէ քաղաքային հուշարձանից: Այստեղ կարելի է տեսնել նորակառույց եկեղեցի: Եվ միայն շենքերի բակերից մեկում, խանութների հարևանությամբ, բնակիչների ջանքերով տեղադրվել էր արցախյան ազատամարտի զոհերից մեկի հիշատակը հավերժացնող հուշարձան՝ իր հուշաղբյուրով, որը դարձել է թաղի երեխաների ժամանցի հիմնական վայրերից մեկը (նկ. 53): Այսպիսով, հուշարձանային տեսանկյունից, Ջերմուկ քաղաքի նշանային լանդշաֆտը

[214]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Ջերմուկ, 2017, օգոստոս:

կենտրոնանում է միայն աջափնյակում՝ քաղաքի կենտրոնական հատվածներում, որտեղ զարգանում է զբոսաշրջային բիզնեսը, որտեղ հիմնական հյուրատներն են և կազմակերպվում է քաղաքի հիմնական ժամանցը: Հուշարձանը դիտվում է որպես այդ լանդշաֆտի կարևոր ատրիբուտներից մեկը, որը ոչ միայն գեղեցկացնում է կենտրոնը, այլև հանդիսանում է տեղեկատվության և քարոզչության միջոց՝ հովեկների և հյուրերի համար: Տեղի բանասացներից մեկի խոսքերով.-«ձախափնյակում բան չկա տեսնելու, տուրիստը գնաինչ անի, իսկ ստեղ (քաղաքի կենտրոնում՝ ձախափնյակում) սիրուն ա, գալիս հանգստանում են, ման են գալիս, դրահամար էլ ստեղ են դնում, սիրունացնում են քաղաքը»[215]:

Պետք է նկատել, որ խորհրդային շրջանում Ջերմուկի աջափնյակում տեղադրվել են գլխավորապես գեղարվեստական (նախշազարդեր, միֆական կենդանիներ, ոգիներ ու մարդիկ պատկերող) քանդակներ (նկ. 54): Սակայն, տեսնում ենք, որ հետխորհրդային շրջանում քաղաքի այդ հատվածում հայտնվում են պատմական անձինք ու քաղաքական թեմաներ պատկերող քանդակներ՝ զբոսաշրջությունն օգտագործելով ազգային գաղափարներն ու արժեքները քարոզելու և ներկայացնելու նպատակով:

ՀՀ զբոսաշրջության մյուս կարևոր կենտրոն համարվող Ծաղկաձոր քաղաքում նույնպես տեսնում ենք զբոսաշրջություն-հուշարձան հարաբերության կարևորումը: 2012 թ. Ծաղկաձորի Ծաղկունյաց հրապարակում ՀՀ ոստիկանության ջանքերով տե-ղադրվեց մեծանուն կոմպոզիտոր, խորհրդային ներքին ծառայության գեներալ-մայոր Ա. Հեքիմյանի կիսանդրին: Բացման արարողության ժամանակ Ծաղկաձորի քաղա-քապետ Գարուն Միրզոյանը նշեց, որ.-«շուտով Հեքիմյանի արձանի կողքին Ծաղկաձոր քաղաքում կտեղադրվեն նոր արձաններ, քանի որ զբոսաշրջային կենտրոնը ամենալավ վայրն է դրա համար և մեր մեծերին կճանաչեն նաև օտարազգի հյուրերը»[216]:

2013 թ. Գյումրին դարձավ ԱՊՀ մշակութային քաղաք և այդ միջպետական ծրագրի շրջանակներում անցկացվեց 36 միջոցառում:

[215]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Ջերմուկ, 2017, նոյեմբեր:
[216]Կոմպոզիտորի արձանի բացում News.armeniatv.com, https://www.youtube.com/watch?v=tz4-4hBsQGw, 02.09.2017.

Այս միջոցառումներից հետո Գյումրիի իշխանությունները որդեգրել են քաղաքը մշակութային, սպորտային և զբոսաշրջային մայրաքաղաք դարձնելու քաղաքականությունը, որի մասին նշել է նաև քաղաքապետ Ս. Բալասանյանը: Ներկայում էլ մարքեթինգային ընկերությունները համագործակցելով Գյումրու քաղաքապետարանի, ՀՀ զբոսաշրջության պետական կոմիտեի, Կումայրի արգելոց-թանգարանի և Գյումրու հասարակական կազմակերպությունների հետ՝ քաղաքի բրենդը մշակելու համար: Քաղաքում տեղադրված հուշարձանները մեկնաբանվեցին որպես զբոսաշրջության զարգացման համար կարևոր գործոններ: Արդյունքում 2017 թ. հոկտեմբերին՝ Գյումրի համայնքի ավագանու հերթական նիստում ընդունվեց Քաղաքի Աբովյան ճեմափողոցում 12 անվանի անձանց հուշարձանները տեղադրելու որոշումը: Այդ հուշարձանների մի մասի հերոսներն արդեն ունեն տեղադրված արձաններ Գյումրիի տարբեր հատվածներում, ինչը սուր քննադատությունների տեղիք տվեց հանրության շրջանում: Սակայն քաղաքային իշխանությունները իրենց մոտեցումը փորձեցին հիմնավորել զբոսաշրջային մեծ կարևորություն ունեցող վայրում (կենտրոն հանդիսացող Վարպետաց փողոցում) Գյումրին ներկայացնող հիմնական հերոսների համատեղ մատուցմամբ[217]: Տեղի բնակիչներից շատերը շտապեցին քննադատել քաղաքային իշխանություններին: Տեղի մեր բանասացներից մեկի խոսքերով.- «մենակ կենտրոնն են սարքում, ում համար են սարքում, տուրիստների, դրսից եկածների համար, բա ստեղի մարդիկ... էս երկու փողոցն են հասարքում, բամյուսները, ցեխի ու փոշու մեջ կորած ասաղ քաղաքը, իսկ իրանք տուրիստի համար արձան են դնում»[218]:

Երևանում, որտեղ կենտրոնացված է պետության ֆինանսական կապիտալի մեծ մասը, տեղակայված են նաև երկրի հիմնական ժամանցավայրերը, կոմերցիոն հաստատությունները, որոնք գրավում են Հայաստան ժամանող օտարերկրացիների ուշադրութ-

[217]Բուռն քննարկումներ Գյումրու ավագանու նիստում. Ս. Սարգսյանը հովանավորելու է, որ Գյումրիում արձաններ տեղադրեն, http://galatv.am/hy/news/204631/, 10.12.2017.
[218]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Գյումրի, 2018, մարտ:

յունը, իսկ քաղաքային հուշարձանների տեղադրումը շարունակում է լրջորեն կապվել զբոսաշրջության խթանման հետ: Այդ նոր հուշարձանները, հուշարձանային պուրակները կենտրոնանում են քաղաքի կենտրոնական հատվածներում՝ հասանելի լինելով օտարերկրյա հյուրերի համար: Արդյունքում հուշարձանները կուտակվում են Կենտրոն վարչական շրջանում: Ճիշտ է, նոր քանդակներ են տեղադրվում նաև քաղաքի մյուս վարչական տարածքներում, սակայն հիմնական շեշտը դրված է կենտրոնի վրա: Երևանում նոր տեղադրվող հուշարձանի բացման արարողության ժամանակ և հետագայում քաղաքային իշխանությունների տեքստերում մատնանշվում են այդ հուշարձանների «քաղաքը գեղեցկացնելու», «զբոսաշրջիկներին գրավելու», «ժամանցի վայր դառնալու», «մարդկանց դուր գալու» հատկանիշները, որոնք հանդի-սանում են այդ արձանների տեղադրման, եթե ոչ՝ առաջնային, ապա նվազագույնը՝ երկրորդ կարևոր գործոնը:

Անկախ Հայաստանում խորհրդային գրաքննության վերացումով և Հայ Առաքելա-կան Եկեղեցու դիրքերի վերականգնմամբ հնարավարություն ընձեռվեց նաև քաղաք-ների հանրային տարածքներում կրոնական հուշարձանային նշանների հայտնվելու համար: Կրոնական թեմաներով հուշարձաններ սկսեցին հայտնվել քաղաքային կեն-տրոններում, նույնիսկ վարչական շինությունների հարևանությամբ: Երևանի Հանրա-պետության հրապարակին կից այգում (ՀՀ կառավարության շենքի անմիջական հարևանությամբ) Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված խաչքարերի պուրակ բացվեց (նկ. 55): Հետաքրքիր է, որ այդ տարածքում մի քանի տարի անց տեղադրվեց քաղաքական, ռազմական և հասարակական գործիչ Գարեգին Նժդեհի արձանը: Գյումրի քաղաքի նախկին քաղաքապետ Վարդան Ղուկասյանը նույնպես կառուցել է խաչքարերի պուրակ (նկ. 56): Խաչքարերի պուրակը գտնվում է Վարդա-նանց հրապարակին կից այգում: Տեղադրված խաչքարերի մի մասը Ջուղայի դաշտի հուշարձանների կրկնօրինակներ են: Վ. Ղուկասյանը սկզբնապես ցանկացել է խաչքարերը տեղադրել այլ տարածքում (ավելի կենտրոն), սակայն խուսափելով քաղաքացիների դժգոհությունից, իր մերձավորների խորհրդով ընտրել է Ս.

Ամենափրկիչ եկեղեցու հարևանությամբ գտնվող զբոսայգու տարածքը:[219]

Հետխորհրդային Հայաստանի մի շարք բնակավայրերում ժամանակի ընթացքում ձևավորվել են պանթեոններ: Միմյանց հետ նույն վայրում հաճախակի տեղադրվում են Արցախյան ազատամարտի, Հայոց Ցեղասպանության, երբեմն երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված հուշարձաններ: Նմանատիպ պանթեոնների տարածք է մեծամասամբ ընտրվում խորհրդային տարիներին Հայրենական պատերազմի զոհերին նվիրված հուշարձանների վայրը, սակայն լինում են դեպքեր, երբ պանթեոնը ներառում է միայն վերոնշյալ երեք իրադարձությունների հուշարձանները: Այս բոլոր հուշարձանները մեկ վայրում տեղադրելով քաղաքային իշխանությունները կամ բարերարները ստեղծում են որոշակի պանթեոններ:

Դիլիջան քաղաքի արևմտյան կողմում, բլրի գագաթին է գտնվում Երկրորդ Աշխարհամարտի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանը, որը կառուցվել է 1975 թ. (նկ. 57): Հուշահամալիրի ստորին հատվածի կենտրոնում գտնվող անմար կրակից փոքր-ինչ հեռու՝ անկյունում հետխորհրդային տարիներին տեղադրվել է մի խաչքար՝ նվիրված Մեծ Եղեռնի անմեղ զոհերի հիշատակին[220] (նկ. 58): Այս խաչքարի կողքով տանող արահետը մեզ բերում է երկու այլ հուշարձանների մոտ: Այդ կոթողներից մեկը նվիրված է 1988 թ. երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակին, իսկ մյուսը՝ Արցախյան պատերազմի ազատամարտիկների հիշատակին (նկ. 59): Այս հուշարձանների անմիջապես կից տարածքը վերածված է շինհրապարակի, որտեղ կառուցվելու է եկեղեցի: Հետաքրքիր է, որ հուշարձանի մոտակայքում ժամանակի ընթացքում ստեղծվել է գերեզմանոց, իսկ որոշ թաղումներ նույնիսկ կատարվել են Հայրենականի հուշարձանի տարածքում[221]:

---

[219]Այդ այգում, խաչքարերի պուրակից քիչ հեռու է գտնվում Գյումրու Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին:

[220]Խաչքարը տեղադրվել է Աժ պատգամավոր Գագիկ Ծառուկյանի հովանավորությամբ:

[221]Атанесян Г., Судьба памятников Великой Отечественной войны в постсоветской Армении // Человек и культура, № 3, 2018, с. 5-6.

Գյումրիի Մայր Հայաստան հուշահամալիրի դեպի հուշարձան տանող ճանապարհի կենտրոնով, իրար հետևից շարված են հուշաքարեր, որոնց վրա ռուսերենով գրված են Հայրենական Պատերազմի հերոս քաղաքները: Նրանցից առաջինի՝ «Մոսկվա» հուշաքարի կողքին (նկ. 60) տեղադրված է Արցախյան պատերազմի Գյումրի քաղաքից առաջին զոհի հուշաքարը (այդտեղ է հանգչում նաև նրա աճյունը): Համայնքային իշխանությունները սկզբում նպատակ ունեին շարունակել զոհերի հուշարձանների տեղադրումը այդ տարածքում, սակայն հետագայում մյուս ազատամարտիկների համար արգելեցին այդտեղ հուշարձաններ տեղադրել:[222] Զոհված մյուս ազատամարտիկները թաղվեցին քաղաքային գերեզմանոցներում (իրենց ընտանեկան գերեզմանատեղիներում), իսկ նրանց հիշատակին նվիրված հուշարձանները տեղադրվեցին նաև իրենց բնակության թաղերում: Միասնական պանթեոն ստեղծվեց ավելի ուշ՝ Ծիրակ գերեզմանոցում՝ կապված 2016 թ. ապրիլյան պատերազմի զոհերի հետ:

Զոհերի հուղարկավորումը հուշարձանների տարածքում որաշակի տարածում գտած պրակտիկա էր, որը դրսևորվեց ինչպես Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի, այնպես էլ Սարդարապատի ճակատամարտի հուշահամալիրի տարածքներում: Արցախյան ազատամարտի շուրջ մեկ տասնյակ զոհեր 1990-ական թթ. առաջին կեսին հուղարկավորվեցին Սարդարապատի ճակատամարտի հուշահամալիրի տարածքում: Հուշահամալիրի առաջին արծվի անմիջական հարևանությամբ դեռևս 1970-ական թթ. հողին էր հանձնվել Սարդարապատի ճակատամարտի մասնակից Վաղարշակ Շահինյանի աճյունասափորը[223]:

Գորիսի Քոլատակ թաղամասում սկզբում տեղադրվել է 1988 թ. Սպիտակի երկրաշարժի զոհերին նվիրված կամարը, որի տարածքում հետագայում տեղադրվել է Քոլատակից՝ արցախյան շարժման կամավորների հիշատակին նվիրված հուշարձանը: Հետագայում այստեղ ավելացվել է նաև Մեծ Եղեռնի զոհերին նվիրված

[222]Ուշագրավ է, սակայն, որ Մայր Հայաստանի հուշահամալիրի տարածքում հայտնված հերոս քաղաք-ների անունները կրող քարերը տեղադրվել են անկախության շրջանում՝ ազատամարտիկի հուշաքարի կանգնեցումից ավելի ուշ:
[223]Մարության Հ., Հուշարձանը որպես գերեզմանոց (Ցեղասպանության հուշահամալիրի օրինակով), նշվ. աշխ., էջ 180:

հուշաքարը՝ ամբողջացնելով «նահատակների հուշարձանային պանթեոնը» (նկ. 61): Նմանատիպ մի կառույց է գտնվում նաև Եղեգնաձոր քաղաքում: Քաղաքի գլխավոր եկեղեցուց մի փոքր վերև գտնվում է ‹‹Եռաբլուրը››[224], որի մուտքի մոտ հուշաղբյուր է տեղադրված, որից վերև արցախյան պատերազմի ազատամարտիկների գերեզմաններն են: Ավելի բարձրադիր բլրի վրա Ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող խաչքար է կանգնեցված՝ իշխելով շրջակա տարածքի վրա (նկ. 62): Դեպի խաչքար տանող ճանապարհի սկզբում նաև անհայտ զինվորի հուշաքար է տեղադրված (անհայտ ազատամարտիկ): Սիսիան քաղաքի գլխավոր եկեղեցուն հարող տարածքում գտնվում է Արցախյան ազատամարտի զոհերի հուշահամալիրը (պանթեոն): Տարածքում տեղադրված են նաև Ցեղասպանության զոհերին և Կոմիտասին նվիրված հուշարձաններ (նկ. 63):

Զոհերին նվիրված հուշարձանների տարածքներում մեկ այլ զոհերի հիշատակին նվիրված հուշարձանների տեղադրումը հիմնականում կապված է հուշարձանների գերեզմանային ամուր ընկալումների հետ[225]: Նմանատիպ պատկերացումների ամրապնդմանն է նպաստում նաև այդ տարածքներում կամ նրանց մոտակայքում եկեղեցիների կամ մատուռների կառուցումը, որը տարածված գերեզմանային պրակտիկա է[226]: Դիլիջանի հուշարձանի օրինակով, եկեղեցու կառուցման նախագիծ է ընդունվել նաև Արարատի մարզի Վեդի քաղաքի Հայրենական պատերազմի հուշարձանի տարածքում, որտեղ Արցախյան պատերազմի և Ցեղասպանության զոհերի հիշատակն հավերժացնող արդեն կանգնեցված հուշարձանները ամբողջացնում են նմանատիպ պանթեոնների վերաբերյալ որոշակի գերեզմանային պատկերացումները[227]:

Հետխորհրդային տարիներին հուշարձանի տեղադրման տարածքները ընդլայն-վեցին՝ ընդգրկելով նաև բնակավայրերի երկրորդային փողոցները, բնակելի թաղամա-սերի բակերը,

[224]Այդպես են այդ տարածքը կոչում տեղացիները:
[225]Марутян А., Памятник жертвам геноцида в контексте ритуалов памяти армянского народа, ЭО. № 3, 2008, с. 122–123.
[226]Անդ, էջ 124:
[227]Атанесян Г., Судьба памятников Великой Отечественной войны в постсоветской Армении, նշվ. աշխ., էջ 5:

խաչմերուկները, որոնք խորհրդային ժամանակներում հուշարձանային տեսանկյունից հիմնականում նշանացված չէին: Նմանատիպ տարածքների կիրառումը հուշարձանների կանգնեցման հարցում հիմնականում կապված էր անհատների, խմբե-րի կողմից արցախյան ազատամարտի, աղետների զոհերի լոկալ հուշարձանների տե-ղադրմամբ: Տեղադրման տարածքները այդ զոհերի բնակության վայրերն են, թաղա-մասերը, փողոցը կամ բակը: Խորհրդային տարիներին հանրությունն ու խորհրդային քաղաքացին հանդես չէին գալիս որպես հուշարձանի տեղադրման նախաձեռնողներ, որի շնորհիվ էլ քաղաքների երկրորդական տարածքները մնում էին անարձան:

Գյումրիում և Սպիտակում ավերիչ երկրաշարժից հետո աղետի զոհերի հիշատակին հուշարձաններ հայտնվեցին քաղաքի բազմաթիվ բնակելի թաղամասերում, երկրորդային փողոցներում, շենքերի բակերում և հարակից տարածքներում: Այս տարածքներում հայտնվող կոթողներից են հանդիսանում նաև վաղաժամ մահացած-ների, թաղային հեղինակություններին նվիրված հուշաղբյուրները[228]:

Այսպիսով, աղետի և պատերազմի զոհերի, անհատների հիշատակներին՝ բնակավայրերի երկրորդային փողոցներում, թաղամասերի բակերում և առանձին թաղերում հուշարձանների կանգնեցման պրակտիկան նորություն է ու գրեթե բացառված մի բան խորհրդային քաղաքաշինության մեջ: Անկախության հաստատման հետագա տարիներին համայնքային իշխանությունների վարած հուշարձանային նոր քաղաքականությունը ձգտում է պահպանել քաղաքների տարածքների համատեքստային և նշանային անընդհատությունը, ստեղծել նորերը: Ժամանակ առ ժամանակ ձևակերպված նշանային կոնտինուումում ունեցող տարածքներ են սկսում ներխուժել նոր նշաններ, որոշ տարածքներում էլ նշանային նոր կոնտինուումի ստեղծող է հանդես գալիս հանրությունը: Հետխորհրդային Հայաստանում, բնակչության մեծ մասին և զբոսաշրջիկներին հասանելի լինելու միտումով սկսում

[228]Տե՛ս Մարգարյան Ն., Հանրային տարածքներում կանգնեցվող հուշաղբյուրների հարցի շուրջ: Ծիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված միջազգային VIII գիտաժողով, Գյումրի, 2010:

են կարևորվել նաև քաղաքների կենտրոնները՝ նոր տեղադրվող հուշարձանների մեծ մասը հիմնականում կենտրոնացնելով այդ տարածքներում: Քաղաքի կենտրոնը վերջին տարիներին սկսում է ձևակերպվել որպես հուշարձանի տեղադրման ամենապրեստիժային վայր:

3.3 Խորհրդային հուշարձանային տարածքները անկախ Հայաստանում

Խորհրդային տարիներից ժառանգություն մնացած շատ հուշարձաններ վերածվել են անկախ Հայաստանի արդի քաղաքների անբաժանելի մասնիկների և խնամվում ու բարեկարգվում են քաղաքային իշխանությունների, պետական և մասնավոր տարբեր կազմակերպությունների կողմից: Այդուհանդերձ, այս ամենը հիմնականում վերաբե-րում է քաղաքների կենտրոնական հատվածներում գտնվող փոքրաքանակ հուշարձան-ներին և նրանց տարածքներին: Բնակավայրերերի ծայրամասերում տեղակայված խորհրդային շատհուշարձաններ ներկայում գտնվում են անմխիթար վիճակում, քանզի յուրաքանչյուր հուշարձանի պահպանումը և խնամքն իրենից ենթադրում է ֆինան-սական մեծ ծախսեր: Այդ հուշարձանների մի մասը կամ կորցրել է իր համատեքստը, այլևս չի հանդիսանում հիշատակման սուբյեկտ կամ հիշատակման արարողություն-ների ժամանակ փոխարինվել է խորհրդային տարիներին տեղադրված նմանատիպ մեկ այլ հուշարձանով: Չնայած իրենց մոնումենտալության և հավերժության ձգտմանը, հուշարձանները հաճախ հանդիսանում են սերնդային նախագծերի արտահայտումներ: Սերնդի հեռանալով, նաև քաղաքական համատեքստի փոփոխմամբ՝ հուշարձանների հանդեպ հետաքրքրությունը թուլանում է կամ, ծայրահեղ դեպքում, ձևափոխության է ենթարկվում[229]: Հետխորհրդային Հայաստանի բնակավայրերում շարունակում են խոյանալ խորհրդային կարգերի համար զոհվածներին նվիրված հուշարձաններ, որոնց մեծ մասը

[229]Габович М., Советские военные памятники: биографические заметки, http://gabowitsch.net/wpcontent-/uploads/2014/05/Chto-delat-pamiatniki-FINAL-ru.pdf, 10.10.2017.

կորցրել է իր համատեքստը՝ երբեմն էլ ընդհանրապես մատնվելով մոռացության:

Հետխորհրդային Հայաստանի քաղաքների նշանային լանդշաֆտի մաս են շարունակում կազմել Հայրենական պատերազմին նվիրված հուշարձանները, որոնք կանգնեցված լինելով ՀՀ գրեթե բոլոր բնակավայրերում, շարունակում են գործել իրենց խորհրդային համատեքստում: Հետխորհրդային Հայաստանի գրեթե յուրաքանչյուր քաղաքային և գյուղական համայնք ունի Հայրենական (Երկրորդ Աշխարհամարտի) մեծ պատերազմի զոհերին նվիրված հուշարձան: Փոքր քաղաքները և գյուղերը հիմնականում ունենում են ընդամենը մեկ նմանատիպ հուշարձան, որը տարվա մեջ առավելագույնը մեկ անգամ՝ մայիսի 9-ին հանդիսանում է հիշատակային պաշտոնական արարողությունների սուբյեկտ: Ավելի մեծ քաղաքներում, որտեղ մի քանի տասնամյակների ընթացքում տեղադրվել են Հայրենական Մեծ Պատերազմում զոհվածներին նվիրված մեկից ավելի հուշարձաններ (հուշակոթողներ, հուշահամալիրներ, հուշաղբյուրներ), պաշտոնական արարողությունների ժամանակ հիշատակային պրակտիկայի սուբյեկտ են դառնում նմանատիպ հուշարձաններից մեկը կամ երկուսը: Մյուս հուշարձանները շարունակում են քաղաքների նշանային լանդշաֆտի մաս կազմել, սակայն ժամանակի ընթացքում բացի հիշատակային պրատիկաներից սկսում են դուրս մնալ նաև հուշարձանային հաղորդակցության ցանկացած պրակտիկաների թիրախ կոթողների շարքից: Չնայած, հանրային տարածքում այդ հուշարձանների ֆիզիկական ներկայությանը, այդ կոթողները դուրս են մնում քաղաքային հանրային նշանային դաշտից, տեղի բնակչության համար վերածվում են քաղաքային լանդշաֆտի մի բաղադրիչի[230]: Հայրենական պատերազմի զոհերին նվիրված մի շարք հուշարձաններ ավերվել են և մինչ օրս մնում են անմխիթար վիճակում, որը սակայն նախևառաջ կապված է այդ հուշարձանների վերականգման և բարեկարգման համար անհրաժեշտ մեծ գումարների հետ, որի հայթայթումը ՀՀ շատ համայնքերի սուղ բյուջեների պարագայում գրեթե անհնար է, իսկ այդ համայնքներում առկա

[230]Bellentani F., Panico M., The Meanings of Monuments and Memorials: Toward a Semiotic Approach, Punctum, 2(1): 28-46, 2016, p. 34.

բազմաթիվ կենսական նշանակության խնդիրների պարագայում, մեղմ ասած, արդարացված չէ: Օրինակ, Լոռվա մարզի Սպիտակ քաղաքի մուտքի մոտ, բլրի գագաթին կանգնեցված Հայրենական պատերազմի մոնումենտալ հուշահամալիրի տարածքը ավերվել է 1988 թ. ավերիչ երկրաշարժի հետևանքով: Արդյունքում, հուշահամալիրը լքվել է, իսկ նրա հիշատակային գործառույթներն ամբողջությամբ իր վրա է վերցրել քաղաքային այգում տեղադրված հայրենական պատերազմի զոհերի հիշատակին նվիրված մեկ այլ հուշարձան[231] (նկ. 64):

Նմանատիպ հուշարձանները երբեմն երկրորդ շնչառություն են ստանում. այդ արձանների կողքին հաճախ տեղադրում են Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշաքարեր կամ ավելի համեստ մի նոր հուշարձան: Այս պարագայում, մայիսյան եռատոնի ժամանակ, Արցախյան պատերազմի զոհերի հիշատակը հարգելու արարողությունների ժամանակ հիշատակային պրակտիկայի մաս է սկսում կազմել նաև Երկրորդ Աշխարհամարտի զոհերին նվիրված հուշարձանը: Վերջին երկու տասնամյակներին, յուրաքանչյուր տարի մայիսի 9-ին, ՀՀ քաղաքային իշխանությունները կազմակերպում են միջոցառումներ՝ նշելու 1945 թ. Հայրենական մեծ պատերազմում խորհրդային ժողովուրդների, այդ թվում՝ հայերի հաղթանակի տոնը, Շուշիի ազատագրման և Արցախի պաշտպանության բանակի ստեղծման տարեդարձը: Միջոցառումների ժամանակ քաղաքապետարան-ների աշխատակիցները, քաղաքների բնակիչները քաղաքային և մարզային իշխանությունների ղեկավարների գլխավորությամբ այցելում են Հայրենական մեծ պատերազմի զոհերի և Արցախյան պատերազմի զոհերին նվիրված հուշարձաններին, ծաղիկ դնում, ճառեր հնչեցնում: Վերջին տարիներին նոր պրակտիկաէ ձևավորվել, երբ քաղաքային և պետական իշխանությունների ներկայացուցիչներից զատ նմանատիպ միջոցառումներ են սկսել կազմակերպել նաև վարչական շրջանների ղեկավարները, զինվորական բարձրաստիճան ղեկավարները և նույնիսկ գործարարները, ովքեր իրենց աշխատակիցների հետ միասին՝ պաշտոնական միջոցառումներին զուգահեռ այցելում են մեկ այլ

[231] Աթանեսյան Գ., ԴԱՆ, Գորիս, 2017, հոկտեմբեր:

հուշարձանների տարածքներ և ծիսակարգային պրակտիկաներ կիրարկում՝ որոշ հուշարձանների դարձնելով հիշատակային նոր պրակտիկայի սուբյեկտ[232]: Երևան քաղաքի բոլոր վարչական շրջանների ղեկավարները միջոցառումներ են կազմակերպում իրենց վարչական շրջաններում՝ այցելելով տեղի հուշարձաններից մեկը՝ այն դարձնելով հետագա տարիների տոնակատարությունների անփոփոխ սուբյեկտ[233]: Արդյունքում, տեսնում ենք, որ Հայրենական պատերազմի վերաբերյալ հիշողությունը ձեռք է բերել ազգային բովանդակություն, և չնայած նրան, որ տոնակատարությունների ժամանակ դեռ պահպանվում է խորհրդային ատրիբուտիկան, Հաղթանակի օրը ներկայում հանդիսանում է առավելապես ազգային, քան խորհրդային տոն[234]:

Սյունիքի մարզի Գորիս քաղաքում ներկայումս կանգուն են Երկրորդ Աշխարհամարտի զոհերի հիշատակին նվիրված երեք հուշարձան, սակայն այս պահին հիշատակման պաշտոնական պրակտիկայի հիմնական և միակ սուբյեկտ է հանդիսանում Երկրորդ Աշխարհամարտում զոհվածներին նվիրված 1975 թ. կառուցված հուշարձանը (նկ. 65), որը գտնվում է քաղաքի հյուսիսային կողմում: Այս հուշարձանի սիմվոլիկ կարևորությունը մեծացավ, երբ Սյունիքի մարզպետը (այժմ արդեն նախկին մարզպետ՝ Ս. Խաչատրյանը) 2015 թ. սկսեց այդ հուշարձանի տարածքում կառուցել մի նոր մոնումենտալ հուշարձան՝ նվիրված Արցախյան ազատամարտում զոհվածներին (նկ. 66): Այս նոր հուշահամալիրը քաղաքային և մարզային իշխանությունների ջանքերով դարձել է եռատոնի միջոցառումների անցկացման գլխավոր և միակ վայրը: 2015 թ. մայիսի 9-ի միջոցառումները նշվեցին այս հուշահամալիրում այն դեպքում, երբ նոր հուշարձանը և նրա տարածքը դեռ կառուցման փուլում էին գտնվում: Հուշահամալիրը առաջիկա տարիներին որպես մայիսյան տոների հիշատակման գլխավոր վայր հռչակվեց

[232]Նման դեպքեր ենք գրանցել օրինակ Սյունքիք մարզի Կապան և Սիսիան քաղաքներում:

[233]Երևանի կենտրոն վարչական շրջանի աշխատակիցները՝ վարչական շրջանի ղեկավարի գլխավո-ությամբ ամեն տարի այցելում են Մարշալ Բաղրամյանի հուշարձանի տարածք և պսակ ու ծաղիկներ տեղադրում պատվանդանի մոտ:

[234]Марутян А., Как помнят Великую Отечественную в Армении: некоторые наблюдения, History Culture Society, Chisinau, no. 2, vol. 4, 2016, c. 102.

Գորիսի քաղաքապետի կողմից համապատասխան միջոցառման ընթացքում հնչեցված ելույթի ժամանակ[235]: Գորիսի Հայրենական Մեծ պատերազմի զոհերին նվիրված ամենավաղ (1943-1945 թթ.) հուշարձանը գտնվում է քաղաքի կենտրոնական հրապարակից ոչ հեռու: Տեղի բնակչությանն այն հայտնի է «յոթնաղբյուր» անվամբ՝ պայմանավորված մոնումենտալ այս կոթողի վրա առկա թվով՝ յոթ աղբյուրներով (նկ. 67): Ներկայումս այս հուշաղբյուրը նորակառույց քաղաքային այգու հատված է կազմում (այն փաստացի հանդիսանում է այգու ելքը): Հուշաղբյուրը շատսիրված է քաղաքի բնակիչների կողմից և մշտապես մարդաշատ է, սակայն հիմնականում հուշաղբյուրը կիրարկվում է որպես աղբյուր և զբոսաշրջիկների հետաքրքրության թիրախ (լուսանկարում են հուշարձանը), դուրս մնալով հիշատակային համատեքստից: Քաղաքի կենտրոնական հրապարակից քիչ հեռու է գտնվում Հայրենական Մեծ պատերազմում զոհվածներին նվիրված հուշաղբյուրը (1946թ.): Ի տարբերություն «յոթնաղբյուրի», այս հուշաղբյուրը ներկայումս անտեսված վիճակում է (նկ. 68): Բացի նրանից, որ հուշարձանի տարածքը բարեկարգ չէ, այն նաև չունի հոսող ջուր, այն դեպքում, երբ հուշաղբյուրի դիմացը՝ փողոցի մյուս ափին է գտնվում քաղաքի բնակիչներից մեկի հիշատակին նվիրված հուշաղբյուրը, որը կառուցվել է 2005 թ. և ունի մշտական ցայտող ջուր[236]: Նմանատիպ կառույցները վերածվում են հուզական և հաղորդակցության տեսանկյունից[237] սառը նշանների, որոնք երբեմն պարզապես վերածվում են աննշան տարածքների, որի մասին վկայող ամենագլխավոր ցուցիչը հենց աղբյուրում ջրի բացակայությունն է, ինչն այդ կառույցին զրկում է իր հիմնական իմաստային ցուցիչից:

Նմանատիպ մեկ այլ հուշաղբյուր գտնվում է Սյունիքի Սիսիան քաղաքի կենտրոնում: 1945 թ. կառուցված Երկրորդ Աշխարհամարտում զոհվածներին նվիրված այս հուշաղբյուրը ներկայումս գտնվում է սրճարանի տարածքի ծայրամասում (նկ. 69): Հուշաղբյուրը չունի

[235]Տե՛ս Գորիս մայիսի 9 տեսաֆիլմ, https://www.youtube.com/watch?v=vFrONddi0ms&t=7s, 11.09.2017:
[236]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Գորիս, 2017, օգոստոս:
[237]Զրկված ոչ միայն իր առաջնային համատեքստից, այլև հաղորդակցությունից ընդհանրապես. տե՛ս Bellentani F., Panico M., նշվ. աշխ., էջ 35:

հոսող ջուր և անհաղորդակից է քաղաքի բնակիչների առօրեական և հիշատակային պրակտիկաներին[238]: Այս հուշաղբյուրից քիչ հեռու, սրճարանի և հյու-ռանոցի տարածքների մեջտեղում է գտնվում Հայրենական Մեծ պատերազմում Սի-սիանի մարզից զոհված մարտիկներին նվիրված հուշարձանը (նկ. 70): Չնայած նրան, որ այս հուշարձանի տարածքի մեծ մասը գրավվել է սրճարանի և հյուրանոցի տարածքների կողմից՝ հուշարձանը մայիսյան տոների ժամանակ այցելուներ է ունենում (քաղաքային իշխանությունների ներկայացուցիչները, զինվորականները, քաղաքի բնակիչները) և տարին նվազագույնը մեկ անգամ հիշատակվում է իր առաջնային համատեքստում[239]: Սիսիան քաղաքի Հայրենական Մեծ պատերազմի զոհերին նվիրված գլխավոր հուշարձան՝ քաղաքային իշխանությունների կողմից դիտարկվում է 1975 թ. քաղաքի կենտրոնում կառուցված հուշարձանը: Սիսիանի կենտրոնական հրա-պարակում տոնական միջոցառումների ավարտից հետո՝ հավաքվածները երթով շարժ-վում են դեպի այդ հուշարձանը:

Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի մեծ քաղաքների հանրային տարածքներում շարունակում են խոյանալ խորհրդային մոնումենտալ հուշարձաններ՝ նվիրված այդ համայնքներից խորհրդային կարգերի հաստատման համար զոհված բնակիչների հիշատակին: Ներկայումս նման հուշարձաններ են տեղակայված Վայոց Ձորի մարզ-կենտրոն Եղեգնաձորում (1971 թ.), Սյունիքի մարզի Գորիս (1960 թ.), Սիսիան (1961 թ.) քաղաքներում: Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքում է կանգնեցված Մեծ Հոկտեմբերի 50-ամյակին նվիրված հուշարձանը: Եղեգնաձորի և Գորիսի հուշարձանները գտնվում են քաղաքային այգիների տարածքներում, չեն հիշատակվում իրենց առաջնային համատեքստում և զերծ են առօրեական հաղորդակցման պրակտիկաներից: Ջերմուկի հուշարձանը չնայած այն փաստին, որ գտնվում է քաղաքի հիմնական փողոցի բանուկ հատվածում և կոթողի կենտրոնում ունի գործող աղբյուր ու առօրեական հաղորդակցման անմիջական մաս է կազմում (հուշարձանի անմիջապես դիմաց կայանում են քաղաքի տաքսիները՝

[238]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Սիսիան, 2017, օգոստոս:
[239]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Սիսիան, 2017, օգոստոս:

փակելով հուշարձանը՝ փողոցի հակառակ մայթից դիտողի համար)՝ դուրս է իր խորհրդային համատեքստից[240]:

Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի հարավային մուտքը եզերող հրապարակում գտնվող՝ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման համար ընկած մարտիկներին նվիրված հուշարձանը (կառուցվել է 1961թ.), որը շատսիրված է տեղի բնակիչների կողմից և հայտնի է «աղջկա արձան[241]» անունով: Այս կոթողը ներկայում ընկալվում է իր պատմական համատեքստից դուրս և զերծ է մնում հանրային հիշատակային պրակտիկաներից: Նույն հրապարակի վրա՝ «աղջկա արձանի» հետևի մասում գտնվում է 1985թ. կառուցված, Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 40-ամյակին նվիրված հուշաղբյուրը (նկ. 71): Քաղաքի բնակիչների շրջանում վերջինս հայտնի է «40 աղբյուր» անվամբ, քանզի մոնումենտալ այս հուշարձանը պատկերում է երեք շարքով միմյանց կողք շարված աղբյուրներ: Չնայած նրան, որ «40 աղբյուր» հուշարձանը կառուցվել է «աղջկաարձանից» 24 տարի անց, շնորհիվ այն փաստի, որ երկու հուշարձաններն էլ գտնվում են նույն տարածքում և դիմացից դիտելիս հայտնվում են նույն հարթության վրա, քաղաքի բնակիչներից շատերի համար այս հուշարձանները համարվում են մեկ համալիրի մաս կազմող հուշարձաններ: Վերոհիշյալ մայիսյան տոների ժամանակ կազմակերպված երթի ուղին անցնում էր այս հուշարձանների տարածքով, և չնայած այն փաստին, որ «40 աղբյուր» հուշարձանը Հայրենական պատերազմի հիշատակման կոթող է՝ այն զերծ է մնում հիշատակային որևէ պրակտիկայից: Այս տարածքում գտնվող նշված երկու հուշարձաններն էլ, հանդիսանալով քաղաքի բնակիչների սիրելի հուշարձաններ, իրականում դուրս են հայտնվել իրենց խորհրդային համատեքստից և մեկնաբանվում են զուտ գեղագիտական տեսանկյունից՝ համարվելով որպես զուտ գեղեցիկ կոթողներ[242]: Մարդկանց վերաբերմունքը հուշարձանների հանդեպ փոփոխվում է, քանզի հաճախ փոփոխելի են սոցիալական և քաղաքական համատեքստերը[243], ժամանակին ակտիվ հիշատակման կամ

[240]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Ջերմուկ, 2017, օգոստոս:
[241]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Սիսիան, 2017, օգոստոս:
[242]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Սիսիան, 2017, օգոստոս:
[243]Kattago, Ashgate Research Companion to Memory Studies, Ashgate Publishing, Farnham, 2015, p. 185.

հաղորդակցման հուշարձանները կարող են վերածվել պասիվ հուշարձանների կամ նույնիսկ ընդհանրապես աննկատ մնան բնակիչների կողմից: Հետխորհրդային տարածքի շատ երկրներում կոմունիստական շատ հուշարձաններ վերածվել են հակագաղութացման դեմ պայքարի խորհրդանիշների և հակառուսական տրամադրությունների արտահայտման տարածքների[244]:

Այսպիսով, հետխորհրդային Հայաստանի քաղաքներում դեռ խորհրդային տարի-ներից կանգուն որոշ հուշարձաններ ներկայում ավերված են կամ գտնվում են անմխիթար վիճակում՝ վերականգնման համար ահռաջեշտ ֆինանսական մեծ ծախսերի պատճառով: Խորհրդային կարգերի հաստատմանը նվիրված հուշարձանները կորցրել են իրենց խորհրդային համատեքստը, իսկ Հայրենական պատերազմի զոհերին նվիրված որոշ հուշարձաններ դադարել են հանդիսանալ հիշատակման սուբյեկտ՝ հիշատակման արարողությունների ժամանակ փոխարինվելով նույն բնակավայրում տեղադրված նմանատիպ մեկ այլ հուշարձանով: Այնուհանդերձ, տեսնում ենք, որ այդ հուշարձաններից որոշները վերադառնում են իրենց նախկին համատեքստ՝ նույն տարածքում Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշարձանների կանգնեցման շնորհիվ:

3.4 Հուշարձանների տեղադրության տարածքներն ադդի հանրային քննարկումներում

Հետխորհրդային տարիներին քաղաքաշինական վերջին մոտեցումները ցույց են տալիս, որ ՀՀ համայնքային իշխանությունները, գործարարները գերադասում են քաղաքների կենտրոնների հանրային տարածքների մոդեռնացումը, բարեկարգումը, տարածքային ավելի ճիշտ կազմակերպման խնդիրը պերիֆերիայի (քաղաքի կենտրոնից դուրս տարածքների) ձևավորման և զարգացման խնդիրներից: Հանրային դիսկուրսում քաղաքի դեմք է համարվում կենտրոնը, բնակիչները նախընտրում են, որ իրենց

[244]Bellentani F., Panico M., նշվ. աշխ., էջ 35:

բնակավայրը գոնե գեղեցիկ հրապարակ, այգի կամ փողոցներ ունենա կենտրո-նում, որը կծառայի որպես ոչ միայն իրենց ժամանցի անցկացման վայր, այլև հյուրերին ներկայացնելու դիտարժան տարածք: Արդի Հայաստանում քաղաքի կենտրոնները համարվում են բնակավայրերի էլիտար, պրեստիժային հատվածները, որը հիմնակա-նում կապված է այն հանգամանքի հետ, որ ներկայում քաղաքների կենտրոնում տարածքների, բնակարանների և տների գները գրեթե երկու անգամ ավել են բնակավայրերի մյուս հատվածներից: Բացի այդ, քաղաքի կենտրոններում են տեղակայված նաև քաղաքային բնակավայրերի ժամանցային և առևտրական հիմնական հաստատությունները: Արդյունքում, հանրային դիսկուրսում քաղաքի կենտրոնը ձևակերպվում է որպես բնակավայրի ամենապրեստիժային վայրը: Այս դիրքից են մեկնաբանվում նաև հուշարձանների տեղադրման տարածքների ընտրությունը: Հանրա-յին քննարկումներում նոր հուշարձանների տեղադրումը քաղաքի կենտրոնական հատվածներում մեկնաբանվում է որպես քաղաքային իշխանությունների կողմից հիշատակման ենթակա նշանավոր անհատի կամ իրադարձության առավել կարևորում (Երևանում և Գյումրիում հիմնականում): Երևանում վերջին տարիներին արվեստի վաստակավոր գործիչ Վ. Փափազյանի արձանի տեղադրումը համանուն փողոցի վրա՝ հայտնի շատ դերասանների նախաձեռնության արդյունքն էր, որը ֆինանսավորվել էր ԱԺ պատգամավորներից մեկի կողմից և իրականացվել քաղաքային իշխանությունների կողմից: Հուշարձանի բացման արարողության ժամանակ հավաքված արվեստագետներից շատերը շնորհակալություն էին հայտնում իշխանությունների ներկայացուցիչներին՝ ոչ միայն հուշարձանի տեղադրման համար, այլև այդ հուշարձանը քաղաքի կենտրոնական հատվածներից մեկում տեղադրելու համար (չնայած այն փաստին, որ վաստակաշատ դերասանի անունով կոչված Փափազյան փողոցը գտնվում է ոչ թե Կենտրոն, այլ մեկ այլ՝ Արաբկիր վարչական համայնքում և հուշարձանի տեղադրման վայրից շատ հեռու): ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Վարդուհի Վարդերեսյանը շնորհակալություն հայտնեց կազմակերպիչներից «վարպետի

արձանը մայրաքաղաքի կենտրոնում տեղադրելու համար»[245]: Արդյունքում, հանրային քննարկումներում ձևավորվում է «քաղաքի կենտրոնում հուշարձան ունենալու արժանի» հերոս, մարդ արտահայտությունը, որը վերջին տարիներին հանդես է գալիս իբրև հուշարձանային դիսկուրսում ամենից հաճախ օգտագործվող մեկնաբանություններից մեկը:

Կենտրոն-ծայրամաս հարաբերության կարևորումը հուշարձանների տեղադրման հարցում տարածվում է նաև Երևան և մարզեր հարաբերությունների վրա: Ականավոր գործչի վաստակը հանրային դիսկուրսում կարևորված է համարվում, երբ նրա արձանը Հանրապետության մյուս վայրերից զատ տեղադրվում է նաև Երևանում: Օրինակ, վերջին տարիներին հանրային սուր քննարկումներ էին ընթանում Երևանում Գարեգին Նժդեհի արձանի տեղադրման շուրջ: Տարբեր խմբեր մատնանշում էին այն փաստը, որ Նժդեհի արձաններ կան կանգնեցված ՀՀ գրեթե բոլոր բնակավայրերում, բայց ոչ Երևանում, իսկ Նժդեհի անունը կրող հրապարակում շարունակվում էր տեղադրված լինել Սպանդարյանի արձան: Հանրային քննարկումներում հարցի մեղավոր էին համարվում գործող իշխանությունները, ովքեր իրենց հայտարարելով Նժդեհի գաղափարների հետևորդներ այսքան տարիներին ընթացքում չէին տեղադրել նրա արձանը[246]: Նժդեհի արձանն ի վերջո տեղադրվեց 2016թ.՝ իշխող կուսակցության նախաձեռնությամբ:

Հանրային քննարկումներում հուշարձանի տեղադրման տարածքի ընտրության պրեստիժային մեկնաբանությունները գերիշխող եղան Երևանում նույն՝ Գարեգին Նժդեհի արձանի տեղադրման ժամանակ: Նժդեհի հուշարձանը տեղադրվեց քաղաքի կենտրոնում, երբ Երևանի մեկ այլ հրապարակում (քաղաքի արվարձաններից մեկում), որը կոչվում է Նժդեհի անունով (հարակից մետրոն նույնպես անվանվել էր «Գարեգին Նժդեհ») խոյանում է բոլշևիկյան հեղափոխական գործիչ Սուրեն Սպանդարյանի արձանը: Եվ շատերը վաղուց ակնկալում էին, որ պատվանդանի վրա վերջինիս կփոխարինի հենց

[245]Տե՛ս Վահրամ Փափազյանի հուշարձանի բացումը – Armenia TV, https://www.youtube.com/watch?v=iJmPQBB1j3U, 10.10.2017.

[246]1992-1993 թթ. Նժդեհի արձան (կիսանդրի) է տեղադրվել Երևանի Քրիստափորի փողոցում, սակայն այդ արձանի մասին շատքչերը գիտեն, իսկ մյուսները նշում են, որ Նժդեհն արժանի է մեծ արձան ունենալ Երևանում:

Նժդեհը: Սակայն, քաղաքի կենտրոնական հրապարակի և ՀՀ Կառավարության շենքի հարևանությամբ կանգնեցված հուշարձանը (2016 թ.) նպատակ ուներ էլ ավելի ընդգծելու իշխող քաղաքական ուժի հզորությունը և ինքնավստահությունը, իսկ քաղաքի կենտրոնը մեկնաբանվում է կարևոր հուշարձաններ տեղադրելու ամենապրեստիժային վայր նաև քաղաքի բնակիչների կողմից[247]:

Հարցազրույցների և պաշտոնական ելույթների ժամանակ Երևանի քաղաքային իշխանությունները կարևորեցին Նժդեհի արձանի տեղադրության վայրի քաղաքի կենտրոնական հատվածում լինելու փաստը, քանզի այդպիսով հուշարձանը առավել հասանելի կլինի հնարավորինս շատ քաղաքացիների և զբոսաշրջիկների համար: Հիրավի, Երևանի բնակիչները հիմնականում հավանություն տվեցին Նժդեհի արձանի նոր տարածքի ընտրությանը և հանրային քննարկումներում Նժդեհը «արժանի համարվեց Երևանի կենտրոնում արձան ունենալու»: «Նժդեհը արժանի է Երևանում արձան ունենալ, եթե Նժդեհը չէ, ապա ո՞վ... ում արձանը ասես դրել են»,-նշեց մեր հարցվողը՝ հավելելով, որ. «հենց կենտրոնում պետք է դնեն, թող Ծենգավիթում էլ դնեն, բայց կենտրոնում պիտի գոնե մի հատ արձան լինի, արժանի ա»[248]: Նժդեհի արձանի տեղադրումից հետո համացանցում շատ օգտատերեր սկսեցին պահանջել Երևանում տեղադրել նաև Արամ Մանուկյանի արձանը՝ հատկապես քաղաքի կենտրոնում՝ համարելով, որ քաղաքական գործիչը «արժանի է դրան»[249]: Երևանի բնակիչներից մեկի կարծիքով. «հիմա պիտի Մանուկյանի արձանը դնեն, արժանի է, հենց կենտրոնում պիտի դնեն, որ ամեն հայ անցնելուց կանգնի, խաչակնքվի ու շարունակի իր ճանապարհը»[250]:

Քաղաքի կենտրոնի պրեստիժային դիսկուրսը վերջին տարիներին սկսեց ազդել թաղային հեղինակությունների հիշատակին նվիրված հուշաղբյուրների տեղադրության տարածքի ընտրության վրա: Վերջին տարիներին ականատես ենք լինում, որ այդ կարգի

[247]Տե՛ս Atanesyan G., The Newly Unveiled Monument as a Subject of Conflicting Discourses (Political, Public and Aesthetic Interpretations of G. Nzhdeh's Monument), նշվ. աշխ., էջ 25-28.
[248]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Երևան, ՀՀ, 2017, հունիս:
[249]Ա. Մանուկյանը նույնպես ունի կիսանդրի Երևանի կենտրոնում, սակայն դաշնակցական գործիչներն ու տարբեր խմբեր ցանկանում էին Երևանում ունենալ Մանուկյանի մոնումենտալ արձան, որն էլ և շուտով կտեղադրվի:
[250]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Երևան, ՀՀ, 2017, հունիս:

հուշաղբյուրները դուրս են եկել առանձին թաղերի բակերից և սկսել են հայտնվել քաղաքների կենտրոնական հատվածներում: Նմանատիպ պրակտիկայի ականատես ենք հատկապես Գյումրիում, որի Վարդանաց հրապարակում վերջին տարիներին հայտնվել են աղբյուրներ՝ Էդիկ, Ֆեդիկ, Սերգեյ անուններով, ինչպես նաև նմանատիպ աղբյուրներ են կանգնեցվել նաև քաղաքի այլ հրապարակներում[251]:

Այսպիսով, Խորհրդային Միության քաղաքաշինական մոդելում հուշարձանին հստակ տեղ և դեր էր հատկացված. լինելով տարածքի կազմակերպման հիմնասյուներից՝ հուշարձանը ամբողջացնում էր քաղաքների առանձին հատվածների նշանային անընդհատությունը: Վարչական շինություններով զբաղեցված տարածքի վրահսկում էին հեղափոխական և քաղաքական գործիչների արձանները, մշակութային շինությունների տարածքներն ամբողջացնում էին մշակութային գործիչների հուշարձանները, իսկ սոցիալիստական ապագան նշանավորող մյուս բազմաբնույթ կոթողները զարդարում էին բնակավայրերի հիմնական հրապարակները, այգիները և փողոցները: Իսկ, հեղափոխության առաջնորդի իսկ (շատ կարճ ժամանակահատվածում նաև Ստալինի) արձանները ամենուր էին՝ քաղաքների գլխավոր հրապարակներում, փողոցներում, այգիներում, մշակույթի պալատների ներսում և դրսում, կայարանների մոտ՝ հսկելով քաղաքների և նրա բնակիչների առօրյա գործունեությունը և կյանքը:

Հայաստանի անկախացումը, սկզբնական շրջանում անհատների կողմից ինքնակամ տարբեր հուշարձանների տեղադրումը, քաղաքաշինության փոխակերպումները, նոր տարածքների առաջացումը, հների վերաիմաստավորումը, քաղաքային տարածքների և նրանցում տեղադրվող հուշարձանների վերարժևորումը մեծ ազդեցություն ունեցան նոր հուշարձանների տեղադրման տարածքների ընտրության փոխակերպումների վրա: Նահատակների, աղետի և պատերազմի զոհերի հուշարձանները հայտնվեցին Հայրենական պատերազմի հուշարձանների տարածքներում: Զբոսաշրջության զարգացման հարցում հուշարձանի կարևորումը

[251]Տե՛ս Մարգարյան Ն., նշվ. աշխ., էջ 52:

նպաստեց քաղաքների կենտրոնական հատվածներում մեծ քանակությամբ հուշարձանների տեղադրմանը: Քաղաքների կենտրոնները արդի հայաստանյան հանրային դիսկուրսում ձևակերպվում են որպես հուշարձան տեղադրելու ամենապրեստիժային և հարգի տարածքներ:

ԳԼՈՒԽ 4-ՐԴ: ՀՈՒՇԱՐՁԱՆԸ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ

Հուշարձանները կանգնեցվում են բնակավայրերում՝ տարածության մեջ իմաստներ փոխանցելու նպատակով[252]: Այդ իմաստները կոդավորվում են տեղադրողների կողմից, որոնք փորձում են տարածության մեջ ամրագրել իրենց ցանկալի նարատիվ-ները: Սակայն, հուշարձանները միայն տեղադրելով հնարավոր չէ փոխանցել ցանկալի ուղերձը, այլ այն ապակոդավորելու համար հասցեատերը (հանրությունը) պետք է մտնի այդ կառույցների հետ

[252]Whelan Y., The construction and destruction of a colonial landscape: monuments to British monarchs in Dublin before and after independence. Journal of Historical Geography 28 (4): 508-533, 2002, p. 508.

որոշակի հաղորդակցության մեջ: Տեղադրվելուց ի վեր հուշարձանները դառնում են «հանրության սեփականություն»[253] և կարող են բազմաբնույթ մեկնաբանություններ ստանալ, ձևավորվել նրանց հետ հաղորդակցության որոշակի եղանակներ, իսկ իշխանական վերնախավը իր վարած քաղաքականությամբ փորձում է այդ մեկնաբանությունները և հուշարձանների հետ վարքի ձևերը վերահսկելի ու կառավարելի դարձնել: Այնուհանդերձ, այդ մեկնաբանությունները և հուշարձանների հետվարքի ձևերը կարող են կտրուկ փոխվել ժամանակի ընթացքում՝ սոցիալական հարաբերությունների, անցյալի իրադարձությունների վերաբերյալ կարծիքների փոփոխության հետմիասին:

Աշխատանքի այս գլխում կփորձենք ներկայացնել ԽՍՀՄ փլուզումից և Հայաստանի անկախացումից հետո քաղաքների հանրային վայրերում տեղադրված հուշարձանների հետ հաղորդակցության նոր պրակտիկաները, նրանց ձևավորման պատճառներն ու դրանց շուրջ ձևավորված հանրային քննարկումները:

4.1 Հուշարձանը և հաղորդակցության պատկերացումները խորհրդային տարիներին

Լենինյան «մոնումենտալ պրոպագանդայի» և խորհրդային իշխանությունների հուշարձանային հետագա քաղաքականության հիմնական նպատակը քաղաքների հանրային տարածքներում տեղադրվող հուշարձանների միջոցով խորհրդային քաղաքացուն կոմունիստական գաղափարախոսության արժեքների փոխանցումն ու ամրապնդումն էր, որի նպատակով այդ համատեքստում ստեղծված հուշարձանները տեղադրվում էին բնակավայրերի ամենամարդաշատ հատվածներում, ընտրվում էին այնպիսի հուշարձաններ և տեղադրման տարածքներ, որ այդ նշանները իշխեն շրջակա տարածքի վրա և անընդհատ հիշեցնեն քաղաքացիներին գերիշխող նարատիվ-ների մասին: Խորհրդային տարիներին տեղադրված հուշարձանների մեծ մասը իրենցից ներկայացնում են բարձր պատվանդանի վրա տեղադրված արձաններ, պատվանդանների վրա տեղադրված

[253]Hershkovits L., Tiananmen Square and the Politics of Place. Political Geography 12: 395-420, 1997, p. 397.

կիսանդրիներ, մոնումենտալ հուշահամալիրներ, հուշարձաններ, որոնք ձևավորում էին շրջակատարածքն այնպես, որ այդ կոթողները ստանում էին պաշտամունքային բնույթ: Խորհրդային հուշարձանը ենթադրում էր դիտողի կողմից փոխհարաբերության և մասնակցության բավականին սահմանափակ եղանակների հավաքածու. քաղաքացին կարող է լսել հուշարձանի բացման ժամանակ հնչած ելույթները, ծաղիկներ տեղադրել հուշարձանների մոտ հիշարժան օրերին, մասնակցել հատուկ միջոցառումների: Այս ամենը ստեղծում է հուշարձանային հաղորդակցման որոշակի մշակույթ կամ ծես, որը առավել կառավարելի է ադմինիստրատիվ ինստիտուտների կողմից և բնորոշ էր խորհրդային տոտալիտար համակարգին ու նրա վարած վերահսկողական քաղաքականությանը: Խորհրդային իշխանությունների կողմից պարբերաբար իրականացվող միջոցառումների, հուշարձանների հետ վարքի վերաբերողության շնորհիվ ձևավորվել էին հուշարձանների հետ հաղորդակցման պաշտոնական եղանակները, որոնք ամրապնդում են հանրային պրակտիկաների կայունությունը և կրում են «ֆունկցիոնալ» բնույթ[254]:

Պաշտոնական դիսկուրսում հստակ նկատվում էին հանրային տարածքում տե-ղադրված հուշարձանի հետ «ընդունված» համարվող հաղորդակցման պաշտոնական բնութագրվող պրակտիկաները, որոնց մշակույթի ձևավորման գործում մեծ դեր ունեին նաև խորհրդային իշխանությունների կողմից հանրային տարածքներում պարբերաբար անցկացվող միջացառումները: Խորհրդային տարիներին խորհրդանիշների տարա-ծումը, նրանց հանդեպ պաշտամունքային վերաբերմունքի ստեղծումը, «Մոնումենտալ պրոպագանդան», հուշարձանների մոտ անցկացվող միջոցառումները նպաստում էին «պատկերապաշտության» ձևավորմանը: Հեղափոխության առաջնորդների, կոմունիս-տական կուսակցության գործիչների արձանները, արվեստի ականավոր գործիչների հուշարձանները վերածվում էին երկրպագության առարկաների, որոնց հետ հաղոր-

[254]Հանրային կյանքի այն բնորոշ գծերը, որոնք ամրապնդում են կայունությունը՝ «Դևիանտության» տեսության դիրքերից ընդունված է համարել «ֆունկցիոնալ» և նախընտրելի են այն գծերից, որոնք վնասում են կայունությանը և բնութագրվում են որպես «դիսֆունկցիոնալ». Տես՛ Backer H.S., Outsiders: Studies in the Sociology of Deviance. N.Y.: The Free Press, 1963, p. 7:

դակցման եղանակներից էր դարձել նաև այդ արձանների պատվանդանները համբուրելը (հատկապես Լենինի և Ստալինի արձանները[255]), հետագայում նաև նրանց մոտ լուսանկարվելը: Ստալինի և Լենինի արձանների մոտ լուսանկարներ ենք գրանցել ինչպես ՀՀ տարբեր քաղաքների բնակիչների մոտ, այլնպես էլ համացանցում, որտեղ վերջերս բացված էջերից մեկում («HinYerevan.com») պարբերաբար տեղադրվում են հին Երևանին վերաբերող լուսանկարներ, որոնցից մի քանիսը՝ ուղարկված օգտատերերի կողմից, պատկերում էին մարզերից Երևան եկած բնակիչների, ովքեր անպայման նկարվում էին Լենինի և Ստալինի արձանների մոտ: ՀՀ քաղաքային լանդշաֆտներում տեղադրվող հուշարձանները պետք է դառնային երկրպագության սուբյեկտներ, սակայն այդ «պատկերապաշտությունն» ամրապնդվում էր ոչ միայն հանրային տոնածիսական միջոցառումներով, այլև պատժիչ գործողություններով. խորհրդային հուշարձանները համարվում էին սրբազան կառույցներ, որոնց հանդեպ վանդալիզմի ցանկացած արարք քրեորեն պատժելի էր, որի մասին գիտեին բոլորը: «Առաջնորդների պատկերներին ուղղված կամաթե ակամա «վնասակար» գործողությունները շատերի համար կարող էին ունենալ քաղաքական հետևանդումների, ազատության սահմանափակման կամ նույնիսկ կյանքի գին[256]»: Այս ամենը վերաբերում էր ոչ միայն խորհրդային հուշարձաններին, այլև առաջնորդներին պատկերող այլ իրերին[257]: Կուսակցության առաջնորդների արձանների վնասման վերաբերյալ զանազան պատմություններ կան, որոնցից մեկը շրջանառվում է և՛ որպես անեկդոտ, և՛ որպես իրական հիշողություն՝ ՀՀ մի շարք մարզերում: Ըստ այս պատմությունների՝ քաղաքի կամ գյուղի բնակիչներից մի քանիսը պատահաբար վնասում են Լենինի արձանի գլուխը և համայնքի պաշտոնյաներից այն վերականգնելու հորդոր են ստանում (մեկ օրվա ընթացքում)՝ զգուշացվելով, որ այլապես կենթարկվեն

[255]Lehmann M., The Local Reinvention of the Soviet Project Nation and Socialism in the Republic of Armenia after 1945 // “Representations of Changing Social Orders” (no. 640), Humboldt University Berlin, 2011, p. 481.

[256]Խառատյան Հ., Ծագոյան Գ., Մարության Հ., Աբրահամյան Լ., նշվ. աշխ., էջ 275:

[257]Օրինակ, «հետևում էին, որպեսզի զուգարանի թղթի տեղ չօգտագործվեն կոմկուսի առաջնորդների պատկերներով թերթերը կամ գրքից պոկած նման էջերը». տե՛ս նույն տեղում:

պատասխանատվության: Արդյունքում, շատքիչ ժամանակ ունենալով, արձանը վնասողները Լենինի արձանի մեկ այլ գլուխեն գողանում հարևան համայնքներից մեկում կանգնեցված արձանից և փոխարինում իրենց վնասածը: Սակայն ուշադիր չեն լինում, որ արդյունքում տվյալ արձանում հոկտեմբերյան հեղափոխության առաջնորդը ունենում է երկու գլխարկ՝ մեկը ձեռքին, մյուսը՝ գլխին: Հետաքրքիր է, որ այս պատմությունը պատմել են ինչպես Տավուշի, Սյունիքի, Շիրակի, այնպես էլ Արագածոտնի մարզերում, և ամենուր մեր հարցվողները վստահեցնում էին, որ իրենք առաջնային աղբյուրն են հանդիսանում:

Խորհրդային տարիներին հուշարձանի հանդեպ ձևավորվում էր պաշտամուն-քային վերաբերմունք, որին նպաստում էին ոչ միայն իշխանությունների կողմից պարբերաբար անցկացվող միջոցառումները, այլև այդ արձանների հորինվածքները, նրանց տեղադրության վայրի ընտրությունը, նրանց հետ հաղորդակցության «թույլատրելի» և «անթույլատրելի» ձևերի ամրապնդումը հանրային ընկալումներում:

4.2 Հուշարձանը և հաղորդակցության նոր պրակտիկաները հետխորհրդային Հայաստանում

Չնայած այն փաստին, որ քաղաքական վերնախավերը տեղադրում են հուշարձան-ներ՝ ցանկալի աշխարհայացքը տարածության և ժամանակի մեջ հավերժացնելու համար, հուշարձանների իմաստները մշտապես «փոփոխական են և հոսուն»[258]: Հուշարձանի առաջնային իմաստը իրականում գրված չէ քարի վրա ընդհանրապես, այն կարող է հետագայում ընդհանրապես այլ կերպ հիշվել կամ վերածվել անսպասելիորեն ամբողջովին հակառակ իմաստ կրող վայրի: Խորհրդային տարիներին տեղադրված հուշարձանները, քաղաքական համատեքստի փոփոխության պայմաններում կամ վերաիմաստավորվեցին կամ որոշ հեղափոխականների և հատկապես Վ. Լենինի արձանների նման անհետացան անկախ Հայաստանի քաղաքային լանդշաֆտից: Հեղափոխության առաջնորդների արձանների հեռացումը ճիշտ է,

[258]Hay I., Andrew H., Tutton M., Monuments, Memory and Marginalisation in Adelaide's Prince Henry Gardens. Geografiska Annaler 86 (B/3): 201-216, p. 204.

նորույթ չէր, քանզի 1950-ականներին խորհրդային քաղաքացին արդեն ականատես էր եղել Ի. Ստալինի և Լ. Բերիայի արձանների տեղահանությանը, սակայն, եթե վերջիններիս պարագայում տեղահանությունը իրականացվում էր քաղաքային և քաղաքական իշխանությունների կողմից և հանրությունը հիմնականում դիտորդի դերում էր (որոշ դեպքերում նաև Ստալինի արձանների հատվածները գաղտնի պահվում էին որպես մասունքներ[259]), ապա Լենինի արձանների տեղահանության դեպքում հանրությունը ակտիվ մասնակից էր և նախաձեռնող: Ի մասնավորի՝ Վ. Ի. Լենինի արձանների ապասրբազանացման գործընթացին ակտիվ մասնակցում էին ՀՀ տարբեր համայնքների բնակիչները՝ անձամբ պայթեցնելով, քանդելով դրանք: Լենինի արձաններ են պայթեցվել Կապան, Արմավիր քաղաքներում, Սիսիանում Լենինի արձանը գցվել է բարձրադիր պատվանդանից, շատ քաղաքներում էլ պարզապես արագ հեռացվել են իրենց պատվանդաններից, որպեսզի արձանները չդառնան տեղի բնակիչների հաշվեհարդարի զոհերը: Երևանում Լենինի արձանի տեղահանման ապամոնտաժումն անսպասելիորեն ավարտվեց նույն պահին ծնված յուրօրինակ արարողությամբ. «հրապարակում կանգնածներից մեկը տապալված առաջնորդի վրա սկսեց քարեր նետել: Երբ արձանը տեղափոխող քարշակը շարժվեց մարդկանցով լեցուն հրապարակով, այդ գործողության ականատեսները ցանկացան հետևել դրան, սակայն քարերի բացակայության պատճառով սկսեցին դանդաղ և հանդիսավոր հեռացող արձանի վրա նետել մանր մետաղադրամներ՝ մարդաշատ հրապարակում քարերի միակ փոխարինողը»[260]: Երևանում Ղ. Ղուկասյանի արձանի պայթեցումը, ռուս մշակութային գործիչների արձանների դեմ կարճաժամկետ պայքարը, Ս. Ծահումյանի և Ալ. Մյասնիկյանի արձանների դեմ ժամանակ առ ժամանակ իրականացվող վանդալիզմի դեպքերը, Ս. Սպանդարյանի արձանի ապամոնտաժման պահանջը նպաստել են հուշարձանների պաշտամունքայնության դիրքերի որոշակի թուլացմանը, նրանց փոխարինելիության պատկերացումների և

[259]Աշտարակ քաղաքում մեր բանասացները պատմեցին, որ Ստալինի արձանի տեղահանությունից հետո տեղի բնակիչները պահպանել էին արձանի հատվածները. Աթանեսյան Գ., ԴԱՆ, Աշտարակ, 2017, նոյեմբեր:
[260]Абрамян Л., նշվ. աշխ., էջ 32:

քաղաքային արձանների ապասրբազանացման միտումների հանդես գալուն:

Հետխորհրդային տարիներին բավականին տարածում ստացան հուշարձանների տարբեր բաղադրիչների (դետալների) գողությունը (բրոնզաձույլ արձանները կողոպտվում են բրոնզը որպես ջարդոն վաճառելու համար), նրանց ուղղակի վնասումը, արձանների վրա արվող գրառումները և վանդալիզմ որակվող այլ գործողությունները: Անկախ Հայաստանում վանդալիզմի զոհ են դարձել ՀՀ տարբեր համայնքներում տեղադրված բազմաթիվ հուշարձաններ: Դետալների գողացման փորձեր են եղել Սա-սունցի Դավիթ, Տորք Անգեղ, Բանվորի արձաններից (Երևան), Արձագանք հուշարձանից (Կոտայքի մարզ), Մայր Հայաստան համալիրի տարածքից (Գյումրի): Գրաֆիտային գրառումներ են կատարվել Ս. Սպանդարյանի, Հովհ. Թումանյանի արձաններին, Մայր Հայաստան (Գյումրի), Հայրենական պատերազմի (Գորիս, Իջևան) հուշարձանների վրա, ներկով է պատվել Հովհաննես Ծիրազի արձանը (Երևան): Հանրային տարածքում որպես «վանդալիզմ» մեկնաբանվող պրակտիկաները կարող ենք բաժանել երկու տիպի՝ «մտածված» և «չմտածված» վանդալիզմ: Վերջինս հիմնականում վերագրվում է հուշարձանների հետ քաղաքացիների հաղորդակցման կենցաղային և առօրեական պրակտիկաներին, որի ժամանակ հաշվի չի առնվում այդ հուշարձանների սիմվոլիկ-խորհրդանշական բաղադրիչը: Իսկ ահա մտածված վանդալիզմը հուշարձանների հետ որոշակի գործողությունների միջոցով իշխանություններին կամ սոցիալական որոշ խմբերին անհատների կամ հանրային խմբերի կողմից որոշակի ուղերձ ուղղելուն միտված ակտն է: Այս համատեքստում հետաքրքիր է Գորիսի համայնքում մի շարք հուշարձանների վնասման մեկնաբանությունները տեղացիների կողմից: 2015 թ. Գորիսում վնասվել է Գրիգոր Տաթևացու արձանի քիթը, ինչպես նաև հարևան գյուղերում տեղադրված մի քանի հուշարձանների տարբեր հատվածներ: Մեր բանասացը հայտնեց, որ տեղի բնակիչները այդ ամենը կապում են վերջին շրջանում հացի գների բարձրացման հետ՝ արձանների վնասումը մեկնաբանելով որպես բողոք և կոչ քաղաքային իշխանություններին: Իրականում

շատ դժվար էր պարզել, թե արդյոք արձանները այդ պատճառով էին վնասվել, թե ոչ, սակայն այն փաստը, որ տեղի բնակիչները այդպես էին մեկնաբանում վանդալիզմի այդ դեպքերը՝ խոսում են հանրային պատկերացումներում հուշարձանների վնասման միջոցով իշխանություններին ուղերձ ուղարկելու պրակտիկայի ձևակերպման մասին:

Քաղաքային արձանների «ապապաշտամունքայնացման» և նրանց հետհաղորդակցության նոր պրակտիկաների հայտնվելուն նպաստեց ԽՍՀՄ տոտալ վերահսկո-ղության, պատժիչ ապարատի վերացումը, բնակիչների ժամանցի կազմակերպման վերահսկողության թուլացումը, «պատկերապաշտության» վարարտադրմանն ուղղված քաղաքականության վերացումը: Սակայն սա չի նշանակում, որ հետխորհրդային Հայաստանում հուշարձանների նկատմամբ իրականացվող վանդալիզմը անպատիժ է մնում[261]: Պարզապես, ի տարբերություն խորհրդային տարիներին, երբ հուշարձանները մեծ մասամբ պաշտամունքի մակարդակի գաղափարականացված էին և նրանց վնասումը դիտվում էր անարգանք Կոմունիստական Կուսակցության հանդեպ ու կարող էր հանգեցնել բռնաճնշումների և մահվան, ապա հետխորհրդային Հայաստանում հու-շարձանների հանդեպ վանդալիզմը հիմնականում որակվում է որպես խուլիգանություն և կարող է հանգեցնել տուգանքի կամ կարճաժամկետազատազրկման:

Անկախության տարիներին հուշարձանների հետ հաղորդակցության նոր պրակտիկաների հանդես գալը կապված էր նաև քաղաքային իշխանությունների կողմից նոր տիպի հուշարձանների տեղադրմամբ կամ նոր տիպի հուշարձանների նախագծերի հաստատմամբ: Հետխորհրդային Հայաստանի քաղաքներում ժամանակ առ ժամանակ հայտնվում են նոր տիպի հուշարձաններ, որոնք տեղադրվում են բանուկ մայթերի վրա, մարդկանց շարժին ավելի մոտ: Նախկին մոնումենտալ պատվանդանների փոխարեն նոր արձանները դրվում են կամ ցածր

[261]ՀՀ քրեական օրենսգրքի 260-րդ հոդվածի համաձայն՝ շենքերը կամ այլ կառույցներն անպարկեշտ գրագրություններով կամ պատկերներով պղծելը, հասարակական տրանսպորտում կամ այլ հասարակական վայրերում գույքը վնասելը, եթե բացակայում են առավել ծանր հանցագործության հատկանիշները՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

պատվանդանների վրա կամ ընդհանրապես հայտնվում գետնին՝ դառնալով ավելի հասանելի և մատչելի հաղորդակցության համար: Արդյունքում շատմարդիկ սկսում են նստել այդ արձանների գիրկը, բարձրանալ նրանց կամ պատվանդանների վրա, ձեռք տալ նրանց տարբեր հատվածներին: Երևանում 2003 թ. տեղադրված խորհրդահայ կոմպոզիտոր Առնո Բաբաջանյանի արձանը (նկ. 72) հուշարձանային նոր հաղորդակցության վառ օրինակներից է: Տեղադրված լինելով Երևանի ամենաբանուկ հատվածում այն շարունակաբար դառնում է և՛ տեղի բնակիչների, և՛ զբոսաշրջիկների ժամանցի առարկան. մարդիկ բարձրանում են արձանի վրա, լուսանկարվում՝ մատների արանքում պահած լինելով կոմպոզիտորի քիթը, որը խորհրդանշական է, քանզի ժամանակակից և դինամիկ ոճով բնութագրվող այս ստեղծագործության մեջ հեղինակը կարծես յուրովի ընդգծել է կոմպոզիտորի քիթը[262], որը, իր հերթին, ժամանակի ընթացքում, պայմանավորված նաև վերը նշված հաղորդակցման պրակտիկաներով, փոխել է գույնը և ավելի է սկսել առանձնանալ հուշարձանի ընդհանուր ֆոնին: Վերջին տարիներին, մարդկանց հետ ինտենսիվ շփման պայմաններում գունափոխվել են նաև Երևանում տեղադրված «Տղամարդիկ» ֆիլմի հերոսների արձանների ձեռքերը, Դիլիջանում «Միմինո» ֆիլմի դերասաններին պատկերող արձանների ձեռքերը և դեմքերի տարբեր հատվածները (նկ. 73): Առնո Բաբաջանյանի արձանը նաև դարձել է մի նոր ծիսակարգի մաս. Մադրիդի «Ռեալ» ֆուտբոլային ակումբի հայաստանցի երկրպագուները եզրափակիչներում իրենց թիմի տարած հաղթանակից հետո այցելում են Բաբաջանյանի արձանին և ակումբի խորհրդանիշով շարֆը գցում արձանի ուսերին՝ նմանակելով ակումբի ֆուտբոլիստների ծիսակարգը, որը նրանք կատարում են Մադրիդում:

Քաղաքային արձանների հետ բնակչության ակտիվ հաղորդակցության պրակտիկաները հաշվի առնելով Երևանի քաղաքային իշխանությունները մի քանի տարի առաջ որոշեցին նոր տիպի հուշարձաններ տեղադրել քաղաքում՝ արդյունքում

[262]Որի համար արժանացել է ուժգին քննադատության և՛ մասնագետների, և՛ հանրության կողմից. տե՛ս Երևանցիները չեն ընկալել Առնո Բաբաջանյանի արձանի ոճը, https://www.azatutyun.am/a/1570161.html, 16.03.2017:

նպաստելով նաև հուշարձանային հաղորդակցության նոր՝ նախկին պաշտոնականից տարբերվող պրակտիկաների ձևավորմանը: Երևան քաղաքի մի շարք հանրային տարածքներում գտնվող հանրային նստարաններին «Մեր հանճարները մեր կողքին են» նախագծով 2012 թվականից մայրաքաղաքում տեղադրվեցին հայ մշակութային հայտնի գործիչներից մի քանիսի կավե (կավի և մի քանի այլ նյութերի «ամուր» խառնուրդից[263]) արձանները, որոնք իրենց տեղադրությամբ և ստեղծագործության ձևով մասնակցային էին դարձնում այդ հուշարձանների հետ շփումը: Բացի լուսանկարվելուց, քաղաքացիները կարող էին ձեռք տալ արձաններին և այլ գործողություններ կատարել նրանց հետ: Այս ծրագիրը լուրջ քայլ էր քաղաքային իշխանությունների կողմից՝ ստեղծել հուշարձանների հետ շփման նոր մշակույթ, որը կլիներ հանրային վարքի՝ վերևից առաջարկված մոդել: Սակայն, այս ծրագիրը ձախողվեց. որոշ ժամանակ անց, այդ հուշարձանները սկսեցին կորցնել իրենց որոշ դետալներ, որոնք կոտրվում էին քաղաքացիների կողմից՝ հետագայում կրկին վերակագնվելով դրանց համար պատասխանատու մարմինների կողմից (նկ. 74): Հանրային դիսկուրսում «վանդալիզմ» են բնութագրվել այդ շարքից՝ Միեր Մկրտչյանի, Ավետիք Իսահակյանի, Եղիշե Չարենցի, Հրանտ Մաթևոսյանի կավե արձանների վնասման գործողությունները: Նշված դեպքերից հետո հանրային լուրջ քննարկումներ սկսվեցին և նույնիսկ առաջարկներ եղան հանելու այդ արձանները՝ «սրբապղծության» հետագա ակտերից խուսափելու համար[264]: Չնայած, հուշարձանների հետ հաղորդակցության նոր, առավել անմիջական եղանակների տարածմանը, նկատելի էր, որ քաղաքի բնակիչները դեռ պատրաստ չէին մշակույթի այդ գործիչներին տեսնել «պատվանդաններից իջած»՝ շարքային քաղաքացիների կողքին: Այդուհանդերձ, կավե արձանների ծրագրի ձախողումը հիմնականում կապվեց նրանց պատրաստման նյութի հետ: Եվ, այսօր էլ տեսնում ենք, որ Երևանում դեռ շարունակում են

[263]Մեր հանճարները մեր կողքին են... ժամանակավոր, http://www.panarmenian.net/arm/news/126436/, 16.03.2016:
[264]Մաթևոսյանի արձանը կրկին կոտրած. ի պաշտպանություն հանճարների, http://www.jnews.am/broken-statues-in-yerevan?page=8&quicktabs_1=2, 17.06.2016:

հայտնվել ցածր պատվանդանով կամ ընդհանրապես առանց պատվանդան, հիշատակվողների իրական հասակի արձաններ: Դեռ ավելին, նոր որոշման համաձայն, առաջիկա տարիներին հայ նշանավոր անհատների իրական հասակի արձաններ կհայտնվեն նաև Գյումրի քաղաքի Աբովյան պուրակում, որոնք սակայն կլինեն բրոնզից:

Քաղաքացիների կողմից անմիջական շփման թիրախ են դառնում հետխոր-հըրդային տարիներին տեղադրվող գրեթե բոլոր արձանները, հիմնականում նրանք, որոնք մատչելի են հաղորդակցության տեսանկյունից և գտնվում են բավականին բանուկ հատվածներում: Հայաստանի և արտասահմանի զբոսաշրջիկների և տեղի բնակիչների ակտիվ շփման առարկա են հանդիսանում 1990-ականների սկզբին Ջերմուկ քաղաքային զբոսայգում տեղադրված հայդուկների արձանները, որոնք իրենցից ներկայացնում են հերոսների մոնումենտալ գլուխները. մարդիկ ձեռք են տալիս այդ արձաններին, հենվում նրանց վրա (երեխաները նույնիսկ բարձրանում նրանց վրա) և լուսանկարվում այդ կոթողների հետ: Կապանի պուրակներից մեկում, 1991 թ. տեղադրված արցախուհու արձանը դարձել է այդ տարածքում իրենց ազատ ժամանակը անցկացնող տաքսու վարորդների առօրյայի անբաժան մասնիկը: Ուղևոր հայտնվելուն պես, վարորդները պահում են խաղաքարտերը ողջ հասակով պատկերված կնոջ արձանի թևատակում տեղադրելով[265] (նկ. 75): Գորիսում, քաղաքի կենտրոնում երեկոյան իրենց ժամանց անցկացնող երիտասարդները Գրիգոր Տաթևացու մոնումենտալ արձանի պատվանդանը կիրառում են որպես սեղան՝ գարեջրի շշերի համար:

Քաղաքացիների անմիջական հաղորդակցության թիրախ են դառնում նաև խորհըրդային տարիներին տեղադրված բարձր պատվանդան ունեցող, հաղորդակցության համար ոչ այդքան մատչելի արձանները: Երևանի Ազատության հրապարակում դեռ խորհրդային տարիներին տեղադրված Հովհ. Թումանյանի և Ալ. Սպենդարյանի արձանների պատվանդանները նստարանների են վերածվել իրենց ժամանցը այդ հրապարակում անցկացնող մարդկանց

[265]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Կապան, 2017, օգոստոս:

համար: Տարեց մարդկանց հանգստի և կիզիչ արևից պատսպարվելու վայրի է վերածվել նաև Սիսիանում խորհրդային կարգերի հաստատման առթիվ պատրաստված՝ զոհվածների մոնումենտալ արձանի պատվանդանը[266]: Երեխաները բարձրանում և խաղում են Վարդան Մամիկոնյանի արձանի պատվանդանին (Երևան), իսկ վերջերս մի խումբ երիտասարդներ բարձրացել էին Մարտիրոս Սարյանի արձանի գիրկը՝ լուսանկարվելու: Ուշագրավ է, որ ի տարբերություն 5-6 տարի առաջ հանդիպող արձագանքների, ներկայում նման նկարներին սոցցանցերում ավելի հանդուրժողաբար են վերաբերվում: Կարծես թե հուշարձանների պաշտամունքային ընկալումը գնալով տեղի է տալիս և դրանք դառնում են առօրյա կյանքի մասնակիցներ, մեր ժամանակակիցները:

Քննվող թեմայի համատեքստում ուշագրավ է Երևանի կենտրոնում հուշարձանային հաղորդակցության մի նոր մոդել առաջարկող քանդակի՝ «Ընթերցողի հուշարձանի» հայտնվելը, որը 2013 թ. տեղադրվեց Երևանի Խնկո Ապոր գրադարանի դիմաց[267]: «Ընթերցողի հուշարձանը» (նկ. 76) Երևանի առաջին ինտերակտիվ հուշար-ձանն է, որն ունի շարժական ինտերնետի սարք, և շրջակայքում գտնվող ցանկացած մարդ կարող է միանալ «karda.am» կայքին, որտեղ կա մոտ մեկ միլիոն անվճար գիրք (յուրաքանչյուրոք դրանցից յուրաքանչյուրը կարող է ներբեռնել՝ գտնվելով արձանի շրջակայքում): Քանդակագործը քաղաքային իշխանությունների թույտվությամբ նպաստել է հանրային վարքի և հուշարձանների հետ հաղորդակցման մի նոր մոդելի ստեղծմանը: Այս քանդակը նաև հանրային տարածքում նոր՝ մյուսներից տարբերվող, հուշարձանի հանդես գալու առաջին փորձերից էր, որին անդրադառնալով արձանի քանդակագործը նշում է. «Արձանը դրվում է սովորաբար այն մարդկանց կամ երևույթ-ների համար, որոնք մեծ դեր են ունեցել պատմության մեջ: Որպես կանոն տեղադրվում է, երբ նրանք այլևս չկան կամ էլ այնքան եզակի են, որ դրվում է նրանց կենդանության օրոք: Իսկ ընթերցողի հուշարձանը նվիրված է

[266]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Սիսիան, 2017, օգոստոս:

[267]Արձանի հեղինակը դիզայներ, նկարիչ, քանդակագործ Նուռն է, ով իր նոր գաղափարը ի կատար ածելու նպատակով դիմել է քաղաքային իշխանություններին, և արդյունքում նրա նախագիծ է հաստատվել է և նոր տիպի այս հուշարձանը տեղադրվել է Երևանում:

նրանց, ովքեր ոչ եզակի են և ոչ էլ վերացել են: Յուրաքանչյուր մարդ կարող է գալ, նստել արձանի վրա և լուսանկարվել՝ այդպիսով դառնալով դրա ընթերցող-հերոսը»: Քանդակագործը հանրային վայրում հայտնված իր քանդակը համարում է նաև ժամանակակից հուշարձանային քաղաքականության կարևոր քայլերից, քանզի գտնում է, որ.-«կան մարդիկ՝ հատկապես ավագ սերնդից, ում համար արձանը պետք է լինի միայն և միայն մարդ, և, ցավոք, այսօր որոշողները նրանք են»[268]: Եվ, իրոք «Ընթերցողի հուշարձանի» տեղադրումից հետո հանրային դիսկուրսում այն այդպես էլ չձևակերպվեց որպես հուշարձան, քանզի չի պատկերում պատմական կարևորություն ունեցող ոչ մի անհատի կամ իրադարձություն:

Հանրային տարածքում քաղաքացիները սկսում են ճանապարհներ և նոր եղա-նակներ գտնել հուշարձանների հետ անմիջական շփման մեջ մտնելու համար: Լուսանկարվելը համարվում է հուշարձանների հետ հաղորդակցման ոչ ֆորմալ եղանակներից ամենաշատ տարածված պրակտիկան, որն իրագործելու համար քաղաքացիները ոչ միայն մուտք են գործում չթույլատրվող կամ տարածքի կազմակերպման տեսանկյունից անհարմարավետ գոտիներ (խոտածածկ գոտիներ, հողածածկ տարածքներ և այլն), այլև սկսում են իրենք ձևավորել հանրային տարածքը՝ ճանապարհներ գտնելով կամ ստեղծելով դեպի հուշարձանը:

Հուշարձանի հետ հաղորդակցման նոր՝ ամենատարածված պրակտիկան անկասկած հուշարձանը լուսանկարելը և նրա ֆոնին լուսանկարվելն է, սոցիալական ցանցերում այդ լուսանկարների հրատարակումը, ինչպես նաև համացանցում հուշարձանի վերաբերյալ անձնական վերաբերմունքի արտահայտումը: Ի տարբերություն խորհրդային և անկախության առաջին տարիներին, երբ հուշարձանների վերաբերյալ տեղեկատվությունը բնակիչները ստանում էին կամ այդ կառույցները անձամբ տեսնելով, նրանց շուրջ իրականացվող միջոցառումներին մասնակցելով, կամ ԶԼՄ-ների միջոցով, ապա ներկայումս յուրաքանչյուր քաղաքացի կարող է դառնալ հուշարձանի շուրջ քննարկում նախաձեռնող: Սոցցանցերում տարբեր օգտատերերի կողմից հուշար-ձանների

[268]Հուշերի արձանագրում, http://imyerevan.com/hy/society/view/8649, 17.03.2015:

վերաբերյալ հայտնվող նկարները, նրանց վերաբերյալ գրառումները կարող են նպաստել հուշարձանի հանրային պատկերացումների վրա, վերարտադրել կամ ստեղծել հուշարձանների հետ հաղորդակցության պրակտիկաներ և այլն: Օրինակ, գրանցել ենք դեպքեր, երբ օգտատերերից մեկի կողմից ներբեռնված նկարը, որտեղ մի կին նստած է Վ. Սարգսյանի արձանի գիրկը (ԼՂՀ Ծուշի քաղաքում) առաջացրել է բուռն քննարկումներ և դատապարտվել մյուս օգտատերերի կողմից՝ մեկնաբանվելով որպես անարգանք զորավարի հասցեին: Միևնույն ժամանակ, մեկ այլ օգտատիրոջ կողմից նմանատիպ գործողությունը դրական և նույնիսկ զավեշտալի էր մեկնաբանվել (այս դեպքում տղամարդը նստել էր կին պատկերող աբստրակտ մի քանդակի գիրկը): Գրանցել ենք նաև դեպքեր, երբ Հայաստանի քաղաքացիների կողմից ՀՀ տարբեր քա-ղաքներում գտնվող վնասված հուշարձանների նկարների՝ սոցցանցերում տեղադրելը և դրանց շուրջ առաջացած քննարկումները նպաստել են պատկան իշխանական հաս-տատությունների կողմից այդ խնդիրների լուծմանը:

Հուշարձանային հաղորդակցության մասին է վկայում նաև հաղորդակցության բացակայությունը, երբ որևէ հուշարձան ժամանակի ընթացքում կարող է դառնալ աննկատելի և անտեսանելի[269]: Հուշարձանը ժամանակի ընթացքում կարող է կորցնել իր կարևորությունը, նախկին համատեքստը և մոռացության մատնվել: Քաղաքային շատ հուշարձաններ տեղադրված լինելով բնակավայրերի ամենաբանուկ հատվածներում աննկատելի են դառնում տեղի բնակիչների կողմից, քանզի ժամանակի ընթացքում դառնում են քաղաքի յուրաքանչյուր այլ շինության նման մի նշան, որը նրանք հանդիպում են իրենց ամենօրյա ճանապարհին: Վայոց Ձորի մարզկենտրոն Եղեգնաձորում՝ կենտրոնական այգու դիմաց, միջնադարյան ճարտարապետ և քանդակագործ Մոմիկի հուշարձանը անտեսված էր տեղի բնակիչների կողմից: Ամեն օր այդ վայրից տրանսպորտով աշխատանքի շտապող քաղաքացիները ոչ միայն չգիտեին, թե ում է պատկերում այդ արձանը, այլև ոմանք նույնիսկ

[269]Kattago S., Ashgate Research Companion to Memory Studies, Ashgate Publishing, Farnham, 2015, p. 185.

զարմացան այդտեղ տեսնելով այն: Երևանի Շենգավիթ համայնքի հրապարակում (որը կրում է Գ. Նժդեհի անունը) հեղափոխական գործիչ Ս. Սպանդարյանի արձանը այնքան է անհաղորդ մնացել, որ ներկայում տեղի բնակիչները, չնայած նրան, որ ամեն օր անցնում են այդ տարածքով, գիտեն, թե այդ արձանը պատկերում է Գարեգին Նժդեհին: Արտաշատի երկաթգծի կայարանում և նրա շրջակայքում բնակվող և աշխատող քաղաքացիները չգիտեին, թե ում է պատկերում Անաստաս Միկոյանի արձանը, չնայած այն այդ վայրում կանգնած է ոչ առաջին տասնամյակը: Երևանի համայնքներից մեկի այգիներից մեկում տեղադրված հայ միջնադարյան փիլիսոփա Դ. Անհաղթի արձանից տեղյակ չէին ամեն օր արձանի մոտ գտնվող կանգառից աշխատանքի գնացող քաղաքացիները:

4.3 Հուշարձանային հաղորդակցության նոր պրակտիկաները հանրային քննարկումներում

Վերջին տարիներին համացանցի և սոցիալական ցանցերի լայն տարածման և ՀՀ քաղաքացիների վիրտուալ տիրույթում գրանցած ակտիվության պայմաններում, սոց-ցանցերում հանրային լայն քննարկումների առարկա են դառնում նաև ՀՀ բնակա-վայրերի բազմաթիվ արձաններ և նրանց հետ կապված իրադարձությունները: Հուշար-ձանային հաղորդակցության նոր պրակտիկաներից ԶԼՄ-ների ներկայացման ամենա-տարածված տեղեկատվությունը կապված է լինում հիմնականում հուշարձանների նկատմամբ վանդալիզմի դեպքերի հետ: ԶԼՄ-երը, նաև առցանց լրատվականները հուշարձանների վնասման, նրանց վրա գրառումներ կատարելու բոլոր դեպքերը մեկնաբանում և ներկայացնում են որպես «վանդալիզմ»: Վերջին տարիներին վնասված հուշարձանների շուրջ քննարկումներում (հատկապես հայ նշանավոր գործիչների կավե արձանների վնասման դեպքերը) սոցցանցերի օգտատերերը դատապարտեցին հուշարձանների հետանմիջական հաղորդակցության բոլոր եղանակները, հուշարձանների հետ անմիջական շփումը, և հատկապես նրանց վնասումը մեկնաբանելով որպես մեր մեծերի հանդեպ անարգանք, սրբապղծություն, բարբարոսություն: Հնչեցվեցին նույնիսկ կոչեր այդ ամենը իրականացնողներին

մահապատժի ենթարկելու մասին (ինչպես, որ հիմնականում սպասվում էր խորհրդային առաջնորդների արձանները վնասած մարդկանց խորհրդային տարիներին): Նմանատիպ դեպքերից հետո հանրային քննարկումների առարկաէին դառնում նաև քաղաքներում տեղադրված (հատկապես Երևանում) հուշարձանների հետ հաղորդակցության սահմանափակման հարցը, ինչպես նաև հուշարձանների հորինվածքային նոր լուծումները, որոնք նպաստում են հաղորդակցության այդ պրակտիկաների տարածմանը: Սոցցանցերի շատ օգտատերեր հուշարձանների նկատմամբ վանդալիզմը կանխարգելելու համար առաջարկեցին քաղաքային իշխանություններին Երևանի հուշարձանների մոտ տեսախցիկներ տեղադրել և անդադար հսկել այդ տարածքները՝ արգելելով հուշարձանների հետ անմիջական շփումը: Մեր հարցվողներից մեկը նույնիսկ առաջարկեց նաև, որ «ոստիկաններ է պետք կանգնեցնել ամեն արձանի մոտ»[270]: Հայտնի քանդակագործ Լ. Թոքմաջյանն անդրադառնալով արձանների վնասման վերջին տարիների ակտիվ պրակտիկաներին՝ մատնանշել է, որ. «պետք է ամեն արձանի, քանդակի մոտ տեսախցիկներ դնեն, որ ֆիքսի, միակ բանը դա է, որ տեսախցիկ լինի, կնկարի, եւ պարզ կլինի, թե ովքեր են՝ ջահել են, մեծ են... երեւի միակ փրկությունը դա է, ամբողջ քաղաքում տեսախցիկներ են դրել, թող արձանների մոտ էլ դնեն, ուրիշ ճար չկա»[271]: Այս քննարկումները հետաքրքիր էին այն տեսանկյունից, որ նմանակում էին Երևանի Կասկադ համալիրի տարածքում տեղադրված քանդակների վերահսկման մեխանիզմը, որը ներդրվել է մասնավոր այդ տարածքը ղեկավարող հիմնադրամի կողմից: Կասկադի քանդակները հսկվում են անվտանգության տեսախցիկների և աշխատակիցների կողմից, անցորդներին չի թույլատրվում դիպչել այդ քանդակներին՝ միայն դիտել, լուսանկարել և լուսանկարվել նրանց հետ: Փաստացի, հուշարձանների հետ կապված վանդալիզմի դեպքերից հետո հանրային քննարկումներում առաջարկվեցին ամբողջական վերահսկողության ենթարկել հուշարձանների տարածքները և արգելել նրանց հետ անմիջական հաղորդակցությունը, որը

[270]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Երևան, ՀՀ, 2016, ապրիլ:
[271]Թող արձանների մոտ էլ տեսախցիկներ դնեն, ուրիշ ճար չկա, https://www.hraparak.am/posts /591fa8f2e3d84d0d37fd1883, 17.03.2016:

կիրառվում է Կասկադի քանդակների մասնավոր պարտեզում: Այս մոտեցման կողմնակիցները նաև քննադատում են հետխորհրդային Հայաստանում հուշարձանների նոր, հաղորդակցության համար առավել մատչելի հորինվածքների կիրառումը: Երևանի բնակիչներից մեկի պնդմամբ. «բարձր պատվանդանները ավելի գեղեցիկ և խորհրդավոր տեսք են հաղորդում հուշարձաններին, նաև մարդիկ ձեռք չեն տա, չեն փչացնի դրանք»[272]:

Այդուհանդերձ, նմանատիպ մեկնաբանությունները հիմնականում կապված էին վանդալիզմի դեպքերի հետ և հանդիսանում են հուշարձանային հաղորդակցության նոր պրակտիկաների մեկնաբանման տեսանկյուններից մեկը միայն: Սոցցանցերի շատ օգտատերեր կողմ են ցածր կամ առանց պատվանդանի հուշարձանների հայտնվելուն՝ հիմնավորելով, որ հուշարձանները դրվում են հանրության համար և մարդիկ իրավունք ունեն շփվել այդ կառույցների հետ: Այս տեսանկյունից քննադատվեց Երևանի Ֆրանսիայի հրապարակում Ռոդենի արձանի տեղադրումը. արձանը գտնվելով հրապարակի հենց կենտրոնում սահմանազատված է անցորդներից մեքենաների երթևեկությամբ՝ մնալով անհաղորդ: Սակայն շատ քաղաքացիների այդ արձանի թերություն որակեցին նաև նրա ցածր պատվանդանը և արձանի փոքրությունը. «այս արձանը կանգնեցնելը անիմաստ է, որովհետև փոքր պատվանդանի վրա է կանգնեցված և չի երևում, ուշադրություն չի գրավում[273]»,-նշեց Երևանի բնակիչներից մեկը:

Հուշարձանների հաղորդակցման համար մատչելիության կարևորությունը շրջանառվում է նաև քաղաքային իշխանությունների կողմից՝ դառնալով այս կամ այն արձանի տարածքի կամ հորինվածքի ընտրության հիմնական հիմնավորում: Նման իրավիճակ ստեղծվեց Գարեգին Նժդեհի արձանը Երևանի կենտրոնում տեղադրելուց հետո, երբ հարցազրույցներից մեկում՝ պատասխանելով հարցին, թե ինչու արձանը չի տեղադրվել Գարեգին Նժդեհի հրապարակում, Երևանի առաջին փոխքաղաքապետ Կ. Արեյանն ասել է. «ավելի անհաջող տեղ դժվար է գտնել՝ մարդկանցից հեռու, նրանց հետ կենդանի կապից հեռու: Իսկ վայրը, որտեղ հիմա

[272]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Երևան, 2016, մայիս:
[273]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Երևան, 2016, մայիս:

տեղադրված է արձանը, առավել քան հարմար է, կարելի է զգալ նրա վեհության շունչը[274]»: Արեյանը նաև հավելեց, որ Սպանդարյանի արձանը, որը ներկայում հենց Նժդեհի հրապարակում է տեղադրված, անհաջող դիրքի պատճառով անհաղորդ է մնում և մարդիկ չեն կարողանում մոտենալ արձանին: Նժդեհի նոր արձանի միայն տեղադրության վայրը չէր, որ դարձավ հանրային սուր քննարկումների առարկա: Առավել լուրջ քննարկումներ եղան կապված արձանի հորինվածքային լուծումների հետ, երբ այն նմանեցվեց խորհրդային իշխանությունների կողմից տեղադրվող մոնումենտալ արձաններին՝ ՀՀԿ-ի կողմից նմանատիպ արձանի տեղադրումը կապելով ակնհայտ գաղափարախոսական պրոպագանդայի փորձի հետ: Նժդեհի արձանի շուրջ առաջացած քննարկումների միացան նաև մասնագետները՝ հուշարձանը կապելով խորհրդային մոնումենտալ քանդակագործության վերադարձի հետ: Ճարտարապետ Աշոտ Սնխչյանի կարծիքով՝ Նժդեհի արձանի ճարտարապետական լուծումները տոտալիտար համակարգերի էսթետիկա ունեն: Արձանն ունի «խիստ կենտրոնական առանցք, սիմետրիկ կոմպոզիցիա, աստիճաններ դեպի հուշարձան», հավելելով, որ իրեն անհանգստացնում է նաև վերջին շրջանում Երևանում կանգնեցվող արձանների ռեալիստական պատկերման միտումը: «Քաղաքում արձան շարելը չպիտի լինի ինքնանպատակ[275]»,-այս կարծիքն է հայտնել ճարտարապետ Արսեն Կարապետյանը՝ հավելելով, որ. «քաղաքաշինական տեսանկյունից բացարձակ անհասկանալի է պուրակի միջին մասում այսպիսի ուժեղ շեշտ ունենալը: Ընդհանրապես, Հայաստանում վերջին ժամանակների քաղաքաշինական ուղղաձիգ ձգտումները, խիստ սիմետրիկությունը ստալինյան ժամանակների կարոտախտի դրսևորումներն են»: Այս մոտեցումները կարծես հաստատեց Երևանի փոխքաղաքապետը, նշելով, որ. «Երևանում Նժդեհին պատկերելու

[274]«Նմանություն կա, մարդիկ կընտելանան». Արեյանը՝ Նժդեհի արձանի եւ գերեզմանոցային արձանների մասին, http://www.aravot.am/2016/05/27/697134/, 05.06.2016.
[275]Ճարտարապետները՝ Նժդեհի արձանի մասին. Տոտալիտար համակարգերի էսթետիկա, ռեալիզմ, խիստ սիմետրիկություն, http://www.panarmenian.net/arm/news/213272/, 05.06.2016.

համար ընտրվել է մոնումենտալ արձան՝ տարածքի վրա իշխելու նպատակով»[276]:

Հանրային դիսկուրսում հուշարձանի մեկնաբանությունները կենտրոնանում են հիմնականում Նժդեհի կերպարի մեկնաբանման դետալների վրա: Նժդեհը հանրային քննարկումներում նմանեցվեց ռուս արքա Պետրոս Առաջինին, ինչպես նաև ռուս բանաստեղծ Պուշկինին (Նժդեհի մազերը պատկերված են Պետրոս Մեծի՝ Պետեր-բուրգում տեղադրված հուշարձանի մազերի նմանությամբ): «Մենք սենց Նժդեհ չգիտենք, ոնցվոր Պյոտրը լինի»,-այսպես մեկնաբանեց Նժդեհի արձանը Երևանի տարեց բնակիչը, իսկ մեկ ուրիշն ավելացրեց, որ. «սենց մազեր չի ունեցել Նժդեհը, Պուշկինին են քանդակել»[277]: Արձանի ընդհանուր տեսքը և ոճը հանրային քննարկումներում նմանեցվեց տոտալիտար արձանների տեսքին, իսկ Պետրոս Առաջինի նմանությունը նպաստեց իշխանությունների՝ այս արձանը տեղադրելու միջոցով Ռուսաստանին հաճոյանալու և խորհրդային անցյալը վերականգնելու մեկնաբանություններին[278], որը սկսվել էր Անաստաս Միկոյանի արձանի շուրջ ծավալված քննարկումներում և ամրապնդվել Հ. Բաբաջանյանի արձանի տեղադրումով: Հատկանշական է Նժդեհի արձանի տեղադրության այգու սկզբի հատվածում «Ռոսթելեքոմ» գովազդային մեծ գրության առկայությունը, որը կարծես ամբողջացնում է տարածքի նշանային մեկնաբանման ռուսամետընկալումները:

Այսպիսով, խորհրդային տարիներին հուշարձանների հորինվածքային, տեղադրման և ճարտարապետական լուծումների ընտրությունը, այդ կոթողների մեծ մասի հանդեպ պաշտամունքային վերաբերմունքի ձևավորումը և նրանց հետ քաղաքացիների հաղորդակցության պրակտիկաների սահմանումն ու վերահսկողությունը Կոմունիստական կուսակցության վարած քաղաքականության հիմնական նպատակն էր: ԽՍՀՄ փլուզումը, նրա առաջնային նշանների վերացմանն ուղղված համաժողովրդական գործողությունները, նոր իշխանությունների կողմից հուշարձա-

[276]«Նմանություն կա, մարդիկ կընտելանան». Արեյանը՝ Նժդեհի արձանի եւ գերեզմանոցային արձանների մասին, http://www.aravot.am/2016/05/27/697134/, 05.06.2016.
[277]Աթանեսյան Գ., ԴԱՆ, Երևան, ՀՀ, 2016, մայիս:
[278]Atanesyan G., The Newly Unveiled Monument as a Subject of Conflicting Discourses, նշվ. աշխ., էջ. 25-28.

նային հաղորդակցության վերահսկողության բացակայությունը և հաղորդակցության համար առավել մատչելի նոր արձանների տեղադրումը նպաստել են արդի Հայաստանում հուշարձանների հետ բնակչության հաղորդակցության նոր պրակտիկաների առաջ գալուն:

Հանրային քննարկումներում և ԶԼՄ-ներում հուշարձանային հաղորդակցության այս նոր պրակտիկաները քննադատվում են միայն այն դեպքում, երբ հուշարձանները ենթարկվում են կոշտ վանդալիզմի (վնասվում են, գրություններ են հայտնվում): Հուշարձանների հետշման մյուս եղանակները կամաց-կամաց դառնում են սովորական կամ նույնիսկ խրախուսվում են, ինչը նոր տիպի՝ հաղորդակցության համար մատչելի արձանների տեղադրումը դարձնում է ընդունելի նաև արդի հայաստանյան հանրային դիսկուրսում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ Հայաստանի քաղաքային արձանային լանդշաֆտի փոխակերպումները բազմաշերտ են և ընդգրկում են այդ կառույցների հետ կապված բովանդակային և ֆիզիկական-տարածական գրեթե բոլոր առումները: Այս բոլոր փոխակերպումներն առաջնահերթ կապված էին հայաստանյան հուշարձանային լանդշաֆտը ձևավորող նոր սուբյեկտների ի հայտգալու հետ:

- Խորհրդային տարիների Հայաստանի քաղաքների հանրային վայրերում հայտնված մոնումենտալ քանդակները կուսակցության և նրա ղեկավարի հստակ քաղաքականության արդյունք էին և վերահսկվումու իրականացվում էին մեկ կենտրոնից:
- Խորհրդային քաղաքացին իրեն հատկացված դերն ուներ խորհրդային քաղաքների լանդշաֆտների ձևավորման հարցում, որն ուղղորդվում և վերագրվում էր կենտրոնից և հիմնականում սահմանափակվում՝ նոր տեղադրվող հուշարձանների նախաձեռնություններին համաձայնություն տալով և պաշտպանելով:
- Սպիտակի ավերիչ երկրաշարժը, արցախյան շարժումը, պատերազմը հիմք հանդիսացան հանրության, որպես հուշարձան տեղադրող նոր դերակատարի հայտնվելուն:
- Քաղաքական նոր պայմաններում, Հայաստանի անկախացման և նոր պետության ստեղծման պայմաններում, նոր համայնքային իշխանությունները աստիճանաբար հայաստանյան նոր հուշարձանային քաղաքականությունը վերցրին իրենց վերահսկողության տակ և սկսեցին հանդես գալ որպես այդ քաղաքականության ակտիվ իրականացնող:
- Քաղաքական նոր պայմաններում, ֆինանսական միջոցներ պահանջող այս ոլորտում, սկսեց մեծանալ անհատ գործարարբարերարների, տարբեր կազմակերպությունների դերը

հետխորհրդային Հայաստանի հուշարձանային լանդշաֆտի ձևավորման գործընթացներում:

Հայաստանում քաղաքական համատեքստի փոփոխումը, հուշարձանային քաղաքականության իրականացման նոր սուբյեկտների հայտնվելը նպաստեցին այդ քաղաքներում արդեն տեղադրված հուշարձանների վերաիմաստավորմանը, հանրային վայրերում նոր բովանդակային ուղերձներ կրող հուշարձանների հայտնվելուն:

• Հայաստանի քաղաքային լանդշաֆտներում հուշարձաններ առաջին անգամ հայտնվեցին Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո: Լենինյան մոնումենտալ պրոպագանդայի իրականացման արդյունքում Հայաստանի բնակավայրերում տեղադրվեցին բազմաթիվ հուշարձաններ:

• Խորհրդային տարիներին հուշարձանային քաղաքականությունը գաղափարականացված էր: Քաղաքների հանրային վայրերում հայտնվող հուշարձանները պետք է ներկայացնեին հեղափոխության և Կոմունիստական կուսակցության հայացքները, խորհրդային քաղաքացուն դաստիարակեին սոցիալիստական ներկայի և ապագայի գաղափարներով:

• Խորհրդային իշխանությունները վերահսկում էին տեղադրվող արձանների ձևը, բովանդակությունը, քաղաքներում հայտնվող նոր հուշարձանները ենթարկում խիստ գրաքննության՝ բացառելով անցանկալի բովանդակությամբ հուշարձանների տեղադրումը:

• Արցախյան շարժման և անկախության տարիներին պայքար սկսվեց խորհրդային անցյալի խորհրդանիշների դեմ, Հայաստանի բնակավայրերի տարածքներից հեռացվեցին հեղափոխական գործիչների արձանները:

• Ազգությամբ հայ կամ արվեստի ոլորտի ներկայացուցիչների նվիրված խորհրդային արձաններից շատերը վերամեկնաբանվեցին նոր համատեքստում և շարունակեցին մնալ իրենց տեղադրության վայրերում:

• 1988 թ. Գյումրիում և Վանաձորում հանրությունը (արցախյան շարժման բազմությունը) իր նախաձեռնությամբ և միջոցներով հուշարձան տեղադրեց նվիրված Սումգայիթի զոհերի հիշատակին:

1988-1990-ականների սկզբներին Հանրության կողմից հուշարձանների տեղադրման առիթ հանդիսացան Արցախյան շարժումը, Արցախյան ազատագրական պատերազմը, 1988 թ.-ի աղետալի երկրաշարժը:

• Հետխորհրդային տարիներին համայնքային իշխանությունների, բարերար-գործարարների, կազմակերպությունների, անհատների և տարբեր խմբերի ջանքերով Հայաստանի քաղաքային լանդշաֆտում հայտնվեցին նոր ուղերձ կրող հուշարձանները, որոնց մեծ մասը դուրս մնալով խորհրդային գաղափարաբանությունից արգելված էին այդ տարիներին:

• Հանրային վայրերում հայտնվեցին քաղաքական, պետական ազատագրական պայքարի գործիչների արձանները, կրոնական թեմատիկայով հուշարձաններ, Ցեղասպանության զոհերին նվիրված կոթողներ և այլ աշխատանքներ:

Քաղաքական նոր համատեքստի առկայությունը, երբ վերաիմաստավորվում էր հնի նշանային ներկայությունը Հայաստանի քաղաքային տարածքներում, հուշարձան տեղադրող նոր սուբյեկտների հայտնվելը, նրանց կողմից երևան եկած նոր նշանները չէին կարող ազդեցություն չունենալ քաղաքներում արդեն առկա հուշարձանային տարածքների և նորերի տեղադրման տարածքների ընտրության վրա:

• Խորհրդային իշխանությունները հրապարակներ ու ժամանցի գոտիներ էին կառուցում քաղաքի տարբեր մասերում, որտեղ տեղադրում էին հուշարձաններ: Քաղաքներն ունեին իրենց վարչական, մշակութային, արդյունաբերական հատվածները, որոնք ունեին իրենց հատուկ հուշարձանային կոնտինումը:

• Աղետների, պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանները, անհատներին նվիրված հուշաղբյուրները պատեցին Հայաստանի քաղաքների թաղերը, բակերը, երկրորդական փողոցները, որն ընդունված պրակտիկա չէր հանդիսանում խորհրդային տարիներին:

• Նոր հուշարձանային քաղաքականության պայմաններում, ՀՀ համայնքային իշխանությունները ձգտում են պահպանել

քաղաքների հանրային տարածքների նշանային և համատեքստային անընդհատությունը:

• Անկախության տարիներին շատեն պատահում նոր հուշարձանի տեղադրման հետևանքով նշանային անհամապատասխանության դեպքերը: Հանրության կողմից իրականանում են որոշ տարածքների բովանդակային նոր կոնտինումների ստեղծման փորձեր:

• Աղետների, պատերազմների զոհերի և նահատակների հուշարձանները տեղադրվում են Հայրենական պատերազմի հուշարձանների տարածքներում կամ միասին՝ կերտելով պանթեոններ:

Խորհրդային տոտալ վերահսկողության համակարգի վերացումը, հետխորհրդային նոր հուշարձանային քաղաքականությունը, հանրային վայրերում նոր տիպի հուշարձանների հայտնվելը նպաստեցին նաև այդ կոթողների հետ հաղորդակցության նոր պրակտիկաների ի հայտգալուն:

• Խորհրդային տարիներին հուշարձանների հորինվածքային, տեղադրման և ճարտարապետական լուծումների ընտրությունը նպաստում էր այդ կոթողների հանդեպ գլխավորապես պաշտամունքային վերաբերմունքի ձևավորմանը:

• Կոմունիստական կուսակցությունը սահմանում էր հուշարձանների հետ քաղաքացիների հաղորդակցության պրակտիկաները և վերահսկում դրանք:

• Նոր տիպի հուշարձանների հանդես գալը, նրանց հետ շփման ազատությունը նպաստել են հուշարձանների հետ հաղորդակցության նոր եղանակների հանդես գալուն, որոնք երբեմն դիստրուկտիվ բնույթեն կրում:

Հետխորհրդային Հայաստանի քաղաքների հուշարձանային լանդշաֆտի ձևավորումը անկախության վերջին տարիներին գլխավորապես անցել է քաղաքային իշխանությունների վերահսկողության տակ, ովքեր էլ տարբեր բարերարների ու գործարարների ակտիվ մասնակցությամբ իրականացնում են արդի հայաստանյան հուշարձանային քաղաքականությունը: Անկախության առաջին տարիներին, հուշարձան տեղադրող ամենակտիվ սուբյեկտ հանդիսացող հանրությունը, չնայած հանրային վայրերում

շարունակաբար անհատներին նվիրված հուշաղբյուրների կանգնեցմանը, հուշարձանային քաղաքականության վերաբերյալ իր ակտիվությունը հիմնականում տեղափոխել է վիրտուալ տիրույթ՝ շարունակաբար մեկնաբանելով արդի հայաստանյան հուշարձանային քաղաքականությունը:

Այսպիսով՝

- Հետխորհրդային Հայաստանում վերջին տարիներին հայտնվող հուշարձանները համայնքային իշխանությունների վերահսկողության տակ են և նրանց քաղաքականության արդյունք: Քաղաքացին հիմնականում դուրս է մնում նոր հուշարձանների տեղադրման գործընթացից, հանդիսանալով նրանց քննարկողը վիրտուալ տիրույթում:
- Հանրային դիսկուրսը, վերջին տարիներին, սկսել է հանդես գալ որպես հուշարձանային քաղաքականության իրականացման կարևոր դերակատար:
- Արդի Հայաստանում հանրային դիսկուրսը սկսում է վերածվել հուշարձանային քաղաքականության վրա ազդող և համայնքային իշխանությունների «կամայականությունները» զսպող մի մեխանիզմի, որի արդյունքում քաղաքային իշխանությունները ոչ միայն երբեմն ետ են կանգնում իրենց կայացրած որոշումներից, այլև սկսում են հաշվի նստել հանրային տեսակետների հետ:

Չնայած հանրության՝ որպես հուշարձան տեղադրողի պասիվացմանը, տեսնում ենք, որ անհատների հուշաղբյուրների լայն տարածումը, ինչպես նաև ապրիլյան պատերազմի զոհերի հուշարձանացման դեպքերը ցույց են տալիս, որ պատմական լուրջ իրադարձությունների արդյունքում հանրությունը կրկին կարող է հանդիսանալ քաղաքային լանդշաֆտի փոխակերպման հիմնական գործոն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» Հրատարակչություն, Երևան, 1976, էջ. 912:
2. Գյուրջյան Գ., Խորհրդահայ կերպարվեստի անցած ուղին, «Խորհրդային արվեստ», 1934, թիվ 10:
3. Խառատյան Հ., Ծագոյան Գ., Մարության Հ., Աբրահամյան Լ., Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում. պատմություն, հիշողություն, առօրյա, ՀՀ ԳԱԱ ‹‹Գիտություն›› հրատարակչություն, Երևան, 2015, 440 էջ:
4. Խմբ. կոլ., Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինտ., ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 7, Երևան, 1967, 655 էջ:
5. Հարությունյան Ա., Պետության խորհրդանիշներն ու նարատիվները Երևանի քաղաքային լանդշաֆտում/ Հանրային ոլորտ. վիճարկման և վերըմբռնման միջև, Անկյունաքար, Եր., 2007, էջ 35-46:
6. Հարությունյան Վ., Լենինյան մոնումենտալ պրոպագանդան Հայաստանում, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Տեղեկագիր, 1957, №4, էջ 47-54:

7. Մարգարյան Ն., Աթանեսյան Գ., Լենինյան պատվանդանների ոդիսականը հետխորհրդային Հայաստանում, ԵՊՄՀ Հայագիտական հանդես, № 2(40), Երևան, 2018, էջ 163-177:
8. Մարգարյան Ն., Հանրային տարածքներում կանգնեցվող հուշաղբյուրների հարցի շուրջ: Ծիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված միջազգային VIII գիտաժողով, Գյումրի, 2010, էջ 48-53:
9. Մարության Հ., Հուշարձանը որպես գերեզմանոց (Ցեղասպանության հուշահամալիրի օրինակով), Հայ ժողովրդական մշակույթ, XIII, «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2006, էջ 172-180:
10. Միրզախանյան Ռ., Կերպարվեստը և երաժշտությունը խորհրդային Հայաստանում /1921-1925 թթ./, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան Գիտական տեղեկագիր № 1-2 (26-27), Երևան, 2016, էջ 5-27:
11. Միրզախանյան Ռ., Կերպարվեստը և ճարտարապետությունը Հայաստանում 1925-1932 թթ., Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 2017, էջ 69-79:
12. Սարգսյան Մ. Ս., Հուշարձանային քանդակագործությունը Սովետական Հայաստանում, Պատմա-բանասիրական հանդես, № 2-3, 1967, էջ 95-108:
13. Սարգսյան Մ. Ս., Սովետական Հայաստանի քանդակագործությունը 1920-1930-ական թվականներին, Պատմա-բանասիրական հանդես, N 4, 1959, էջ 24-45:
14. Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, «ՍՍՀ Գիտությունների Ակադեմիա», 1967, էջ 94:
15. Абрамян Л., Борьба с памятниками и памятью в постсоветском пространстве (на примере Армении) // Acta Slavica Iaponica. 2003, T. XX, c. 25–49.
16. Атанесян Г., Общество и монументальная политика в последние годы СССР и первые годы независимости Армении, Caucaso-Caspica, Выпуск II, Изд-во РАУ, 2017, с. 31-36.
17. Атанесян Г., Переосмысление новых практик возведения городских памятников в постсоветской Армении // Урбанистика, № 3, 2018, с. 1-6, http://e-notabene.ru/urb/article_26375.html, 24.05.2018.

18. Атанесян Г., Судьба памятников Великой Отечественной войны в постсоветской Армении // Человек и культура, № 3, 2018, с. 1-6, http://e-notabene.ru/ca/article_26168.html, 03.05.2018.
19. Атанесян Г., Христианская символика в городских памятниках постсоветской Армении // Культура и искусство, № 5, 2018, с. 1-5, http://e-notabene.ru/pki/article_26254.html, 13.05.2018.
20. Балуев Д., Политическая роль социальных медиа как поле научного исследования // Образовательные технологии и общество, 2013, Т. 16, № 2, с. 604-616.
21. Бурдье П., Социология социального пространства, Москва: Ин-т экспериментальной социологии; СПб.: Алтейя, 2007, 288 с.
22. Габович М., Советские военные памятники: биографические заметки, http://gabowitsch.net/wp-content/uploads/2014/05/Chto-delat-pamiatniki-FINAL-ru.pdf, 10.10.2017.
23. Григорян М., Площадь Ленина в Ереване. Воспоминания о проектировании и строительстве. Ереван: Айастан, 1969.
24. Дейк ван Т. А., Язык, познание, коммуникация, БГК им. И. А. Бодуэна де Куртенэ, Благовещенск, 2000, 308 с.
25. Йоргенсен М., Филлипс Л., Дискурс анализ. Теория и метод, Харьков: Изд. «Туманитарный Ценгр», 2008, 336 с.
26. Луначарский А. В., Статьи об искусстве, М., 1941, 664 с.
27. Марутян А., Как помнят Великую Отечественную в Армении: некоторые наблюдения, History Culture Society, Chisinau, no. 2, vol. 4, 2016, с. 95–105.
28. Марутян А., Памятник жертвам геноцида в контексте ритуалов памяти армянского народа, ЭО. № 3, 2008, с. 119–128.
29. Ожегов С. И., Шведова Н. Ю. Толковый словарь русского языка: 80 000 слов и фразеологических выражений / Российская академия наук. Институт русского языка им. В. В. Виноградова, 4-е изд., дополненное, М.: Азбуковник, 1999, с. 944.
30. Паперный В., Культура Два. 4-е изд. М.: Новое литературное обозрение, 2016, 416 с.
31. Рогозин Д. М., Рецензия: Л. Филлипс, М. В. Йоргенсен. Дискурс анализ: теория и метод // Мониторинг общественного мнения: экономические и социальные перемены. 2006. № 4, с. 151-160.

32. Суперанская А. В., Ономастический континуум // Тюркская ономастика. Алма-Ата, 1984, с. 5-12.
33. Филлипс Н., Харди С., Что такое дискурс-анализ // Современный дискурс-анализ, Выпуск 1, том 1, 2009, с. 1-18.
34. Хабермас Ю., Вовлечение Другого. Очерки политической теории, СПб: Наука, 2001, 419 с.
35. Хабермас Ю., Отношения к миру и рациональные аспекты действия в четырех социологических понятиях действия // Социологическое обозрение, Т. 7, № 1, 2008, с. 3-24.
36. Черепанова Т., «Неспособность к разговору», или Статус публичной сферы в информационном обществе: Х. Арендт и Ю. Хабермас // Известия Уральского федерального университета, Серия 3: Общественные науки, 2011, № 2(91), с. 41-49.
37. Шагоян Г., Мемориализация землетрясения в Гюмри // Антропологический форум, № 11, 2009, с. 328–369.
38. Шагоян Г., Ставить ли памятник Анастасу Микояну? Опыт “социальной люстрации” в Армении // Материалы конференции “Правовые и социальные аспекты реабилитации жертв политических репрессий на постсоветском пространстве”, Научно-информационный и просветительский центр “Мемориал”, М., 2014, с. 127-151.
39. Шалаева Н. В., План советской монументальной пропаганды: проблемы реализации. 1918–1921 годы, Вестник Челябинского государственного университета, 2014, № 8 (337), с. 30-35.
40. Шалаева Н. В., Становление плана монументальной пропаганды в Советской России. 1917–1918 годы, Вестник Челябинского государственного университета, 2014, № 8 (337), История, Вып. 59, с. 18–24.
41. Abrahamian L. Armenian Identity in a Changing World. Costa Mesa, CA: Mazda Publishers, Inc., 2006, 406 p.
42. Abrahamian L., The Fight with Monuments and Memory in the Post-Soviet Space (the case of Armenia) // Acta Slavica Iaponica XX, 2003, pp. 25–49.
43. Atanesyan G., The new interpretations of functions of public monuments in contemporary public discourse // Պատմություն և մշակույթ, Հայագիտական հանդես, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2017, էջ 427-433.

44. Atanesyan G., The Newly Unveiled Monument as a Subject of Conflicting Discourses (Political, Public and Aesthetic Interpretations of G. Nzhdeh's Monument) // Civilization researches № 13, Ivane Javakhishvili Tbilisi State University Press, Tbilisi, 2016, pp. 25-28.
45. Backer H.S., Outsiders: Studies in the Sociology of Deviance. N.Y.: The Free Press, 1963, 179 p.
46. Bellentani F., Panico M., The Meanings of Monuments and Memorials: Toward a Semiotic Approach, Punctum, 2(1), 2016, pp. 28-46.
47. Choay, F. The Invention of Historic Monument, Cambridge University Press, Cambridge, 2001, 256 p.
48. Cobley P., Narrative, Routledge, London and New York, 2001, 288 p.
49. Duncan J., The City as Text: The Politics of Landscape Interpretation in the Kandyan Kingdom, Cambridge University Press, Cambridge, 1990, 244 p.
50. Eco U., A theory of semiotics, Indiana University Press, Bloomington, 1976, 365 p.
51. Habermas J. Between facts and norms: Contributions to a Discourse Theory of Law and Democracy, Cambridge, 1996, 631 p.
52. Harutyunyan A. State Icons and Narratives in the Symbolic Cityscape of Yerevan // Public Spheres after Socialism, Intellect Bristol, Chicago, 2009, pp. 19-29.
53. Hay I., Andrew H., Tutton M., Monuments, Memory and Marginalisation in Adelaide's Prince Henry Gardens. Geografiska Annaler 86 (B/3), pp. 201-216.
54. Hershkovits L., Tiananmen Square and the Politics of Place. Political Geography 12, 1997, pp. 395-420.
55. Johnson N., Cast in stone: monuments, geography and nationalism. Environment and Planning D: Society and Space 13, 1995, pp. 51-65.
56. Kattago S., The Ashgate Research Companion to Memory Studies, Ashgate Publishing, Farnham, 2015, 290 p.
57. Lehmann M., Apricot Socialism: The National Past, the Soviet Project, and the Imagining of Community in Late Soviet Armenia, Slavic Review 74, no. 1 (Spring 2015), pp. 9-31.
58. Lehmann M., The Local Reinvention of the Soviet Project Nation and Socialism in the Republic of Armenia after 1945 // "Representations of Changing Social Orders" (no. 640), Humboldt University Berlin, 2011, pp. 481-508.
59. Longman, Dictionary of Contemporary English, 2009, p. 1130.

60. Marutyan H., Iconography of Armenian Identity, Vol. 1: “The Memory of Genocide and the Karabagh Movement”, “Gitutyun” Publishing House (Anthropology of Memory 3), Yerevan, 2009, 416 p.
61. Reynolds D. M. Introduction // Remove not the Ancient Landmark. Public Monuments and Moral Values, Routledge, 2013, 237 p.
62. Shagoyan G., Between memory and Memorial: Anastas Mikoyan and "Social Lustration" in Armenia, Caucasus analytical digest, No. 80, 2016, pp. 2-5.
63. Tamm M., In search of lost time: Memory politics in Estonia 1991-2011. Nationalities Papers, The Journal of Nationalism and Ethnicity 41 (4), 2013, pp. 651-674.
64. Tudman M., Monument as a Form of Collective Memory and Public Knowledge // Digital resources and knowledge sharing, INFuture, 2009, pp. 125-133.
65. Whelan Y., The construction and destruction of a colonial landscape: monuments to British monarchs in Dublin before and after independence. Journal of Historical Geography 28 (4), 2002, pp. 508-533.
66. Young J. The Texture of Memory. New Haven; L., Yale University Press, 1993, 415 p.

ԶԼՄ և էլեկտրոնային կայքերի հրապարակումներ

67. «Նմանություն կա, մարդիկ կընտելանան». Արեյանը՝ Նժդեհի արձանի եւ գերեզմանոցային արձանների մասին, http://www.aravot.am/2016/05/27/697134/, 05.06.2016.
68. Բուռն քննարկումներ Գյումրու ավագանու նիստում. Ս. Սարգսյանը հովանավորելու է, որ Գյումրիում արձաններ տեղադրեն, http://galatv.am/hy/news/204631/, 10.12.2017.
69. Գավառում երախտապարտ են բարերարներին. բացվեց Հայրապետ Խաչատրյանի արձանը, https://armenpress.am/arm/news/822558/gavarum-erakhtapart-en-barerarnerin-bacvec-hayrapet-khachatryani.html, 02.08.2018.
70. Գարեգին Նժդեհի արձանը ՀՀԿ-ի՞, թե՞ ժողովրդի համար է, http://www.aravot.am/2014/11/03/512312/, 28.11.2017.
71. Գյումրին արձանախեղդ են անում, http://www.aravot.am/2017/10/06/912034/, 10.02.2018:
72. Գյումրին Վարդանակե՞րտ, թե՞ Վարդանավան, http://www.7or.am/am-/news/view/6807/, 10.10.2017.
73. Գորիս մայիսի 9 տեսաֆիլմ, https://www.youtube.com/watch?v=vFrONddi0ms&t=7s, 11.09.2017:

74. Երևանին պետք չեն մահարձաններ, http://www.lragir.am/index/arm-/0/country/rss/99996, 15.11.2017.
75. Երևանցիները չեն ընկալել Առնո Բաբաջանյանի արձանի ոճը, https://www.azatutyun.am/a/1570161.html, 16.03.2017:
76. Թող արձանների մոտ էլ տեսախցիկներ դնեն, ուրիշ ճար չկա, https://www.hraparak.am/posts, 17.03.2016:
77. Խաչի տեսքով երկնաքեր՝ «կռծած կուկուռուզի» փոխարեն, http://socialmedia.am/9339.html, 10.02.2018:
78. Կապանում բացվեց Ա. Մանուկյանի կիսանդրին. տեսակետները բախվում են, http://hetq.am/arm/news/42033/kapanum-bacvec-a-manukyani-kisandrin-tesaketnery-bakhvum-en.html, 20.08.2017.
79. Կոմպոզիտորի արձանի բացում News.armeniatv.com, https://www.youtube.com/watch?v=tz4-4hBsQGw, 02.09.2017.
80. Համազասպ Բաբաջանյանի քանդակը նմանեցնում են «օրենքով գողի» մահարձանի. հեղինակի մեկնաբանությունը, http://armlur.am/533284/, 15.11.2017.
81. ՀՀ կառավարության որոշումը ՀՀ-ում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին, http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=7499, 28.11.2017.
82. ՀՀ կառավարության որոշումը ՀՀ-ում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին, http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=7499, 28.11.2017.
83. ՀՀ Մինիստրների խորհրդի որոշումը պետական, հասարակական, մշակույթի և գիտության գործիչների հիշատակը հավերժացնելու կարգի մասին, http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=5020, 10.10.2017:
84. ՀՀ օրենքը պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին, http://www.arlis.am/documentview.aspx?docid=38019, 17.03.2015:
85. Հուշերի արձանագրում, http://imyerevan.com/hy/society/view/8649, 17.03.2015:

86. Ճարտարապետները՝ Նժդեհի արձանի մասին. Տոտալիտար համակարգերի էսթետիկա, ռեալիզմ, խիստ սիմետրիկություն, http://www.panarmenian.net/arm/news/213272/, 05.06.2016.
87. Մաթևոսյանի արձանը կրկին կոտրած. ի պաշտպանություն հանճարների, http://www.jnews.am/broken-statues-in-yerevan?page=8&quicktabs_1=2, 17.06.2016:
88. Մեր հանճարները մեր կողքին են... ժամանակավոր, http://www.panarmenian.net/arm/news/126436/, 16.03.2016:
89. Նժդեհի արձանի հեղինակը՝ քննադատությունների մասին, http://www.a1plus.am/1459664.html, 02.08.2017.
90. Ուրվագծվում է «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճի ճակատագիրը, https://www.azatutyun.am/a/1980875.html:
91. Սիսիանի քաղաքաշինական նոր «գլուխգործոցը», http://www.slag.am-/arm/news/1103839/, 10.10.2017:
92. Սիսիանցիների սիրած՝ Աղջկա արձանը «զգեստափոխվում է», https://168.am/2016/11/16/717381.html, 10.10.2017:
93. Վերջին 10 տարիներին Երևանում տեղադրված արձանները, http://hetq.am/arm/news/70800/verjin-10-tarinerin-erevanum-texadrvats-ardzannery.html/, 10.10.2017.
94. Տե՛ս Մայիսի 9-ը եռատոն է մեզ համար, http://sisian.info/news, 11.09.2017:

ՆԿԱՐՆԵՐ

Նկ. 1. Վ. Լենինի արձանը Երևանի Լենինի (Հանրապետության) հրապարակում:

Նկ. 2. Վ. Մամիկոնյանի արձանը Երևանի Օղակաձև այգում:

Նկ. 3. Դավիթ Բեկի արձանը Կապանում:

Նկ. 4. Լենինականի փլատակներից Գորիս տարված քարը տեղի Քոլ ատակ թաղամասում:

Նկ. 5. Սպիտակի երկրաշարժի զոհերին նվիրված հուշարձանը Սիսիանում:

Նկ. 6. Անդրանիկի արձանը Գյումրու Զորավար Անդրանիկ հրապարակում:

Նկ. 7. Հայ ազգային ազատագրական պայքարի գործիչների 15 բրոնզաձույլ դիմաքանդակները Գյումրիու Հաղթանակի այգում:

Նկ. 8. Ապրիլյան պատերազմի զոհերից

Նկ. 9. Ապրիլյան պատերազմի զոհերի հի-

մեկին նվիրված հուշաղբյուրն ու հուշա-
տախտակը Երևանի Աբովյան փողոցում:

շատակին նվիրված
հուշարձանը Սպիտա-
կում:



Նկ. 10. Ապրիլյան պատերազմում զոհված զինվորի հիշատակին նվիրված հուշարձան Սպիտակում:

Նկ. 11. Ապրիլյան պատերազմի զոհերի հուշարձան և հուշաղբյուր Գյումրիում:

Նկ. 12. «Ապրիլյան մարտերի հերոսների փողոցի» ցուցանակ-հուշաքարը և զոհերին նվիրված հուշարձանը Գյումրիում:

Նկ. 13. Ապրիլյան պատերազմում զոհված զինվորի հիշատակին նվիրված հուշարձան Գյումրիում:

Նկ. 14. Ապրիլյան պատերազմում զոհված զինվորի հիշատակին նվիրված հուշարձան և հուշ-հրապարակում:



Նկ. 15. Ս. Սպանդարյանի արձանը Երևանի Գ. Նժդեհի աղբյուր Գյումրիում:

Նկ. 16. Գ. Նժդեհի արձանը Երևանի Հանրապետության հրապարակի մերձակայքում:



Նկ. 17. Ա. Նավասարդյանի կիսանդրին Սիսիանում:

Նկ. 18. Արամ Մանուկյանի կիսանդրին Կապանում:

Նկ. 19. Թաղայի հեղինակության հիշատակին նվիրված հուշաքար Կապանի գլխավոր փողոցներից մեկի վրա:

Նկ. 20. Վաղաժամ մահացած թաղայի հեղինակությանը նվիրված հուշաքար Գյումրու Վարդանանց հրապարակում:

Նկ. 21. Ալ. Մանթաշյանցի արձանը Երևանի Աբովյան փողոցում:

Նկ. 22. Բարերար Կ. Եսայանի հուշարձանը Երևանի Նոր Նորք վարչական շրջանի Նանսենի այգում:

Նկ. 23. Ծ. Ազնավուրի հուշարձանը Գյումրիում:

Նկ. 24. Բարերարի արձան՝ իր միջոցներով կառուցած եկեղեցու բակում (Սյունիքի մարզի Արծվանիստգյուղ):

Նկ. 25. Հայուհու արձանը Գյումրու Անկախության հրապարակում (նախկինում Լենինի հրապարակ):



Նկ. 26. Վարդանանց արձանախումբը Գյումրում- Նկ. 27. Աշոտերկաթի թագավորի արձանը Իջևան քաղաքում:



Նկ. 28. Տիգրան Մեծ արքայի հուշարձանը Ջերմուկ քաղաքում:



Նկ. 29. Սոսե Մայրիկի հուշարձանը Վաղարշապատում:



Նկ. 30. Ջեմմա Անանյանի արձանը Իջևանի կենտրոնում:

Նկ. 31. Անաստաս Միկոյանի արձանը Արտաշատի կայարանում:

Նկ. 32. Վերածնունդ հուշարձանը Գյումրի-ում:

Նկ. 33. Միհեր Մկրտչյանի հիշատակին նվիրված հուշարձանը Գյումրիում:



Նկ. 34. «Արարատ-73»-ի արձանախումբը Երևանի Հրազդան մարզադաշտի մերձակայքում:

Նկ. 35. Մխիթար Գոշի արձանը Գոշա-անցկացված վանքում: (քաղաքի



Նկ. 36. 2017 թ. Կապանում Սիմպոզիումի աշխատանքներից կենտրոնական այգիներից մեկում):

Նկ. 37. Համազասպ Բաբաջանյանի արձանը Երևանի Ավան վարչական շրջանում:

Նկ. 38. Վայոց Ձորի մարզպետ Վարդգես Մաթևոսյանի հիշատակին նվիրված հուշարձանը Եղեգնաձորի կենտրոնում:

Նկ. 39. Սպիտակի քաղաքապետ Ս. Ավետիսյանի հիշատակին նվիրված հուշարձանը քաղաքի կենտրոնում:

Նկ. 40. Երևանի Նոր Նորք վարչական շրջանի նախկին ղեկավարի հիշատակին նվիրված հուշարձանը Նոր Նորքում:

Նկ. 41. Բոտերոյի աշխատանքներից մեկը Երևանի Կասկադ համալիրի տարածքում:

Նկ. 42. Հունան Ավետիսյանի հուշարձանը Կապանի կենտրոնում:

Նկ. 43. Խորհրդային կարգերի հաստատ մայակին նվիր-
ման 50-ամյակի հուշարձանը Դիլիջանում:

Նկ. 44. Լենինականի 60-
ված կամարը
Գյումրիում:

Նկ. 45. Լենինի տեղահանված արձանի տարածքը Դիլիջանում:

Նկ. 46. Գ. Տաթևացու արձանը Գորիսի գլխավոր հրապարակում:

Նկ. 47. Գ. Նժդեհի հուշարձանը Սիսիանում:

Նկ. 48. Սիսիանի գլխավոր հրապարակը, որտեղ տեղադրված է եղել Լենինի արձանը:

Նկ. 49. Վ. Սարգսյանի հուշարձանը Վանաձորում:

Նկ. 50. Լենինի տեղահանված արձանի տարածքը Իջևանում (Մշակույթի պալատի դիմաց):





Նկ. 51. Հայդուկներին նվիրված քանդակները Ջերմուկ քաղաքում:

Նկ. 52. Իսրայել Օրուի արձանը Ջերմուկի աջափնյակում:

Նկ. 53. Արցախյան պատերազմում զոհված ազատամարտի հուշարձան Ջերմուկում:

Նկ. 54. «Պարող աղջիկների» քանդակը Ջերմուկում (տեղադրվել է 1978 թ.):

Նկ. 55. Խաչքարերի պուրակը Երևանի կենտրոնում (Հանրապետության հրապարակի մերձակա տարածքում):

Նկ. 56. Խաչքարերի պուրակը Գյումրիի կենտրոնում:

Նկ. 57. Հայ ռենական պատերազմի հուշ-զոհերի հիշա-
արձանը Դիլիջանում:



Նկ. 58. Ցեղասպանության տակին նվիրված հուշարձան
Դիլիջանում:

Նկ. 59. Սպիտակի երկրաշարժի (ձախից) և Արցախյան ազատամարտի (աջից) զոհերի հուշարձանները Դիլիջանում:

Նկ. 60. Հայրենական պատերազմի հերոս քաղաքների հուշաքարերը (ձախից) և Արցախյան պատերազմի ազատամարտիկի հուշաքարը (աջից) Գյումրու Մայր Հայաստան հուշահամալիրի տարածքում:

Նկ. 61. Գորիսի Քոլատակ թաղամասի հուշահամալիրը:

Նկ. 62. Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակն հավերժացնող հուշարձանը Եղեգնաձորի «Եռաբլուր» կոչվող վայրում:

Նկ. 63. Սիսիան քաղաքի պանթեոնը:

Նկ. 64. Հայ ռենական պատերազմի զոհերին հերի հուշարձանը Սպիտակում:

Նկ. 65. Հայ ռենական պատերազմի նվիրված հուշարձանը Գորիսում:

Նկ. 66. Արցախյան ազատամարտի զոհերի հիշատակն հավերժացնող հուշարձանը Գորիսում:

Նկ. 67. «Յոթնաղբյուր» հուշարձանը Գորիսում:

Նկ. 68. Հայրենական պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշաղբյուր Գորիսում:

Նկ. 69. Հայրենական պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշաղբյուր Սիսիանում:



Նկ. 70. Հայրենական պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան Սիսիանում:

Նկ. 71. Սովետական կարգերի հաստատման համար զոհվածների հուշարձանը և «40 աղբյուր» հուշարձանը (հետին պլանում) Սիսիանում:

Նկ. 72. Առնո Բաբաջանյանի արձանը (Երևան) հուշարձանային հաղորդակցության ակտիվ մասնակից:

Նկ. 73. «Միմինո» հուշարձանը Դիլիջանում:

Նկ. 74. Հրանտ Մաթևոսյանի վնասված կավե արձանը Երևանում:



Նկ. 75. Արցախուհու արձանը Կապանի կենտրոնում:

Նկ. 76. «Ընթերցողի» արձանը Երևանում: